ՀՈՒՄԱՅ

ԲԱՑՈՒՄԱԾ Է 1904 ԹՎԻՆ ԲԱՑԱՌԻԿ ՊՐՈՖԵՍՈՐԻՆ

1903 № 6 ՆՈՅԵՄԲ.-ԴԵԿՏ.

ԱՐԱՐԱՏ

ԵՐԿԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԷՍ

ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

1903 № 6 ՆՈՅԵՄ.-ԴԵԿՏ.

ԹԻՖԼԻՍ
Տպարան Ա. Քուրթաթելաձէի
1903

Дозволено цензурою. Тифлисъ, 27-го Декабря 1903 г.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

I Հազար եւ մէկ գիշերային զրոյցներ. Վ. ՓԱՓԱԶԵԱՆ 5

II Ասվում է լսվելու համար. ՄԻՔԱՅԷԼ ՆԱԼԲԱՆԴԵԱՆ 24

III Հանս Հայլինգի ժայռերը. Թ. Կէօռների, թարգմ. Մ. վ. Մաքսուտեան . . 35

IV Գերմանական Դորպատ համալսարանը եւ նորա հայ ուսանողները. Բժ. Լ. ՏԻԳՐԱՆԵԱՆ 54

V Աղա Նեզրա. Գ. ԵՆԳԻԲԱՐԵԱՆ . . 87

VI Միլիոնատէր մարդասպան. Ռուսակի. թարգմ. Ց. ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆ . . 94

VII Խորէն արքեպ. Գալֆայեան եւ Նալբանդեանի «Աղցմիքը» ԵՐ. ՇԱՀԱԶԻԶ . 102

VIII Ցիշողութիւններ. ՔԱՋԲԵՐՈՒՆԻ . . 149

IX Հերոստրատ. Լուդվիկ Փուլդայի, թարգմ. Տ. Վ. 159

X Ոսկեղարեան հայերէնը եւ Մխիթարեան միաբանութիւնը. ԳՐ. ՏԷՐ-ՊՕՂՈՍԵԱՆ. 202

XI Տ. Յովհան Մանդակունի . . . 213

XII Մտքեր եւ կարծիքներ. ծաղկաքաղեց Ն. ՅԱՐՈՅ 228

XIII Տ. Մելքիսեդեկ Արքեպիսկ. Մուրատեան ԳԻՒՏ Ա. Ք. ԱՂԱՆԵԱՆՑ . . . 230

XIV ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ։

1. Կոմիտաս վ. եւ Մ. Արեղեան. Հազար ու մի խաղ. Ա. յիսնեակ։ — 2. Ն. Նեպլիւեւ. Ինչ է ճշմարտութիւնը. թարգմ. Մամիրէ վ.։ — 3. Ա. Չեխով. Գրազ. թարգմ. Տ. Վ.։ — 4. ԵՒԳԻՆԷ ՏՈՒՐ. Մարգարտէ մանեակ. թարգմ. օր. Նուարդ։ — 5. Ա. Չիլինկարեան. Մանուկների ստախօսութիւնը եւ նրա առաջն առնելու միջոցները։ — 6. Մ. Գորկիյ. Մակար Չուդրա. թարգմ. Սիմ.

Բաքիեան։ 7. Մ. Մանուէլեան. Էսքիզներ։—8. Վ. Փափազեան. Լուր-դալուր քրդական պոէմա։—9. Ջան գիւլում. Ժողովեց Հայկ Տէր Աստուածատրեան։—10. Էպիկտէտի կեանքն ու վարդապետութիւնը. Թարգ. Ջաւէն վարդ.։—11. Արաբի. Գերբնական հիւանդութիւն։—12. Լոյս. Ա. Հատուածական օրացոյց եւ Բ. Ծոցի օրացոյց. խմբ. Դ. Թուիշեան։ — 13. Յովակիմ Սօլօվեան. Հարազատ գծեր. ա. պրակ։ ԲՐԻՉ։— Ստացուած գրքեր . . 236

XV ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ։

Մի նոր թերթիկ 254

XVI ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏ։

1. Հակաթոքախտային շիճուկ ըժ. ՄարմՕրէկի։—2. Հակահարինքային շիճուկ։—3. Բաղդիի արդիւնաբերութիւնը։—4. Գրող հեռախօս։ 5. Մարդկային մարմնի ճառագայթները։ — 6. Սրտի մասնաժ. ՕՐ. ՆՈՒԱՐԴ ԱՂԱՆԵԱՆՑ . 256

XVII ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

Մատենադարան Պարիզի եկեղեցուն կից։—Կօրօլէնկօի եւ Չեխովի 25 ամեակ։—«Տնային ըժշկարանի» երկրորդ հատորը։ — Էնֆիաճեանցի ձեռագիրներր վաճառուած։ — Այնթապի մայր եկեղեցու օծումը։— Մի տեղեկութիւն։ Նուէր. 259

XVIII † ՄԱՀԳՈՅԺ։

Մ. Գարագաշեան 262

XIX ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՏԱՄԽԱՆՆԵՐ . . 264

XX ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

XXI ՅԱՒԵԼՈՒԱԾ։

1. Հայրեր եւ զաւակներ. Տուրգենեւի. Թարգմ. ՄՈՒՇԵՂ ՎԱՐԴ. .145 – 176

2. Էմիլ. Ժ. Ժ. Ռուսօի. Թարգմ. ԻՍ. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ . . . 67 – 76

3. Կանոնք Ժողովոց

ՀԱԶԱՐ ԵՒ ՄԻԿ ԳԻՇԵՐԱՅԻՆ ԶՐՈՅՑՆԵՐ

(Որ մոռացել է պատմել Շէհէրազադը և պատմում է դէրուիշը)։

I.

Պ ԱՏՄՈՒԹԻՒՆ ՓԱՅՏԵԱՑ ՍՈՒՐԻ

Դուք շատ էք լսել որ արաբացոց, պարսից արքաներ սիրում էին գիշերով ծպտած դուրս ելնել, ժողովրդի, բազմութեան սէջը միշտ մտնել, նրանց ցաւերը քննել-իմանալ ու կեանքը տեսնել։

Այդպէս էր նաև մեծն Շահ-Աբբասը, արքայից արքայն։ Շաբաթուայ մէջ մի քանի գիշեր, երբեմն վաճառականի հագուստը հագին, երբեմն ուխտաւորի և կամ եկւորի... մի ծառայ միայն հետն առած կամ յաճախ իսկ մեն-մենակ՝ ման էր գալիս փողոց ու բազար, լսում խօսակցութիւն, գանգատ ու վշտեր և շատ էր պատահում, որ այս կամ այն դատաւոր, խան կամ իշխանաւոր, յանկարծ պատժւում էր՝ առանց իմանալու թէ ո՞վ նրան մատնեց կամ ո՞վ բողոքեց։

Մի երեկոյ էլ այդպէս, մեծ արքան մենակ դուրս ելաւ։ Հագել էր նա բարեպաշտ ու թափառական դէրուիշի հագուստ, մազերը գդգզել, քաշկիւլը [1]) կախել, տապարը ձեռք առել ու Սպահանի բազարը ներս մտել։

Խանութներն ամէն արդէն կողպուած էին։ Գիշերային պահապանները կծկուած ձէթէ աղօտ ճրագի կողքին՝ քաղցը ննջում էին։ Շահ-Աբբասն անցաւ, եր-

---

[1]) Քաշկիւլ. Հնդկական քօքօ ընկոյզից ման, որ ունի ամէն դէրուիշ կողքից կախած թէ ջրի և թէ կերակուրի համար։

կար ման եկաւ, զննեց ամէն բան և երբ մի խանութի առջևից անցաւ, տեսաւ որ ներսում մի լոյս էր վառւում։

Հետաքրքրուեց, կանգ առաւ, աչքը դռան ճեղքին դրեց, ակնարկը ներս թափանցեց և ահա ինչ տեսաւ։

Հնակարկատի մի խանութ էր այդ. խղճուկ, ողորմելի։ Հազիւ մի քանի հին ու մին կօշիկ, մի քանի կտոր ժանգոտ գործիքներ, ապա կտրտուած հնամաշ կարպետ, որի վրայ նստել էր ինքը – հնակարկատը և... որը զարմանալին էր, առջևն ունէր մի սեղան, որի վրայի կերակուրն ու խմիչքը կրկնապատիկ գին ունէր, քան ամբողջ խանութի եղած-չեղածը։

Շահը զարմացաւ։

—Այս ի՞նչ գաղտնիք է. մտածեց երկար – ո՞րտեղից է սրան այս շքեղ ճաշը։

Վճռեց իմանալ։ Ցապարով բաղխեց խանութի դուռը և որպէս դէրուիշ՝ սկսեց երգել.

—Եա՛ հազրաթը Ալի, դէրուիշ եմ ես, ո՞վ հաւատացեալ, բա՛ց դուռդ և տո՛ւր դէրուիշին բաժին։

—Հեռացի՛ր, դէրուիշ, գոչեց ներսից հնակարկատը —ոչինչ չունիմ քեզ տալու։

—Ստում ես, միւսիլման, առջևումդ կերակուր ունիս, տո՛ւր դէրուիշի բաժինը։

Այնքա՛ն նա երգեց, այնքա՛ն պահանջեց, որ հնակարկատը ստիպուած, քրթմնջալով, մտքումը՝ գրողին ուղարկելով բոլոր դէրուիշներին, դուռը բաց արաւ։

—Ի՞նչ ես ուզում, մարդ, գոչեց զայրացած—ինչո՞ւ չես թողնում հանգիստ հաց ուտել։

—Անուշներ լինի, ասաց շահը դէրուիշի շեշտով— միայն թէ ես էլ անօթի եմ, թող որ մասնակցեմ այս շքեղ ճաշին։

—Լաւ ուրեմն. խօսեց հնակարկատը – ներս մտիր, հաց կեր. միայն, երդւում եմ մարգարէի երկար մօրուքով և հազրաթ Ալու զօրեղ բազուկով, որ եթէ հարցեր տաս կամ հետաքրքրուես, իսկոյն դուրս կանեմ քեզ։

Շահը լռութեամբ մտաւ, նստեց սեղանի առաջ, բայց ձեռք չը տուաւ և ոչ մի բանի։

—Կ՚ը, դէրուիշ աղա։

—Ո՛չ երբէք. ասաց շահը—Չեմ կարող ուտել ես մի սեղանից, որի որտեղից գալը չը գիտեմ. խեղճ հնակարկատ ես դու, ունեցածդ՝ ոչինչ. ո՞րտեղից ես ձեռք բերել այսպիսի լաւ ճաշ։

—Դո՛ւրս, դո՛ւրս, իսկո՛յն դուրս ելիր, երդմնազանց դէրուիշ. խօսք չը տուիր դու, որ չը պիտի հարց տաս և հետաքրքրուես...

—Ե՞ս, ժպտաց շահը—խօսք չը տուի ես և, վկա՛յ մարգարէն, դուրս էլ չեմ գնալ, մինչև որ հարցիս չը պատասխանես։

Հնակարկատը տեսաւ, որ ուրիշ ճար չունէր. մի քիչ մրթմրթաց, մի քիչ հայհոյեց, բայց յետոյ ասաց.

—Լաւ, ինչ կայ այստեղծածուկ կամ հրաշք։ Ամբողջ օրը գործում եմ և շատ լաւ գործում, իսկ երեկոյեան—ես մենակ մարդ եմ, սիրում եմ լաւ ճաշ—ինչ որ շահում եմ՝ բոլորը տալիս եմ ճաշի. ամէն երեկոյ նոյն ճաշը ունիմ...

Շահին հնակարկատի պարզ խօսքերը շատ զուարճացրին։

—Դու խնայող չես, միւսիլման. ասաց—իսկ թէ հիւանդանաս կամ գործ չը լինի՞...

—Թէ հիւանդանամ, ուտելու պէտք չը կայ—Աստուած ողորմած է. թէ գործ չունենամ, ուրիշ գործ կանեմ. ուտել սիրում եմ. լաւ որկոր ունիմ...

Շահը ծիծաղեց։

—Իսկ եթէ, ասաց—վաղը շահն յանկարծ արգելի հնակարկատների արհեստը, յետո՞յ ինչ կանես։

—Բերանդ բարիով բաց, էյ աղա դէրուիշ. շահն ինչո՞ւ պիտի արգելի խեղճ մարդկանց՝ գործել և լաւ էլ ուտել։

—Ո՞վ գիտէ. շահ է. արգելեց-պրծաւ. ինչ կարող ես ասել։

Հնակարկատը գլուխը քորեց քիչ, յետոյ ծիծաղեց, ասաց.

—Շատ զուարճալի մարդ ես դու, դէրուիշ. էհ, եթէ շահը հնակարկատութիւնը արգելի, Աստուած ողորմած է. քաղցած չենք մնալ...

—

Միւս օրը Շահ-Աբբասը հրաման արձակեց, որ հնակարկատութեան գործը լիովին արգելուի և որ ոչ ոք չը համարձակուի նրանով զբաղուել։ Շահ էր, արգելեց՝ պըրծաւ գնաց, ով կարող էր ասել ինչու, ինչ պատճառով։

Այդ, երբ մթնել էր, շահը նորից դէրուիշի հագուստը հագաւ, տապարը ձեռքն առաւ և գնաց բազար։

Նորից երկար մանեկաւ և մօտեցաւ հնակարկատի խանութին ու ներս նայեց դռան ճեղքից և երբ նայեց՝ սաստիկ զարմացաւ։ Հնակարկատը էլի զուարթ, ուրախ՝ երէկուայ նման մի ճաշ առաջին, կերած ու խմած, գեղգեղ երգում էր։

— Այս ինչպէս բան է, մտածեց շահը— պէտք է իմանալ թէ որտեղից այժմ այս ճաշն է գտել։

Եւ դուռը բաղխեց։

— Եա Ալի հազրաթ... ով հաւատացեալ, բաց դուռդ և տուր դէրուիշին բաժին։

— Գնա կորիր, չարամիտ դէրուիշ. գոչեց ներսից հնակարկատը— դու չարագուշակ մարդ ես ինձ համար. հեռացիր քանի դեռ չեմ բարկացել. ոչինչ չունիմ քեզ բաժին տալու։

— Ստում ես, միւսիլման. առջևումդ լաւ-լաւ կերակուր ունիս. տուր դէրուիշին հասած բաժինը...

Հնակարկատը դուռը բաց չարաւ։ Շահը յամառեց, երեսը պնդացրեց, խնդրեց, համոզեց և վերջապէս մըտաւ, բայց էլի հաց չը կերաւ և նոյն հարցը տուեց.

— Խեղճ հնակարկատ ես, շահն էլ այդ արհեստը այսօր արգիլեց. ասա՛ ինձ, միւսիլման, որտեղից է քեզ ճաշը. չը լինի գողութեամբ ես զբաղւում։

— Լռի՛ր, դէրուիշ աղա, գոչեց հնակարկատը—ինձ Ահմէդ կասեն, չաւ հօր որդի եմ և կեանքումս երբէք ոչ ստել եմ, ոչ էլ գողացել։

— Բացատրի՛ր ուրեմն, իմ բարի Ահմէդ։

— Դու աներես ես, ով աղա դէրուիշ. բարկացաւ հնակարկատը— և չը գիտեմ ինչպէս վարուեմ քեզ հետ։ Բայց ես կռուել չեմ սիրում, ոչ էլ բարկանալ. ուրեմն իմացիր։ Շահը պատրաստուում է ամառանոց գնալ. դորա համար էլ նրա ծառաները այսօր փողոց ու բազար ընկած, որքան ջորի տեսնում էին, մտրակի առաջն ա-

բած պալատ էին տանում որ շահի բեռները կրեն։ Եթէ ջորեպանը քիչ կաշառք էր տալիս, նրա ջորիներին էլ չէին դիպչում։ Ես էլ այդ տեսայ. իսկոյն ֆէրրաշի մի նշան գտայ, կպցրի գլխարկիս, հօրիցս մի հին սուր էր մնացել, կապեցի կողքիս, փողոցներն ընկայ, ջորիներ գտայ. շատ ազմկեցի, շատ սպառնացի, կաշառքներ առի [1]) և այնքան միայն, որքան պէտք էր իմ ճաշի համար... ինչ արած, լաւ որկոր ունիմ...

—Ճարպիկ ես եղել, Ահմէդ, ծիծաղեց շահը. բայց չես մտածում, որ շահը կարող է իմանալ և այդ էլ արգելել. ինչ կանես դու այն ժամանակ այդ մեծ որկորիդ հետ։

—Էլի բերանդ չարով բաց արիր... Եթէ արգելի Աստուած ողորմած է, քաղցած չենք մնալ...

—

Միւս օրը շահը դարձեալ հրամայեց որ արգելուի ջորիներ հաւաքելը։ Ապա, երբ մթնել էր, դարձեալ դէրուիշի հագուստը հագաւ և եկաւ կանգնելու Ահմէդի խանութի առաջ։

Ձեղքից ներս նայեց և այս անգամ կատարեալ ապշեց՝ տեսնելով որ հնակարկատը էլի ուրախ զուարթ, երէկուայ պէս մի ճաշ առաջը դրած, նստել ուտում էր։

—Աստուած է վկայ, այս հնակարկատը կախարդ է եղել. այս ճաշը որտեղից է գտել։

Եւ դուռը բաղխեց։

—Եա՛ հազրաթը Ալի, ո՛վ միւսիւլման, բաց դուռը և նորից տուր դէրուիշին բաժին։

Հնակարկատը ճանաչեց դէրուիշի ձայնը. իսկոյն վեր թռաւ, մի հին կոշիկ գտաւ, շպրտեց դէպի դուռը և գոչեց.

—Կորի՛ր, հեռացի՛ր, դժոխքի որդի. հերիք չէ՞ր որ բերնիցդ չար խօսքեր ելան և բոլորը կատարուեցան։ Գնա՛, այլ ևս ո՛չ մի փշուր քեզ չունիմ տալու։

—Ստո՛ւմ ես, Ահմէդ. ասաց շահը— առջևումդ կերակուր ունիս. տուր դէրուիշի բաժինը։

---

[1]) Պարսկաստանում կաշառքը գողութիւն չէ համարւում, այլ մէդալիլ (եկամուտ)։

Ու այնքան բաղխեց, այնքան աղօթեց-երգեց, այնքան աղաչեց, որ հնակարկատը—իսկապէս ո՛չ անգութ և ո՛չ էլ չար մարդ—դուռը բաց արաւ, դէրուիշին ներս առաւ։

Շահը դարձեալ հացին ձեռք չը տուաւ։

—Այս ինչ է, Ահմէդ, ասաց նա—դու մի խեղճ հնակարկատ, շահն էլ այդ արհեստը երէկ արգելեց. խորամանկութեան դիմեցիր, ֆէրրաշ եղար—նա էլ խափանուեց. ասա՛ ինձ, միւսիլմա՛ն, որտեղից է ճաշը. չը լինի՞ դու ողորմութիւն ես հաւաքում։

—Լռի՛ր, դէրուիշ աղա. զայրացաւ Ահմէդը—ես մեծ հօր որդի եմ, թէև աղքատ. աւելի շուտ քաղցածկը մեռնեմ, քան ձեռք կը պարզեմ։ Իմ այս ճաշը, լը-սի՛ր, թէ ինչպէս եմ գտել։ Հայրս մի հին, ժանգոտ սուր ունէր, բայց երկաթը լաւ. տարայ այսօր բազար, երկաթը ծախեցի—կոթն իբր յիշատակ ինձ թողի—և նրա փողով այս ճաշն առի։

—Բայց չէ՞ որ սուրդ ահա այնտեղ է.

—Այո. բայց երկաթի տեղ փայտ դնել տուի...Ահա գաղտնիքը։

Շահը կուշտ ծիծաղեց։ Ահմէդին արդէն նա սկսել էր սիրել և շատ հաւանել։

Եւ ոչինչ չ՚ասաց. կերաւ ու խմեց, երգեց ու օրհնեց և բարեկամաբար Ահմէդից բաժնուեց։

—

Երկրորդ օրը Շահ-Աբբասը իր գահին նստեց և հրամայեց գնալ—որոնել, քաղաքում որքան ֆէրրաշ կամ մի օր իսկ ֆէրրաշութիւն արածներ կային, ժողովել և իր առաջը բերել իրենց հագուստով, իրենց սրերով։

Ու գնացին։ Երեկոյեան դէմ մի երկար շարք՝ պատկառանօք եկան կանգնելու նրա առաջ։

Շահ-Աբբասը նայեց, Ահմէդն էլ նոցա մէջն էր իր փայտեայ սրով՝ պատեանի մէջն անշուշտ։

Եւ շահը մտածեց նորից զուարճանալ։ Ու երբ երկար ղուռանը կարդաց, յանկարծ գլուխը բարձրացրեց, խստութեամբ նայեց բոլորին, նայեց Ահմէդին, դէմքը խիստ կնճռեց ու ասաց.

—Դո՛ւ, անունդ ինչ է.

—Ահմէդ, քեզ ծառայ.

—Լաւ ուրեմն, Ահմէդ, կողքիդ ընկերը հանգիստ չէ կանգնած. հա՛ն սուրդ և կտրիր նրա գլուխը։

Սարսափը տիրեց ամենքին։ Ահմէդը շփոթուեց, սաստիկ գունատուեց։

—Ձերդ մեծութիւն. գոչեց նա ուժգին և քիչ ծաղրածու—ընկերս ահա շատ հանգիստ է կանգնած, մի հրամայիր ինձ անմեղ արիւն թափելու։

—Ի՞նչ... որոտաց շահը—դու համարձակւո՞ւմ ես հրամանս չը կատարել։ Շուտ, հան սուրդ և դրա գլուխը կտրիր։

Եւ մտքումը զուարճանում էր տեսնելով Ահմէդի շփոթութիւնը, բայց հաշուի չէր առել Ահմէդի ճարպիկութիւնը։

Հնակարկատը երկրպագեց շահին, փորձեց աղաչել, խնդրել-համոզել և այդ՝ աւելի էր զուարճացնում ինքնակալին։

—Խփիր, գոռաց նա—խփիր թէ չէ քո գլուխը կը կտրեն։

Ահմէդը տեսաւ որ ուրիշ ճար չունէր, չը խայտառակուելու շո՛ւտ հնարքը գտաւ. աչքերը երկինք բարձրացրեց, աղօթեց ու գոչեց բարձրաձայն.

- Ո՛վ դու արդար Աստուած և մեծ մարգարէ, տեսնում էք որ այստեղ ստիպում են ինձ անիրաւ բան անել. եթէ ընկերս անմեղ է, թո՛ղ սուրս պատեանում իսկոյն փայտի փոխուի։

Եւ մեծ ոյժով սուրը դուրս քաշեց։ Ամէնքը ապշեցին. սուրը փայտ էր դարձել։

Արքան ծիծաղեց. շատ զուարճացաւ, հրամայեց իսկոյն Ահմէդին դատաւորի պաշտօն տալ և ասաց նրան.

—Ահմէդ, այժմ դատաւոր ես. յիշիր փայտի սուրդ և ամեն անգամ, երբ կասկածի մէջ ընկնես յանցաւորի համար, աղօթիր Աստծուն այնպէս, ինչպէս այժմ աղօթեցիր...

—

Ասում են որ Ահմէդը մինչև իր խոր ծերութիւնը փայտէ սուրը միայն իր վրան ունէր և երբէք չը

պատահեց որ փայտը՝ երկաթի փոխուէր կամ նոյն իսկ ջարդուէր։

Իսկ երբ մեռաւ նա, փայտէ սուրը հետը գերեզման դրին, պարսից յայտնի մի բանաստեղծ էլ սոյն տողերը արձանագրեց նրա շիրմի վրայ.

«Հանգիստ քեզ, արդար, բարի դատաւոր.
Թէև լաւ մեծ որկոր ունէիր, խելք հնակարկատի՝
Բայց կշիռդ հաւասար էր և սուրբդ փայտի»...

II

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԿԱՆԱՆՑ ԾԱՂՐՈՂ ԱՐՔԱՑԱԶՆԻ.

Ո՛չ մի թագաւորի ժամանակ Սպահանի պարսկական շքեղ պալատները չեն տեսել այնքան մեծ զուարճութիւն և յարատև խնջոյք, որքան Շահ-Հիւսէյն Սուլթանի օրերով։

Ինքը-շահը յաճախ, երբ դեռ երիտասարդ էր, գալիս էր մտնելու իր եղբօր և որդու շուրջը հաւաքուող արքայազների և պալատականների մէջ. նոցա հետ նստում էր խմելու, զուարճախօսելու կամ պարողները դիտելու և նուագածութիւն լսելու։ Երբեմն, երբ տեսնում էր որ իր պատկառանք ազդող ներկայութիւնը նեղում էր շահզադաներին և չափաւորում նրանց քէֆը, հրամայում էր տանել իրեն մեծ սրահի ծածուկ վերնատունը, և այնտեղից, առանց տեսնուելու, տեսնում ու լսում էր ամէն բան։ Եւ մեծապէս հրճւում էր, երբ ականատես էր լինում ծայրահեղութեան հասնող զուարճութեանց։ Իր եղբայրը, որդին, բոլոր շահզադաները, Շիրազի անուշահամ գինիների ազդեցութեամբ, պարողուհիների հմայիչ ժպիտների և գգուանքների տակ՝ պալատը լեցնում էին աղմուկով, երգերով, և մեծապէս հաճոյք պատճառում շահին։

Այդպէս, մի գիշեր էլ, երբ նա մտնում էր ծածուկ վերնատունը և շահզադաները չը գիտէին նրա ներկայութիւնը, տեսաւ որ ցածում, շքեղ կերակուրնե-

ըով լի սփռոցների առաջ, գինու բաժակները առաջնե-
րին, բոլոր շահզադաներն ու պալատականները փոխա-
նակ երգելու, աղմկելու, —մի տաք վէճի մէջ էին մը-
տել, մինչ պարողուհիները անշարժ սպասում էին և
նուագածուները յօրանջում։

Շահը խիստ հետաքրքրուեց թէ ինչ էր անցնում
այնտեղ—ցածում, և սկսեց ականջ դնել։

Խօսում էր իր եղբայրը և խօսքն ուղղում մեծ
վեզիրի որդուն, որին էր դարձել ամէն ակնարկ։

—Չէ, Մահմուդ միրզա, գոչում էր շահի եղբայրը
բորբոքուած—Երդւում եմ մարգարէի ապարօշով, որ դու
դեռ երեխայ ես և չը գիտես թէ ինչ է նշանակում կի-
նը... Դա, —նահլաթ սատանային—մեզ փորձանքի մէջ ձը-
գող դժոխային ոգու ստեղծած մի քաղցրահամ պտուղ է,
որին ճաշակելու համար հարկաւոր է խիստ լինել. ապա
թէ ոչ, շատ վատ կը տուժի մարդ...

Վեզիրի որդին արհամարհութեամբ թոթուեց ուսերն
ու ասաց ծաղրաձև.

—Երևի ձերդ մեծութիւնը փորձանքի է հասել
մի կնոջ ձեռքով. բայց ես երբէք չեմ կարող հաւատալ,
որ մի կին կարող լինի ինձ խաբել, ինձ ծաղրել կամ
նոյն իսկ փորձանքի մէջ ձգել... Կին ասածդ, ձերդ մե-
ծութիւն, մի երեխայ է կամ մի խաղալիք, որին երկու
մատով կարելի է ճզմել, երբ զզուեցրեց քեզ...

—Երկուսդ էլ սխալ էք, մէջ մտաւ թագաժառան-
գը—իմ հայրս միշտ ասում է—թող Աստուած երկա-
րացնէ հօրս կեանքը—որ կնոջ վատ ու լաւ լինելը՝
տղամարդուց է կախուած, եթէ խիստ վարուես՝ կինը
քեզ հնազանդ կը լինի և դու նրան կը կառավարես.
իսկ եթէ թոյլ լինես, նա՛ քեզ խաղալիք կը շինի և
դո՛ւ կը լինիս նրա գրաստը... իմ կարծիքով ո՛չ պէտք
է շատ խիստ լինել կնոջ հետ և ոչ էլ շատ թոյլ. ա-
մեն բանի միջակը միշտ լաւ է...

—Ձերդ մեծութիւնը խելօք է խօսում, ասաց վե-
զիրի որդին—բայց, դարձեալ կրկնում եմ, չեմ ճանա-
չում մի կին, որ կարող լինի ինձ խաբել կամ փորձան-
քի մէջ ձգել... Այդպիսի կին չը կայ աշխարհիս վրայ,
քանի դեռ խելքս գլխումս է... Վկայ մեծ մարգարէն,

ահա գրազ եմ գալիս 1000ի դիմաց 1000 ոսկով, որ եթէ գտնուի մի կին, որ ծաղրի ինձ կամ խաբի որ և է բանի մէջ, այդ 1000 ոսկին ես կը տամ ձեզնից որին որ կամենաք...

Այդ միջոցին պալատականներից մէկը, որ դեռ չէր խօսել, խօսք առաւ և ասաց.

—Թող ձերդ վսեմութիւնը իր 1000 ոսկին ինձ համար պահի, եթէ երբ և իցէ խոստովանուէք, որ խաբուել էք մի կնոջից կամ ծաղրուել... Միայն թէ ձերդ վսեմութիւնը չը վճռի փախչել սիրուն կանանցից, կամ հեռանալ դէրուիշների մօտ...

—Քաւ լիցի...—գոչեց Մահսուդ միրզան—այսուհետև, ընդհակառակն, ես աւելի պիտի ընկնեմ կանանց ետևից և պիտի տեսնէք որ Շիւքիւր խանը իմ 1000 ոսկու վրայ կ'աւելացնի մի ուրիշ հազարն ևս։

—Ուրախութեամբ. ասաց Շիւքիւր խանը—մէկ ամիս թող տևի մեր գրաւը. 1000 ոսկին ձեզ զուրբան, եթէ տղամարդը յաղթի կնոջ...

Բոլորը կասկածանքով գլուխները շարժեցին, իսկ վեզիրի տղան, աւելի քան հպարտ՝ գոչեց.

—Պիտի տեսնէք, աղաներ...

—

Մինչ տեղի էր ունենում մեծ սրահում այդ վիճաբանութիւնը և շահն էլ իր վերնատան մէջ կողքին կանգնած վեզիրին դարձած ասում էր—

—Վեզիր, 1000 ոսկի էլ ես կը տամ որդուդ, եթէ նրա քիթը ողջ մնայ մինչև մէկ ամիս. բայց, երդւում եմ, ո՛չ մի դատաստան կամ հատուցումն, եթէ որդիդ նոյն իսկ մեռնի կնոջ ձեռքով հասցրած փորձանքից...—

Մինչ այդ, ասում եմ—խօսակցութիւնները տեղի էին ունենում, ներքինիներից մէկը, որ լսել էր ամեն բան և պաշտօն ունէր շահզադաների մէջ պատահած հետաքրքիր տեսարանները գնալ հարեմի կանանց պատմելու անդադար—վազելով հարեմխանէն մտաւ և այնտեղ հաւաքուած թագուհիներին և պալատականների կանանց պատմեց եղած վէճի մասին։

Թագուհիները սաստիկ բարկացան Մահսուդ-միր-

զայի արհամարհական խօսքերը լսելով, իսկ պալատականների կանայք մինչև իսկ գտան, որ հարկաւոր էր վեզիրի որդու այդպիսի լրբութեան մասին գանգատել շահին։

—Իզուր էք տաքանում, ասաց թագուհիներից մէկը. շահը անշուշտ իր վերնատնից լսած կը լինի ամէն բան։ Մեզ հարկաւոր է այժմ մի հնարք մտածել ջարդելու այդ՝ կանանց ծաղրող արքայազնի քիթը այնպէս, որ որտեղ իրը պատմի, այնտեղ էլ մերը չը մոռանայ յաւիտեան... եկէք, կանա՛յք, մտածենք մեր վրէժը առնելու և մեր ոյժը ցոյց տալու... Ա՜խ, թէ ես թագուհի չէի լինիլ...

—Ի՞նչ կանէիր, հարցրեց մեծ թագուհին.

—Ի՞նչ... նախ այդ յանդուգնին կը գրաւէի, յետոյ երը մօտս գար, մի լաւ ծեծել կը տայի...

—Ոչինչ բաներ են դրանք, խօսեց երկրորդ թագուհին—ինչ կը լինի ուրիշի ձեռքով ծեծել տալը. քաջ էք, ինքներդ, ձեր ձեռքով մի այնպէս խաղ խաղացէք նրա գլխին, որ թէ՝ բոլորս, շահն էլ մեզ հետ—ծիծաղենք և թէ՝ Մահսուդ-միրզան այլ ևս չը համարձակուի մեզ ծաղրել...

Եւ երբ վէճը այստեղ էլ սաստկանում էր ու ոչ ոք մի լաւ բան չէր կարողանում մտածել, յանկարծ կանանցից մէկը խօսք ուզեց և ասաց.

Ես նրան կը պատժեմ, խանումնե՛ր, միայն երդուեցէք, որ ոչ ոք լուրը այստեղից դուրս չի տանի։

Խօսողը պետական քարտուղարի կինն էր, որ յայտնի էր պալատում ոչ միայն իր հրաշալի գեղեցկութեամբ, այլ և աշխոյժ, տաք, սրամիտ և յանդուգն բնաւորութեամբ։ Թագուհիները սաստիկ սիրում էին նրան, որովհետև Զոհրա խանումը ոգելից, կատակաբան, զուարճացնող, աշխոյժ և սիրալիր կին էր, շատ ընդունուած պալատում։

—Դո՛ւ. գոչեց նրան մեծ թագուհին—ապա, մեզ ասա թէ ինչ ես մտածել։

Չեմ ասիլ, ժպտաց Զոհրա խանումը—երբ ամեն ինչ կատարուի՝ կիմանաք։

—Զգոյշ կաց, ծիծաղեց թագուհին— ամուսինդ

շատ նախանձոտ է և վա՛յ է քեզ, որ իմացաւ թէ ինչեր ես անում...

Եւ դրա համար էլ, ասաց Զոհրա խանումը—բերէք ղուռանը, ձեռքներդ դրէք նրա վրայ, երդուէք որ գերեզմանի պէս լուռ պիտի մնաք մինչև որ ես իրաւունք չը տամ պատմելու... Մտածեցէք. եթէ մի բառ ասել էք ուրիշի, թէ ես կը կորսուեմ և թէ շահզադէն անպատիժ կը մնայ։

Բոլորը երդուեցին. բոլորը խնդրեցին Զոհրա խանումից՝ անելիքի գոնէ մի մասը յայտնել, բայց նա մերժեց նոյն իսկ մեծ թագուհուն և սա համոզուեց, որ բացարձակ գաղտնապահութիւնը ամէնից լաւ բանն է։

—

Այդ դէպքից անցել էր 15—16 օր։ Մահսուդ միրզան ինքն իսկ մուռացել էր իր գրազը. մուռացել էին թագաւորը, վեզիրը և պալատականները, որովհետև միմեանց արագ կերպով յաջորդող քաղաքական անցքերը՝ բոլորի մտքերն էին զբաղեցրել։ Շահ Հիւսէյն սուլթանը իր որդուն Թաւրէզ էր ուղարկել, Շիրազի կողմերում ապստամբ ցեղեր էին յայտնուել և պալատականներից շատերը մեկնել էին Սպահանից։

Եւ Մահսուդ-միրզան անհոգ ու միշտ զուարթ, զբօսնում էր Սպահանի բազարներում ու փողոցներում և առիթը չէր փախցնում գեղեցիկ կանանց ետևից ընկնելու։ Մի օր էլ, երբ ցերեկով, մենակ, անցնում էր մի մեծ փողոցով, յանկարծ դիմացը եկող կանանցից մէկը նայեց նրան, երեսի ծածկոցը բարձրացրեց, ցոյց տուաւ մի գեղեցիկ—աւողջ դէմք և այնպէս նշանական կերպով ժպտաց, որ Շահզադայի սիրտը դող եղաւ։

—Ո՞վ է այս կինը, մտածեց նա—երևի հաւանեց ինձ և ուզում է հետս ծանօթանալ. լաւ տնից է երևում...

Ու հետևեց նրան։ Կինը արագացրեց քայլերը։ Շահզադան նոր միայն նկատեց, որ աղախին էլ ունէր նա. և սակայն շարունակեց նրանց ետևից գնալ։

Կինը մի քանի անգամ դարձաւ, խուլ անկիւններում մի քանի անգամ էլ սիրուն դէմքը ցոյց տուաւ շահզադային և ապա, երբ մտել էին կողմնակի փողոց-

ներ, յանկարծ կանգ առաւ, մի քանի խօսք փսփսաց աղախնին և թշուառ շահզադայի աչքից անհետացաւ՝ արագութեամբ ծռուելով դէպի մի այլ փողոց։

Շահզադէն ուզեց վազել նրա ետևից, բայց աղախինը կտրեց նրա առաջ և ցած ձայնով ասաց.

— Խանումս խնդրում է ետևիցը չը գնալ... բայց եթէ աղան ուզում է խանումին տեսնել, թող այս գիշեր, ապանից 2 ժամ յետոյ գայ Շահվերան փողոցի անկիւնը և ինձ սպասի...

—Իրաւ, ասաց շահզադէն յուզուած—խանումը ուզում է ինձ իր տանը ընդունել։

—Այո... բայց մենակ պիտի գաս և սպասես մինչև որ քեզ մօտենամ։

—Իսկ ինչպէս ճանաչեմ քեզ։

—Ես կը մօտենամ և կը խօսեմ. այնտեղ մի մեծ քար կայ, նրա մօտ կանգնիր...

Եւ աղախինն էլ արագութեամբ անհետացաւ։

Շահզադէն մնաց մտախոհութեան մէջ։ Սրդեօք թակարդ չէին լարում իր դէմ, սպանելու, կողոպտելու... էհ, բայց ո՞վ շահ ունէր իրեն սպանելու մէջ. և եթէ նոյն իսկ կողոպտէին, մեծ բան էր մի քանի ոսկի կորցնել... բայց ոչ, նա զէնք կը վերցնէր հետը. փողոցն էլ յայտնի փողոց էր և միշտ պահապաններով լի, որովհետև բազարի ճիշտ կողքին էր... Մնում էր ուրեմն լաւ զինուել, իր ծառաներին էլ իմաց տալ որ փողոցը գնալը և կատարել խանումի պատուէրը։ Մանաւանդ որ այնպէ՞սի գեղեցիկ կին, այդքա՞ն հրապուրիչ աչքերով, առողջ, հիանալի դէմքով...

Վճռեց անպատճառ գնալ։ Անհամբերութեամբ սպասեց գիշերուան, յետոյ լաւ զինուեց և զգուշութեամբ քայլեց դէպի նշանակուած տեղը, դտաւ մեծ քարը, նստեց նրա վրայ և սպասեց։ Թէև ամառ էր, բայց պարսկական ամէն մի քաղաքի փողոցները, մութը ընկնելուն պէս՝ ամայանում են։ Շահզադէն դտընուում էր լիովին մենակ։

—

Որոշած ժամանակից շուտ գնացած լինելով, սպա-

սեց երկար և ձեռքը զէնքի վրայ, անդադար շուրջն էր նայում, որ չը լինի թէ յարձակուէին վրան։

Բայց ոչինչ չը պատահեց և քիչ յետոյ մթան միջից տեսաւ մի կնոջ, որ մօտեցաւ, հազաց և ասաց.

— Գնանք, աղա, խանումը սպասում է քեզ. ո՛չ մի տղամարդ չը կայ տան մէջ։

— Իսկ հեռո՞ւ է տունը։

— Միայն յիսուն քայլ. ետևիցս եկ։

Շահզադէն, միշտ ձեռքը զէնքի վրայ, զգուշութեամբ շուրջը նայելով՝ հետևեց աղախնին։

Յիսուն քայլ այն կողմ, աղախինը կանգ առաւ մի մեծ և շքեղ դրան առաջ և դուռը բաղխեց։

Քիչ յետոյ դուռը բացուեց և շահզադէն ներս մտնելով՝ տեսաւ որ դուռը բաց անողը ինքը—խանումն էր, այժմ տնային կիսաբաց հագուստով և այնքան գմայլելի ու գեղեցիկ, որ նա հիացած՝ ոչ մի բառ խօսել չը կարողացաւ։

—Բարի եկար, Մահմուդ միրզա, ասաց կինը — ես քեզ վաղուց ուզում էի տեսնել։

—Ա՛հ, դու ինձ ճանաչո՞ւմ ես, խանում — գոչեց շահզադէն զարմացած։

—Ո՞վ չէ ճանաչում մեծ վեզիրի սիրուն որդուն, որին ամեն կին ցանկանում է... Երջանիկ եմ, որ իմ տունս եկար. այժմ ներս մտնենք և պիտի տեսնես թէ մտածդ տունը հասարակ տուն չէ։

Եւ իրաւ, խանումը նրան տարաւ շատ շքեղ զարդարուած մի սենեակ, ուր, մեծ լուսամուտները բաց նայում էր ծաղկալից բաղի վրայ։ Նստեցին նրբա ճոխ պատրաստուած ընթրիքի մօտ։ Կային շիշերով մաքուր, ընտիր գինիներ, քաղցրեղէն, ամենալաւ պտուղ, համադամ կերակուրներ։

Եւ շահզադան շատ ուզեց իմանալ, թէ ո՞վ էր այդ կինը։ Մանաւանդ որ տան մէջ ոչ մի տղամարդի կամ ներքինու նշոյլ չը կար և այժմ նա կատարելապէս ապահով սկսեց զգալ իրեն։

Մինչ այդ՝ խանումը գրաւիչ ժպիտով մերժեց նրան ասել իր անունը, լցրեց բաժակի մէջ յստակ գինին, մատոյց, ապա հրամցրեց կերակուր, պտուղ և

այնքան հմայիչ էր նրա վարմունքը, այնքան սիրալիր ու գգուանքներով լի, որ գինիի հետ այդ բոլորը միացած, կատարեալ արբեցութեան մէջ ձգեցին վեզիրի որդուն։

Այժմ երիտասարդը այլ ևս ոչինչ չէր մտածում, եթէ ոչ՝ ունենալ այդ հրաշալի կնոջ իր գրկում, վայելել նրան, լսել նրա ձայնը և երբէք չը բաժանուել նրանից։

Բայց կինը չափաւորում էր նրա խանդը, յորդորում էր խմել, ուտել և սպասել դեռ մինչև քնելու ժամանակը։ Եւ շահզադէն խմում էր. հանեց վերարկուն, շոգել սկսեց, հանեց մի կողմ նետեց գլխարկը, յետոյ ծիծաղելով դուրս ձգեց գօտուց սուրը, ատրճանակը և գլուխը դրախտային կնոջ ծնկների վրայ, ուտում էր նրա՝ դէպի իր բերան պարզած պտուղը կամ քաղցրեղէնը և համբոյրներ դրոշմում մատուցանող մատների վրայ...

Այսպէս արբշիռ անցաւ մի երկու ժամ։ Վերջապէս սեղանը հաւաքեցին և երբ աղախինը վերջին պընակն էր տանում, խանումը դարձաւ նրան և ասաց քարձրաձայն.

— Անկողինը տանիքի վրայ փռիր, ներսը շատ շոգ է...

— Ա՛հ, այո՛, այո՛, գոչեց շահզադէն — բաց երկնքի տակ ունենալ քեզ իմ գրկում, վայելել...

Այժմ արդէն այլ ևս հաշիւ չէր տալիս իր ասածների մասին և կատարեալ արբեցութեան մէջ էր կնոջ դիւթիչ ժպիտների, փափուկ ձեռքերի գգուանքի և հմայիչ խօսքերի ազդեցութեան տակ։

Քիչ յետոյ աղախինը եկաւ ճրագները հանգցնելու, և յայտնեց որ անկողինը տանիքի վրայ նրանց էր սպասում։ Խանումը և շահզադէն ձեռք ձեռքի տուին և տանիքն ելան։ Այնտեղ, մի կողմում, փռած էր մի փառաւոր անկողին։ Շահզադէն արբշիռ սկսեց հանուել պառկելու։

— Իսկ դո՞ւ, դարձաւ նա խանումին։

— Ես ևս, ժպտաց խանումը և դանդաղութեամբ սկսեց գլխի շորը քանդել։

Շահզադէն անհամբեր, շտապով հանուեց և ընկաւ ներքնակի վրայ։

Բայց հազիւ թէ ուզում էր ձեռքերը տարածել և գոչել խանումին

— Ե՛կ...

... Որ զգաց թէ ներքնակը նախ փոսանում էր, ապա բոլորովին գոգացաւ և յանկարծ ներքնակով մէկտեղ մի մութ տարածութեան միջից ցած ոստնելով՝ ընկաւ լերկ գետնի վրայ մեծ բարձրութիւնից...

—

Ո՞վ չը գիտէ, որ արևելքում շուկաներից մեծ մասը ծածկուած են տանիքներով և տեղ տեղ վերևից մեծ ու լայն երթիկներ ունին ներսում լոյս թափանցելու համար։

Ո՞վ չը գիտէ նաև, որ այդ բազարները մթնանալուց յետոյ կատարելապէս ամայանում են և միայն շների խմբերն են, որոնք կիտուած այս-այն կողմ նընջում են, այլ և բազարի պահնորդները (դարուղաներ) որոնք միմեանցից հեռու, ձիթէ աղօտ ճրագի մօտ նըստած՝ արթուն հսկում են խանութները՝ գողերի դէմ։

Արդ, ահա այդպիսի մի շուկայի տանիքի մեծ երթիկի վրան էր փռուած շահզադէի հարսանեկան անկողինը. և երբ նա պառկել էր, ներքնակը գոգացաւ, անցաւ երթիկի միջով և ահագին դղրդիւնով ընկաւ ճիշտ բազարի մէջ տեղում։

Շուկայի շները, լսելով դղրդոցը, իսկոյն, ահագին վոհմակներով յարձակուեցին ընկած ներքնակի և շահզադէի վրայ և ականջ խլացնող աղաղակներով սկսեցին գոռալ թէ ներքնակը և թէ թշուառ, շշմած և միակ շապկանց շահզադէին. կտրտեցին ինչ որ կար նրա վրայ, խածոտեցին ձեռքն ու ոտքը և նրա աղաղակը, ընկած ժամանակ կրած հարուածների ցաւն իսկ չը մեղմացրին, այլ աւելի գրգռեցին շուկայի արթուն հսկողներին...

Եւ ահա, շուկայի պահնորդները, լսելով շների հաչոցը, իրենց փայտերը ձեռքերին՝ վրայ վազեցին, տեսան շահզադէին, գող կարծեցին ու սկսեցին փառա-

ւոր կերպով ջարդել նրա կողերը։ Այս երկիրներում գողին կամ մարդասպանին ջարդել-ծեծելը ոչ միայն արգելուած չէ, այլ և յատկապէս, զուրանով ու շէրիէթով պատուիրած։

Բայց շահզադէն, ընկածից, շների խածոտելուց, կերած ծեծից ուշագնաց եղաւ և մեռածի պէս՝ այլ ևս չէր շարժւում։

Պահնորդները երբ այդ տեսան, վախեցան որ շատ խիստ էին եղել և սպանել էին գուցէ գողին, կանգ առին, շներին ցրուեցին, ապա ճրագով զննեցին դէմքը և զարմացան տեսնելով որ, նախ, գողը՝ գողի կերպարանք չունէր, երկրորդ՝ որ նա միակ շապիկ ունէր իր վրայ և ազնուականի մարմին և երրորդ, որ հետն էլ, թէև կտրտուած, բայց շատ թանգագին կտորով մի ներքնակ կար։

Միմեանց երեսի նայեցին, բացատրելու չափ խելք չը գտան իրենց գլխում և մտածելով ապագայ պատասխանատուութիւնից, բարւոք համարեցին մի կերպ ազատուել կասկածելի, ով գիտէ որտեղից եկած՝ տարօրինակ անձից։ Եւ, ընդհանուր վճռով, ներքնակը մի կողմ առին՝ միւս օրը ծախելու և եկամուտը իրենց մէջ բաժանելու համար, յետոյ մէկը շահզադէի գլխից բռնեց, երկուսը ոտներից և այդպէս տարան նորան մօտակայ մի բաղանիք, յայտնեցին որ փողոցումն էին գտել և իրենք փախան։

Բաղնիսպանը իսկոյն զգաց շահզադէի բերնից փըչող գինու հոտը և որովհետև, գոնէ ի ցոյց, լաւ միւսիլման էր, նախ մի լաւ թքեց «հարամ ըմպելիքը» փորը լցրած անասունի երեսը, ապա, նկատելով որ անասունի ուշքը վրան չէր, տարաւ բաղանիք, քիչ տրորեց, քիչ սառը ջուր կապեց գլխին ու նստեց կողքին՝ մինչև որ «անասունը» ուշքի կը գար։

Շահզադէն, երևի սառը ջրից, քիչ յետոյ ուշքի եկաւ, և որովհետև սթափուել էր, զարմացած շուրջը նայեց։ Նախ չը յիշեց, թէ ինչ էր պատահել, բայց յետոյ, երբ մի առ մի մտաբերեց, կատաղութիւնից սկըսեց լալ։

Ի՞նչ, արդէն խաբուած, ծաղրուած, ծեծ կերած

և խայտառակուած մի կնոջից և այդպէս վիճակի մէջ, ինքը, վէզիրի որդին, ընկած մի ստոր տեսակի բաղանիքի անկիւնում։

—

Ի հարկէ միւս օրը Շահզադէն լայտնեց իր ով լինելը. նրան դրին պատգարակի մէջ, տուն տարան, նա պառկեց հիւանդ՝ թէ կերած ծեծից և թէ զգացած զայրոյթից մի ամբողջ ամիս. և ի հարկէ ելնելուց յետոյ, մտադրելով խստօրէն վրէժն առնել, ծառաների հետ գտաւ կնոջ տունը և դուռը խստութեամբ բաղխեց, բայց իզուր... նա ձեռքը յոգնեցրեց երկար զարնելով, որովհետև ոչ ոք դուռը բացող չեղաւ, և, բացի դրանից, դրացին, երկար բաղխումից հետաքրքրուած՝ դուրս եկաւ և յայտնեց վեզիրի որդուն, որ աւելորդ էր բաղխելը, որովհետև այդ տունը մի տարուց ի վեր կատարեալ անբնակ էր և որ տունը պետութեան սեփհականութիւնն էր, իրեն – շահի նախկին պալատներից մէկը...

Եւ այսպէս, քթով մնաց թշուառ շահզադէն. ամաչեց խուզարկութիւն տնել, շահին գանգատել և խնդրել իմանալու թէ ո՞վ էր մի գիշեր մտել նրա պալատում... Ու այնուհետև, երբ մի օր էլ, պալատում քէֆի ժամանակ, պալատական Շիւքիւր խանը հարցրեց Մահսուդ միրզային նրա կարծիքը կանանց մասին, վեզիրի որդին լռութեամբ ոտքի ելաւ, մի կողմը տարաւ Շիւքիւր խանին, համրեց նրան հազար ոսկին և ասաց.

—Եթէ կուզես՝ կը պատմեմ, բայց ազատիր ինձ ընդհանուրի առաջ ծաղրուելուց։

—Աստուած ազատի, ասաց Շիւքիւր խանը – պահիր քո մէջ՝ եղածը. մեզնից իւրաքանչիւրը կնոջ ձեռքով դաղուել է և ոչ ոք չէ ուզում վէրքերը նորոգել...

Յետոյ, մինչև կէս մէջք խոնարհուեց վէզիրի որդու առաջ և աւելացրեց.

—Ողջոյն մեր տանջուած եղբօրը... Շատ էժան ազատուեցիր, զգուշացիր աւելի թանգերից,...

—

Ասում են որ Մահսուդ-միրզան երբէք չը կարո-

զացաւ իմանալ, թէ ինչ կին էր իրեն խայտառակողը և թէ ո՞վ էր թագաւորին պատմել ամեն բան ու իրեն՝ նրա մշտական ծիծաղին ենթարկել...

Չ'իմացաւ, բայց այնուհետև զգուշացաւ և միշտ խուսափում էր կանանց մասին եղած վէճերից։

Վ. ՓԱՓԱԶԵԱՆ

ԱՍՎՈՒՄ Է ԼՍՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ [1])

Մի մարդ ունէր մի կին, որ միշտ կռուում էր դրացիների հետ. տեսաւ մարդը՝ որ հնար չկայ այս դալմաղալից ազատուելու՝ մի ուրիշ տուն շինեց, և այն տեղ բնակվում էր։

—

ՑԱՌԱՋԱԲԱՆ

Արդէն շատերին յայտնի կլինի որ մեք ճշմարիտ և անխարդախ սրտով սիրելով մեր ազգը, ցոյց տուեցինք որ ազգային մատենագրութիւնը պիտոյ է լինէր նոր և կենդանի լեզուով. որ կարողանար կամուրջ բանալ Ազգի բանականութեան և գիտութեան գաղափարների մէջ։ Բայց խոստովանում ենք ցաւելով որ մեր կողմից ճշմարտութեան դրօշակը բարձրացնելը չարժաւորի եղաւ մեր վերայ քանի մի կամակոր մարդերից բամբասանք հաւաքելու, որանով երևում է որ այդ պարոնները դեռ ևս իւրեանց ագէտ և անտեղի դատողութիւնը ստրկացած չեն կարողացել հասկանալ այն հիանալի խորհուրդը որ ծածկած կայ այս գործի մէջ։ Այդ պարոնները փչում են իւրեանց փողը թէ կայ չկայ հին լեզուն էր որ պիտոյ է յուսաւորութեան սերմունքը հայոց ազգի անդաստանի մէջ ցանելու գործի դառնար պատճառ որ մշակած լեզու էր. այս տգէտ և միանգամայն խաւար դատողութիւնը այնքան մի ծիծաղելի բան էր որ եթէ մի եւրոպացի բանագէտ մարդ հանդիպէր այն գրուածին որ այս մոլորական կարծիքն հերքում էր պիտոյ է չափէր և կշռէր ազգի խորին տգիտութեան վիճակը մինչև որ նորա անունով միայն ուսումնականներին մի պարզ և յայտնի ճշմարտութիւն

---

[1]) Մ. Նալբանդեանցի այս աշխատութեան բնագիրը ուղարկել է մեզ մեր աշխատակից պ. Եր. Շահպիզը, որ ստացել է հանգուցեալի քրոջորդի պ Յովհաննէս Խաչատրեանից։

ԽՄԲ.

ապացուցանելու համար պիտոյ էին այդքան խօսք վկայութիւնք և օրինակներ:

Շատ և շատ զարմանալի է որ այդ հնամոլ պարոնները խօսելու ժամանակին թէև աղաւաղ այնուամենայնիւ նոր լեզուով յայտնում են իւրեանց միտքը. սորանով իրանք իրանց ապացուցանում են որ նոր լեզուն ունէր կեանք և գործածութիւն ընկերութեան մէջ, եթէ պատահում էր հարցանել դոցա, թէ ինչու համար հին լեզուով չեն խօսում ընդհանրապէս այլ նոր լեզուով, կը լսէիր պատասխան, թէ սովորական լեզուն ազգի բերանում այս է, և եթէ կամենային հին լեզուով խօսել այդ անհասկանալի էր ժողովրդին: Այս պատասխանը արդար էր և ճշմարիտ. բայց արի քննենք թէ ինչ է պատճառը որ այդ պատուելի պարոնները ինչ ժամանակ կամենում էին իւրեանց միտքը գրի միջնորդութիւնով յայտնել, իսկոյն այն մի ժամ յառաջ սովորական խոստովանեալ լեզուն կը պղծվէր, և անհասկանալի նոր ժողովրդին հին լեզուն կը դար հանդէս, մինչև որ կամենում էին մինչև յետին շունչը պատերազմիլ և ճշմարտութիւնը չխոստովանել: Սորա պատճառը մեզ քաջ յայտնի է և այդ պարոնները իրանք ևս գիտէին, որ գիտենք. բայց որովհետև մինչև այժմ հանդէս չէինք բերած, այժմ պիտոյ էր հանդէսով ցոյց տալ որ հաստատուէին իւրեանց կարծիքի միջում թէ իւրեանց կամակորութեան աղբիւրը մեզ քաջ յայտնի է:

Այդ պարոնները անուսումն մնալով և ամենևին ծանօթութիւն չունենալով ևրոպէական բազմաճիւղ լուսաւորութեան մասին իւրեանց անունը մի անուսումն ազգի մէջ ինչպէս հայոցն է հանդէս հանելու համար խուկել են իւրեանց ուղեղի մէջ քանի մի հին լեզուի մեռեալ բառեր և այս դարձել էր նոցա համար մի սիւն (թէև շատ խախուտ), որից թիկն տալով կամենում են իւրեանց կանգնելը չինեն հաստատուն և տևողական, այժմ այդ պարոնները եթէ խոստովանէին ճշմարտութիւնը, և համաձայնէին որ հին լեզուն մեռեալ լինելով ազգի լուսաւորութեան ճանապարհ չէր, այլ պիտոյ էր նոր լեզուով գործ կատարել անտարակոյս այն սիւնը ցած կը գլորվէր իւրեանց կանգնելը սիւնի նման կլինէր գետնի երեսին թաւալ գալ. ահա այս անձնապահութիւնն էր որ հարկադրում էր սոցա պարիսպ քաշել ճշմարտութեան ջրի ընթացքի հանդէպը, ապա թէ ոչ ամենևին հակառակելու տեղիք չկար այն բանի միջում որ պի-

տոյ էր Ազգի հետ մտածել և խօսել այն լեզուաւ որ նորան հասկանալի էր։ Մեք երկար ժամանակ փորձելով ճանաչեցինք այդ հնամոլների ցանկութիւնը, որ կամենում են թէ մեք նորանց արհամարհենք. ահա սորանով հասած թող ճանաչեն իւրեանց այդ ցանկութեանը, և եթէ աղբիւրը պիղծ էր մեր աչքումը որչափ ևս այն ջուրը որ նորանից բղխում էր. ուրեմն նոյն արհամարհանքը ամենայն բոպէ հասանում է և պիտոյ է հասանի և դէպի նոցա անհիմն բամբասանքը և երեխայական դատաստանը։ Իսկ մեք անխարդախ սրտով սիրելով ազգը երբէք յետ չենք կենայ որչափ ամենակալ տէրը կը շնորհէ մեզ կարողութիւն. նոր լեզուով աւանդել ազգին ինչ որ վայելում էին և յարմար էին ժամանակի հարկադրութիւններին։

Առաջին անգամ պատշաճ համարեցանք փոքր ի շատէ հանդէս հանել հայոց մանուկների առաջև յունաստանի հին կրօնագիտութիւնը սրանով կարող էին նոքա ճանաչել ամբողջ յունաց ազգի հոգին ինչ որ կար նոցա մէջ այն ժամանակ, և այս շատ ուղիղ մի բան էր պատճառ որ կրօնը մի այնպիսի պատկերացոյց էր այն ազգին որին սա պատկանում էր, որ ազգի հոգին, լուսաւորութիւն, մի խօսքով նորա բոլոր արժանաւորութեան հանդէսը կարելի էր քննել նորա կրօնից, պատճառ որ որքան լուսաւոր էր ազգը այնքան մաքուր էր և նորա կրօնը, այնքան ճշդած էին չափով և քանոնով կրօնի վերաբերեալները, ընդհակառակն մեք տեսանում ենք որ մին անպիտան և խաւար ազգի կրօն լցուած է լինում աղօտ և խաւարային խորհուրդներով ևս և խռկուած աւելորդապաշտութիւններով, կրօնի ներգործութիւնը ազգի վերայ շատ անչափելի մեծ է, համարեա թէ ամբողջ ազգի հոգին կրթվում է և դաստիարակվում է նորա կրօնի ուսման առաջնորդութեամբը, բայց կրօնի վարդապետութիւնը տարածելու մասին ժողովրդի մէջ անպատճառ պիտոյ էր ազգային մատենագրութիւն, սա էր առաջին և վերջին հնարը որ կարող էր տնկել իւրաքանչիւր մարդի մէջ կրօնի արժանաւորութիւնը և յատկութիւնը, մեք տեսնում ենք գոնէ յունաստանի կրօնի մէջ որ նա ինչ ժամանակ իւր ազգային աւանդութեանով ստացած կրօնը ունէր շատ անծուծ և տգեղ բաներ էին այս տգիտութիւնը գեղեցկացաւ և միանգամայն նոր կերպ ստացաւ ինչ ժամանակ յոյները փոխ առին կրօնական գիտութիւններ Եգիպտոսից և Փիւնիկիայից, մինչև Տրոյացւոց պատերազմը կամ 300 տարի նորանից յետոյ մինչև Հոմերոսի ժա-

մանակը կրօնը բաւական միջակ ճանապարհով յառաջ էր խաղում. իսկ երբ ընկաւ սա Հոմերոսի բանաստեղծական ճարտար մտքերի տակ այն ժամանակ հոգևորվեցաւ նոր ի նորոյ իմաստասիրական գաղափարներով. սրանում կարելի էր տեսանել վարդապետական բարոյականութեան, ահա թէ մատենագրութիւնը ինչ ներգործութիւն ունի կրօնի վերայ: Ուրեմն կրօնի ուսումը պիտոյ էր սերմանել ազգի մէջ մատենագրութեան միջնորդութեանով և այս երկուսը ձեռքէ ձեռք բռնած պիտոյ է մշակէին ազգի բանականութիւնը, բայց այն մատենագրութիւնը որ անհասկանալի էր ժողովրդին ոչինչ մի բան էր. սա այն մատենագրութիւն չէ որ թեակից էր կրօնի և այլ լուսաւորութեանց ազգի մէջ տարածվելուն, սա մեռեալ և անպիտանացեալ մի լեզու է բոլորովին անհասկանալի նոր և կենդանի ազգին, մատենագրութիւնը ամենայն ազգերի մէջ միշտ համեմատվել է նոցա դրութեանը և նոցա իւրաքանչիւր դարու լեզուի խօսուածքին, այս միայն հայոց խելօք պարոններն են որ 19-երորդ դարու մարդերը կամենում են լուսաւորել 5-րդ դարու լեզուով, ուրեմն մատենագրութիւն ասելով պիտոյ էր իմանալ այն մաքուր նոր հայախօսութիւնը որ ծանօթ էր և հասկանալի համարեա թէ մեր ամբողջ ազգին ուր և գտանվէին սոքա. ապա թէ ոչ զուր էր ամենայն ջանք և մտածութիւնք ազգի լուսաւորութեան մասին:

Եթէ հին լեզուով մատենագրութիւնը անհասկանալի լինելով միանգամայն նոր ժողովրդին կարող էր կամուրջ լինել լուսաւորութեան, ապա ուրեմն մեր ժողովուրդը շատ ժամանակ է որ լուսաւորված է և մեք սխալ կարծիքի մէջ եմք պատճառ որ եւրոպացի լեզուներով որ հայոց հին լեզուի նման անհասկանալի էր մեր ժողովրդին կան աւանդված այնքան տեսութիւնք և նոր նոր գաղափարներ որ հին լեզուն կարծեմ դեռ նոցա ստուերի մին քառորդն ևս չունի իւր մէջ. ուրեմն ամենայն հայ այն գրերիցը առնելով և իւր տանը պահելով (ինչպէս պիտոյ է անէ հին լեզուով հայ մատեանները) կարող էր լուսաւորվիլ: Այսպիսի խելացնոր դատաստան այն հնամոլ մարդերի գլխումը մենք չենք գովիլ, այլ իմաստուն և բանագէտ մարդերի և ամբողջ Եւրոպայի համաձայն ասում ենք թէ շատ հեշտ է գերեզմանից մեռելները հանել կենդանացնել քան այդ ժանգոտեալ լեզուով նոր ժողովուրդ լուսաւորել: Խնդրում էինք եթէ միայն կը պատասխանէին մեզ այդ պարոնները. որտեղ է տեսնվված

որ մի սառած մարդ ջերմացնելու համար նորան դնէին սառուցի մէջ, այն ողորմելին ինչ ջերմութիւն կարող է ունենալ սառուցից:

Հայոց ողորմելի Ազգը երկար ժամանակ անուսումն մնալով բոլորովին սառած մարդու է նմանում այժմուս, և հին լեզուն 1300 տարվայ ցրտերով արդէն սառուց է դարձել պատճառ որ նախ և յառաջ կեանք և գործադրութիւն չունի ընկերութեան մէջ. երկրորդ իւր մէջ չունի այն ջերմացուցիչ և սնունդ տուող հիւթը, որ եթէ դնէիր այն սառուցեալ մարդին նորան կենդանութիւն հաղորդէր. մեք այսքան ժամանակ քննելով այդ լեզուի ուղը և ծուծը ոչինչ չգտանք բացի քանի մի պատմական տեղեկութիւններից, երանի թէ և այս բաները գրված լինէին ինչպէս տեսանում ենք օտար լեզուների մէջ:

Նոր լեզուի միջում կայ հիանալի խորհուրդ երանի թէ հնար լինէր ասել այդ հնամոլ պարոններին. հին լեզուի միջում ևս կայ խորհուրդ բայց կորստական և շատ տարբեր այն խորհրդից և միանգամայն հակառակ ինչ որ կայ նոր լեզուի մէջ. այդ պատուելի պարոնները եթէ փոքր ի շատէ ուղիղ տեսութիւն ստացած լինէին կտեսանէին այդ խորհուրդները, բայց ափսոս որ միմիայն հայոց հին և մեռեալ լեզուն ուսանելով մնացել են դէպի ուրիշ գաղափարները անզգայ: Մին օրինակ դեռ չենք տեսած որ հացը թէև միայն նիւթական բան էր մի մարդ ունենալով երկու տեսակ մինն հին քանի մի շաբաթվան արդէն քարացած իսկ միւսը թարմ և տաք, բաց թողնէր այն թարմ և նոր եփած հացը որ աւել սննդարար էր և ձեռքը պարզէր դէպ ի քարացած հացը որ յառաջ քան ստամոքսը դնալը բոլոր ատամները ևս կը փչրէր: Հայոց հին լեզուն հնացած հաց է արդէն, և 1300 տարի է որ թխված է իսկ նոր լեզուն ամենայն օր եփվում է ջերմ է և սննդարար, ուստի սորանով շատ հեշտ կլինէր կերակրել հայոց ազգի սոված հոգին և սա աւելի հիւթ և արիւն կդառնար նորա մէջ քան թէ այն չորացածը և քարացածը որ չունի իւր մէջ այն կենդանական մասները. ով որ ականջ ունի լսելու թող լսէ, պատճառ որ ասվում է լսվելու համար:

Մինչև հայոց Ազգի հեղինակքը իւրեանց նպատակը չդնեն ազգի օգուտը. մինչև նոքա չմոռանան սնապարծութիւնը և հին հեղինակի անունով փառաւորվիլը. մինչև նոցա մատենագրութիւնը չլինի նոր լեզուով, սուտ է և զուր ամենայն ջանք և

վաստակ ազգը լուսաւորելու, հին լեզուով ոչինչ չի յառաջանայ. եթէ յառաջացող՝ էր մինչև հիմայ կը յառաջանար. կարծեմ 200 տարի աւելի է որ Վենետիկում հազարաւոր գրքեր տպվեցան բայց ազգը միայն արտաքին աչքով տեսաւ այսպէս կլինի և 200 տարի յետոյ և 1000 տարի յետոյ, և ինչպէս մինչև այժմ այնպէս և միշտ հայոց մանուկը կլինի օտարի հացի մուրացկան ամենայն օր դունէդուռ մանդալով կը յագեցուցանէ սորանից և նորանից իւր իմացական ստամոքսը և այս կերպով սնունդ ստանալով նորա ազգութիւնն ևս կլինի մին խայտաճամուկ բան, անարմատ ծառ...

Ամենայն մարդ պիտոյ է իւր սեպհական կերակուրն ուննայ, իւր սեպհական կենդանութիւնն ունենայ. ինձ ինչ օգուտ է եթէ ես տեսանում էի մի հարուստ մարդ և մասնակից չէի նորա հարստութեանը. այսպէս ինչ օգուտ է օտարի առողջութիւն և կենդանութիւնը եթէ ես հիւանդ այսօր կամ վաղը սպասում եմ մահին. հայոց ազգի անբաղդ զաւակները մինչև այսօր օտարի հացով են իւրեանց ստամոքսը յագեցուցանում և օտարի կենդանութիւնով ապրում են, և սորանով հետ զհետէ օտարանում են, այսու ամենայնիւ նորա չեն մեղաւոր. ժամանակի հարկաւորութիւնքը անխնայ պահանջում են, նա իւր սեպհականը չունելով օտարի հացի և կեանքի միջնորդութեանով գործ է կատարում:

Հայոց ազգի մեծատունքը առաւել մեր կարծիքով պիտոյ է նախանձաւոր լինէին ազգի լուսաւորութեանը և պատշաճաւոր խրախոյս և քաջալերութիւն տային այն մարդերին որոնք անդադար աշխատում են ինչպէս յարմար էր ժամանակի հարկաւորութեանցը, ապա եթէ այս չլինի, հեղինակը աշխատելով տիւ և գիշեր և վաստակելով, չունի կարողութիւն իւր աղքատ քսակից բաշխել ազգի մանուկներին պարգև, հեղինակը իւր աշխատութեամբը իսկ ազգի մեծատունքը իւրեանց տուրքովը պիտոյ է գործ կատարեն, մինը առանց միւսին ոչինչ չեն կարող առնել, և եթէ այսպիսի պատշաճաւոր միաբանութիւններ չըկային, եթէ ամենի նպատակը ազգի լուսաւորութիւնը չէր ուղիղ ճանապարհով, եթէ հին լեզուն կենդանի աշխարհքիցը տարագիր չէր, սուտ է ամենայն լուսաւորութիւն զուր ջան և անօգուտ վաստակ:

Մեք գոնէ լսում ենք բանագէտ մարդերի բերանից որոնք փորձ առած լինելով կարող էին փորձանքի մէջ եղողնե-

ըին օգնական գտանվիլ, թէ ոչինչ ազգ չի կարչի եթէ նորա լեզուն պատշաճաւոր կերպով ճոխանայ արմատանայ և հաստատվի ազգի հոգու և սրտի մէջ. այսպէս ոչինչ ազգ կարող չէ իւր գոյութիւնը և կեանքը յարատեւ կորուսանելով իւր պատշաճաւոր մատենագրութիւնը և լեզուն. ազգ ինքն ըստ ինքեան ազգ չէ եթէ չունի լեզու. մեք տեսանում ենք մարդումս բաղկացութիւն երկու իրից առանց որոց նա չէր մարդ այսինքն հոգին և մարմինն երկուսը լծորդեալ լինելով, կառուցանում են այն արարածների մէջ չքնաղ և վսեմ ստեղծուածը որ միայն իւր արարչի պատկերն էր, այսպէս ազգութիւնը ունի իւր հոգին. և այս հոգին լեզուն է. առանց այս լեզուին չկայ ազգ. սուտ բան է և առասպել առակ. ոչինչ բան չէ կարող բնութեան մէջ լինել կենդանի եթէ չկային նորանում հոգի, այս հոգին լեզուն էր. բայց հայոց ազգը իւր լեզուն թողել է անմըշակ և նորա մատենագիրքը և հեղինակքը մինչև այսօր ասիացի դաստիարակութենով սնունդ առած լինելով աւելի նախընտիր են համարել որ իւրեանք փառաւոր մարդերի կարգումը երևէին հին լեզուով գրողների միջին քան թէ նոցա գրածիցը ազգի անբաղդ զաւակները օգուտ ստանային, թէև ցաւելով հարկէ խոստովանել ինչ էր դոցա գրածը բաղդատելով նրոպէական բազմաճիւղ և բազմօրինակ լուսաւորութեան հետ քանի մի աբեղայական մտքեր կամ ոտանաւորներ անօգուտ էին ազգին. թող այդ պարոններն իմանան որ հայոց ազգը հինգ դարուցը մինչև հիմա իւր մատենագրութեան մէջ մնացել է միշտ ոտանաւոր և դորանից է որ հասել է այս ողորմելի վիճակին. այժմ հարկաւոր էր ձիաւորվիլ. ոտանաւորով ոչինչ չի յառաջանայ, երանի թէ դորա գրողներն կենդանի և առողջ ականջ ունենային այս խօսքերը լսելու, որ ասվում է լսելու համար: Պատճառ Ազգը լուսաւորելու համար հարկաւոր չէր ոտանաւորներ և ոչ խրթին և հին հայախօսութիւն որ 19 դարու տըգէտ մարդերի միմիայն պարծանքն էր. այլ պիտոյ է տալ ազգի մանուկներին և ընդհանրապէս բովանդակ ազգին այնպիսի ուղիղ գաղափարներ գիտութիւնների վերայ որպիսի տեսողութիւնով լուսաւոր էին Եւրոպայի բարեբաղդ բնակիչքը. միտքը բանականութիւնը տեսութենով և կենդանի գաղափարներով կլուսաւորվի, այս էր նորա ներքին օգուտը. իսկ այդ մեքենապաշտութիւնը որ յառաջանում էին տգէտ մարդերի մէջ կապիկի նման աշխատ լինելով նմանեցնել իւրեանց գրածը Եղիշէին

կամ Խորենացիին, այդ մի այնպիսի խելագարութիւն էր որ եթէ իւրեանցից ևս հարցանէիր չունէր պատասխան. թող որ մինչև հիմա իսկ այն հեղինակների գրածը ոչինչ արդիւնք չունին յառաջացուցած ազգի մէջ, այդպիսի ձգտողութիւնքը ոչ այլ ինչ էին բայց եթէ մոլեռանդ թռիչք երևակայութեան որ գիտէ ոչնչից գոյացնել հոյակապ ամբարտակներ մինչ իրողապէս հորի միջում էր ինքը: Թող հայոց մանուկը սովորի իւր մայրենի լեզուով ազատական գիտութիւնները, թող նա այն աշխատութիւնը ինչ որ գործ է դնում հին և մեռեալ լեզուն սովորելու համար, գործ ածէ հարկաւոր գաղափարներ ստանալու մասին, չէ պիտոյ նորա հինգ դարու հայախօսութիւնը այդ նորան հաց ու ջուր չի տայ, նոցա հարկաւոր է գիտութիւնը որը կարող է ստանալ նոր լեզուի միջնորդութենով որ կեանք և կիրառութիւն ունենալով ընկերութեան մէջ այլ և ուղ և ծուծ ունենալով կարող էր հիւթ և արիւն դառնալ և սնունդ տալ հայոց տկար զաւակներին:

Այս բաները խօսելուց յետոյ եթէ պատահելու լինի մեզ տեսանել այդ հնամոլ պարոնների կողմից անդարձ կամակորութիւն, ուրիշ ոչ այլ ինչ կարող ենք եզրափակել, այլ այս միայն որ այդ մարդիկը մեռուցանելով իւրեանց խիղճը կամենում են պատճառ դառնալ որ հայոց մանուկների տարբաղդ վիճակը որ սկսած 1300 տարից տևում է մինչև այսօր, չարունակվի հազարաւոր տարիներ և սորանից յետոյ, սորա համար որ միայն այս պարոնները իւրեանց աննշան կեանքի մէջ իւրեանց անունը հին և մեռեալ լեզուի արձանի վերայ կարողանան դրոշմել. թէև այս ողորմելիքը չգիտեն թէ ուռանոսի փոքր որդին դիտանեցը երդում է կերած ոչընչացնել այսպիսի անպիտան որդիները, բայց *կարող է* այս որդիքը փրկելու ջանք դնելով նախ և յառաջ այդպիսի յիշատակաց արձանները կտայ կուլ տալու, բացի սորանից յոյս ունինք որ ազգը ինքը ևս այժմ ինչպէս մինչև այսօր բնական ուղիղ դատողութենով բաց է թողել մեռածը և պահել է իւր մէջ կենդանի լեզուն թէև անուսումն լինելով աղճատել է և խանգարել, այսուամենայնիւ շատ հաւանական է որ այսուհետև ևս միշտ աշխատութիւն գործ դնի գտանել և ընթեռնուլ այն մատեանները որ գրվում էին նոր հայախօսութենով այլ և ջանք անէ փոքր առ փոքր մաքրել իւր խօսուածքը դուրս ձգելով այն բառերը որոնք օտար ազգերից մտած էին այսպէս և զաւա-

ուականը մասնիկներ կամ կոշտ ու կոպիտ ոճերը, որքան և որչափ կարելի էր։

Մեք որչափ կարողացել ենք քննել և ճանաչել, հասկացել ենք որ մարդումս լեզուն այն ժամանակ կարող է խօսել ինչ ժամանակ միտքը արդէն խօսելի բանը դասաւորում է, պատճառ որ խօսքը որ ձայնաւորված լսվում էր օդի մէջ մեր բերանից մեր իսկ մտքի ծնունդն էր. լեզուի պաշտօնը այստեղ այս էր որ մեր մտքով հասկացածը նա լսելի չինէ օդի միջնորդութենով ուրիշներին, շատ զարմանալի է որ այդ պարոնները որ հին լեզուի պոչը բռնած քշում են իւրեանց էշերը յառաջ, չեն կարողացել մինչև հիմա ճանաչել թէ լեզուն եթէ չունի իւր մէջ այն սննդարար ուղը և ծուծը եթէ նա մշակած չէ ինչպէս պահանջում էր հարկը, ոչ այլ ինչ է բայց եթէ մին թարգման որ մտքի ծնուցածը դուրս է հաղորդում ուրիշներին, տարակոյս չկայ հին լեզուի մէջ ուղ և ծուծ և սնունդ չլինելուն, արդէն ցոյց տուել ենք որ նա չունի այդ բաները, մեք տեսանում ենք նորան միմիայն իբրև պահարան հայոց հինգ դարու լեզուախօսութեան և քանի մի անցքերի. ուրեմն եթէ և շատ քաջ սովորէր հայոց մանուկը այդ լեզուն, այնուամենայնիւ տգէտ էր և ոչինչ չգիտէր միմիայն մի չոր լեզու գիտենալը փոր չի կշտացնի եթէ նորա հետ կապակից չէին այն յագեցուցիչ և սննդարար հիւթերը որ կարող էին արիւն դառնալ և հաստատել սիրտը, բացի սորանից հայոց մանուկի հանդէսը կամ ասպարէզը ո՞րն էր արդեօք, իւր հին լեզուն հանդէս հանելու ոտանաւոր գրելն եթէ քանի մի հատուկտոր տղայական ճառեր, և ո՞րոնք էին այդ հանդէսը բոլորողը, նա որ հանդիսում երևում էր իւր հին լեզուովը արդեօք կարո՞ղ էր իւր համար դատաւոր գտանել հասարակութեան մէջ, արդեօք նորա գրածը հասկանալի էր ժողովրդին. այն ձայները ինչ որ նա հանում էր արդեօք լսողների ուղեղին կը հասնէր իբրև նշանական ձայներ թէ միայն ականջի թմբուկի արձագանքը կլսէր այն հասարակ մարդը առանց ոչինչ հասկանալու, ինչպէս կարելի է խօսել մի մարդի հետ այնպիսի մի լեզուով որ նա չէր ուսել, որ նորան անծանօթ էր. այսքան պարզ և լուսապայծառ ճշմարտութիւնը չեն կարողանում այդ պարոնները դեռ իսկակ աչքով տեսանել, ուստի և ասում են որ պիտոյ է մարդ այնպիսի լեզուով խօսի որ դիմացի մարդը նորան չհասկանայ, և որչափ խրթին և մութը կը խօսէր այնչափ արժանաւոր և քան-

քարաւոր էր հեղինակը, սոքա բնութեան կանոնին չհաւանելով որ դրել է մարդուս մէջ լեզու և բանականութիւն սրտի զգացմունքը ընկերին յայտնելու մասին, իւրեանցից կանոն են հաստատել թէ պիտոյ էր խօսել այնպէս որ դժուար լինէր հասկանալը, ուրեմն եթէ դժուար հասկանալի խօսելը գովելի մի բան էր, բնաւ չխօսելը որչափ ևս, սոցա մօտ այսքան իրաւունք ունի ճշմարտութիւնը կամաւ և յօժարութիւնով միմիայն իւրեանց թքածը չկամենալով լիզել, յանձներն են առնում համբանալ և ճշմարտութիւնը չխոստովանել:

Քանի մի խօսք ևս պատշաճ համարում եմ ասել այն մարդերին, որոնք այնուամենայնիւ իւրեանց ողբալի տգիտութեանովը համարձակվում են բերան առնուլ գերապատիւ Ստեփաննոս վարդապետի գրուածքը, թէ նորա լեզուն ոչինչ քաղաքի սեպհական չէ, թէ գրոց բառերով խառնըված է, և թէ ազգը չի հասկանայ:

Մեք խօսելով մի աշխարհաբառ և նորախօս լեզուի վերայ երբէք չենք մտածել որ այդ լինի մի քաղաքի մասնաւոր կամ մի երկրի յատկացեալ բարբառ, պատճառ որ մեր նպատակին առաջին արգելքը կլինէր այդ. այլ միշտ իմացել ենք այն յըստակ հայախօսութիւնը, որ կարելի էր հասկացվել և ամենայն տեղ գտանված հայերից եթէ նոքա ծանօթ էին միայն մայրենի լեզուին այսինքն եթէ և նոր լեզուն չէին կորուսել ինչպէս Տաճկաստանումը կամ Ռուսաստանում կան շատ օրինակներ, այն գաւառական լեզուներն մեզ ամենին անպիտան է, պատճառ որ այն կոշտ ու կոպիտ լեզուովը ոչինչ մարդավայել ազնիւ միտք մանաւանդ ուսումնական խնդիրների վերայ չէ կարելի բացայայտել, իսկ թէ ինչու համար խառն եղել է գերապատիւ Նազարեանցի խօսուածքը գրոց լեզուի հետ, պատճառը շատ հեշտ էր ճանաչել որ նոր լեզուն չունէր այնպիսի բառեր որ կարողանային յայտարար լինել այն միտքերին, ինչ որ հեղինակը կամենում էր ասել և գրել և սորա պատճառն այս էր, որ իւրաքանչիւր այդպիսի բառի փոխանակ հայոց հասարակ մարդը գործ է ածում զանազան օտար ազգերի բառեր կամ ռուսաց և կամ տաճկաց: Ուստի բնական ուղիղ դատողութեանով քան թէ օտարի լեզուով յայտնել այն միտքը նա գրել է հին լեզուի բառերով, այս բանը մեք միշտ տեսնում ենք եւրոպացւոց մէջ մանաւանդ գաղղիացւոց, որոնց բառերի շատը դեռ պահում է իւր մէջ բնական լատին ձայնը, լեզուն

մի այնպիսի բան չէ որ ով կամենայ և երբ ուզածին պէս չի-նէ կերպաւորէ դորան. հարկաւոր է ժամանակ, շատ անգամ հարիւրաւոր տարիներ չեն թողուլ փոփոխութեան կնիք թող որ մի մարդ, իսկ թէ կային աշխարհաբառ լեզուի մէջ այն բառերը որոց փոխանակ պատուելի Նազարեանցը գործ է դրել հին բառեր թող այդ պարոնները իրանք գրեն աւելի մաքուր և յստակ և օրինակ լինին մեզ իւրեանց մաքուր հայախօսութեանովը այնպէս որ եթէ գերապատիւ Նազարեանցի գրածը կարող էր լինել 10000 մարդի անհասկանալի իրանց թող 1000 մարդի լինի միայն, բայց չլինի այնպէս ինչպէս եղել է մինչև հիմայ որ չորս ու կէս միլլիոն ժողովուրդից հասկացել են հենց հարիւր կամ հազար մարդ:

Ազգը երբէք չի կարող ուրանայ գերապատիւ Նազարեանցի աշխատութիւնը և անխարդախ դէպ ի ինքը սէրը· նա ուղիղ և պարզ մտքով կը տեսանէ այս չնաշխարհիկ և իմաստուն հեղինակի քնքուշ սիրտը, թող և մեր սիրելի բարեկամ պարոններն ևս անհոգս մնան որ նոցա փառասիրութիւն և հեղինակի անուն ժառանգելու յիմար ձգտողութիւնը ևս անծանօթ չի մնայ ազգին գոնէ այսուհետև եթէ ամենակալ տէրը կը բաշխէր մեզ կարողութիւն...

Ազնիւ մտրդուն ցանկալի է ընդհանուրի օգուտը, բացառութիւնը ընդհանուրի անպիտան անդամն է, ասում է լրսվելու համար:

ՄԻՐԱՑԷԼ ՆԱԼԲԱՆԴԵԱՆ

ՀԱՆՍ ՀԱՅԼԻՆԳԻ ԺԱՅՌԵՐԸ

Թ. ԿԷՕՌՆԷՐԻ

(Բոհեմիայի ժողովրդական աւանդութիւններից պատմուածք)

Դարեր առաջ Էգերի [1]) ափին մի փոքրիկ գիւղում ապրում էր մի հարուստ շինական։

Աւանդութիւնը չի յիշատակում մեզ այդ գիւղի անունը, բայց կարծում են, որ դա գտնուում էր Էգերի ձախ ափին, դէմ դիմաց Այխ գիւղին, որը բաւական ծանօթ է Կարլսբադի [2]) բոլոր այցելուներին։

Ֆայտը,—այս էր գիւղացու անունը,—ունէր մի սիրուն, շնորհալի դստրիկ, տեղացիների միակ ուրախութիւնն ու պարծանքը։ Եւ ճիշտ որ Ելիզաբեթը գեղեցիկ էր և բացի դրանից այնպէս ազնիւ ու բարեկիրթ, որ այն ժամանակ հազիւ թէ նմանը լինէր։

Ֆայտի տան կից կար մի հիւղակ. դա պատկանում էր երիտասարդ Արնոլդին, որի հայրը դեռ նոր էր վախճանել։ Արնոլդը սովորել էր որմնաշարութեան արհեստը և երկար բացակայութիւնից յետոյ առաջին անգամն էր, որ վերադարձել էր հայրենիք, երբ մեռաւ իր հայրը։ Իբրև բարի զաւակ նա ջերմ արտասուք էր թափում ծերունու գերեզմանի վերայ։ Բացի մի խեղճ հիւղակից հանգուցեալն իր որդուն ոչինչ չէր թողել, բայց Արնոլդն իր կրծքում կրում էր մի ժառանգութիւն՝ աւելի տևական և թանկագին, այն է՝ արդարասիրութիւն և հաւատարմութիւն և մի արթուն միտք՝ ըմբռնելու ինչ որ բարի է և գեղեցիկ։

---

[1]) Էգէր—դետ Աւստրիայում։

[2]) Կարլսբադ—քաղաք Աւստրիայում. նշանաւոր իր ջերմուկներով։

Նա դեռ գիւղը չէր մտել, երբ հայրն արդէն հիւանդացել էր, այնպէս որ ծերունին անկարող եղաւ տանելու որդուն երկրորդ անգամ տեսնելու յանկարծական բերկրանքը։ Արնոլդը, որը պէտք եղած ամեն խնամք տանում էր նրան, երբէք չհեռացաւ նրա կողքից. մինչև անգամ ծերունու մահից յետոյ էլ չգնաց չայցելեց իր մանկութեան ժամանակի ընկերներից ու ծանօթներից նրանց, որոնք չէին այցելել իրան հիւանդի անկողնի մօտ։

Արնոլդին ամենից աւելի կ'ուրախացնէր Փայտի դուստր Ելիզաբեթը, որի հետ միասին էր մեծացել. առանց հաճոյք զգալու չէր կարող յիշել այն փոքրիկ քաղցրասիրտ աղջկան, որը երբեմն այնքան սիրում էր իրան և որ այնքան սաստիկ լաց էր լինում, երբ ինքը ճանապարհ էր ընկնում մեկնելու Պրագ [1]) իր վարպետի մօտ։

Արնոլդը դարձել էր մի նրբակամ և վայելչագեղ տղամարդ և շատ անգամ էր ինքն իրան ասել, թէ Ելիզաբեթն էլ այժմ պէտք է հասակն առած, գեղեցկացած լինի։

Հօր մահից երեք օր յետոյ՝ երեկոյեան՝ որդին նստած նրա թաղմ գերեզմանի վերայ՝ խորասուզուել էր թախծալի երազների մէջ, երբ յանկարծ իր ետև լսեց մի մեղմ ոտնաձայն, որը քանի գնում առաջանում էր դէպի հանգստարանը։ Երիտասարդը նայեցաւ իր շուրջը, մինչ սիրադէմ մի աղջիկ, ծաղիկներով լի մի փոքրիկ կողով թևն անցկացրած՝ ներս սողաց դալարագեղ բլուրների մէջտեղով։

Թանթրուենիներից գոյացած մի մացառ ծածկում էր երիտասարդին Ելիզաբէթի աչքից, երբ այս ազնիւ արարածն ուզեց ծաղիկներով զարդարել իր բարի հարևանի գերեզմանը։

Նախ՝ արտասուքն աչերին՝ կռացաւ նա դէպի ցած, ապա ձեռներն իրար կցելով՝ աղօթեց մեղմաձայն. «Հանգի՞ր խաղաղ, բարի՛ մարդ, հողն աւելի թեթև լինի քեզ քան կեանքը. քո գերեզմանն առանց ծաղկի չի՛ մնալ, եթէ առանց ծաղկի էին անցնում քո օրերը»։ Արնոլդը այս լսեց թէ չէ՝ դուրս ցատկեց իսկոյն մացառների ետևից և, «Ե՛լիզաբեթ» գոչելով, առաւ նրան իր թևերի մէջ. օրիորդը դողում էր. «Ե՛լիզաբեթ, շարունակեց տղան, ճանաչո՞ւմ ես ինձ»։—«Ա՜խ, թոթովեց խեղճը կարմրելով, դո՛ւ ես, Ա՛րնոլդ. վաղո՛ւց է, որ չենք տեսել

[1]) Պրագ—Բոհեմիայի մայրաքաղաքը Աւստրիայում։

իրար։—«Եւ դու այդքան գեղանի, այդքան քաղցր, այդքան մտերի՞մ դեռ ևս. և դու սիրե՛լ ես հօրս և յիշում ես նրան այդքան սրտանց. ո՜հ, անձկալի՜, քա՜ղցր աղջիկ»։—«Այո, ազնի՜ւդ իմ Արնոլդ, սիրել եմ ես նրան անկե՛ղծ սրտով» ասաց նա և մեղմով դուրս սողաց երիտասարդի գրկից. «շատ անգամ ես և նա խօսել ենք քո մասին. դո՛ւ էիր նրա բերկրանքի ու երջանկութեան միակ աղբիւրը»։—«Ճի՛շտ է, հապճեպով ընդհատեց նրա խօսքն Արնոլդը, շատ անգամ եմ ուրախացրել ես նրան և, ո՜հ, Աստուած իմ, շնորհակալ եմ քեզանից, որ պահել ես ինձ բարի և առաքինի։—Բայց մտածի՛ր մէկ, Ե՛լիզաբեթ, ինչպէս ամէն բան փոխուել է այժմ. ի՜նչքան փոքր էինք երբեմն. հայրս նստում էր դրան առաջ, իսկ մենք խաղում էինք միասին նրա ծնկների վերայ. այն ժամանակ չափազանց քաղցր էին մեր յարաբերութիւնները և մենք անբաժա՛ն էինք իրարից. իսկ այժմ—բարի ծերունին նիրհում է այստեղ մեր ոտերի տակ և մենք մեծացել ենք. այս կայ միայն, որ եթէ չեմ կարողացել միշտ քեզ մօտ լինել, շատ, շա՜տ անգամներ քեզ վերայ եմ մտածել...»—«Ես նոյնպէս» փսփսաց մեղմով Ելիզաբեթն ու իր խոշոր սիրափայլ աչերը անկեղծօրէն սևեռեց երիտասարդի վերայ։

Այն ժամանակ Արնոլդը գոչեց ոգևորուած. «Տե՛ս, Ելիզաբեթ, մենք վաղուց ենք սիրել միմեանց, միայն թէ բախտը ստիպել էր ինձ հեռանալ քեզնից. այժմ սակայն, երբ նորից գտնում եմ քեզ, այն էլ այստե՛ղ, հօրս գերեզմանի կողքին, որտեղ երկուսս էլ նրան էինք յիշում լուռ ու մունջ, ինձ թուում է, որ ոչ մի բաժանում տեղի չի ունեցել մեր մէջ. մանկական զգացմունքն այժմ զարթնում է իմ մէջ որպէս առնական մի վիշտ... Ե՛լիզաբեթ, սիրում եմ քեզ, սիրո՜ւմ եմ. ահա մի խոստմանութիւն, որը առաջին անգամ այստեղ եմ անում, այս նուիրական հողի վերայ. իսկ դո՞ւ...»— Ելիզաբեթը խոնարհեցրեց իր բոցավառ դէմքը դէպի կուրծքը և արտասուեց լռիկ։ «Իսկ դո՞ւ» հարցրեց երկրորդ անգամ Արնոլդը՝ մի աղերսախառն ու թախծալի հայեացք ձգելով օրիորդի վերայ։ Վերջինս մեղմով բարձրացրեց իր փոքրիկ գլուխը և արտասուահեղձ բայց և սիրալիր մի հայեացքով նայեցաւ նրա աչերին և ասաց. «Արնոլդ, ես քեզ սիրել եմ անկեղծ սրտով և քեզ սիրել եմ միշտ, մի՜շտ սիրել եմ»։—Արնոլդը կրկին սեղ-

մեց Նրան իր կրծքին և կնքեցին իրանց սրտերի խոստովանութիւնը ջերմ համբոյրներով։

Երջանիկ սիրոյ այս առաջին արբեցութիւնից յետոյ Նրանք դեռ ևս երկար նստան՝ համակուած քաղցր երանութեամբ՝ հանգուցեալի գերեզմանի վերայ։

Արնոլդը պատմեց օրիորդին իր զլխին եկածներն օտարութեան գրկում՝ շեշտելով յատկապէս այն կարօտը, որ զգացել էր Հայրենի տան նկատմամբ։ Ելիզաբեթը կրկին խօսք բաց արեց հանգուցեալի մասին և յիշեց իրանց մանկութիւնն ու այն գեղեցիկ օրերը, որ էլ չէին դառնալու։ Արևը վաղուց էր մայր մտել, բայց չէին նշմարել Նրանք։

Վերջապէս մօտակայ փողոցում տեղի ունեցած մի աղմուկ երաշներից զարթեցրեց Նրանց. Ելիզաբեթը հրաժեշտի մի հապճեպ համբոյրից յետոյ՝ դուրս թռաւ Արնոլդի գրկից և շտապեց դէպի տուն։

Արնոլդն ամբողջ գիշերն անցկացրեց իր հօր գերեզմանի վերայ՝ սուզուած երանաւէտ մտածութիւնների մէջ, իսկ երբ բերկրաշեղ սրտով մտաւ Հայրենի հիւղը, լոյսը բացուում էր։

Միւս առաւօտ, երբ Ելիզաբեթը նախաճաշիկի պատրաստութիւններն էր տեսնում հօր համար, ծերունի Գայտը խօսք բաց արեց Նրան Արնոլդի մասին։

«Ցաւո՛ւմ եմ, ասաց, սրտանց ցաւում եմ ես այդ տղի վերայ. անշուշտ դու լաւ ես յիշում Նրան, Ե՛լիզաբեթ. Նրա հետ միասին շատ անգամ ես խաղացել»։— «Ի հարկէ, Հայր իմ» թոթովեց դուստրը շիկնելով։—«Ո՞հ, զաւակս, ինչքան ուրախ եմ, որ դու անպատուութիւն չես համարում քեզ յիշել մի այդպիսի խեղճ տղի. ճի՛շտ է, բախտը ժպտով է միշտ ողջունել ինձ և հարստացել եմ ես, իսկ Արնոլդենք մնացել են աղքատ, բայց Նրանք եղել են միշտ առաքինի. առաքինի էր դոնէ Հայրը և այսօր ո՛չ նուազ գովեստով են յիշում նաև իրան, Արնոլդին»։— «Ա՛յո, Հայր իմ, ընդհատեց խօսքն իսկոյն Ելիզաբեթը, Արնոլդը շատ առաքինի, շատ լաւ երիտասարդ է»։—«Դո՛ւ ո՞ր տեղից ես իմանում, Ե՛լիզաբեթ», ասաց Հայրը.— «Գիւղացիներն են պատմել, ես էլ լսել եմ» պատասխանեց դուստրը կակազելով։— «Լա՛ւ, շատ ուրախ եմ. և եթէ ես էլ երբ և է կարողանամ օգնել դրան, ոչինչ չեմ խնայելու» յարեց ծերունին։

Ելիզաբեթը խօսակցութեան վերջ տալու համար, որովհե-

տև քանի գնում շառագնում էր դէմքը, «կերակուրը նայիմ» ասելով շտապեց դուրս և այսպիսով ազատուեցաւ Ծերունու խորաշնին հայեացքից. Փայտը խորհրդաւոր կերպով օրօրում էր գլուխը։

Կէս օրից առաջ, օրիորդի տուած խոստումի համաձայն, Արնոլդը գտաւ Նրան Փայտի տան կից պարտիզում։ Ելիզաբէթը պատմեց Նրան առաւօտուայ ամբողջ խօսակցութիւնը, որից երիտասարդը քաղեց շատ փայլուն, շատ քաղցր յոյսեր իր բախտի համար։ «Այո՛, ասաց վերջապէս, ես էլ հենց ամբողջ գիշերը ա՛յդ եմ մտածել. սրանից լաւը չկայ. այսօր հենց կը գնամ ուղղակի հօրդ մօտ, առանց քաշուելու կը յայտնեմ Նրան մեր փոխադարձ սէրն ու ամուսնանալու փափագը, ցոյց կը տամ իմ հմտութիւնն արհեստիս մէջ, ինչպէս և վարպետներիս տուած վկայագրերը և կը խնդրեմ իր օրհնութիւնը։ Անշուշտ ուրախ կը լինի նա տեսնելով իմ անկեղծութիւնը, հաւանութիւն կը տայ մեզ, ես լիայոյս և քաջալերուած կը մեկնեմ օտարութիւն մի քիչ փող կը վաստակեմ և, ուխտիս հաւատարիմ, ուրախ կը վերադառնամ տուն և ա՛յնուհետև երջանիկ կը լինինք մենք։ Լաւ չե՞մ ասում, Ե՛լիզաբեթ, հո՛գիս»։—«Հա՛ տ լաւ, շա՜տ լաւ, գոչեց աղջիկը յափշտակուած և ձեռը ձգեց երիտասարդի վզին, շա՛տ լաւ կը լինի, անտարակոյս հայրս հաւան կը կենայ մեր խորհրդին. գի՛տե՞ս, ինչքան սիրում է ինձ»։—Քաղցր յոյսերով լի Նրանք բաժանուեցան իրարից։

Երեկոյեան Արնոլդը, որքան կարող էր լաւ զարդարուած, գնաց մի անգամ ևս իր հօր դերեզմանի մօտ, աղօթեց սրտանց, խնդրեց հանգուցեալի օրհնութիւնը, ապա դողդոջուն քայլերն ուղղեց դէպի Փայտի տունը։

Ելիզաբեթը, որ դողում էր ուրախութիւնից, ողջունեց Նրա գալուստը և անմիջապէս տարաւ Նրան իր հօր մօտ։

—«Հա՛րևան Արնոլդ, գոչեց Նրան Ծերունին դիմաւորելով, ինչ ես բերել ինձ»։—«Ես ինձ» պատասխանեց երիտասարդը։—«Այսի՞նքն» հարցրեց Փայտը։—«Պարոն հարևան, ըսկսեց Արնոլդը՝ նախ դողդոջ, ապա բոլորովին հաստատ ու սրտաբուղխ ձայնով. պարո՛ն հարևան, ներեցէ՛ք ինձ, եթէ փոքր ինչ ընդարձակուի խօսքս՝ որը ցանկանում եմ, որքան կարելի է, դիւրիմաց դարձնել ձեզ։ Ես աղքատ եմ, բայց որ փոքր ի շատէ ուսել եմ մի կանոնաւոր, արհեստ, այդ կարող են ապացուցանել ձեզ սոյն վկայագրերը։ Ամբողջ աշխարհը բաց է իմ

առաջ. որովհետև ես եմ արհեստով գոհ մնալ չեմ ուզում, այլ մտադիր եմ կատարելագործել արուեստը. վստահ եմ, որ ես ապագայում մի ընտիր ճարտարապետ եմ լինելու, ինչպէս որ խոստացել եմ հանգուցեալ հօրս։ Բայց, ասնի՛ւ տէր, աշխարհի մէջ ամէն բան կունենայ իր խորհուրդը և ամէն աշխատանք մի նպատակ։ Ինչպէս որ իմ շինած տները կառուցուում են ո՛չ թէ կառուցուած լինելու համար, այլ մի օգտի ծառայելու, նոյնպէս և իմ արուեստն ունենալու է իր որոշ նպատակը։ Ես արուեստը սովորելու եմ ո՛չ թէ սոսկ սովորած լինելու, այլ նրանով մի բան ձեռք բերելու համար. իսկ ինչ որ դրել եմ մտքիս մէջ, այն էլ դուք կարող էք տալ։ Ասացէք ինձ ուրեմն, երբ յաջողութեամբ պսակուին ջանքերս և բոլոր ոյժերս գործ դնելով ստեղծեմ ինձ համար մի աւելի բարձր, բարեբաստ կացութիւն, պիտի կարողանամ արդեօք ձեռք բերել այն, ինչ որ տենչում եմ այժմ».—«Բայց Ինձ ի՞նչ, ընդմիջեց խօսքը ծերունին, ի՞նչ ես ուզում ասել»։—«Ձեր դուստրը, տէ՛ր, ես և նա սիրում ենք միմեանց։ Ես, որպէս պարտաճանաչ մէկը, նախ և առաջ գալիս եմ ուղղակի նրա հօր մօտ առանց ուրիշների նըման օրիորդի ետևից ընկնելու։ Ցարգում եմ ես հնաւանդ սովորութիւնը. այդ պատճառով էլ այժմ դիմում եմ ձեզ և խընդրում եմ ձեր հաճութիւնը, որ երբ երեք տարի օտարութեան մէջ անցկացնելուց յետոյ վերադառնում հայրենիք և ցոյց տամ, որ կատարելապէս ուսել եմ արուեստս, չզլանաք ինձ ձեր օրհնութիւնը և թոյլ տաք Ելիզաբեթին, որպէս հաւատարիմ հարսնացու, ինձ սպասելու այդ երեք տարին ամբողջ։

«Սի՛րելիս, պատասխանեց նրան ծերունին. ես քեզ թոյլ տուեցի, որ ինչ որ ասելու էիր ասես. այժմ էլ դո՛ւ լսիր, որ ես էլ պարզ և ուղիղ յայտնեմ քեզ իմ միտքը։ Նախ և առաջ շատ ուրախ եմ, որ դու սիրում ես իմ դուստրին. որովհետև բարի ես դու և առաքինի. աւելի ևս ուրախ եմ, որ անկեղծորէն դիմում ես ինձ. քո այդ վարմունքն արդարև արժանի է մեծ գովեստի։ Բայց դանք այժմ քո յարուցած հարցին։ Վարպետներդ պատուել են քեզ արուեստագէտ անունով և յոյս են տալիս, որ ապագայում կարող ես մեծ մարդ լինել. տա՛յ Աստուած. բայց մ'ի մոռանալ, որ յոյսը, ինչքան էլ բարի բան, լինում է երբեմն խաբուսիկ. դրա՞ վերայ կանգնեմ Ելիզաբեթիս ապագայի շէնքը։ Երեք տարուայ մէջ կարող է գալ այնպիսի՞ մէկը, որ իմ դուստրին աւելի՛ դուր գայ և կամ, եթէ ո՛չ նրան

ի՛նձ աւելի դուր գայ։ Մերժե՛մ այդպիսուն յուսալով որ կը վերադառնաս դու։ Ո՛չ, սի՛րելիս, դրանով բան չի՛ դառնալ։ Միայն երբ դու վերադառնաս այստեղ և Ելիկաբեթն ապատ լինի դեռ ևս, դու էլ քո վիճակը բարուոքած, այն ժամանակ երբեք արգելք չեմ լինիլ։ Իսկ այժմ էլ ո՛չ մի խօսք այդ մասին»։—«Բայց, պարո՛ն Գայտ, խնդրեց Արնոլդը դողդոջ ձայնով և բռնելով ծերունու ձեռքը, լա՛ւ մտածեցէք»։ — «Ոչինչ չկայ մտածելու, ընդհատեց Գայտը, գնո՛ւմ ես—բարի ճանապարհ քեզ. չե՛ս գնում, մնացի՛ր տանս ինչքան կամենում ես. իբրև հիւր միշտ սիրելի ես դու ինձ. միայն թէ այլ ևս ո՛չ մի խօսք Ելիկաբեթի մասին»։—«Եւ այդ է ձեր վերջին որոշումը» հարցրեց Արնոլդը թոթովելով։—«Ա՛յո, այս է վերջին որոշումս» կրկնեց ծերը սառնութեամբ։—«Է՛հ, Աստուա՛ծ ինձ հետ ուրեմն» հառաչեց երիտասարդը և դուրս ելնելու վերայ էր, երբ Գայտը հապճեպով բռնեց յանկարծ նրա ձեռքից և կանգնեցրեց։

«Սի՛րելիս, ասաց, նրան, տխրելու ոչինչ չկայ. դու տղամարդ ես, ունիս ոյժ և քաջութիւն. խելքդ գլուխդ հաւաքիր և արհամարհիր վիշտդ. աշխարհը լա՛յն է. մտիր կեանքի մէջ և գոհ կը լինիս։—Այժմ բարի ճանապարհ քեզ և յաջողութիւն. երթաս բարով»։—Այսպիսով բաց թողեց նրան. Արնոլդը վերադարձաւ իր հիւղակը։

Արտասուքն աչերին կապեց նա իր ծրարը, հրաժեշտ տուեց իր հայրենի յարկին և քայլերն ուղղեց դէպի հանգստարան՝ վերջին մնաս բարովն ասելու հօր գերեզմանին ևս։ Ելիկաբեթը, որ դրան ետևից կցկտուր կերպով լսել էր վերը յիշած խօսակցութիւնը, արտասուքով ողողեց իր աչերը։ Քա՞ղցր էին նրա երազները մինչև այժմ, ամեն յոյս կորած էր երևում։

Մի անգամ ևս ուզեց նա տեսնել իր Արնոլդին, ուստի սենեակի պատուհանի առաջ կանգնած սպասեց, մինչև որ երիտասարդը դուրս գալով հիւղակից՝ մտաւ հանգստարանի ճանապարհը։ Մանկամարդուհին սլացաւ իսկոյն նրա ետևից և մտերմին դտաւ աղօթելիս իր հօր գերեզմանի վերայ։ «Ա՛ր-նոլդ, Ա՛րնոլդ, բացագանչեց խեղճը փարելով նրան, գնո՛ւմ ես. ա՞խ, չե՛մ թողնի գնաս»։ Արնոլդը գլուխը վեր բարձրացրեց կարծես երազից սթափուելով և ասաց. «Գնո՛ւմ եմ, Ե՛լիկաբեթ, գնո՛ւմ եմ. սիրտս մի խորտակիր քո արտասուքով. գնո՞ւմ եմ, ինչ որ էլ լինի»։—«Բայց էլի գալո՞ւ ես և ե՞րբ ես գալու»։

— «Գնո՛ւմ եմ աշխատելու, Ելիզաբեթ, ինչքան որ ներեն մարդկային ոյժերս. ես պէտք է ազատ լինիմ իւրաքանչիւր վայրկեանիս նկատմամբ, որ կարողանամ երեք տարի յետոյ կրկին այստեղ լինել։ Խոստանո՞ւմ ես արդեօք հաւատարիմ մնալ ինձ»։ — «Ա՛յո, և մինչև մահս, սի՛րելի Արնոլդ» գոչեց օրիորդն հեկեկալով։ — «Իսկ թէ որ հայրդ ուզենայ բռնանալ»։ — «Թէկուզ շղթայակապ տանեն ինձ եկեղեցի, այնտեղ, Տիրոջ սեղանի առաջ իսկ «ո՛չ» կը գոչեմ։ Ա՛յո, հաւատարիմ մնանք միմեանց, սի՛րելի Արնոլդ, այստեղ՝ երկրի վերայ լինի թէ վերը՝ երկընքում. ո՛րտեղ էլ լինի, գտնենք իրար»։ — «Ա՛րդ ուրեմն, բաժանուե՛նք իրարից, գոչեց Արնոլդը, որի արտասուաթոր աչերում սկսեց փայլել յոյսի մի նշոյլ. բաժանուե՛նք իրարից, կրկնեց նա. էլ չե՛մ վախենայ ո՛չ մի դժուարութիւնից. ոչինչ այլ ևս չի կարող խոչընդոտ լինել մեզ։ Արի՛, վերջին անգամ համբուրեմ քեզ և այս համբոյրը թող լինի վկայ մեր խոստման. մնաս բարով։ երեք տարի յետոյ երջանիկ կը լինենք»։ — Ասաց և դուրս պրծաւ օրիորդի թևերից։ — «Ա՛ռնոլդ, գոչեց օրիորդն, Ա՛ռնոլդ, չմոռանա՞ս քո Ելիզաբեթին», այն ինչ Արնոլդը մեկնել էր արդէն։ Սա հեռուից ծածանում էր կոյսին իր սպիտակ թաշկինակը՝ իբրև նշան վերջին հրաժեշտի, բայց շուտով մըտաւ անտառը և ստուերախիտ մթութեան մէջ այդ ևս եղաւ անտեսանելի։

Ելիզաբեթը փարեցաւ գերեզմանին և եռանդագին աղօթքներ վերառաքեց Աստծուն։ Համոզուած լինելով Արնոլդի հաւատարմութեանը՝ նա դրանով սիրտ էր առել և կարող էր ազատ համարձակ երևալ իր հօր աչքին, մինչ հայրն ամեն միջոց գործ էր դնում անուշադիր չթողնելու իր զաւակի ամենաթեթև քայլն անգամ։

Ամեն առաւօտ կանուխ Ելիզաբեթը գնում էր այն տեղը, ուր վերջին անգամ գրկել էր իր Արնոլդին։ Ծերունի Գայտը նշմարում էր այդ, բայց չտեսնելու էր տալիս և ուրախ էր նոյն իսկ, որ դրանով Ելիզաբեթը կարող էր հանդարտել և օրէցօր աւելի զուարթանալ։

Այսպէս անցաւ մի տարի և ինչքան ուրախ էր Ելիզաբեթը, որ դեռ չէր ունեցել ոչ մի սիրահար հետամուտ, որ հաճելի թուէր իր հօրը։ Երկրորդ տարին վերջանալու վերայ էր սակայն, որ երկարատև բացակայութիւնից յետոյ նրանց գիւղը վերադարձաւ մի մարդ, որը առաջ էլ եղել էր այդտեղ,

բայց որ գանգան ձախող հանդամանքների բերումով մեկնել էր և վերադառնում էր այժմ ամեն տեսակ փորձութիւններ կրելուց յետոյ։

Հանս Հայլինգը,—այս էր նորեկի անունը,—այդ գիւղից մեկնելիս մի խեղճ, ողորմելի մարդ էր, իսկ այժմ վերադառնում էր շատ լաւ վիճակի մէջ։ Կարծես հենց նրա համար էր վերադառնում այդտեղ, որ ցոյց տար իր նախկին թշնամիներին իր հարուստ գանձերը։ Սկզբում թուում էր ամենքին, որ նա երկար չի՛ մնալու գիւղում, որովհետև, իրա ասելով, եկել էր մի կարևոր գործ կարգի դնելու, բայց շուտով յայտնուեցաւ, որ նա մտադիր է երկար ժամանակ մնալու։

Գիւղում նրա մասին պատմում էին, որ իբր թէ հրաշքներ է գործում. շատ բանիմաց մարդիկ չէին հաւատում սրան և իրանց ուսերն էին վեր քաշում, իսկ ուրիշները թէև գիտէին, բայց այնպէս էին ցոյց տալիս, որ իբր թէ ոչնչից տեղեկութիւն չունեն։

Իրողութիւնն այս էր սակայն, որ, ո՛վ ինչ ուզում էր ասէր, Հանս Հայլինգն ամեն օր այցելում էր ծերունի Ֆայտին, պատմում էր նրան իր ճանապարհորդութիւնները, յայտնում էր որ ինքն եղել է Եգիպտոսում, դնացել է նոյն իսկ աւելի՝ հեռու տեղեր, անցել է ծովեր ու գամաքներ և տեսել է շատ զարմանալի բաներ, այնպէս որ ծերունին ախորժ յօժարութեամբ լսում էր միշտ նրա նկարագրութիւնները և ասես մի բան էր կորցրած լինում, երբ մի երեկոյ Հանս Հայլինգը չէր գալիս իր սենեակը։

Ընայած շատ բաներ էին պատմում նրան իր հարևանի մասին, բայց ինքն՝ առանց հաւատ ընծայելու՝ թափ էր տալիս գլուխը։ Մի բան միայն զարմացնում էր նրան, որ Հանս Հայլինգը ուրբաթ օրերը տանից դուրս չէր գալիս և ամբողջ օրը մնում էր այնտեղ առանձնացած։ Մի օր էլ հենց դրա համար, հարցրեց նրան, թէ ի՛նչ է անում այդ օրը։ «Ուխտել եմ, պատասխանեց նրան Հանս Հայլինգը, ամեն ուրբաթ լոիկ մնջիկ աղօթքով անց կացնել»։ Ֆայտի սիրտն հանգստացաւ այս պատասխանից և Հանս Հայլինգը շարունակեց իր երթևեկութիւնը նրա մօտ, միայն օրէցօր նկատելի էր դառնում, որ նա մի առանձին դիտաւորութիւն ունէր Ելիզաբեթի նկատմամբ։ Իսկ վերջինս, ինքն էլ չէր իմանում ինչու, զզուում էր այս

մարդուց. ամեն անգամ երբ հանդիպում էր նրա հայեացքին, արիւնը սառչում էր իր երակներում։

Բայց Հանսը առանց կարևորութիւն տալու օրիորդի ցոյց տուած սոյն հակակրութեան՝ մի օր ծերունուն յայտնեց քաղաքավարութեամբ իր սրտի փափագը. ծերունին պատասխանեց նրան, որ փոխանակ իրան դիմելու, գնայ ուղղակի օրիորդի մօտ փորձէ իր բախտը։ Դրա համար Հանսին հարկաւոր էր մի երեկոյ, երբ նա իմանար, թէ Ֆայտը տանը չէ՝ լինելու։—

Ելիզաբեթը ճախարակի առաջ նստած՝ թել էր մանում, երբ դռնից ներս մտաւ Հանսը։ Խեղճ աղջիկը սարսափահար վեր թռաւ տեղից և յայտնեց իսկոյն, որ հայրը տանը չէր. «ո՛հ, արի՛ ուրեմն մի քիչ սիլիբիլի [1]) անենք միասին, անուշիկս» առաջարկեց նրան Հանսը և իսկոյն գնաց նստեց նրա կողքին։ Ելիզաբեթն անմիջապէս հեռու փախաւ նրանից, մինչ սա Ելիզաբեթի այդ վարմունքն համարելով լոկ կուսական ամօթխածութեան արդիւնք և կարծելով, թէ գեղեցիկ սեռին շահելու համար՝ մարդ պէտք է համարձակ լինի միշտ, օրիորդին վերցրեց իր թևերի մէջ և ասաց նրան փայփայելով. «Հոգեակ իմ Ելիզաբեթ, չէ՞ս ուզում մօտս նստել»։ Մանկամարդ աղջիկը ղղուանքի արտայայտութեամբ դուրս պրծաւ նրա թեւերից և մինչ ուզում էր թողնել սենեակն ու հեռանալ ասելով թէ «չեմ ախորժում Ձեզ հետ առանձնացած մնալու այստեղ», Հանսը վազեց նրա ետևից և գրկեց խեղճին աւելի յանդգնարար՝ քան առաջին անգամ։ «Հայրիկդ արդէն իր կողմից հաւանութիւն տուել է, քաղցրիկդ իմ Ելիզաբեթ. դո՛ւ ի՞նչ ես ասում, ուզո՞ւմ ես ինձ կին լինել թէ՞ չէ. բայց մինչև «այո» չասես, չե՛մ թողնիլ քեզ»։ Խեղճ աղջիկն իզուր էր ընդդիմանում այն ջերմ համբոյրներին, որ կրակի պէս տեղում էին իր այտերի վերայ. իզուր էր օգնութի՞ւն աղաղակում. Հանսի կիրքը՝ հասած իր բորբոքման բարձրագոյն աստիճանին՝ սաստկացրել էր նրա յամառութիւնն ու յանդգնութիւնը։

Ի՞նչպէս եղաւ յանկարծ նա նշմարեց Ելիզաբեթի վզին մի փոքրիկ խաչ, որը օրիորդն ստացել էր ժառանգութիւն իր վաղամեռ մօրից և շարունակ կրում էր իր վերայ մանկութիւնից ի վեր։ Ապշում է Հանսը և բաց է թողնում օրիորդին, դողում և շտապում է դուրս գնալ տանից։ Ելիզաբեթը փառք

---

[1]) Սիլիբիլի անել—գաւառական բառ, սիրախօսել.

տուեց Աստծուն իր գտած փրկութեան համար և երբ հայրը վերադառնաւ տուն, միառմի յայտնեց Նրան Հայլինգի ժպիրհ վարմունքը։ Քայտը թափ տուեց գլուխը, որով, ինչպէս երևում էր, կամենում էր արտայայտել իր զգացած զայրոյթը։

Դրանից յետոյ ծերունին շուտով յարմար առիթը գտաւ և Հանսի արաբքն երեսին խփեց։ Վերջինս չքմեղացրեց իրան ասելով որ այդ արել է օրիորդին չափազանց սիրելուց։ Հօր այս քայլը սակայն այն օգտակար հետևանքն ունեցաւ իր զաւակի համար, որ Հանսն երկար ժամանակ այլ ևս ոչ մի այնպիսի յանդուգն առաջարկութիւն չարեց Ելիզաբեթին։ Սա այն երեկոյից ի վեր աւելի ազատ համարձակ էր կրում իր կրծքին այն խաչը։ որը, ինքը Ելիզաբեթն էլ չէր իմանում ի՞նչպէս, փրկիչ էր հանդիսացել իրան, և նկատում էր, որ քանի Հանսը տեսնում էր իրան այդ խաչով զարդարուած, չէր համարձակւում մի բառ անգամ արտասանել։

Երրորդ տարին վերջանալու վերայ էր։ Ելիզաբեթը քանի գնում զուարթանում էր. նա իր խոհեմութեամբ կարողանում էր խոչընդոտներ ստեղծել միշտ իր հօր առաջ և ընդհատում էր նրան, ամէն անգամ, երբ խօսք էր բաց անում ամուսնացնելու իրան Հայլինգի հետ։ Գրեթէ ամէն օր գնում էր Արնոլդի հօր գերեզմանի մօտ, այնտեղից անցնում էր Էգէրի միս ափը, դէպի Պրագ տանող ճանապարհը և բարձրանում էր մինչև բլրի գագաթը՝ այն քաղցր յոյսով, թէ ո՛ւր որ է կը տեսնէ յանկարծ իր մտերմի վերադարձը։

Խեղճ աղջիկը մի առաւօտ, երբ կանուխ վեր կացաւ տեղից, տեսաւ որ իր այնքան սիրած, այնքան թանգագին խաչը չկայ, կորե՛լ է. անշուշտ քնած ժամանակն էր խլուած դա, քանի որ ինքը բնաւ սովորութիւն չունէր բաժանուելու Նրանից։ Ելիզաբեթի կարծիքով այդ բանն արել էր այն աղջիկներից մէկը, որոնք, նախընթաց երեկոյին Հայլինգի հետ լռիկ խօսակցում էին իրանց տան պատի տակը ինքը լսում էր ներսից նրանց փսփսոցը։ Արտասուաթոր աչքերով մօտեցաւ իր հօրը և պատմեց Նրան իր կորուստը։ Հայրը ծիծաղով պատասխանեց Նրա կասկածին և յայտնեց, որ Հայլինգը երբէք մի այդպիսի փոքր խաչի աչք ունենալ չէր կարող, որ նա այդպիսի հանաքներ չի սիրում և թէ դա անշուշտ մի ուրիշ տեղ է կորել։

Բայց և այնպէս Ելիզաբեթն հաստատ մնաց իր կարծիքին. պարզ նկատում էր որ, քանի կորել է իր փոքրիկ խաչը,

Հանսը էլի սկսել է հետամուտ լինել իրան, և այժմ աւելի լուրջ, աւելի անկեղծ կերպով քան առաջ։ Իսկ հայրը քանի գնում, խստանում էր. մի օր էլ յայտնեց բացէ իրաց, որ Ելիզաբեթն երբէք իրաւունք չունի մերժելու իր ձեռը Հայլինդին։ «Ա՛յս է, ասում էր, իմ միակ անփոփոխելի կամքը։ Արնոլդն անշուշտ մոռացել է քեզ այժմ, քանի որ երեք տարին արդէն անցել է և դեռ չի վերադարձել»։ Հայլինդն էլ իր կողմից ծերունու ներկայութեանը՝ երդուում էր, սիրել օրիորդին անսպառ սիրով՝ երդուում էր, որ, եթէ ուրիշները կարող էին խնդրել նրա ձեռքը փողի՛ համար, ինքը խնդրում էր ո՛չ թէ փողի այլ լոկ նրա սիրու համար, «որովհետև, ասում էր նա, ես կշտացել եմ փողից և կարող եմ իմ հարստացուի համար այնպիսի ճոխ և բարեբաստիկ վիճակ պատրաստել, որպիսին նա երազած իսկ չլինի»։

Բայց Ելիզաբեթի աչքում ոչ մի նշանակութիւն չունէր ոչ ինքը Հանսը և ոչ էլ նրա հարստութիւնը, միայն թէ չկարողանալով այլ ևս տանել իր վերայ գործ դրուած ճնշումներին և տագնապելով այն սոսկալի, չարատանջ մտքից, թէ Արնոլդը կարող էր մեռած լինել և կամ դրժել իր ուխտը, և չըտեսնելով իր առաջ էլ ուրիշ ո՛չ մի ելք բայց եթէ այն, ինչ որ բացուում է բոլոր յուսահատների առաջ, խնդրեց իր հօրից երեք օր ևս յետաձգել գործը։ Նա յո՛յս ունէր, որ իր սիրելին, ո՛ւր որ է կը վերադառնայ շուտով։

Երեք օրը շնորհուեցաւ նրան։ Լցուած այն յոյսով, որ կը տեսնեն շուտով իրանց իղձերի իրականացումը, Ֆայտն ու Հայլինդը դուրս եկան դրան առաջ և Ֆայտը տուեց միւսին օրինական խոստմնագիրը։

Փողոցն ի վեր գալիս էր տեղական քահանան և առաջից լուսարարը. նրանք գնում էին մի օրհասական հիւանդի մօտ՝ նրան վերջին մխիթարութիւնը տալու։ Ճանապարհին ամենն ով որ կար, խոնարհում էր խաչուած Փրկչի պատկերի առաջ, որը տանում էին նրանք. խոնարհեցաւ նոյնպէս և Ֆայտը. բայց իր ընկերը շտապեց խոյս տալ մերձակայ տներից մէկը՝ սարսափի արտայայտութիւնը դէմքին։ Ֆայտը ապշած և ոչ առանց երկիւղի նայեցաւ նրա ետևից և գլուխը թափ տալով՝ գնաց տուն։

Շատ չանցաւ և Հայլինդի կողմից մի լրաբեր եկաւ յայտնեց Ֆայտին, որ իր պարոնն յանկարծ ենթարկուել է գլխի

պտոյտի և խնդրում է, որ Գայտը գնայ նրան տեսութեան՝ առանց մտքիցը մի վատ բան անցկացնելու։ Բայց Գայտը փոխանակ գնալու խաչակնքեց իսկոյն իր երեսը և ասաց լրաբերին։ «Գնա յայտնի՛ր պարոնիդ, որ շատ ուրախ եմ, եթէ Հուանդութիւնը գլխի պտոյտ է միայն»։

Ելիզաբեթն այդ պահուն դուրս էր եկել գիւղի ծայրը և մի բլրակի գառիվայրի վերայ նստած լալիս էր՝ աչերն յառած Պրագ տանող ճանապարհին։

Հեռուում մի փոշի էր, որ բարձրացաւ ամպի նման. Ելիզաբեթի սիրտն սկսեց ուժգին ուժգին բաբախել. բայց շուտով անհետ եղան նրա բոլոր քաղցր յոյսերն, երբ նշմարեց, որ հեռուից եկողները մի խումբ լաւ զգեստաւորուած ձիաւորներ են։

Խմբի առաջն անցել էր մի վայելչադէմ երիտասարդ, իսկ սրա ձախ կողմից գնում էր մի պատկառելի ալևոր։ Ամենքի աչքը յառած էր երիտասարդի վերայ, որ ձիերի այնքան արագ ընթացքն համարում էր դեռ ևս դանդաղ. ալևորը չէր կարողանում հասնել նրան։ Ելիզաբեթը վախեցաւ այդ մի խումբ մարդկանցից և աչերը ցած ձգեց՝ առանց այլ ևս նայելու մտեցող բազմութեան։ Ցանկարծ երիտասարդը ցած թռաւ ձիուց և օրիորդի առաջ ծունկի գալով՝ «Ե՛լիզաբեթ, գոչեց նրան, դո՞ւ ես, դո՞ւ, սի՛րելի, հաւատարի՛մ Ելիզաբեթս» և դողալով բռնեց կոյսի ձեռներն և բարձրացան բլրի գագաթը, որտեղ մատաղ աղջիկը գերագոյն երանութեան զգացումով համակուած՝ ընկաւ նրա գիրկը և բացագանչեց. «Ա՛ռնոլդ, ա՞խ, Արնոլդս»։ Երկար ժամանակ մնացին նրանք մի համր յափշտակութեան մէջ—բերան բերնի, սիրտ սրտի տուած։

Արնոլդի ուղեկիցները լցուեցան ուրախութեան յոյզերով սոյն մատաղհաս զոյգի երանութիւնը տեսնելով. ծերունին ձեռները կցեց իրար և փառք տուեց Աստծուն։ իսկ արևն իր մայր մտնելու ժամին վկայ եղաւ մի երջանկութեան՝ որպիսին հազիւ թէ տեսած լինէր մարդկային շրջաններում։ Երկու սիրահարներն՝ իրանց բերկրութեան արբեցութիւնից սթափուած իւրաքանչիւրն ուզում էր մի բան պատմել, բայց ո՞վ առաջ սկսէր՝ չէր իմանում։ Վերջապէս Ելիզաբեթն սկսեց հակիրճ կերպով նկարագրել իր անցկացրած դժբախտ կացութիւնն ու անյոյզդողդ վերաբերումը դէպի Հայլինգը։ Արնոլդն ապշած մնաց, երբ մտածեց, որ մալ էր մնացել՝ կորցնէր Ելիզաբեթին։ Իսկ ծերունին մի քանի հարց ու փորձ անելուց յետոյ

Հայլինգի մասին՝ գոչեց. «Հա՛ սի՛րելիներս, դա հենց նոյն վատանուն մարդն է, որ իր ստորութիւններն իմ հայրենի քաղաքումն էլ է ցոյց տուել և որ հապիւ կարողացաւ խոյս տալ արդարադատութեան ձեռից։ Փառք տանք Աստծուն, որ կարող ենք այժմ դրա չա՛ր նպատակներն ի դերև հանել։ Շարունակելով խօսակցութիւնը էլի Հայլինգի և Ելիզաբեթի մասին՝ ճանապարհ ընկան և, բաւական ուշ, հասան գիւղ։

Ելիզաբեթն ուրախութեամբ Արնոլդին տարաւ իր հօր՝ Ֆայտի մօտ, որը քիչ էր մնում չհաւատար իր աչքին, երբ տեսաւ մի խումբ շքեղազգեաց մարդիկ մտնում են իր տունը։— «Ելիզաբեթի հայր, սկսեց Արնոլդը, ահա, այստեղ եմ ես և խնդրում եմ ձեր դուստրի ձեռքը։ Այժմ իմ վիճակը բոլորովին բարւոքուած է. վայելում եմ մեծ պարոնների հովանաւորութիւնը և կարող եմ ցոյց տալ, որ աւելի իմ յառաջդիմել քան ինչ որ խոստացել եմ»։—«Ի՞նչ, հարցնում է Ֆայտը զարմացած, դու այն խեղճ Արնո՛լդն ես, իմ հոգելոյս հարևանի որդին»։

—«Այո՛, նա՛ է, խօսք առաւ խմբի կողմից ծերունին, նա՛, որ երեք տարի առաջ խեղճ և յուսահատ դուրս եկաւ այս գիւղից։ Այն ժամանակ նա դիմեց ինձ և ես նկատեցի իսկոյն, որ դա ընդունակ էր մի քաջ արուեստագէտ լինելու ապագայում և յանձնեցի իրան մի գործ։ Այդ գործը այնպիսի յաջողակութեամբ գլուխ հանեց սա, որ ո՛վ տեսաւ, զոհ մնաց։ Դա մի առիթ եղաւ, որ ես Նրան կարճ ժամանակից յետոյ վերատեսուչ կարգեցի աւելի կարևոր գործերի։ Այժմ սրա անունը տարածուած է բազմաթիւ մեծ քաղաքներում և ամէն տեղ ձեռք է բերել հոչակ ու պատիւ։ Այժմ էլ պատրաստուում է մի այնպիսի հրաշակերտ հանդէս բերելու Պրագում, որ պատիւ բերէ իր արուեստագէտ անուան։ Դուքսերն ու կոմսերը իրանց մըշտական խնամարկութեամբ և առատ վարձատրութիւններով հարստացրել են սրան։ Տուէք ձեր դուստրը սրան կնութեան, մի՛ ջնջէք ձեր հին պայմանը։ Այն անպիտանը, որին ուզում էք եղել յանձնել ձեր Ելիզաբեթին, կախաղանի և միայն կախաղանի՛ է արժան. դրան վաղուց եմ ճանաչում ես. ստահակի մէկն է»։—

«Միթէ, միթէ ճշմարիտ է այդ բոլորն, ինչ որ ասում էք», հարցրեց Ֆայտը զարմացած։ «Ճշմարիտ է, ճշմարի՛տ է» ձայն տուեցին բոլորը միաբերան։ «Ուրեմն այլ ևս խոչընդոտ չլինիմ քո երջանկութեան, ալնի՛ւ վարպետ, ասաց Ֆայտը դառ-

նալով դէպի Արնոլդը, վերցրու զաւակիս և Աստծու օրհնութիւնը ձեզ վերայ լինի միշտ»։ Երջանիկ զոյգը անկարող նոյնիսկ շնորհակալութիւն ասելու ընկաւ ծերունի Ֆայտի ոտները, իսկ նա վեր բարձրացրեց նրանց ոտքի և սեղմեց իր կրծքին։

Հաւատարիմ սիրոյ վարձատրութիւնն էր այդ։

«Պարոն Ֆայտ» սկսեց ծերունին երկարատև լռութիւնից յետոյ, ընդհատուած երբեմն երկու սիրահարների խնդութեան հառաչներից միայն, «Պարո՛ն Ֆայտ. մի խնդիր ևս ունիմ ձեզ. եթէ կարելի է, ամուսնութեան հանդէսը կատարենք հէնց վաղն առաւօտ, որպէսզի ես էլ ականատես լինելով իմ ազնուասիրտ Արնոլդի երջանկութեան՝ ուրախ լինիմ. Նրան սիրում եմ ես իմ որդու պէս, մանաւանդ, որ երկինք զրկել է ինձ իսկական զաւակ ունենալու բախտից։ Էգուց չէ միւս օրը ես էլի գնալու եմ Պրագ»։— Լա՛ւ, պատասխանեց Ֆայտը՝ հետզհետէ աւելի զուարթանալով, քանի որ այդպէս էք ցանկանում, այդպէս էլ կանենք»։ Ապա ձայն տուեց իսկոյն սիրատարփ զոյգին ասելով. «Զա՛ւակներս, լսեցէ՛ք ինձ, էգուց հարսանիք ունինք. պէտք եղած պատրաստութիւնները տեսնելու ենք մեր այն նորավարձ ագարակում, որ գտնւում է Էգէր սարի գագաթի վայրի վերայ։ Ես շուտով քահանային էլ լուր կը տամ. իսկ դու, Ելիզաբեթ, այժմ գնա խոհանոց և պատրաստութիւն տես մեր արգոյ հիւրերին պատշաճաւոր մնծարանք ցոյց տալու։

Ելիզաբեթը հնազանդեցաւ և, ինչպէս բնական էր, նրա ետևից դուրս սողաց իսկոյն Արնոլդը և երկուսը միասին մըտերմաբար խօսակցելով հասան պարտիզի մէջտեղը։

Քանի Արնոլդն սթափուել էր իր բերկրաղեղ արբեցութիւնից, յիշում էր շարունակ իր ծնողի զերեզմանը. ուստի և Ելիզաբեթի հետ թև թևի մտած՝ քայլերն ուղղեց նոր դէպի այն վայրը, որտեղ բաժանուել էին իրարից վերջին անգամ յուսահատ և լքուած սրտով։

Գերեզմանի մօտ վերանորոգեցին նրանք իրանց ուխտը՝ երկուսն էլ լցուած մի սրբազան քաջութեամբ։ Արնոլդը իր հարսնացուին սեղմելով իր սիրավառ կրծքին՝ ասաց Նրան մեղմով. «Ե՛լիզաբեթ, երանութեան հենց այս բոպէն միայն բաւական չէ՞ միթէ մոռանալ տալու մեզ մեր կրած եռամեայ վիշտն ու կսկիծը. այժմ հասել ենք արդէն մեր նպատակին։ էլ ինչ աւելի վսեմ բերկրանք կայ, որ կարողանայինք սպասել կեանքից. սրանից աւելին այնտեղ, երկնքում կայ միայն».—

«Ա՜խ, հառաչեց Եղիզաբեթը, ո՞ւր էր թէ այսպէս թեթեւի տուած, սիրտ սրտի, մեռնե՞լ կարողանայինք»։—«Մեռնե՞լ, յարեց Արնոլդը նոյնպէս հառաչելով, այո, մեռնե՞լ քո կրծքի վերայ... Ո՜հ, Աստուած իմ, ների՛ր մեզ, որ համարձակուում ենք այսպիսի անպատուում խնդութեան մէջ տենչալ դեռ աւելի՛ մեծ խնդութիւն։ Ճանաչում ենք արդարև, ի՜նչքան մեծ էր այն բարիքը, որ ցոյց տուեցիր մեզ և շնորհակալ ենք քեզնից։—Արի՛, Ե՛լիզաբեթ, աղօթենք այստեղ՝ հօրս գերեզմանի վերայ և փառք տանք Աստծուն այն մեծ ողորմութեան համար, որը ցոյց տուեց Նա մեզ»։ Լուռ էր նրանց աղօթքը, բայց սրտագին և սուրբ, Ապա համակուած սիրոյ անվերջ յոյզերով՝ վերադարձան տուն։

Գեղեցիկ և ախորժելի էր յաջորդ առաւօտը. օրը ուրբաթ էր և եկեղեցին կատարում էր ս. Լաւրենտիոսի տօնը։ Ամբողջ գիւղը կենդանութիւն էր ստացել։ Ամէն տան դրան առաջ զարդարուած կանգնել էին աղջիկներն ու տղաները. որովհետև Ֆայտը հարուստ էր և ամէն ով որ կար՝ հրաւիրուած էր հարսանիք։

Միայն Հայլինդի տան դուռն էր փակ. որովհետև ուրբաթ էր օրը և նա չէր ցանկանալ, որ այդ օրն ուրիշները տեսնէին իրան։

Շուտով հարսնևորներն իրանց քայլերն ուղղեցին դէպի եկեղեցի՝ տանելով իրանց հետ երանագեղեցիկ գոյգին՝ այնտեղ կատարելու համար հանդէսներից ամենագեղեցիկը։ Ֆայտն ու Արնոլդի վարպետն իրարից անբաժան էին ճանապարհին և թափում էին ուրախութեան արտասուքներ՝ իրանց զաւակների երջանկութիւնը տեսնելով։

Կէս օրուայ ճաշի համար Ֆայտն ընտրել էր գիւղի միջին՝ սաղարթախիտ լոռիներով հովանաւորուած մի վայր։ Եկեղեցական հանդէսը վերջանալուց յետոյ հարսնևորները գնացին այդ վայրը։ Սիրահարների աչերում ցոլանում էր երկինքը. ճաշն իր բոլոր շքեղութեամբ տևեց մի քանի ժամ. յաճախ զանազան սեղաններից բաղմականները որոտում էին ցնծագին. «Կեցցէ՛ Արնոլդը, կեցցէ՛ իր սիրելի հարսը»։

Երջանիկ գոյգը թողնելով լոռիները՝ երկու հայրերի, Արնոլդի բարեկամների ու Եղիզաբեթի խաղընկերուհիներից մի քանիսի հետ բարձրացաւ Էգէրի սարալանջը, ուր գտնուում էր Ֆայտի նոր վարձած ագարակը։ Հրաշալի էր տան տեսարանը բարձրագեղ հովտի գլխին՝ դարաստանի կենդրոնում և մը-

տերմական այս փոքր շրջանում ուրախութեամբ արբշիռ Արնոլդի ու Ելիզաբեթի ժամերն անցնում էին որպէս արագասահ վայրկեաններ։

Ագարակատան սենեակներից մին շքեղ զարդարուած էր յատկապէս հարս ու փեսի համար, իսկ պարտէզի պտղատու և սաղարթագեղ ծառերի հովանու տակ պատրաստուած էր ընթրիքի փառաւոր սեղանը։ Հինաւուրց գինին իր փրփուրներով պսպղում էր հիւրերի բաժակներում։

Վաղուց արդէն օրն երեկոյանում էր հովտում. բայց ո՞վ էր դրան ուշ դարձնողը։ Վերջապէս անհետացաւ օրուայ յետին նշոյլն էլ և բերկրանքով արբշիռ զոյգին ողջունեց գիշերն իր աստեղագեղ երկնքով։

Հայիւ թէ Ֆայտն սկսել էր խօսել իր անցկացրած երիտասարդութեան մասին, այն էլ՝ գինու ազդեցութեան տակ՝ շարունակ ձգձդելով, վերայ հասաւ կէս գիշերը։ Արնոլդն ու Ելիզաբեթն՝ անհամբեր սպասում էին պատմութեան վախճանին։ Վերջապէս Ֆայտը կնքեց իր խօսքը և «գիշեր բարի զաւակներ» ասելով ուզում էր դեռ նորապսակներին էլ առաջնորդել իրանց սենեակը։ Այդ րոպէին զիւղում ժամը տասներկու խփեց. և ահա մի կատաղի մրրիկ մռնչելով գիւղի միջից բարձրացաւ դէպի սարն ի վեր։ Բոլորը սարսափեցան, երբ տեսան իրանց առաջ կանգնած Հանս Հայլինգին՝ մի եղծուած, դաժան կերպարանքով։ «Սատանայ, գոչեց գա ահռելի ձայնով, լրացաւ ծառայութեանդ ժամանակը, ինչի՞ր դրանց»։—«Ուրեմն իմն ես գու» ոռնաց մրրկի միջից մի ձայն։—«Ա՛յո, թող քո՛նը լինիմ, թող դժոխքի բոլոր տանջանքներն ինձ սպասեն. ինչի՞ր, ասում եմ, դրանց»։ Եւ ահա մրրիկը կլանող բոցի նման ողողեց ամբողջ սարն ու անցկացաւ։ Արնոլդն ու Ելիզաբեթը, Ֆայտն ու իրանց բարեկամները իսկոյն փոխակերպուեցան ժայռերի, առաջին երկուսը սիրով փաթաթուած իրար, իսկ միւսները ձեռները ծալած աղօթքի։ «Հանս Հայլինգ, որոտաց նոյն ձայնը մրրկի միջից հեգնաբար ծիծաղելով. նրանք օրհնուեցան իրանց մահուան ժամին իսկ. նրանց հոգիները սլանում են երկինք։ Վա՜յ քեզ սակայն՝ որ իմն ես սրանից յետոյ»։ Հանս Հայլինգը ցած ձգեց իրան ժայռերի բարձունքից և ընկաւ Էգէրի փրփրուն յորձանքների գիրկը, որոնք ընդունեցին նրան ահեղագոչ շառաչիւններով և կուլ տուեցին։ Էլ ոչ մի աչք չը տեսաւ նրան։

Միւս օրը առաւօտեան կանուխ Ելիսաբեթի ընկերուհի-ները ծաղիկներով ու փունջերով եկան զարդարելու այս նոր զոյգին։ Ամբողջ գիւղը հետևեցաւ նրանց օրինակին։ Աւերումն իր ձեռքը տարածել էր ամէն կողմ, բայց նրանք ճանաչեցին իրանց սիրելիների դէմքերը բազմաթիւ ժայռերի միջից. աղջիկները բարձրագոչ հեծկլտանքներով իրանց ծաղիկներից պսակներ հիւսեցին և դրեցին սիրատարփ զոյգի արձանացած պատկերի շուրջը։ Բոլորը ծունկի եկան և աղօթեցին այդ անմոռաց հոգիների համար։ «Երանի դրանց, ընդհատեց վերջապէս տիրող խոր լռութիւնը մի պատկառելի ծերուկ. երանի դրանց, որ այդպէս սիրով և ուրախութեամբ մեկնեցան, որ մնան թև թևի և սիրտ սրտի տուած։ Զարդարեցէք միշտ թարմ ծաղիկներով դուք նրանց գերեզմանները, մատաղ կոյսեր. թող այս ժայռերը, որպէս մի մի յաւիտենական յուշարձան, վկայեն միշտ, որ ոչ մի չար ոգի չի կարող երբէք իր մահաբեր ոյժով բռնանալ անարատ սրտերի և նրանցից բղխող ուխտանուէր սիրոյ վերայ»։

Այդ օրից ամէն սիրահար զոյգ ուխտի էր գնում Հանս Հայլինգի ժայռերին և աղերսագին խնդրում էր այդ երանելիների օրհնութիւնն ու հովանին։ Այդ բարի սովորութիւնը չկայ այժմ, բայց աւանդութիւնը դեռ ևս կենդանի է ժողովրդի սրտում, այնպէս որ հիմայ էլ, երբ մի տեղացի տանում է թ-տարականին դէպի Էգէրի սոսկալի հովիտը, յիշում է նրան Արնոլդ ու Ելիսաբեթ անունները և ցոյց է տալիս այն արձանները, որոնց փոխարկուել են նրանք, ինչպէս և Ելիսաբեթի հօրն ու միւս հիւրերին։

Դեռ մի քանի տարի առաջ Էգերը ճիշտ այն տեղում, ուր Հանս Հայլինգը գլորել է իրան վերևից, անշուշտ մի ահաւոր և տարօրինակ մռնչիւն է արձակել, որ ոչ մի մարդ չի անցել այն տեղից՝ առանց խաչակնքելու իր երեսը և հոգին աւանդելու Տիրոջ ձեռքը։

Հանս Հայլինգի ժայռերը.

(Hans Heilings Felsen)

Ի՜նչպէս են դիզուել այնտեղ բարձրաբերձ ժայռերն ու խութեր,
Քար քարի կցուած, կանգնած շարիշար՝ կազմում են սիւներ,

Եւ բարձրանում է հպարտ ու ազնիւ հսկայ տունկն հովտում,
Մինչ ուրիշ մի տունկ ժայռերի միջից ալիքն է ծաղրում։
Շատ հին զրոյցներ կան դրանց մասին և լսել եմ ես,
Թէ ի՛նչպէս սարը բացուել է յանկարծ զիշերուայ մէջ կէս.
Բայց կարծես հեռուից անցած դարերի մի ազնիւ պատկեր,
Մի հին ուրուական՝ ձայն բարձրացրած՝ գոչում է ինձ դեռ.
«Գերմանիան էլ պանծում է այսպէս իր հերոսներով՝
«Ե՛ւ մեծ, և՛ ազնիւ, և՛ հաստատ՝ ինչպէս այս ժայռն անխռով.
«Տե՛ս, ի՛նչպէս ժայռին փրփուր է ժայթքում գետը մռնչուն,
«Բայց խորտակուում են փրփուրներն իսկոյն, ժայռն է միշտ
կանգուն.
«Եւ ուշ զիշերին, մինչ խաւարը դեռ չի՛ մեկնել հովտից,
«Սարի գագաթը համբոյր է խլում երկնի շողերից»։

Թարգմանեց գերմաներէնից
Մ. Վ. ՄԱՐՍՈՒՏԵԱՆ

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԴՈՐՊԱՏ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ ԵՒ ՆՈՐԱ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ 1830—1892 Թ.

12.

ՌԱՓԱՅԷԼ ՊԱՏԿԱՆԵԱՆ

(Ցայտնի բանաստեղծ: Տեսուչ Նոր-Նախիջևանի արուեստական դպրոցի):

Ռափայէլ Պատկանեանը ծնուեց Նոր-Նախիջևանում 1830 թ. նոյեմբերի 8-ին: Իր հօր, Տէր Գաբրիէլի մօտ ստացաւ սկզբնական կրթութիւնը, ծանօթացաւ հայոց լեզուի հետ և 1840 թ. մտաւ Լազարեան ճեմարան: Դժբաղդաբար ստիպուած եղաւ դուրս գալ վերջին դասարանից, իր հօր դէմ լարած որոգայթների պատճառով ու վերադառնալ Թիֆլիզ, հօր մօտ: 1849—1850 թ. Թիֆլիզում նա դաս էր տալիս Ներսիսեան դպրոցում, ուր Տէր Գաբրիէլը տեսուչ էր: Այդ ժամանակ Ռափայէլը մասնակցում էր իր հօր հիմնած «Արարատ» շաբաթաթերթին, հրատարակելով իր առաջին բանաստեղծական փորձերը:

1851 թ. մայիսին Տէր Գաբրիէլը դադարեցրեց «Արարատի» հրատարակութիւնը և գնաց Նոր-Նախիջևան, տանելով իր հետ Ռափայէլին: Կարճ միջոցից յետոյ, նոյն 1851 թ. Ռափայէլը գնաց Դորպատ, ուր արդէն ուսանում էր նրա հօր եղբօր որդի Քերովբէ Պատկանեանը: Մի տարի մնալով Դորպատում և ծանօթանալով գերմաներէն լեզուի հետ, գերմանական ուսանողութեան ոգուն, ներշնչուեց նոյնպէս այն ժամանակուայ հայ ուսանողական ոգով: Ռափայէլը նիւթական միջոցների սղութեան պատճառով 1852 թ. փոխադրուեց Մոսկվի համալսարանը և մտաւ պատմա-լեզուագիտական բաժինը:

Տես «Լուսայ» 1903 թ. № 5.

1854 թ. Մոսկովի երեք հայ ուսանողներն, այն է՝ Գէորգ Քաթանեանը, Մինաս Թէմուրեանը և Ռափայէլ Պատկանեանը կազմեցին մի գրական ընկերութիւն, որի նպատակն էր ինքնուրոյն և թարգմանական դրուածքներով ժողովրդականութիւն տալ նորածիլ աշխարհիկ գրականական լեզուին: Այդ երեք հիմնադիր անդամներն իրենց անուններից և ազգանուններից կազմեցին մի ընդհանուր գրական կեղծանուն, հետևեալ կերպով· վերցրին այդ երեք անունների սկզբնատառերը Գ. Մ. Ռ· յետոյ ազգանունների սկզբնատառերը Ք. Թ. Պ. և մէջերքում և վերջում դրեցին «ա» տառը, բայց քաղցրահնչիւնութեան համար «թ» ից յետոյ գրեցին ոչ «ա» այլ «ի» և դուրս եկաւ «Գամառ-Քաթիպա»: Ահա թէ ինչպէս կազմուեց կեղծ անունը: Երբ առաջին անգամ, այն է 1881 թ. Ռափայէլ Պատկանեանը ինձ մօտ, Երևանումն էր և բացատրեց իրենց կեղծ անուան կազմուիլը, ես հարցրի· «ինչ միտք կար այդ կերպ կեղծ անուն կազմելու»: Նա պատասխանեց թէ, «որովհետև, մենք երեքով միասին պէտք է գործէինք· չէինք կամենում յայտնել թէ ով՝ ինչ է գրել և պէտք է ներկայանայինք որպէս մի անձնաւորութիւն, մտածեցինք մի առանձին, թէպէտ և անմիտ, անուն ստեղծել մեր հրատարակութեան համար և ոչ ոք չը պէտք է ստորագրէր իր անունն իր ոչխատանքի տակ· Մեր հրատարակութեան անունը դրինք «Գամառ-Քաթիպա»:

Այս ընկերութիւնը միջոց տուեց Պատկանեանին զարգացնելու իր բանաստեղծական տաղանդը: Երկու տարի Մոսկովում ապրելուց յետոյ Պատկանեանը 1855 թ. տեղափոխուեց Պետերբուրգ և մտաւ Զինուորական-բժշկական Ակադեմիա: Կարճ միջոցից յետոյ անցաւ համալսարան և ընտրեց արևելեան բաժինը, որ և վերջացրեց 1860 թ.:

Երբ Պատկանեանն ապրում էր Պետերբուրգում, Գամառ-Քաթիպան հրատարակւում էր տետրակներով: Այդ ժամանակ նա գրեց իր երևելի գեղարուեստական ոտանաւորն «Արաքսի Արտասուքը» (1856 թ.):

1881 թ. Պատկանեանի հետ ճանապարհորդում էի Երևանից դէպի Կողբ: Երբ մօտեցանք Արաքսին, Ռափայէլն ասաց· «սպասիր իջնեմ և Արաքսին մի լաւ նայեմ, տեսնեմ ինչպիսի գետ է, առաջին անգամն եմ տեսնում»: Գետի ափին երկար զբօսնելուց յետոյ ծիծաղելով ասաց· «Գիտես, Լևոն, ինձ շատ մեծ չարլատան կը կարծեն»: Ինչու հարցրի ես· «Եղբայր,

Արաքսն երբէք չէի տեսել և յանդգնեցի գրել «Արաքսի արտասուքը», և կրկին սրտանց ծիծաղեց ասելով. «այո, երբ մարդ ներշնչուած է լինում, վառուած է լինում, ամեն բան կարող է երևակայել և գրել»։

Գոգոլեանն էլ իր հանրահռչակ «Ծիծեռնակը» առաջին անգամ տպագրեց «Գամառ-Քաթիպայում», որի միայն հինգ տետրակը լոյս տեսան։

Որովհետև «Գամառ-Քաթիպայի» ընկերութիւնը երկար չը շարունակուեց, իսկ Պատկանեանը ընկերութեան անդամներից ամենաեռանդոտը և բեղմնաւորն էր, նա պահեց իր վերայ «Գամառ-Քաթիպա» անունը։ Ռ. Պատկանեանի բանաստեղծութիւններն այն աստիճանի գեղեցիկ, և այնքան յայտնի են, որ նոցա մասին աւելորդ է խօսելը։ Նորա գրուածքներից շատերը երգում է ժողովուրդը և լսում ենք համերգում, խնջոյքներում։ Նա ունի նոյնպէս բաւականաչափ թարգմանական արձակ գրուածքներ։

Պետերբուրգում նա ունէր տպարան և 1863 թ. սկսեց հրատարակել «Հիւսիս բազմավէպ լրագրի» շաբաթական թերթը, որ գոյութիւն ունեցաւ միայն մէկ տարի։

1864 թ. Ռ. Պատկանեանն ամուսնացաւ օր. Օլգա Ամիդիի հետ, որի հայրը Պետերբուրգի համալսարանի արաբական լեզուի պրոֆէսօրն էր։

1866 թ. Պատկանեանը ծախեց իր տպարանը և տեղափոխուեց Նոր-Նախիջևան և 1867 թ. բացեց այդտեղ պանսիօն որ վարում էր իր ամուսնու աջակցութեամբ։ 1873 թ. այդ պանսիօնը տեղափոխեց Ռոստով, ուր և մնաց մինչ 1876 թ.։ Այդ ժամանակ նրան հրաւիրեցին տեսուչ Նոր-Նախիջևանի թեմական դպրանոցի, բայց շուտով թողեց այդ պաշտօնը և 1879 թ. բացեց մանկական պարտէզ։ Մէկ տարուց յետոյ նրան ընտրեցին տեսուչ Նոր-Նախիջևանի արհեստական դպրոցի և այդ պաշտօնում մնաց 12 տարի —մինչև իր մահը։

Պր. Գ. Խալաթեանը հետեւեալն է ասում Պատկանեանի աշխատութեան մասին. «Ռ. Պատկանեանի մեծութիւնն իբրև ազգային բանաստեղծի, երևում է մանաւանդ այն բանի մէջ, որ 42 տարուայ անխոնջ և անընդհատ գրականական գործունէութեան միջոցին, բոլոր իր գրուածքներում չափաբերական թէ արձակ, գրականական թէ գաւառական լեզուով. նա միշտ արձագանք է եղած ազգային կեանքի մտաւոր և բարոյական

երևոյթներին և կենսական բարձր շահերին ու պահանջներին: Ամենը, ինչ որ մտածել ու զգացել են, ինչով որ ապրել ու տանջուել են իր ժամանակակիցները—կենդանի կերպով և գեղարուեստօրէն պատկերացրած է նրա երկերի մէջ»

1877—78 թ. խոր կերպով տպաւորուել են հայերի կեանքում՝ Ռուս տաճկական պատերազմը և դրա հետ միացրած փայլուն յոյսերը, Տաճկահայերի թշուառ վիճակը բարւոքելու, վառեցին մեր բանաստեղծի սիրտը:

Ահա այս է Ռ. Պատկանեանի ամենամեծ վաստակը, որի համար նա արժանապէս ժառանգեց «ազգային բանաստեղծ» կոչումը:

13

ԳԷՈՐԳ ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆ.

(Շիլլերի թարգման: Բանաստեղծ՝ Մանկավարժ):

Գէորգ Բարխուդարեանը ծնուել է Թիֆլիզում 1835 թ. նոյեմբերի 10-ին: Սրա հայրը՝ Նիկողոսը Թիֆլիզի առաջնակարգ դերձակներից մէկն էր, որովհետև այդ արհեստն ուսել էր Պետերբուրգում, ուր տարել էր նրան իշխան Բէգթաբէգեանը, որի կալուածքում նա ծնուել էր և որի ճորտն էր նա: Նիկողոսը մօտ տասը տարի մնալով Պետերբուրգում վերադարձաւ Թիֆլիզ և վճարելով եօթը հարիւր ռուբլի իշխան Բէգթաբէգեանին, ազատեց իրեն ճորտութիւնից և պսակուեց օր. Թամարի հետ, որ Շերմազանեանների տանն էր ապրում, որպէս նրանց ազգական:

Նիկողայոսն ունէր իննը զաւակ, այն է չորս տղայ և հինգ աղջիկ: Անդրանիկը Գէորգն էր: Գէորգի հայրը քէֆ սիրող մարդ է եղել, իսկ մայրը վերին աստիճանի բարեսիրտ, համեստ և խելացի կին և իր բոլոր ազգականներին և ծանօթներին սիրելի, որի բնաւորութիւնն էլ մեծ ազդեցութիւն է ունեցել Գէորգի վրայ:

Գէորգը 7 տարեկան հասակում սովորում էր Մողնու Ս. Գէորգ եկեղեցու ժամկոչ՝ Ցարութիւնի մօտ, յետոյ հայրը տուեց նրան գաւառական դպրոցը և յետոյ գիմնազիա: Հասնելով գիմնազիայի 6-դ դասարանը, նրանում միտք յղացաւ գնալ Դորպատ: Այդ միջոցին արդէն վերադարձել էր Խ. Աբովեանը

(1836 թ.) և գործելով 12 տարի անհետացել էր (1848 թ.) Ս-Նազարեանցը վերջացրել էր համալսարանը (1840 թ.) և գործում էր։

Դորպատի համբաւը տարածուել էր մեր երկրում, այդ պատճառով զարմանալի չէ, որ երիտասարդ Գէորգի մէջ էլ միտք յղացաւ Դորպատ գնալ ուսանելու, մանաւանդ, որ յաճախ տեսնւում էր Թիֆլիզում բժշկապետ Ց. Յովհաննիսեանի հետ, որ թէպէտև Մոսկով էր ուսել, բայց ապրելով Մոսկովում մի գերմանացու գերդաստանում, առել էր գերմանականութեան ճաշակն, ինքը գերմանացած էր և չէր զլանում խորհուրդ տալ Գէորգին Դորպատ գնալու։

1851 թ. Գէորգ Բարխուդարեանը գնաց Դորպատ։ Այդ ժամանակ Դորպատի հայ ուսանողութեան ոսկէդարն էր։

Երկու տարուայ մտաւոր աշխատանքը վատ ազդեցութիւն ունեցաւ Գէորգի աչքերի վրայ և մի աչքն այնքան տկարացաւ, որ բժիշկները կուրութիւն նախատեսնելով, արգելեցին պարապել։ Այդ ժամանակ Գէորգը 18 տարեկան էր։ Ուսանողներից մէկը յայտնեց այդ լուրը նրա հօրը և մի օր նա ստացաւ հօրից նամակ և ճանապարհածախս տուն վերադառնալու։ 1853 թ. աշնանը վերադարձաւ հայրենիք։ Թիֆլիզում սկզբում հոգում էր իր աչքերի մասին և տալիս էր մասնաւոր դասեր։ 1855 թ. ձեռք բերեց գաւառական ուսուցչի իրաւունք և հետևեալ տարին նշանակեցին Հին-Նախիջևանի գաւառական դպրոցի ուսուցիչ։ Այդ պաշտօնը վարեց մինչ 1863 թ. և յետոյ տեղափոխուեց Թիֆլիզ և նշանակուեց գիմնազիայում վերակացու, իսկ 1866 թ. Դուշէթի ուսումնարանի տեսուչ։ Երկու տարու չափ վարելով այդ պաշտօնը, նա ընդ միշտ թողեց պետական ծառայութիւնը։

1869 թ. բացուեց Թիֆլիզում Գայիանեան օրիորդաց դպրոցը, Բարխուդարեանին հրաւիրեցին այդտեղ ռուսաց լեզուի ուսուցիչ։ Այդ դպրոցում նորա ծառայութիւնը կարճատև էր, որովհետև նոյն թուի սեպտեմբերին նրան հրաւիրեցին Վերին Ագուլիս տեսչի և ուսուցչի պաշտօնով տղայոց և օրիորդաց դպրոցներում։ Մնալով Ագուլիսում երկու տարի, 1871-ին նոյն պաշտօնով հրաւիրեցին Ախալցխայի Կարապետեան և Եղիսաբէթեան դպրոցները։ 1876 թ. Ներսիսեան հոգևոր դպրանոցի հոգաբարձութիւնը հրաւիրեց նրան ստանձնելու այդ դպրոցում Ռուսաց լեզուի և Ռուսաց պատմութեան ու աշխարհագրութեան դասերը։

Դրանից յետոյ Բարխուդարեանն այլ ևս դաւառներում պաշտօն չը վարեց։

Գէորգ IV կաթողիկոսի ժամանակ, երբ ծխական ու եկեղեցական դպրոցների թիւը մեծացաւ ու ստեղծուեց ուսուցչական մի ամբողջ դասակարգ և կարիք զգացուեց թեմական տեսուչների պաշտօններ հաստատելու, 1879 թ. Բարխուդարեանը նշանակուեց Վրաստանի և Իմերէթի թեմի հայ ծխական-եկեղեցական դպրոցների թեմական տեսուչ և այդ պաշտօնը վարեց մինչ 1883 թ. ամառը։ Նորա թեմական տեսչութեան օրոք և նրա նախագահութեամբ 1882 թ. տեղի ունեցաւ մեր առաջին պաշտօնական ընդհանուր ուսուցչական ժողովը Թիֆլիզում։ 1883 թ. յունիսին Բարխուդարեանին կրկին հրաւիրեցին Ներսիսեան դպրոց, ռուսաց պատմութիւն և աշխարհագրութիւն աւանդելու և արական առաջին գիմնազիայում ստացաւ հայոց լեզուի դասեր։ 1884 թ. սկսեց վարել այդ պաշտօնների հետ և քաղաքային տարրական դպրոցների տեսչի պաշտօնը։

Վերջին տարիներում, Բարխուդարեանը ծերութեան (68 տարեկան) և մանաւանդ աչքերի տկարութեան պատճառով դժուարանում էր վարել իր ստանձնած պաշտօնները, ուստի և 1901 թ. հրաժարուեց իր պաշտօններից, թէ քաղաքային դպրոցներում և թէ Ներսիսեան դպրոցում։

Քաղաքային վարչութիւնն ի նկատի առնելով Բարխուդարեանի տասնեօթ ամեայ բարեխիղճ ծառայութիւնը, նշանակեց նրան կենսաթոշակ 600 ռ.։ Իսկ Ներսիսեան դպրոցը նոյնպէս գնահատելով նրա 22 տարուայ անխոնջ ուսուցչական աշխատանքը նշանակեց տարեկան 450 ռուբլի կենսաթոշակ։

Ներսիսեան դպրոցի ուսուցչական խումբը ի նկատի առնելով Բարխուդարեանի երկարամեայ ծառայութիւնը դպրոցական և գրական ասպարիզում տօնեց նորա գրական և մանկավարժական գործունէութեան քառասուն և հինգ ամեակը։ Գէորգ Բարխուդարեանն ամբողջ իր կեանքը նուիրեց հայ մանուկների դաստիարակութեանը և մեր գրականութեան։

Գ. ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆԻ ԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ

Գ. Բարխուդարեանի տաղանդը պէտք է զարգանար և կատարելագործուէր, բայց դրա համար հարկաւոր էին որոշ

հանգամանքներ և պայմաններ։ Երբ նրանում յղացաւ Դորպատ գնալու միտքը, հանգամանքներն արդէն պատրաստ էին, նոյնպէս և պայմանները։ Գնալով Դորպատ և ընկնելով գերմանական գիտութեան մթնոլորտի մէջ և չրջապատուած հայ ուսանողների վառուած ոգով, նա հէնց այնտեղ էր, որ հարկաւոր էր նրան։ Դորպատում նա սկսեց ուսումնասիրել իր հայրական լեզուն, ծանօթացաւ գերմանական գրականութեան հետ, ուր նա գտաւ մեծ պաչար իր տաղանդը կատարելագործելու համար։ Այն երկու տարին, որ անցրեց Դորպատում, կատարեալ բաւական էին նրան ուղղութիւն տալու, որ նա կարողանար ինքն իրեն, իր ոյժերով առաջ գնալ։

Սկզբում Բարխուդարեանի գրուածքները մնում էին անտիպ, որովհետև այդ ժամանակ ոչ մի հայ պարբերական հրատարակութիւն չը կար ամբողջ Ռուսաստանում, ուր նա կարողանար զետեղել իր գրչի առաջին փորձերը։ Երբ 1858 թ. Ստեփանոս քահ. Մանդինեանը ձեռնարկեց հրատարակել «Մեղու Հայաստանի» լրագիրը, դորա հէնց առաջին համարում լոյս տեսան Բարխուդարեանի առաջին չորս ոտանաւորները (Առակ, Օրօրոցի երգ, առ Հայաստան, Փոթորիկ)։

Էլ չը համակրելով «Մեղուի» ուղղութեան, նա այդտեղ այլ ևս ոչինչ չը տպագրեց։ Երբ 1859 թ. Մոսկովում սկսեց հրատարակուել «Հիւսիսափայլը», Բարխուդարեանն իր աշխատութիւններն ուղարկում էր «Հիւսիսափայլին»։ Ս. Նազարեանցը մեծ գովասանքով է խօսում Բարխուդարեանի աշխատութիւնների մասին և նրան անուանում է «քանքարաւոր»։ Յետոյ իր աշխատութիւնները տպագրում էր «Փորձ» ամսագրում, որ դադարեց 1881 թ.։ Վերջերում նա աշխատակցում էր «Արձագանքին», «Հանդէս գրականական և պատմական» վեցամսեակին «Լումային», «Թատրոնին», «Մուրճին»։

Դորպատում Բարխուդարեանը ծանօթացաւ գերմանական համաշխարհային տաղանդների ստեղծագործութիւնների հետ։ Նրա սիրտն առանձնապէս ձգտեց Շիլլերի գաղափարներին։ Շիլլերի միւս գերմանական հեղինակներից աւելի գաղափարականն է, աւելի հրապուրող է և կասկած չը կայ, որ aequalis aequalem delectat։ Այդ պատճառով էլ Բարխուդարեանը հանդիսացաւ Շիլլերի գաղափարների թարգման։ Նա յանդերով թարգմանեց Շիլլերի «Վիլհելմ Տէլը», «Դոն-Կարլոսը», «Օրլէանի կոյսը», «Մարիա-Ստիւարտը», «Զանգակի երգը»։ Բացի այդ,

թարգմանեց Լէսինգի՝ «Նաթան-իմաստունը», Շէքսպիրի «Վենետկի վաճառականը», «Ֆիէսքօի դաւադրութիւնը Ջենովայում», Գէօթէի «Ֆաուստը»։ Այդ աշխատութիւնները յայտնի են նրանով, որ չատ գեղեցիկ են թարգմանած և կարդալիս կարծես Շիլլերը, Լէսսինգը, Շէքսպիրը, Գէօթէն հայերէն գրած լինէին իրենց այդ երկերը։ Այդ թարգմանութիւններն, իմ կարծիքով, աւելի գերազանց են, քան նոյն գրուածքների ռուսերէն և ֆրանսերէն թարգմանութիւնները։ Բարխուդարեանը թարգմանել է նոյնպէս Շիլլերի, Գէօթէի, Պէտէօֆիի և ուրիշ գերմանական հեղինակների ոտանաւորներն, որոնց թիւը հասնում է 44 ի։

Բարխուդարեանը ոչ միայն թարգման է, այլ և հեղինակ, նա ունի 53 ինքնուրոյն գրած ոտանաւորներ, որոնք տպագրուած են առանձին գրքոյկով 1897 թ. Թիֆլիզում, որոնց կից են նոյնպէս նորա մանր թարգմանութիւնները։

Գ. Բարխուդարեանն իր այդ թարգմանութիւններով ծանօթացրեց հայերին եւրոպական մեծ իդէալիստների մտքերի հետ և նրա գեղեցիկ գրիչը դեռ մինչև այսօր էլ շարունակում է իր գործունէութիւնը յօդուտ հայրենի գրականութեան։

Գէորգ Բարխուդարեանը արդէն կրում է «Շիլլերի թարգման» անունը։

Մեր բանաստեղծ ուսուցչին ցանկանում ենք զուարթ, երկար կեանք, յուսալով, որ նրա բեղմնաւոր գրիչն այսուհետև էլ չի դադարիլ գործելուց։

Ով որ կամենում է ծանօթանալ Գ. Բարխուդարեանի մանրամասն կենսագրութեան, նորա բազմազան աշխատութիւնների և դոցա քննութեան հետ, առաջարկում ենք կարդալ պ. Իսահակ Ցարութիւնեանի յօդուածը, որ տպագրուեց «Լումայ» ամսագրի 1902 թ. № № 1, 2, 3, 5։

14.

ՄԻՔԱՅԷԼ ՓՐԻԴՈՆԵԱՆ

(Հեղինակ «դարէ-դար» երգի։ Ուսուցիչ)։

Սա Թիֆլիզեցի է, ծնուել է 1829 ի մարտի 15 ին։ Արուվեանի աշակերտներից է։ 1851 թ. սեպտեմբերին մտաւ համալսարան, ուսանում էր կամերալիա և չը վերջացնելով իր ուսումը՝ վերադարձաւ հայրենիք 1855 թ. և Թիֆլիզում պարապում էր ուսուցչութեամբ։

Փրիդոնեանը յայտնի է մեր գրականութեան մէջ որպէս հեղինակ «դարէ դար» երգի, որ այժմ էլ երգում է ժողովուրդը։ Բացի այդ գրել է երգեր Թիֆլիզցւոց բարբառով։

15

ՅԱԿՈԲ ՏԷՐ-ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

Սա Թիֆլիզեցի էր, ծնուեց 1829 թ. հոկտեմբերի 5-ին. մտաւ համալսարան 1851 թ. սեպտեմբերին, ուսանում էր երկրագործութիւն։ Չը վերջացնելով իւր ուսումը համալսարանում՝ տկարութեան պատճառով վերադարձաւ հայրենիք 1852 թ. և վախճանուեց 1853 թ.

16

ԳԷՈՐԳ ԴՈԴՈԽԵԱՆ

(Հեղինակ «ծիծեռնակ» երգի. դիպլոմատ).

Գէորգ Դոդոխեանը Սիմֆերօպոլցի է, ծնուել է 1831 թ. փետրուարի 18-ին. կրթուել է Լազարեան ճեմարանում. 1852 թ. յունուարին մտաւ համալսարան և գրուեց իրաւաբանական ֆակուլտետի ուսանող (դիպլոմատ) և վերջացրեց 1859 թ.։

Դոդոխեանը Դորպատի «ոսկէ դարի» ուսանողներից է։ Հաւանելով ուսանողական կեանքն, երկար ժամանակ ուսանող մնաց։ Սա սրախօս մարդ էր, կանացի բնաւորութեան տէր, լաւ դիտող էր, ուրախ մարդ էր, սիրում էր զուարճութիւններ։ Նա ուսանողական հասարակութեան աղն էր, ուր մտնում էր, ամեն տեղ կարողանում էր մարդկանց տրամադրութիւնը յեղաշրջել դէպի ծիծաղ. ուսանողական խնջոյքներումն էլ առանց Դոդոխեանի քէֆ չկար։

Դոդոխեանը յայտնի է մեր գրականութեան մէջ՝ որպէս հեղինակ հանրածանօթ «ծիծեռնակ» երգի, որ այժմ երգում են ամեն տեղ և համերգներում։ Այդ երգն անմահացրեց Դոդոխեանին։ Կար ժամանակ, որ մի քանիսն ասում էին, թէ այդ երգը Դոդոխեանը չի գրել, այլ գրել է Ասկարեանը, բայց Աղէքսանդր Ռոտինեանցը, որ նրա հետ Դորպատում ապրում էր միևնոյն բնակարանում, հաստատում է, որ Դոդոխեանը նորա առջև էր գրում այդ երգը, ուղղում, ջնջում և կրկին ուղղում և Ռոտինեանի մօտ կարդում։ Ուրեմն հաստատ է, որ ծիծեռնակը գրել է Դոդոխեանը, առաջին անգամ տպագրեց «Դամառ-Քաթիպայում»։ Ռոտինեանի ասելով, հէնց եղանակն էլ Դոդոխեանն է հնարել։

Թոդոխեանը թարգմանել է հետևեալ ոտանաւորները, որոնք տպագրուած են Քնար հայկակցնում. 1) Զինուորի երգ. 2) Հարբած մարդու երգ, ուղիղ գնետունից ես տուն եմ գընում։ Պէտք է որ Դոդոխեանն ունեցայ անտիպ շատ երգեր և աշխատութիւններ, բայց չէ տպագրել, որովհետև փոքր ինչ անտարբեր բնաւորութիւն ունի։ Դոդոխեանն այժմ ապրում է Սիմֆերոպոլում։

17

ԻՍԱՀԱԿ ՏԷՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆ

Թիֆլիզեցի է, ծնուել է 1827 թ. մարտի 10 ին. մտաւ համալսարան 1852 թ. յունուարին։ Սկզբում ուսանում էր երկրագործութիւն, յետոյ բժշկութիւն։ Ուսումը չը վերջացրեց և Դորպատից գնաց 1856 թ.։ Ապրում էր Մոսկուայում, յետոյ գնաց Թիֆլիզ և շուտով վախճանուեց։

18

ԱՂԷՔՍԱՆԴՐ ՌՕՏԻՆԵԱՆ.

(Երկրագործ։ Անտառապետ)։

Աղէք. Ռօտինեանը Թիֆլիզեցի է, ծնուել է 1832 թ. դեկտեմբերի 10-ին կրթուեց Լազարեան ճեմարանում, մտաւ համալսարան 1852 թ. յունուարին, ուսանում էր երկրագործութիւն և վերջացրեց 1855 թ.։ Համալսարանը վերջացնելուց յետոյ վերադարձաւ Թիֆլիզ։ Սա ինչ ինչ պատճառներից ստիպուած, մտաւ զինուորական ծառայութիւն, շուտով ստացաւ սպայի աստիճան և կարճ միջոցից յետոյ գնաց Պետերբուրգ ու մտաւ անտառապետական ճեմարան։ Այդտեղ վերջացնելով, վերադարձաւ Կովկաս։ Այժմ անտառապետ քննիչ և ապրում է Թիֆլիզում։

Հարկաւոր եմ համարում առաջ բերել Աղէք. Ռօտինեանցի խօսքերը (Արձագանք 1892 թ. № 107, № 108, 109), որոնք բաւականին գեղեցիկ կերպով բնորոշում են այն ժամանակուայ հայ ուսանողների դրութիւնը, ձգտումները, ոգին և գաղափարները։ Ոսկեդարեան Դորպատի հայ ուսանողների մասին տեղեկութիւնները վերցրել եմ Նորա վերոյիշեալ գրուածքից։ Ռօտինեանցն ասում է. գալով Դորպատ, իմ դրութիւնը խղճալի էր երևում ինձ, նախ այն պատճառով, որ շատ փոքր գիտէի հայերէն և համարեա դժուարանում էի խօսել ընկերներիս հետ մայրական լեզուով, որ խստաբար պահանջւում էր,

և երկրորդ որ չէի հասկանում ոչինչ գերմաներէն, որ ինձ համար այժմուց պիտի միակ ճանապարհ դառնար ուսման և լուսաւորութեան։ Ես զարմացմամբ նայում էի ծանօթ ընկերներիս, որ իմ ռուսերէն ասածներին հայերէն էին պատասխանում և այնպիսի մաքուր հայերէն, որ հէնց հայոց լեզուի ուսուցիչ Էմինից չէի լսել։ Ամօթս ծածկելու համար, առաւել մունջ էի հասարակութեան մէջ և ուշի ուշով հետևում էի ըմբռնել հայոց խօսակցութեան ոճը, որ օր աւուր կարևոր էր դառնում։ Նա, որ մի ժամանակ ամենևին հայերէն չը գիտէր, այժմս իմ առջև համարձակ դատում և վիճում էր հայերէն, գործադրելով միանգամայն այնպիսի բառեր, որ ես մի քանի ամիս առաջ դժուարիմաց բառեր էի համարում և որոնում էի Խուդաբաշեանի բառարանում։ Բայց աւելի ամօթալի էր և վատթարագոյն իմ դրութիւնս, երբ լինում էի ընկերներիս հետ մի որևէ գերմանացի ուսանողի մօտ։ Օտարները մեծ զարմանքով նայում էին առհասարակ հայերի վրայ, որ անլեզու գալիս էին Դորպատ և առաւել զարմանում էին երբ մի տարուց յետոյ միևնոյն անլեզու ճանաչուածները մաքուր և բարձր ոճով կարողանում էին գերմաներէն նոցա հետ խօսել։ Այս բանն ակներև ցոյց էր տալիս օտարներին, որ հայերը հեշտ են սովորում օտար լեզուն և դրա համար մասնաւոր առաւելութիւն ունեն։

Շուրջ վեց ամիս աշխատելով մասնաւորապէս գերմաներէն լեզուով և առարկաներով, գերմաներէն ձեռնարկներով, ես 1852 թ. տուի քննութիւնս և դառայ ուսանող Դորպատեան համալսարանի։ Առաջին կէս տարին, ինչպէս ես, նոյնպէս և իմ նախորդներս, հազիւ հասկանում էինք մեր կարդացածը և առաւել փոքր էինք ըմբռնում պրոֆէսորի դասախօսութիւնը, բայց մեր տաժանակիր աշխատութիւնն այդ բանին յաղթում էր։ Ոչ թատրոն, ոչ թղթախաղ, ոչ մի ուրիշ բան չէր զբաղեցնում մեզ։ Մենք շատ լրջօրէն հետևում էինք մեր գործին։ Այդ բանում հայերս՝ բացառութիւն էինք կազմում օտարների մէջ։ Մի առանձին սէր և յարգանք ունենալով դէպի գերմանացոց գրականութիւնը և լեզուն, որ պիտի լուսաւորէր մեր միտքն ու սիրտը։ Մենք հայերս ամեն հնար գործ էինք դնում յետ չը մնալ ուրիշ ազգերից և մեր վարկը բարձր պահել։

Համահաւասար գերմաներէնի հարկաւոր էր գիտենալ նոյնպէս հայ լեզուն, որ 1850 թուականներին, դեռ իր բարու-

բանքների մէջ էր Դորպատում։ Աշխարհաբար լեզուն ոչ ոք չը գիտէր, և ամեն ոք խօսում, գրում էր ըստ իր բարեհաճութեան և ուղղագրութեան։ Տպած գրքեր աշխարհիկ լեզուով չը կային կամ նոցա գոյութիւնը մեզ անյայտ էր։ Հարկաւոր էր մի կերպ վերականգնել խօսակցութեան ու գրութեան կենդանի ոճը և ահա սկսուեց այդ ժամանակներից դրա մասին մի բանաչինութիւն և կարկատում։ Մեծ էր ամենից եռանդը սովերել հայ լեզուն, որ ամօթահար չը լինէինք գերմանացոց մէջ և մի անլեզու սերունդ, մի օտար քաղաքում։ Ահա այսպէս առաջ եկաւ անխուսափելի պարտաւորութիւն, ուսանել հայ լեզուն։

Գլխաւորապէս 1850թուականներում Լազարեան ճեմարանն էր տալիս համալսարանի համար պատրաստի հայ աշակերտներ։ Սրանց մեծ մասը գիտէին հայերէն գրաբառ լեզուն, ուրեմն և կարող էին մի կերպ օտարների մէջ խօսել իրենց մայրենի լեզուով»։

Աղէք. Ռօտինեանցի աշխատութիւնները։

1, Շրջատեսութիւն Դիլիջանի անտառավարութեան տեղերի (նուէր Ֆ. Պատկանեանին), տպած «Մեղու» լրագրում 1881 թ. № № 41, 42, 44, 45, 47, 49, 80, 81, 84, 85, 86։

2, Ճանապարհորդութիւն դէպի հարաւ։ Տպած «Մեղու» լրագրում 1877 թ. № № 8, 11, 13, 16։

3, Դորպատեան հայ ուսանողաց կեանքից։ (Թուցիկ լիշողութիւններ). նուէր Կ. Եղեանցին։ Տպած «Արձագանքում». 1892 թ. № 107, 198, 109։

19

ՂԱՀԱՆ ԱՍԿԱՐԵԱՆ.

(Մագիստրոս)։

Սա Երևանցի էր, ծնուել էր նոյեմբերի 7-ին 1830։ Աւարտելով Լազարեան ճեմարանը, մտաւ համալսարան 1853 թ. յունուարին, և ուսանում էր կամերալիա։ Վերջացրեց 1856 թ. յեսոյ տուեց մագիստրոսի քննութիւն և պէտք է մնար համալսարանում դոցենտ, բայց վախճանուեց 1858 թ. ապրիլի 1 ին բարակացաւից։ Ասկարեանը թաղուած է Դորպատ-գերմանական հանգստարանում։

20

ՆԻԿՈՂԱՅՈՍ ՇԱՐՈՅԵԱՆ.

(Երկրագործ։ Ասիճանաւոր)

Սա Թիֆլիզեցի է, ծնուեց մարտի 20-ին 1833 թ. մտաւ համալսարան 1853 թ. յունուարին, ուսանում էր երկրագործութիւն, վերջացրեց 1857 թ.։ Սա վերադառնալով Թիֆլիզ, ծառայում էր Կովկասի փոխարքայի դիւանատանը։ Վախճանուեց 1884 թ.։

21

ՓԻՐԼՈՒԻ ՆԱԶԱՐԲԷԳԵԱՆՑ.

(Դոքտրանտ)։

Սա Թիֆլիզեցի էր, ծնուել էր փետրուարի 13-ին 1832 թ. մտաւ համալսարան 1854 թ. յունուարին։ Սկզբում ուսանում էր երկրագործութիւն, յետոյ անցաւ բժշկական ֆակուլտետը, տուեց բժշկապետի քննութիւնը, բայց տկարութիւնը միջոց չը տուեց պաշտպանել դիսերտացիան։ Վախճանուեց Դորպատ 1861 թ. թաղուած է գերմանական հանգստարանում։

22

ԻՇԽԱՆ ՄԻՔԱՅԷԼ ԱՄԱՏՈՒՆԻ։

(Դիպլոմատ)

Ծնուեց Թիֆլիզում 16-ին հոկտեմբերի 1834 թ. մտաւ համալսարան 1855 թ. յունուարին, ուսանում էր դիպլոմատիա. վերջացրեց 1858 թ. ապրում էր Թիֆլիզում, վախճանուեց 1865 թ.։

Դորպատի հայ ուսանողների «Ոսկէ դար» շրջանում, Դորպատում եղել են նոյնպէս Փուղինեան, Խուբեան, Պէպինեան, որոնք համալսարան չեն մտել, բայց պարապել են ըստ իրենց ցանկութեան։

Փուղինեանը գրեց «դալալ ղաղ» կոմեդիան։

Ընդհանուր հայեացք Ոսկեդար շրջանի վրայ.

1830—1859 թ.

Դորպատը—մուսաների քաղաքը, որ տարածուած է Էմբախ գետի ափերին, իր համալսարանով, գիտութեան առաջին տաճարն է հայոց համար։ Այդ համալսարանն ունե-

ցել է այնպիսի մի մեծ և բարերար ազդեցութիւն հայոց նորագոյն լեզուի և գրականութեան զարգացման, մեր մտաւոր և բարոյական առաջադիմութեան վրայ, որ դա մեզ համար բոլոր համալսարանների մէջ բռնում է առաջին տեղը։ Այդտեղ են ուսել մեր երկրում լուսաւորութիւն տարածող առաջին ռահվիրաները (պիոնէրները)։

Խաչատուր Աբովեանը և Ստեփաննոս Նազարեանցը, որպէս Դորպատի առաջին ուսանողներ, այնպէս էին ներգործել հայ երիտասարդների վրայ, առաջինը Կովկասում, երկրորդը Մոսկովում, այնպէս ոգևորել նոցա գերմանական ուսում և գիտութիւն ձեռք բերելու, որ դոքա գիմնազիաներից և Լազարեան ճեմարանից դուրս գալով գնում էին Դորպատ։

Հայ երիտասարդներն, սկզբնական մտաւոր սնունդը ստացած լինելով իրենց ասիական գերդաստաններում կամ Լազարեան փակ ճեմարանում և դուրս գալով այդ մրթնոլորդներից, գալով Դորպատ և ամեն մի քայլափոխում ընդհարուելով նոր գաղափարների հետ, մնում էին զարմացած. ազգայնութեան, լեզուի, հայրենասիրութեան գաղափարների մասին այդ տեղ էին լսում առաջին անգամ գերմանացիներից։ Այդ տեղ, գերմանացւոց ազդեցութեամբ սկսեց զարգանալ հայ ուսանողութեան մէջ ինքնաճանաչութեան զգացմունքը և հէնց այդ էր պատճառը, որ օտարների լեզուների հետ զուգընթացաբար սկսեցին ուսանել հայերէնը և մշակել աշխարհաբար լեզուն։ Այդ ժամանակուայ ուսանողներին հետաքրքրում էին միայն գաղափարները, գիտութիւնները և ոչ կարիէրը կամ ապագայ չքեղ կեանքը։

Դորպատն ունենալով իր հռչակը, ժողովում էր իր շուրջը մեծ մասամբ տաղանդաւոր, ընդունակ ու աշխատասէր հայ երիտասարդներին։ «Վէրք-Հայաստանի» մի ձեռագիր օրինակը գտնուելով Գ. Աբիմեանի մօտ, որ Աբովեանի աշակերտներիցն էր, ընթերցանութեան և ոգևորութեան նիւթ էր տալիս ուսումնասիրել լեզուն, վառուել հայրենեաց սիրով։ Ամեն մէկը ձգտում էր բանաստեղծական երկեր գրելում փորձուելու և ով որ տաղանդ ունէր զարգացնում էր։

Կասկած չը կայ, որ եռանդոտ և տաղանդաւոր այդքան երիտասարդներ ժողովուած լինելով մի տեղ, միանման գաղափարներով վառուած, պէտք է օդը թնդացնէին երգելով, «ով չը գիտէ հայերէն, ոչ ճանաչէ նա զօրէն»։

Մէկը միւսին սովորցնում էր հայերէն լեզուն, գաղափարներ էր ներշնչում, խորհուրդ էր տալիս, օգնում էր։

Պէտք է ասել նոյնպէս, որ հայ ուսանողները Դորպատում իրենց այնպէս էին վարում ուսանողական շրջաններում, որ վայելում էին ընդհանուրի յարգանքը, որ և շարունակւում էր մինչև վերջը։

Ինչպէս տեսանք, սկզբում գլխաւորապէս Լազարեան ճեմարանն էր, որ տալիս էր Դորպատի համալսարանի համար պատրաստի հայ ուսանողներ։ Սրանք հիմք էին դրել աշխարհիկ լեզուին Դորպատում և լայն ծաւալ տուին, մի օրինաւոր ոճ կազմակերպեցին իրենց համար, որով կարողանում էին մինչև անգամ գիտնական հարցերի մասին հայերէն խօսել։ Լեզուն արդէն մաքրուած էր օտար բառերից և այնքան կազմակերպուած, որ դառել էր գործածական։ Արդէն հայախօսութեան հաստատ հիմք էր դրուել, որով հայ ուսանողներին տրուել էր մի որոշ հայկական կերպարանք։ Ուսանողների մէջ առաջացել էր սէր և եղբայրութիւն, որ յետոյ էլ շարունակուեց։ Դրանք գործում էին համերաշխաբար։ Նորեկներին հրաւիրում էին մասնակցել ընդհանուր գործերին և վէճերին։ Ըստ դորպատեան հին գերմանական սովորութեան աւագները հսկում էին նորեկների վարք ու բարքի վրայ, որ չարեաց զոհ չը դառնան անփորձ երիտասարդները։

Սկզբում հայ ուսանողների թիւը փոքր էր, բայց դրանք նամակագրութեամբ հաղորդակցում էին այլ քաղաքներում սովորող իրենց երիտասարդ ընկերների հետ, հրաւէր էին կարդում նրանց և ձգում դէպի Դորպատ։

Ուսանողների մէջ կային կորովամիտ և հաստատ գաղափարների տէրեր և ահա դրանք պահպանում էին ուսանողների տնօրէնութիւնները և աւանդութիւնները։ Դրանցից մի քանիսը լինելով Խ. Աբովեանի աշակերտներից, վառ սրտով ոգեորուած էին նրա գաղափարներով։ Հաստատել էին գրական երեկոյթներ և շաբաթը մէկ անգամ ժողովւում էին Գէորգ Աքիմեանի մօտ։ կարդում էին իրենց թարգմանութիւններն, ինքնուրոյն գրուածքները և վիճում էին դրանց մասին։

Որովհետև սկզբում նորեկներից շատերը (Թիֆլիզցիք) դժուարանում էին հայերէն խօսել, այս պատճառով էլ մի նիստում որոշեցին հայերէն խօսելը պարտադիր դարձնել, որև սրբութեամբ կատարում էին։

Հայ ուսանողներն իրենց թուի փոքրութեան պատճառով, չը կարողանալով հիմնել հայկական մի կորպորացիա, գրուել էին Բալտեան կօրպօրացիում։ Դրանով աւելի սերտ յարաբերութեանց մէջ մտան գերմանական ուսանողութեան հետ և միջոց գտան նրանց լեզուն, սովորութիւնները, գողափարները իւրացնելու։ Բայց և շատ էլ մօտ չէին դրանց, որովհետև հայերն արդէն իրենց մէջ կազմել էին մի ազգային հայկական ընկերութիւն, որ դրանց կապել էր միմեանց հետ։ Այդ ժամանակ հայ ուսանողները ստանում էին «Արծիւ Վասպուրական», «Արշալոյս», ստացւում էր նաև մի գրաբառ լրագիր «Ազդասէր» անունով, որ խմբագրում էր Մ. Թաղիաթեանը։ Այդ լրագիրները մեծ նիւթ էին տալիս խօսակցութեան։ Մի նիստում կարդացուեց Խ. Աբովեանի «Վէրք Հայաստանի» աշխատութիւնը, որ լեզուի և զգացմունքների վերաբերմամբ մի յեղաշրջում առաջ բերեց և մեծ զարկ տուեց ուսանողներին ևս աշխարհիկ լեզուի կանոնաւորութեանը։

Պետրոս Սիմէօնեանցը հէնց սկզբից հայոց լեզուի վարժապետի դերն էր ընդունել, ցանկացողին ձրի դասեր էր տալիս և դժուար դէպքերումն էլ, լեզուի վերաբերմամբ, բոլորը նրան էին դիմում։ Շատ անգամ սրա մօտ ժողովում էին կարդալու, շարադրելու, վիճելու։

Զարմանալի է, որ այդ միջոցին, ուսանողների մէջ հարց ծագեց, «հարկաւոր է, պէտք է արդեօք գերմանական եկեղեցիներում քարոզներ լսելը»։ Այդ մտքին Ռ. Պատկանեանը շատ դէմ էր։ Այն ուսանողները, որոնք եկել էին աստուածաբանութիւն ուսանելու, պէտք է այդ գիտութեան վերաբերեալ դասախօսութիւնները լսէին և ինչ պէտք է լինէր, եթէ դրանք բոլորն էլ լսէին քարոզները, որոնց նմանները հայոց եկեղեցիներում լսել չէին կարող և մի՞թէ քարոզները—Քրիստոսի մտքերի բացատրութիւնները, ամեն եկեղեցիներում միևնոյնը չեն։ Այդ տեղ երևում էր մեր ուսանողների մոլեռանդութիւնը։

1855 թ. վերջերում հայ ուսանողների հազիւ հինգերորդ մասն էր մնացել Դորպատում։ Գերմանացիք զարմանալով հարցնում էին, թէ ինչու հայերն այլ ևս չեն գալիս գերմանական ուսում ստանալու Դորպատում, և կարճ միջոցում այնքանը գնացին։

Հայերից շատերն ասում էին, թէ Դորպատի ուսանողներից շատ քչերն աւարտեցին և մնացածները գնացին ոչինչ չը

շահուելով։ Այդ ասելով ի հարկէ ի նկատի ունէին դիպլոմը։

40—50 թուականներում Պետերբուրգի հայերի մէջ մեծ ցանկութիւն կար ունենալ լուսաւորեալ հոգևորականներ։ Այդ խմբի գլխաւոր ղեկավարներից մէկն էր Աղաթոն Աքիմեանը։ Սա շատ հարուստ և ազդեցիկ մարդ էր Պետերբուրգում։ Մեծ ազդեցութիւն ունէր թէ Լազարեանների և թէ Պետերբուրգի եկեղեցական վարչութեան անդամների վրայ և լինելով խելացի մարդ, ամենին էլ ղեկավարում էր, ըստ իր ցանկութեան և հակացողութեան։ Դա ունէր գերմանացի ամուսին, որի մօտ գալիս էին գերմանական հոգևորականներ, մանաւանդ պաստոր Ֆլիտները, որ շատ զարգացած մարդ էր։ Աքիմեանը տեսնելով, որ այդ պաստորները խելացի, լուսաւորեալ մարդիկ են և լաւ քարոզիչ, ցանկանում էր որ մեր հոգևորականներն էլ դրանց նման լինէին։ Գիտենալով, որ դրանք Դորպատ են ուսել, մտածեց այդտեղ ուղարկել մի քանի հայ երիտասարդներ, որ դրանք ուսանելուց յետոյ հոգևոր կոչում ընդունեն։ Սակայն երկիւղ կրելով, որ ուսումն աւարտելով և իրաւունք ձեռք բերելով դոքա կարող են այլ ևս չը ցանկալ հոգևորական դառնալու, Աքիմեանը թոյլ չէր տալիս դրանց վերջացնել ուսումը, բաւական համարելով այն, ինչ որ մի երկու երեք տարում սովորել էին։ Աքիմեանը ոչինչ չէր ծախսում իր քսակից այդ երիտասարդների վրայ, այլ համոզում էր Լազարեանին նպաստել դրանց եկեղեցու փողով։ Այդ նպատակով ուղարկել էին Դորպատ Փափազեանին, Աղափիրեանին, Ռ. և Ռ. Պատկանեանները, Պ. Սիմէօնեանցին։ Սրանցից հոգևոր կոչում ընդունեցին միայն Փափազեանը և Աղափիրեանը։

Թէպէտ և յիշեալ շրջանի ուսանողներից մի քանիսը հիւանդութեան կամ չքաւորութեան պատճառով, առանց ուսումը վերջացնելու վերադարձան հայրենիք, բայց դրանք մնալով մի քանի տարի Դորպատի հայ ուսանողաց շրջանում, գերմանական մթնոլորդում և ուսանելով որքան և ինչ որ իրենց կարելի էր կամ հարկաւոր էր, ծանօթանալով գերմանական գիտութեանց և գրականութեան հետ, Դորպատը դրեց նրանց բոլորի վրայ մի այնպիսի կնիք, որ դրանք խիստ պարզ կերպով ջոկւում էին այլ համալսարաններում եղած երիտասարդներից։ Դրանք աւելի գաղափարական էին, աւելի սովոր աշխատասիրութեան, աւելի գործով ազգասէր քան խօսքով և դրանց մեծամասնութիւնը նուիրեց իրեն հայոց գրականութեանը և հա-

յոց՝ մէջ լուսաւորութիւն տարածելուն: Բանաստեղծական տաղանդ ունեցողները զարգացրին իրենց տաղանդը, և տուին մեր գրականութեանը թէ ինքնուրոյն գրուածքներ և թէ թարգմանութիւններ, աշխատեցին որպէս հեղինակներ, խմբագիրներ, ուսուցիչներ, կամ ազգային հասարակական գործիչներ կամ գիտնականներ: Դորպատեցիք մեծ մասամբ ընտրում էին ազատ աշխատանք, իսկ այլ համալսարանցիք մտնում էին պետական ծառայութիւն: Դորպատցիներից մի քանիսը մեծ գործեր կատարեցին: Դրանց թիւը մեծ չէր, բայց կատարածը մեծ էր: Համարեա ամեն մէկը պարտք էր համարում իր լուման գցել մեր ազգային լուսաւորութեան արկղիկի մէջ և ապրել հայի համար:

ԵՐԿՐՈՐԴ ՇՐՋԱՆ

1859 – 1866

Գարրիէլ Խատիսեանը Դորպատից վերադառնալով Թիֆլիզ, ինչպէս վերևը ասացինք, 1852 թ. բացեց պանսիոն, ուր սովորում էին 30—35 աշակերտներ: Ես այդ պանսիոնի կրտսեր աշակերտներից մէկն էի: Այդ պանսիոնում ապրում էր նոյնպէս Պետրոս Սիմէոնեանցը, որ տալիս էր դասեր ընդհանուր և Հայոց պատմութեան, աշխարհագրութեան և հայոց լեզուի և սերտ մասնակցութիւն ունէր պանսիոնի բոլոր գործերին: Այդ պանսիոնը յաճախ գալիս էին բժշկապետ Մ. Ռոտինեանցը և Գ. Աքիմեանը, որոնք, որպէս Դորպատում ուսածներ, հետաքրքիր էին պանսիոնի վիճակին:

Խատիսեանը պատրաստեց ինն հայ և մի վրացի աշակերտ և փակելով իր պանսիոնը 1858 թ. վերջերին, 1859 թ. օգոստոսին այդ տասը երիտասարդներին տարաւ Մոսկովի համալսարան մտցնելու: Դոքա էին՝ 1) Մատթէոս Հախումեան, 2) Վանս Տէր-Միքայէլեան, 3) Գրիգոր Մարգարեան, 4) Գուստաֆ Քալանթարեան, 5) Աղէքսանդր Ղորղանեան, 6) Բաղդասար Սվէշնիկեան, 7) Վարդան Աբովեան, 8) Արտեմ Տէր-Յովակիմեան, 9) Միքայէլ Ղազարեան, 10) Վանս Տուլաեվ (վրացի):

Սրանց չը յաջողուեց Մոսկովում քննութիւն տալ համալսարան մտնելու համար, այդ պատճառով էլ, տարին չը կորցնելու համար (այդտեղ քննութիւնը լինում էր տարին մէկ ան-

գամ, այն է սեպտեմբերին, իսկ Դորպատում՝ տարին երկու անգամ, այն է յունուարին և սեպտեմբերին) Խատիսեանը դրանց տարաւ Դորպատ և միայն Տուլայեվը մնաց Մոսկովում։

Դորպատում այդ ինն երիտասարդները պէտք է պատրաստուէին գերմաներէնից և լատիներէնից և այդտեղ պէտք է քննութիւն տային համալսարան մտնելու համար։

1860 թ. սեպտեմբ. համալսարան մտան առաջին հինգ ուսանողները և 1861 թ. յունուարին մտան մնացած չորսը [1]։

Դորպատ գալով, դրանք այդտեղ գտան հին (ոսկէդարեան) ուսանողներից Նազարբէգեանին, որ տուել էր իր վերջին քննութիւնը և պատրաստում էր իր դիսերտացիան և Դոդոխեանին, որ վերջացրել էր համալսարանը և ապրում էր Դորպատում, կրթելու մի հայ երիտասարդի (Մոզդոկեցի Ս. Քալանթարեան)։

Ցոյս կար, որ Խատիսեանի ինն աշակերտների խումբը գալով Դորպատ, բուն կը դնէր այդ տեղ և նրանց համբաւը կը ձգէր դէպի Դորպատի համալսարանն այլ հայ երիտասարդների։ Բայց տարաբաղդաբար, այդպէս չեղաւ։ Ահա թէ ինչու։ Խատիսեանը լինելով շատ վերացական հայեացքների տէր և հասարակորդութեանը (քոմմունիզմ) համակրող, խորհուրդ էր տուել իր այդ աշակերտներին, ապրել միասին և նոյնպէս ցանկութիւն էր յայտնել, թէ Վարդան Աբովեանը, որ չքաւոր էր, ապրէր դրանց հետ և կառավարուէր ընկերների օգնութեամբ։ Լսելով Խատիսեանի խորհրդին, դրանք վարձեցին մի մեծ բնակարան, ուր ամեն մէկը կամ երկուսն ունէին մէկ սենեակ և բոլորի համար էլ կար մի մեծ դահլիճ։

Դոդոխեանը, որպէս աւագագոյն դորպատեցի, յանձնում էր դրանց։ Պէտք է ենթադրել, որ Դոդոխեանը, որպէս փորձուած և արդէն հասակն առած մարդ և հին խմբի անդամ, ընկերակցելով պէտք է ղեկավարէր այդ երիտասարդներին, յորդորէր դրանց պարապելու, աշխատելու և սեփականացնելու, այն բոլորը, որ կարող էր տալ գերմանական ոգւով կազմած Դորպատեան համալսարանը։ Բայց Դոդոխեանը կենցաղասէր, զուարճասէր և կատակասէր մարդ լինելով, այցելում էր դրանց,

---

[1]) Խատիսեանի այս ինների աշակերտներին վերաբերեալ բոլոր տեղեկութիւնները ստացայ նրա աշակերտ Արտէմ Տէր-Յովակիմեանից, որ այդ խմբիցն էր։

սովորցնում էր ուրախ ժամանակ անցկացնելու եղանակները։ Դրանց ուտել խմելուն, երգելուն վերջ չը կար. ուր Դորպատն էր նախագահում, երեկոյ չէր անցնում, որ այդ բնակարանում չը խմէին 100 շիշ գարեջուր։ Այդ բնակարանը դարձել էր մի տեսակ հիւրանոց։ Ի հարկէ դրանց մօտ գալիս էին նոյնպէս գերմանացի ընկերներ։ Մեր այդ հայ երիտասարդները յաճախ գնում էին քաղաքից դուրս գտնուած պանդոկները քէֆ անելու, որ ընդունուած է Դորպատում և անտառում կրակ էին անում, դրնդէլ սարքում և վրայից թռչում։ Այդ պատճառով տեղացի էստոնցիք հայերին համարում էին «կրակապաշտ»։

Այդ խումբը ճաշում էր Բլումբէրգի հիւրանոցում, ուր գրւում էր բոլորի հաշիւը միասին և ով ինչ կերաւ, կերաւ, ով ինչ խմեց, խմեց։ Սրբեմն էլ դրանց գերմանացի ընկերները գալիս էին այդ հիւրանոցն, ուտում, խմում էին և գրել էին տալիս հայերի հաշուին (այդպէսներն էլ կան դրանց մէջ)։ Մի խօսքով հասարակորդական (քոմմիւնական) սկզբունք էր տիրում այդ խմբում։ Այդ երիտասարդները լինելով անփորձ, սկզբում չէին միջամտում իրենց անկարգ ծախսերին, բայց երբ բոլոր ութ հոգին (բացի Աբովեանը) տեսան, որ ահագին պարտքերի տակ են ընկել և պարտքեր վճարելուն վերջ չը կար, սթափուեցին, բայց ուշ էր։

Անցել էր բաւական ժամանակ, ոչ ոք կանոնաւոր կերպով չէր պարապել իր մասնագիտութիւնով։ Տեսան, որ այդպէս կեանք վարելով ու քէֆեր անելով գործ չեն կատարելու, մանաւանդ որ, կազմելով հայկական շրջան, գերմաներէն լեզուն էլ այնքան չէին կարողացել սովորել, որ կարողանային գիտութեամբ պարապել. վճռեցին տեղափոխուել մի այլ ռուսական համալսարան, ուր դժուար չէր լեզու սովորել։

1862 թ. այդ երիտասարդների մեծ մասը անցաւ Մոսկովի համալսարան, ուր չը վերջացրին Վանս Տէր-Միքայէլեանը և Բաղդասար Սվէչնիկեանը։ Արտասահման գնաց Աղ. Ղուրդանեանը և Դորպատում մնացին միայն Միքայել Ղազարեանցը և Վարդան Աբովեանը։ Այդ ժամանակ Վարդան Աբովեանի դրութիւնը շատ վատացաւ, որովհետև ընկերները գնացին, իսկ նրա Թիֆլիզի բարեկամները, որոնք խոստացել էին օգնել, մոռացել էին նրա գոյութիւնը։

Այդպէս ցրուեց Դորպատից Խատիսեանի ինն աշակերտների խումբը։

Այժմ տեսնենք, թէ Խատիսեանի աշակերտներն, այլ համալսարաններ տեղափոխուելուց և վերջացնելուց յետոյ, ինչ եղան։

23.

ՄԱՏԹԷՈՍ ՀԱԽՈՒՄԵԱՆ

(Իրաւաբան)

Սա Շուշեցի է, ծնուեց 1841 թ. մայիսի 16-ին. կրթուեց Խատիսեանի պանսիօնում, մտաւ համալսարան 1860 թ. սեպտեմբերին և գրուեց բնագիտական ֆակուլտետի ուսանող, յետոյ 1861 թ. սեպտեմբերին տեղափոխուեց Մոսկովի համալսարանը և մտաւ իրաւաբանական ֆակուլտետը։ Վերջացնելով իր ուսումը, Թիֆլիզում պարապում էր փաստաբանութեամբ։ Այժմ վախճանուած է։

24.

ՎԱՆՕ ՏԷՐ-ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

Թիֆլիզեցի է, ծնուեց 1843 թ. յունուարի 30-ին, կրթուեց Խատիսեանի պանսիօնում. մտաւ համալսարան 1860 թ. սեպտեմբերին, ուսանում էր երկրագործութիւն։ 1861 թ. սեպտեմբերին տեղափոխուեց Մոսկովի համալսարան և կարճ միջոցից յետոյ գնաց Թիֆլիզ ու վախճանուեց։

25.

ԳՐԻԳՈՐ ՄԱՐԳԱՐԵԱՆ

(Բնագէտ։ Նոտար)

Սա Նուխեցի է, ծնուեց 1843 թ. յունիսի 29-ին, կրթուեց Խատիսեանի պանսիօնում, մտաւ համալսարան 1860 թ. սեպտեմբերին, յետոյ 1861 թ. տեղափոխուեց Մոսկովի համալսարանը։ Վերջացնելով բնագիտական ֆակուլտետը, վերադարձաւ հայրենիք։

Սկզբում պարապում էր չերամապահութեամբ, յետոյ Նուխիում բացեց նոտարի գրասենեակ։

26.

ԳՈՒՍՏԱՓ ՔԱԼԱՆԹԱՐԵԱՆ

(Բնագէտ)

Երևանցի է, ծնուեց 1843 թ. յունուարի 17-ին, կրթուեց Խատիսեանի պանսիօնում, մտաւ համալսարան 1860 թ.

սեպտեմբերին, ուսանում էր երկրագործութիւն, 1861 թ. սեպտեմբերին անցաւ Մոսկովի համալսարան, ուր ուսանում էր բնագիտութիւն: Վերջացնելով իր ուսումը բնագիտական ֆակուլտէտում, վերադարձաւ Երևան, յետոյ երկար ճանապարհորդեց Եւրոպայում. Վերադառնալով արտասահմանից, պարապում էր զանազան մասնաւոր գործերով և վերջապէս այժմ թեթև խելագարուած, ապրում է Երևանում:

27.

ԲԱՂԴԱՍԱՐ ՍՎԻՉՆԻԿԵԱՆ

Թիֆլիզեցի է, ծնուեց 1841 թ. յունուարի 20-ին, կըրթուեց Խատիսեանի մօտ, մտաւ համալսարան 1860 թ. սեպտեմբերին, երկրագործութիւն էր ուսանում: 1861 թ. սեպտեմբերին տեղափոխուեց Մոսկովի համալսարան և կարճ միջոցից յետոյ վերադարձաւ Թիֆլիզ: Այդ տեղ պարապեց սեպհական գործերով:

28.

ԱՂԻՔՍԱՆԴՐ ՂՈՐՂԱՆԵԱՆ

(Երկրագործ).

Սա Թիֆլիզեցի է, ծնուեց 1842 թ. յունիսի 24-ին, կրթուեց Խատիսեանի պանսիօնում, մտաւ համալսարան 1861 թ. յունուարին, ուսանում էր երկրագործութիւն: 1861 թ. սեպտեմբերին գնաց Հայդելբերգ ուսանելու:

Հայդելբերգում վերջացնելուց յետոյ եկաւ Դորպատ և 1866 թ. տուեց երկրագործութեան կանդիդատի քննութիւն: Վերադառնալով իր ծննդավայրը, սկզբում պարապում էր երկրագործութեամբ Ղարայազում և այժմ պարապում է երկաթուղային գործերով:

29.

ՎԱՐԴԱՆ ԱԲՈՎԵԱՆ

(Ուսուցիչ).

Սա Խաչատուր Աբովեանի որդին է, ծնուեց Թիֆլիզում 1840 թ. մայիսի 31-ին, կրթուեց Խատիսեանի պանսիօնում անվարձ. մտաւ համալսարան 1861 թ. յունուարին և ուսանում էր երկրագործութիւն: Թիֆլիզում մի քանի անձինք խոստացել էին սրան դրամական օգնութիւն տալ համալսարանում ուսանելու, բայց չը կատարեցին: Աբովեանը Դորպատում

ապրում էր ընկերների հաշուով։ Երբ Խատիսեանի աշակերտների խումբը ցրուեց (1861 թ.) սա մնաց անօգնական։ Անճարացած դուրս եկաւ համալսարանից 1862 թ., տուեց ուսուցչի քննութիւն, գիմնազիաներում դաս տալու իրաւունք ստացաւ և գնաց Ֆելին գիւղաքաղաքը (Դորպատից ոչ հեռու), ուր կար մի ուսումնարան և այդտեղ ընդունեց Ռուսաց լեզուի ուսուցչի պաշտօն։ Այդ տեղ նա մնաց եօթ տարի։ Ի վերջոյ մօր ստիպմամբ վերադարձաւ Թիֆլիզ։ Կովկասում նա պարապեց ուսուցչութեամբ. Ախալցխայում, Թիֆլիզում, Երևանում, նոյնպէս և ուրիշ քաղաքներում։ Վերջին ժամանակ ուսուցիչ էր ս. Էջմիածնի Հայոց հոգևոր ճեմարանում, ուր վախճանուեց ուսուցիչ եղած միջոցին 1896 թ. նոյեմբերի 16-ին։ Թաղուած է Ս. Գայիանէի վանքում, եկեղեցու ձախ պատի մօտ, իր ընկեր Ս. Պալասանեանին կից։ Աբովեանն ունեցաւ երեք տղայ և երկու աղջիկ։

30.

ԱՐՏԵՄ ՏԷՐ ՅՈՎԱԿԻՄԵԱՆ.

(Բնագէտ)

Երևանցի է, ծնուեց 1840 թ. նոյեմբերի 6 ին. իր կրթութիւնն ստացաւ Խատիսեանի պանսիոնում և մտաւ համալսարան 1861 թ. սեպտեմբերին, ուսանում էր երկրագործութիւն։ 1861 թ. Մոսկովի համալսարան անցաւ, մտաւ բնագիտական ֆակուլտետը։ Վերջացնելուց յետոյ վերադարձաւ հայրենիք։ Սկզբում պարապում էր իր անձնական գործերով, յետոյ վերցնելով Ղարայազում մի հողաբաժին, այժմ էլ պարապում է երկրագործութեամբ։

31.

ՄԻՔԱՅԷԼ ՂԱԶԱՐԵԱՆՑ.

(Երկրագործ)

Սա Թիֆլիզեցի է, ծնուեց 1843 թ. յունիսի 15-ին, կրթուեց Խատիսեանի պանսիոնում, մտաւ համալսարան 1861 թ. սեպտեմբերին։ Վերջացնելով իր ուսումը համալսարանում, 1866 թ. վերջում, վերադարձաւ Թիֆլիզ։ Այստեղ սկզբում պարապում էր երկրագործութիւնով (Ղարայազում), յետոյ ընտրուեց քաղաքային փոխատու բանկի կառավարիչ։ Կատարելով այդ պաշտօնը մի միջոց, ստացաւ ողնուղեղի կաթուած և այժմ ապրում է իր ընտանիքի հետ։

Ընդհանուր հայեացք երկրորդ շրջանի վերայ
1859—1866

Խատիսեանի ինքը աշակերտները չը թողեցին ոչ մի գրական աշխատանք, թէպէտ և դրանք էլ մասամբ պարապում էին իրենց մայրենի լեզուով ու գրականութիւնով։

Դրանք պարապեցին միայն գործնական աշխատութիւններով, բայց դրանցից ոչ մինն էլ մի առանձին գումարի տէր չը դարձաւ։ Հարկաւոր դէպքերում դրանք միշտ մասնակցել են հասարակական գործերին։

ԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՆ.
1866—1902

32.
ԼԵՒՈՆ ՑԻԳՐԱՆԵԱՆՑ
(Բժիշկ)

Ծնուել եմ Երևանում 1842 թ. նոյեմբերի 19-ին։ 1852 թ. ինձ տարան Թիֆլիզ և ապրելով իմ հօր եղբօր բժշկապետ Յարութիւն Յովհաննիսեանի մօտ, սովորում էի մասնաւոր ուսումնարաններում, նոյնպէս Փափազեանի և Խատիսեանի մօտ։ Իմ քեռի Մ. Սանասարեանը 1859 թ. գալով Թիֆլիզ, տարաւ ինձ Պ. բուրգ և տուեց Կարապետ Եղեանի պանսիօնը, որ նոր էր բացւում. 1865 թ. վերջացնելով պ. Եղեանի մօտ՝ գնացի Դորպատ և 1866 թ. յունուարին Դորպատի գիմնազիայում քննութիւն տալով, մտայ համալսարանի բնագիտական ֆակուլտետը և գրուեցի երկրագործական բաժնի ուսանող։ Այդ միջոցին (1866 թ.) Դորպատում կար հայ ուսանողներից միայն Միքայէլ Ղազարեանցը, որ իր ուսումը վերջացնելու վրայ էր։ Ընդունուելով ուսանող, մտայ էստլանդացւոց կորպորացիան և մասնակցում էի կորպորացիայի բոլոր գործերին։ Նոյն տարուայ սեպտեմբերին քեռիս ստիպեց ինձ տեղափոխուել Պ. բուրգ և մտայ բժշկական Ակադեմիան։ 1869 թ. վերջին զանազան պատճառներից ստիպուած կրկին տեղափոխուեցի Դորպատ։ 1871 թ. յունուարին նորից տուեցի կէս բժշկական քննութիւնս և կրկին մտայ նոյն կորպորացիան։ Ամեն կիրակի լսում էի համալսարանի եկեղեցում յայտնի պրոֆէսոր պա-

տօրների քարոզները։ Այդ քարոզները լսում էի թէ քրիստոնէական փիլիսոփայութեան հետ ծանօթանալու և թէ Գերմաներէն զեղեցիկ ճառ լսելու, լեզուն ուսումնասիրելու համար, նոյնն անում էին, և իմ յետագայ հայ ընկերները։ Այդ քարոզները լսելով, մենք հին հայ ուսանողների նման չէինք վախենում, թէ կարող ենք լուտերականի փոխարկուել։ Վերջին քննութիւնս տուի 1875 թ. մայիսին։

Այնուհետև $1^1/_2$ տարի ծառայեցի Պ.-Բուրգի Նադէժդինսկայա ծննդարանում և 1878 թ. մասնակցեցի ռուս տաճկական պատերազմին և մէկ տարի մնացի Կարին (Սապէօրների բատալեօնում)։ Պատերազմից յետոյ վերադառնալով Թիֆլիզ, ծառայում էի նոյն բատալիօնում և 1879 թ. մայիսին տեղափոխուեցի Երևան, քաղաքային բժշկի պաշտօնով։ Այդ պաշտօնում եղած ժամանակ ինձ ուղարկեցին Պարսկաստան, Սօուղ-Բուլաղ քաղաքը, որ գտնուում է Կապոյտ ծովից 60 վերստ դէպի հարաւ, բժշկական քննութիւն անելու (ժանտախտ)։ Այդ տեղից վերադառնալով Թաւրիզ, անցայ Սալմաստով ու գնացի Վան, Աղթամար և վերադարձայ Երևան Հին-Բայազէտի, Մասիսի, Իգդիրի մօտով։ Երևանում կատարեցի թեմական դպրանոցի հոգաբարձուի պաշտօն, մարդակազմութեան և ֆիզիօլոգիայի դասեր տուի Գայիանեան օր. ուսումնարանում, և այդտեղ մէկ տարի տեսչի պաշտօն վարեցի. մարմնամարզութեան դասեր տուեցի թեմական դպրոցում։ Շարունակ մասնակցում էի սկզբում, «Մեղուին» և յետոյ «Մշակին»։

1885 թ. փետրուարին, հանգամանքների պատճառով ստիպուած եղայ թողնել Կովկասը երեք տարով և բնակավայր ընտրել Դորպատը։ Այդ տեղ ես երկար չըմնացի՝ որովհետև խընդիրքիս համաձայն, չորս ամսից յետոյ, ինձ թոյլ տուին գնալ արտասահման։ 1887 թ. վերջին, ես արտասահմանից վերադարձայ Երևան։ 1895 թ. ընտրեցին Երևանի քաղաքագլուխ, բայց ութ ամսից յետոյ հրաժարական տուի և դուրս եկայ պաշտօնից ու մինչև այժմ չարունակում եմ մնալ իրաւասու։

Տպագրել եմ հետևեալ աշխատութիւններս։

1 Մարմնակազմական կամ անատոմիական բառարան լատիներէնից և ռուսերենից հայերէն 1879 թ.

2 Մարդակազմութիւն հայոց ուսումնարանների համար 1881 թ.

3. Առողջապահական թերթ 1881-85 թ.

4. Բառարան բժշկական բոյսերի 1883 թ.

5. Բժշկարան (կից բժշկական բառարան ռուսահայ) 1892 թ.

6. Հէրման և Դորոթէա—Գէօթէի: «Մուրճ» 1895 թ.

7. Մանկական պարտէզ (Քրէօբելի), տեսական մաս 1897 թ.

8. Տորքուատո Տասսո—Գէօթէի: «Լումայ»: 1891 թ.

9. Ֆաուստ—Գէօթէի (արձակ թարգմանութիւն): 1900 թ.

10. Ճանապարհոր դական պատկերներ (Երևան, Էջմիածին Սիս և Մասիս), (անտիպ):

11. Գերմանական Դորպատ համալսարանը և նրա հայ ուսանողները 1830—1892 թ.

33.

ՄԿՐՏԻՉ ԼԴԻԼԽԱՆԵԱՆՑ.

(Իրաւաբան):

Սա Հաշտարխանցի է, ծնուել է 1849 թ. 15-ին յուլիսի. կրթուեց Պետերբուրգում Կ. Եղեանի պանսիոնում, մտաւ Պետերբուրգի համալսարան 1870 թ. և նոյն թուին տեղափոխուեց Դորպատի համալսարան և ուսանում էր բժշկութիւն: Սա մտաւ Էստլանդացւոց կորպորացիան: 1873 թ. վերջում անցաւ Պետերբուրգի համալսարանի իրաւաբանական ֆակուլտետը և վերջացրեց 1876 թ.: Այժմ Աշտարխանում պարապում է փաստաբանութեամբ:

34.

ԿԱՐԱՊԵՏ ԼԴԻԼԽԱՆԵԱՆՑ:

(Իրաւաբան):

Հաշտարխանցի է (վերոյիշեալի կրտսեր եղբայրն). ծնուեց 1852 թ. փետրուարի 7-ին, կրթուեց Պետերբուրգ Կ. Եղեանի պանսիոնում, տուեց քննութիւն Դորպատի գիմնազիոնում և մտաւ համալսարան 1872 թ. սեպ.: 1873 թ. տեղափոխուեց Պետերբուրգի համալսարան, յետոյ Մոսկովի. ուսուցչութիւն արեց Շուշում, Ագուլիսում, Երևանում և վերջացրեց Օդեսայում իրաւաբանական ֆակուլտէտը: Այժմ Թիֆլիզում պարապում է փաստաբանութեամբ:

35.

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԲԱԼԵՕԶ

(Իրաւաբան)

Բեսարաբցի է, ծնուեց 1852 թ. հոկտեմբերի 6-ին. տեղափոխուեց Օդեսայի համալսարանից Դորպատ 1873 թ. ուսանում էր իրաւաբանութիւն: 1874 թ. տեղափոխուեց Մոսկովի համալսարան և այդ տեղ վերջացրեց իրաւաբանական ֆակուլտետը: Ուսումը վերջացնելով, մի քանի տարուց յետոյ խելագարուեց ու վախճանուեց:

36.

ՄԻՔԱՅԷԼ ՄԻՐՈՒՄԱՆԵԱՆՑ.

(Բժիշկ)

Թիֆլիզեցի է, ծնուեց 1853 թ. փետրուարի 10-ին, վերջացնելուց Թիֆլիզի գիմնազիօնը, մտաւ Դորպատի համալսարան 1874 թ. սեպտեմբերին: Ուսանում էր բժշկականութիւն: 1875 թ. անցաւ Մոսկովի համալսարան և այդտեղ 1880 թ. վերջացրեց բժշկական ֆակուլտետը: Այժմ Շամախում քաղաքային բժիշկ է:

37.

ՍԱՄՍՈՆ ՄԱՅՍՈՒՐԵԱՆՑ:

(Բժշկապետ)

Մայսուրեանցը Թիֆլիզցի է, ծնուել է 1854 թ. հոկտեմբերի 22 ին. վերջացնելով Պետրոս Շանշեանի պանսիօնը Թիֆլիզում, նորա խորհրդով և Պետրոս Սիմէօնեանցի օգնութեամբ 1869 թ. ուղևորուեց Մոսկովի վերայով դէպի Դորպատ, ունենալով Սիմէօնեանցից նամակ Ս. Նազարեանցի վրայ: Նազարեանցը տալով Մայսուրեանցին նամակ՝ ուղարկեց նրան Դորպատ իր կնոջ ազգականի, պ. Ֆաուբէի ընտանիքը: Մայսուրանցը պատրաստուեց և 1870 թ. օգոստոսին մտաւ Դորպատի գիմնազիօնի 4 դասարանը: Սա շատ աշխատասէր և ընդունակ տղայ էր և մեծ յաջողութեամբ էր սովորում: Վերջին երկու դասարաններում առաջին կամ երկրորդ աշակերտն էր համարում: Վերջացնելով գիմնազիօնը՝ մտաւ համալսարան 1875 թ. յունուարին: Ուսաւ բժշկականութիւն և վերջացնելով 1882-թ. մնաց իբրև Ֆօն-վասալ պրոֆէսորի օգնական, վերարուժա

կան կլինիկում. վերադառնալով Թիֆլիզ, նա անցաւ ամենալաւ և հարպիկ փիրաբոյժների կարգը։

Մայսուրեանցը մինչև այժմ տպագրել է իր հետեւեալ աշխատութիւնները։

1. Experimentelle studien über die quantitativen Veränderungen der rotten Blutkörperchen im Fieber. Dissertation, Dorpat 1882.

2. Beitrag zur Theorie des fiebers. Nach einem Vortrage gehalten in der Medicinischen Gesellschaft zu Tiflis.

3. Случай выздоровленія діагональнаго перелома основанія черепа. За эту работу получилъ премію Имп. Медиц. Общества, какъ за лучшее сочиненіе въ предложеніе года.

Աշխատակցել է «Լուսոյ»-ին, ուր և տպել է մի շարք առողջապահական յօդուածներ՝ գերմաներէնից թարգմանած։

38.

ՄԵՍՐՈՎԲ ՏԷՐ-ՄՈՎՍԷՍԵԱՆ

(Վարդապետ։ Մագիստրոս)

Տէր Մովսէսեանը (Փարսադան) ծնուեց մայիսի 7-ին 1865 թ. Ղափան գաւառի Նիկահող գիւղում (Գանձակի նահանգ)։ Սկզբնական կրթութիւնը ստացաւ Շուշու հոգևոր դպրոցում, յետոյ վերջացրեց Թիֆլիզի Ներսիսեան դպրոցում և 1885 թ. գնաց Դորպատ։ 1887 թ. քննութիւն տուեց Ռէվէլի գիմնազիոնում և մտաւ Դորպատի համալսարան 1888 թ. յունուարին։ Ընտրեց պատմական ֆակուլտետը և մասնաւորապէս ուսանում էր հին կլասիքական լեզուները։ Վերջացրեց համալսարանը 1891 թ. (կանդիդատ)։ Ուսանող եղած ժամանակ գրեց ֆակուլտետից առաջարկած հարցի մասին՝ «Արգոնաւտների պատերազմական արշաւանքը, հին կլասիքական յիշատակարանների վրայ հիմնուած»։ Այդ աշխատանքի համար ստացաւ ոսկէ մեդալ։ 1891—1892 թ. շարունակեց իր պարապմունքը Վիէննայում, լսեց Ֆրիդրիխ Միլլերի և Մէրինգերի դասախօսութիւնները և պարապեց Վիէննայի Մխիթարեանների վանքում։ Պարիզի Bibliotheque national-ում ուսումնասիրեց կանազան ձեռագիրներ։ Յետոյ նրան հրաւիրեցին Ս. Էջմիածնի ճեմարանում հայոց գրականութիւն աւանդելու, ուր նա 1893 թ. վարդապետ ձեռնադրուեց, վերակոչուելով «Մեսրովբ»։ Նոյն տարին ուղեկցեց հրաւիրակ պատգամաւորութեան, որ գնաց Ամենայն

Հայոց նորընտիր կաթողիկոս Տ. Տ. Մկրտիչ I ին՝ Երուսաղէմից դէպի Էջմիածին հրաւիրելու։ Այդ ճանապարհորդութիւնն առիթ եղաւ Հ. Մեսրովբին ծանօթանալու Երուսաղէմի Ս. Յակոբի վանքի գրադարանի ձեռագիրների հետ։ 1894 թ. գնաց արտասահման Պարիզի, Լօնդոնի և Բերլինի գրադարանների ձեռագիրների հետ ծանօթանալու և այդ միջոցին մասնակցեց երկու դիտական ժողովների, մարդաբանների—Ինսբրուկում և Արեւելագէտների—Ժնեվում։ Պարիզի Bibliotheque nationale-ում կազմեց ցուցակ 320 գրքերի։ Հետեւեալ տարիներում ուսումնասիրում էր Էջմիածնի Մայր Աթոռի գրադարանի ձեռագիրները և կազմեց դրանց մանրամասն ցուցակը, որ դեռ չէ տպուած։ 1896 թ. ուղեկցեց Նորին Վեհափառութեան Ամենայն Հայոց Մայրագոյն Պատրիարք կաթողիկոսին Կայսր Նիկողայոս Բ ի թագադրութեան։ Նոյն տարին նշանակուեց Շուշու թեմական դպրոցի տեսուչ։ 1898 թ. կառավարեց Շամախու թեմը։ 1899 թուից աշխատեց Պետերբուրգում և 1900—1901 թ. Պետերբուրգի համալսարանում տուեց Հայոց դրականութեան մագիստրոսի քննութիւն և վերադարձաւ Էջմիածին։

Մեսրովբ վարդապետ Տէր-Մովսէսեանը ունի բաւական գրական աշխատութիւններ տպուած և անտիպ։

Իմ ուսանողութեան ժամանակ, այն է 1870—1875 թ. Դորպատ եկան, գերմաներէն լեզու սովորելու համար, Հայկ Մատակեանը (Ալէքսանդրապոլցի), Կարապետ Եակուլեանը (Ղզլարեցի)։ Այս երկուսն էլ վերջացրել էին Լազարեան ճեմարանը, բայց մէկ տարի ապրելով Դորպատում, ուսանող չը գըրուեցին։ Մատակեանցը գնաց Միւնխէն, ուսաւ իրաւաբանութիւն և վերջնական քննութիւնը տուեց Օդեսայում։ Եակուլեանցը գնաց Պետերբուրգ և իրաւաբանութեան քննութիւն տուեց Պետերբուրգում։

Բերլինից եկաւ 1874 թ. բժշկապետ Մինաս Մկրտչեանը (Ագուլեցի) և 1875 թ. տուեց բժշկի քննութիւն Դորպատում։ Սա այժմ ունի Թիֆլիզում կանանց հիւանդանոց։

Մկրտչեանն ունի բաւական գրուածքներ գերմաներէն լեզուով։

Բազէլից եկան երկու հայ պաստորներ—Ազնաւուրեանը և Զախմախսազեանը և պաստորի քննութիւն տուին, որոնք

ծառայում են, որպէս պաստօր, Ռուսաստանի գերմանական կոլոնիաներում:

Պետերբուրգից եկան գերմաներէն սովորելու իրաւաբան ուսանող Թիֆլիզցի Աբգար Օրբէլին (երեք ամսով) և հայկաբան Կարապետ Կոստանեանը (Ալէքսանդրապոլցի) մէկ տարով: Սա ունի Հայոց լեզուի և պատմութեան վերաբերեալ շատ աշխատութիւններ տպուած և անտիպ:

1867—1870 թ. Դորպատում Հայ ուսանող չը կար:

Ընդհանուր հայեացք Երրորդ շրջանի վրայ
1866—1892

Երբ մեր, այսինքն երրորդ շրջանի հայ ուսանողներիս թիւը հասաւ վեց-եօթի, երկու Էդիլխանեանցներ, Մատակեան, Եակուլեան, Տիգրանեանց, Բալեօզ և միայն վերջում Մայսուրեանց, մենք մտածեցինք Դորպատեան հին ուսանողների դրօշակը վերականգնել. կազմեցինք ժողով, բերել տուինք գրաբառ և եղած աշխարհաբառ գրքերից: Ստանում էինք Թիֆլիզի և Պոլսի լրագիրներ, պարապում էինք թարգմանութիւններով, լեզուն ուսումնասիրելու համար և մեր թարգմանութիւնները կարդում էինք ժողովում: Հաստատեցինք մեզ համար դրամարկղ որ ազատուէինք վաշխառուների ձեռքից: Աշխատում էինք խօսել միմեանց հետ մեր լեզուով, բայց մեծ դժուարութիւն էինք կրում, որովհետև սովորական առարկաների անունները չը գիտէինք, այդ պատճառով վճռեցինք գրել բոլոր սովորական առարկաների հայերէն անունները և անգիր անել. յետոյ արդէն կարողանում էինք խօսել առանց դժուարութեան:

Թարգմանութեանց ժամանակ, մեծ կարիք ունէինք գերմաներէն-հայ բառգրքի, որ այն ժամանակ դեռ չկար, սակայն այժմ էլ միայն մի հատիկն ունինք: Զգալով այդ բառարանի կարևորութիւնը, բայց չը կշռելով մեր ո՛յժերը և ժամանակի սակաւութիւնը, Մկրտիչ Էդիլխանեանը և ես ձեռնարկեցինք թարգմանելու մի գերմաներէն բառարան հայերէնի: Մեր այդ աշխատանքը շուտով թողինք, թէ մեր լեզուն լաւ չ'իմանալու, թէ ժամանակի սակաւութեան և թէ հարկաւոր բառարաններ չունենալու պատճառով: Ցանկութիւններս մեծ էր, բայց ուժերս թոյլ:

Իմ ժամանակուայ ուսանողները չէին կարողանում բուն դնել Դորպատում, որովհետև դժուարանում էին սովորել գերմաներէն լեզուն որքան հարկաւոր էր, գիտութիւններով պարապելու համար։ Շատերը գերմաներէն լեզուի գիտենալուն ոչ մի նշանակութիւն էլ չէին տալիս։ Գալով Դորպատ, համարեա բոլորն էլ ցանկանում էին, որքան կարելի էր, շուտ վերջացնել և դիպլոմ ձեռք բերել։ Կասկած չկար, որ Ռուսաց համալսարաններում կարևորութիւն չէին ունենալու աշխատել լեզու սովորելու համար և աւելի շատ և հեշտութեամբ կը հասնէին իրենց նպատակին և բացի այդ, Պ.-Բուրգի և Մոսկովի ուրախ և աղմկալից կեանքը, թատրոնները և այլ զուարճութիւններն ուժգին ձգում, հրապուրում էին նրանց։ Այդ երիտասարդները չէին հաւանում գերմանացոց նիստ ու կաց, բարք ու վարքը, սովորութիւնները, հասարակական և ուսանողական կանոնները և բարձրից էին նայում դրանց վրայ, որովհետև ոչինչ այնպէս չէր, ինչ որ տեսել էին ռուսաստանում, մանաւանդ մայրաքաղաքներում։ Սրանք եկել էին ռուսաց մեծ քաղաքների համն առած, ցանկանում էին միայն դիպլոմ ստանալ և զարմանալին այն է, որ կարծում էին թէ Դորպատում կարելի է հեշտութեամբ դիպլոմ ստանալ, բայց տեսնելով, որ աւելի դժուար էր, փախչում էին այնտեղից։

Նոր և հին ուսանողների ձգտումների մէջ զանազանութիւնը շատ մեծ էր, ուղղութիւնը շատ տարբեր։ Նորերից շատերի մէջ չը կար ձգտում դէպի գիտութիւնը, հայութիւնը, հայրենիքում գործելու փափագը։ Այս վերջին ցանկութիւնները արտայայտում էին միայն խնջոյքում, քէֆ անելիս, որովհետև երբ հայը հարբած է լինում, դառնում է խիստ ազգասէր։

Իմ ժամանակուայ և հետագայ հայ ուսանողների մէջ, այլ ևս չը կային այնպիսի եռանդոտ, տաղանդաւոր երիտասարդներ, ինչպիսիք կային առաջ, «ոսկէդարում»։

Հայ ուսանողները Դորպատում միշտ յարգանք էին վայելել, մենք էլ աշխատում էինք հայի անունը մաքուր և բարձր պահել։ Մինչև այժմ էլ Դորպատում գերմանացիք յարգանքով են վերաբերւում հայ ուսանողին և ընդունում են իրենց գերդաստաններում։ Այս տեղեկութիւնը ստացայ ես նա և նորերումս իմ ծանօթ տիկնոջից, որ ապրում է Դորպատում։

Երբ 1875 թ. Մայսուրեանցը մտաւ համալսարան, մենք ընդունեցինք նրան մեր ուսանողական շրջանը լիովին։ Մայ-

սուրեանցին արդէն սովորցրել էինք հայերէն բաւականաչափ և հայկական ոգի տուել, որովհետև մասնաւոր կերպով տեսնում էինք նրա հետ, երբ նա դեռ ևս գիմնազիայումն էր և հայերէն գրքեր էինք տալիս նրան կարդալու։ Մեզանից յետոյ Մայսուրեանցը պէտք է մնար Դորպատում, որպէս հայ ուսանողների ներկայացուցիչ։

Ինձնից յետոյ, հայ ուսանողներից Դորպատում մնաց միայն Ս. Մայսուրեանցը, որին ժառանգութիւն թողեցի մեր ժողովին պատկանեալ երկու մեծ շամփուրները (խորոված) ասելով. «հը՛, Սամսոն ջան, լաւ պահիր հա, ժողովից մնացած ժառանգութիւն է քեզ»։

Մայսուրեանցի ժամանակ 1875—1882 թ. արտասահմանից եկել էր իշխան Պետրոս Արղութեանը և բժշկապետի քննութիւն տուել։ Այժմ դա Ղազանի համալսարանի պրոֆէսոր է։

Մայսուրեանից յետոյ եկել էր Դորպատ բժիշկ Գրիգոր Տէր-Գրիգորեանցը (Ղզլարեցի)։ Սա ուսել էր Պետերբուրգում, ծառայել էր Մոսկովում, գնացել էր արտասահման պարապելու կանանց հիւանդութիւններով և եկել էր Դորպատ բժշկապետի քննութիւն տալու։ 1883 թ. տուեց բժշկապետի քննութիւնը և այժմ գործում է Թիֆլիզում։ Սա ունի 23 բժշկական աշխատութիւններ օտար լեզուներով։

1885 թ. երբ ես ակամայ Դորպատ էի գնացել, այդ տեղ էր Փարսադան աէր-Մովսէսեանը, որ պատրաստւում էր համալսարան մտնելու և Աղէք. Մայսուրեանցը (Սամսոնի եղբայրը), որ գիմնազիօնումն էր սովորում։ Այդ միջոցում բժշկի քննութիւն էր տալիս Նոր-Նախիջևանցի Սրապիոն Աստուածատրեանցը, որ ուսել էր արտասահմանում։

Աղէք. Մայսուրեանցը, վերջացնելով գիմնազիօնը գնաց արտասահման ուսանելու եւ 1891 թ. Դորպատում ատամնաբուժի քննութիւն տուեց. այժմ գործում է Թիֆլիզում։

Ուրեմն գերմանական Դորպատ համալսարանում եղել են ընդ ամենը 36 հայ ուսանող, որոնց ազգանունները տպուած են Դորպատի Album Academicum-ում, բացի Խ. Աբովեանից, որ վերջացրել է ուսուցչական սեմինարում։

Այդ 36 ուսանողներից Դորպատում ուսել, և վերջացրել են 15 հոգի։

Անցել են այլ համալսարաններ և այդ տեղերում վերջացրել են 10 հոգի։

Ոչ մի տեղ չեն վերջացրել 11.

Դորպատում մի առ ժամանակ ապրել են գերմաներէն լեզուն սովորելու համար 9։

Արտասահմանից եկել են Դորպատ քննութիւն տալու 7 հոգի։ Ուրեմն գերմանական Դորպատում եղել են հայ երիտասարդներ ընդամենը 52 հոգի։

1892 թ. Դորպատի գերմանական համալսարանն սկսեցին հետզհետէ փոխարկել ռուս համալսարանի և Դորպատն անուանուեցաւ Իւրիեվ, իսկ համալսարանն—Իւրիեվի համալսարան։ Այսպէս վերջ տրուեց գերմանական Դորպատ համալսարանին, և սկսուեց Իւրիեվի ռուսական համալսարանը։

Ցանկանում ենք, որ Իւրիեվի համալսարանի հայ ուսանողներն էլ իրենց պարտքը կատարեն այնպէս, ինչպէս կատարեցին գերմանական Դորպատ համալսարանի հայ ուսանողները։ Ցանկալի է նոյնպէս, որ դրանք հիմնովին ուսումնասիրեն գերմանական գրականութիւնը և լեզուն, որ հարկաւոր է ներկայ և ապագայ ուսումնասիրութեանց համար։

Թող չը ծուլանան հետզհետէ գրել նաև իրենց պատմութիւնը և կատարած գործերը։

Շատ հետաքրքիր կը լինէր, եթէ ուրիշ՝ թէ ռուսաց և թէ արտասահմանեան համալսարանների հայ ուսանողների պատմութիւնները գրողներ էլ լինէին։

բժ Լ. Տիգրանեանց

ԱԴԱ ՆԵԳՐԱ

Տասնեւիններորդ դարու կիսից Եւրոպայի քաղաքական կեանքում սկսում է դեր խաղալ աշխատաւոր դասակարգը։ Ժամանակակից փիլիսոփան, հրապարակախօսը, գեղարուեստագէտը, վիպասանը, քաղաքագէտը, տընտեսագէտը ու բանաստեղծը այլ ևս չեն կարող անուշադիր թողնել աշխատանքի զաւակին և աշխատաւորն ու գիւղացին դառնում են մարդկային մտքի և երևակայութեան ստեղծագործութեան գլխաւոր նիւթը։

Իտալուհի բանաստեղծուհի Ադա Նեգրան, որի ոտանաւորների առաջին հայերէն թարգմանութիւնը կատարել է պ. Յակոբեանը, իւր հայրենիքի աշխատաւոր դասակարգի և գիւղացու երգչուհին է, ժողովրդի ցաւերի բազմաթիւ եւրոպացի երգիչներից զօրեղներից մէկն է։ Եւ աւելի ազդեցիկ են նրա երգերը, որովհետև նրանք կրում են կնոջը յատուկ բարձր անկեղծութեան հասած անզուսպ համակրանքի դրոշմ դէպի իւր հերոսները։ Անձնական կեանքի տպաւորութիւնները աւելի սերտ կերպով էին կապել երգչուհուն իւր հայրենիքի աղքատ ժողովրդի հետ, որի ցաւերը և վշտերը նրա հոգւոյ հետ անբաժան են։ Չնայելով, որ Ադա Նեգրան ինքը իւր մանկութիւնը դառն աղքատութեան մէջ է անցրել և իւր մօր հետ միասին սեփական ձեռքերի քրտինքով են հայթայթել ապրուստը՝ կեանքը սակայն չէր կարողացել ճնշել այս զօրեղ հոգին, որ իւր մեծ հայրենակցի—Լէօպարդիի նման վատատես չդարձաւ, այլ ընդհակառակը կեանքի դառնութեան դէմ կռուելու արիութիւն է ներշնչում իւր ընթերցողներին։ Ահա Ադա Նեգրու մեծութեան մի ապացոյցը։ Կռիւ ներշնչել կեանքի դժուարութեան դէմ—ահա նրա եռանդուն բնաւորութեան յատկանիշը։ Թէև պ. թարգմանի-

չը իւր յառաջաբանում բերում է մի քանի տեղեկութիւններ Ադա Նէգրիի կենսագրութիւնից, սակայն այդ կարճ կենսագիրը այնքան աղքատ է, որ համարեա ոչինչ հասկացողութիւն չէ տալիս երգչուհու կեանքի մանրամասնութիւնների մասին, ուստի այդ տեղեկութիւնները անպէտք ենք համարում կրկնելու։ Մտքի և բովանդակութեան կողմից Ադա Նէգրիի ոտանաւորները այնքան համակրելի են, արծարծած զգացմունքները այնքան թարմ, անկեղծ և ուժեղ, որ աւելորդ չենք համարում մի փոքր աւելի կանգ առնել նրա բանաստեղծութեան մասին խօսելու և ապաթարգմանութեան առիթով մի քանի դիտողութիւններ կանենք։ Աղքատի վիշտը ու տառապանքը, աշխատաւորի արդար քրտինքը, խոցուած սրտերի բիւր վրշտերի վէրքերը, բօթաբեր մահը, փողոցի անտէրունչ մանկան կրած ծեծն ու հայհոյանքները, թափառաշրջիկի յանցաւոր գիշերները, դաժան կարիքը իւր բիւր անէծքներով—ահա Ադա Նէգրիի երգերի մէջ տիրապետող մօտիվները։ «Աշխատել ես դու» վերնագրով ոտանաւորի մէջ երգչուհին մերժում է այն երիտասարդի կրքոտ սէրը, որ աշխատանքի զաւակ չէ, որովհետև նրա հերոսը աշխատաւորն է։

Բայց դու՝ մեղսոտ կեանքի զաւակ—հաճոյքների սիրահար,
Ձեռ աշխատել, ապրել ես զուր—կեանքը օտար քեզ համար,
Դու այնպէս էլ փայփայուած ես, բաղդախնդիր ստահակ.
Կորի՛ր անարգ... քեզ համար ես պահած ունիմ լոկ զզուանք։

Այսպիսով քաղաքի կեղծ քաղաքակրթութեան բարիքը չէ շլացնում երգչուհուն և ոչ մեծատունի փարթամ կեանքը, որովհետև նա սիրում է ջլուտ և ուժեղ բազուկները, վէս հասակը, այ գոյնը թուխ այտերի և ժայռից ամուր նորա կուրծքը։

Եւ գիտէք ո՞վ է իմ սրտի սիրած՝
Դարբինը հսկայ—իր սալի նման,
Նրա քաջառողջ հասակի դիմաց
Ես երևում եմ մանուկի նման։
Երբ կրակի մօտ երկաթ է ջարդում,
Թափով զարկ տալով մէկ մէկու հետքից,

Երբ նրա վիզը քրտինքն է պատում,
Ու կրակ ցայտում խոշոր աչքերից,
Այդժամ նրանով ես հպարտացած՝
Պատրաստ եմ փարուել նրա մերկ կրծքին,
Սիրել անբաժան աշխարհ մոռացած՝
Դարձնել կուռքս, ու տիրել սրտին։
Ցոգնած բանելուց, մրոտ երեսով
Մտնում է դարբինս ժպիտը դէմքին
Եւ մի վայրկեանում ուժեղ թեւերով
Տեսնում եմ փարուեց նա իմ լայն կրծքին։

Թէև երգչուհին չգտաւ իւր համար աշխատանքի դասակարգից կեանքի ընկեր, այլ մի հարուստ վաճառական, բայց այս հանգամանքը ոչ միայն չթուլացրեց նրա սէրը դէպի թոյլերը և թշուառները, այլ ընդհակառակը աւելի ուժեղացրեց նրա ջերմ զգացմունքները դէպի ամբոխը։ Իւր սիրելիին էլ նա ներշնչում է թշուառին սիրելու ձգտում։

Եթէ սիրում ես, տո՛ւր ինձ քո ձեռքը,
Երթանք միասին փշոտ ուղիով,
Թշուառ ամբոխի արցունքն ու վէրքը
Կրենք մեր սրտում, տանենք երկուսով։
Օ, իմ վարդերը քեզ են պատկանում,
Որ սնուցել եմ ծածուկ վայրերում.
Արցունքն է նրանց ջրել գիշերով
Զգայուն սիրտս ջերմացրել սիրով։
Դէպի թոյլերը ուրեմն գնանք,
Նրանց նեիրենք մեր ծաղիկները,
Թող մեզ հարգատ սիրելի դառնան
Այդ թշուառների կացարանները։
Մթին որջերը, խոնաւ հիւղերը
Թող մեզ ծառայեն որպէս տաք կողինք,
Խեղճ, բազմաչարչար հալածուածները
Երկուսիս թող մի կազմեն ընտանիք։
Մեր սէրը վառուած՝ ծաւալ կստանայ,
Կլուսաւորի ստոր աշխարհը,
Եւ երկրիս վրայ օրէնք կդառնայ
Սիրել ու ներել թշուառ եղբօրը։

Այստեղից երևում է, որ երգչուհին սակայն կեանքի մէջ դառնութիւն և վիշտ տեսնելով հանդերձ չէ ընկճւում չարիքի ծանրութեան տակ, այլ ընդհակառակը հաւատում է սիրոյ և աշխատանքի յաղթանակին։ «Ողջոյն քեզ կարիք» ոտանաւորի մէջ բացարձակ կռիւ է յայտնում նրան առանց կասկածելու, որ պիտի խորտակէ նրա կապանքները։

Օ, անհոգ կացիր, չեմ ընկնիլ յաղթուած՝
Կեանքի գոռ մարտում ծաղիկ հասակիս.
Տարերքների մէջ, տանջանքի բովում
Կամրանայ հոգիս, կփթթի գարուն։
Օ՜, դաժան կարիք, վհուկ պլանդակ՝
Սև ծածկոցի տակ—քեզնից չեմ սարսում,
Տանջուած, բորբոքուած անյաղթ կրծքիս տակ
Խեղճ ժողովրդի արիւնն է հոսում.
Հեռու ինձանից վախ ու շղթաներ,
Հոգիս ճախրում է դէպի ջինջ եթեր։

Առհասարակ պէտք է մի նկատողութիւն տնել, որ մեր երգչուհու բանաստեղծութիւնը թէև վերին աստիճանի ջերմ զգացմունքներ են զարթեցնում դէպի ընկճուածները և թշուառները, բայց միևնոյն ժամանակ շատ միակողմանի է նրա մուսան և մօտիւներով աղքատ։

Գալով հայերէն թարգմանութեանը՝ դիտելու է, որ մենք ստուգելու միջոց չունենք Յ. Յակոբեանի աշխատութեան արժէքը, որովհետև իտալերէն բնագրի հետ չենք կարող համեմատել։ Թարգմանչի մի նկատողութիւնից երևում է, որ նա էլ իտալերէն չգիտէ, բայց մի իտալացու միջոցաւ ծանօթացել է բնագրի հետ։ Գրքի յառաջաբանից երևում է, որ թարգմանիչը իւր ձեռքի տակ է ունեցել ռուսերէն երկու թարգմանութիւններ – Ф. С. Шкулевъ-ի և «Борьба и Любовь» А. Е. Եթէ ընդունելու լինենք, որ թարգմանիչը աւելի օգտուել է այս թարգմանութիւններից քան բնագրից—այն ժամանակ պէտք է նկատենք, որ թարգմանութիւնը թէև կրում է աշխատանքի կնիք, բայց ազատ թարգմանութիւն է։ Մի քանի ոտանաւորների հա-

մեմատութիւնը կատարելապէս պիտի ապացուցանէ մեր ասածները։ Ամենայն իրաւամբ Ադա Նէգրիի քննադատները նրա «Աշխատել ես դու» վերնագրով ոտանաւորը լաւերից մէկն են համարում, ուստի և մենք ստուգենք այս երգի թարգմանութիւնը ռուսերէնի հետ։ Այս թարգմանութիւնը փոխադրած է տասնեւհինգ վանկանի ոտանաւորով, որ աւելի վայել է դիւցազներգական երկերին։ Հեղինակի ընդհանուր մտքերը ճիշտ են հաղորդուած, որքան կարելի է հասկանալ ռուսերէնից, բայց ոչ խիստ հարազատութիւն և ոչ թովիչ բանաստեղծական աւիւն կայ։ Հետևեալ մի կտորի համեմատութիւնը բաւական է իմանալու, որ թարգմանութիւնը աւելի շուտ պրոզայի է նմանում.

Но скажи, знакомъ ты съ думою и тревогою,
Ты, сражался-ль храбро съ властною судьбою?!
Разскажи, страдалъ ты за людей до боли,
И какіе въ сердцѣ помыслы живутъ?!
Ты молчишь тревожно... прочь отъ груди знойной,
Свѣтскіе досуги воскреси опять
И люби развратницъ съ душою спокойною
Золото не въ силахъ мною обладать.

Բայց ասա ինձ, ծանօթ ես դու վշտերի հետ դարաւոր,
Մաքառել ես հերոսի պէս վիճակիդ դէմ բռնաւոր,
Եւ որպէս մի վախկոտ ստրուկ չէ՞ս վհատել նեղ ժամին,
Չես խուսափել հաս վտանգից, որ գոհ չտաս դու կեանքին։
Անդուլ գործից առաջացած ցո՛յց տո՛ւր ձեռքիդ կոշտերը,
Ես կիմանամ սիրո՞ւմ ես դու արդեօք ակնիւ աշխատանք,
Ասա՛ գոնէ, տանջո՞ւել ես դու մինչև սրտիդ խորքերը
Զարքաշ, թշուառ մարդկանց համար—և ի՞նչ է քո նպատակ։

Հէնց առաջին տողից երևում է, որ թարգմանիչը շատ ազատ ձևով է փոփոխել բանաստեղծի ոչ միայն ոճերը, այլ նոյն իսկ միտքը։ Дума и тревога թարգմանել է «դարևոր վիշտ», թէև հեռաւոր նմանողութիւն իսկ չկայ այս հասկացողութիւնների մէջ։ Նոյնպէս հարազատ չէ ի հարկէ трудная дорога պարբերութեան թարգմանութիւնը «նեղ ժամին» և այլն և այլն։ Վերջին երկու տողի մէջ բառեր է աւելացրած վանկերի չափը

պահելու համար։ Այս է պատճառը, որ թարգմանութիւնը հակիրճ չէ դուրս եկել։ «Դժբաղտը» վերնագրով ոտանաւորի ընթերցումը կատարելապէս որոշում է թարգմանութեան եղանակը։

Плачетъ море, и слезы кипучею волною,
Прижимаяся къ скаламъ, журчатъ...
И безстрастное небо прониклось тоскою
И, нахмурившись тучею свинцовою, съ грозою,
Мечетъ стрѣлами огненный взглядъ...

Ողբում է ծովը... և արցունքները ալիքով եռուն
Միմեանց ճնշելով ժայռոտ ափերին տնքում են հևում.
Եւ կամարը խիստ, յօնքերը կիտած, համակուած վշտով,
Կապարեայ ամպերն իրար խառնելով լուռ ու անտարբեր
Մռայլ բարձունքից շեշտում է դէպ ցած հրեղէն շանթեր։

Այս թարգմանութիւնը համաբձակ կարելի էր փոխադրութիւն կամ նմանողութիւն անուանել։ Журчитъ թարգմանած է «տնքում է և հևում», огненный взглядъ — «հրեղէն շանթեր»։ Ամբողջ ոճեր տուելացրած են հեղինակի տողերին, որ նոյնպէս թարգմանութեան թերութիւն պէտք է համարել։ Երրորդ տողի մէջ свинцовою тучею խօսքերը բոլորովին չէ թարգմանուած։

Плачетъ море... и слышны въ немолчныхъ рыданьяхъ
Горесть мукъ, опозоренныхъ слезъ,
Жажда свѣта, любви и лобзанья,
И безумныя слышатся вопли страданья
И проклятья осмѣянныхъ грезъ...,

Ողբում է ծովը... և նրա անդուսպ հեկեկանքներում
Լսւում է հառաչ, արցունք բռնութեան—կրած վշտերու.
Լսւում է կեանքի սիրոյ ցնորումն—ջերմ համբոյրների...
Եւ թւում է թէ՝ ժայթքում է բողոք կոյսի ջերմ կրծքից
Եւ անէծք նրան, որը անարգեց իր սէրն անբիծ։

Немолчныя рыданья թարգմանած է անդուսպ հեկեկանք, որ նոյնպէս հարազատ չէ, որովհետև немолчный—անլուռ—դեռ անդուսպ ասել չէ։ Осмѣянныхъ грезъ — անբիծ սէր։ Грезы խօսքը ունի հայերէն շատ բանաստեղծական «անուրջ» թարգմանութիւնը։ Ի՞նչ

խօսք, որ плачетъ նոյնպէս ճիշդ չէ ողբալ բայով փոխադրելը։ Այսպէս կարելի է անվերջ նկատողութիւններ անել, որ թարգմանութիւնը մերձաւոր չէ, բայց մենք պարտաւոր ենք ասելու, որ առհասարակ քնարերգական երկերի թարգմանութիւնը շատ դժուար բան է և գեղարուեստական ու հարազատ թարգմանութիւն յաջողւում է միայն ի բնէ տաղանդաւոր բանաստեղծներին։ Իբրև ազատ թարգմանութիւն սակայն պ. Յակոբեանի գրքոյկը արժանի է կարդալու, որովհետև մեր աղքատիկ գրականութեան համար նոր մտքերի և զգացմունքների արծարծումը հարկաւ արդիւնաւոր գործ է։ Հետաքրքրական կ'լինի, եթէ Ադա Նեգրիի ոտանաւորներից գէթ մի քանիսը փորձէին թարգմանելու պ. Յ. Յովհաննիսեանը, Յ. Թումանեանը, Աղայեանը, Ա. Ծատուրեանը և այլք։ Ընդհանրապէս մեր բանաստեղծները խուսափում են թարգմանելուց, թէև տաղանդաւոր թարգմանութիւնները ոչ սակաւ օգտաւէտ են և կարևոր, քան թէ մեր տնաբոյս ախ ու վախերը։ Վերջապէս ինչ որ կարելի է թարգմանութիւնների միջոցաւ արտայայտել, շատ անգամ անկարելի է ստեղծել։ Բայց մեր հարուստները իրանց հարիւր հազարները հիւանդանոցների, պսպղուն պարգևների և սնոտի պարծանքների համար են զոհաբերում, քան թէ հայրենի գրականութեան բարգաւաճման օգտին։ Այս գիտակցութեանը դեռ նրանք չեն հասել։

Դար. Նեգիբարեան

ՄԻԼԻՈՆԱՏԷՐ-ՄԱՐԴԱՍՊԱՆ

(ՄԱՐԿ ՏՈՒԷՆԻ)

—

Պատմուածք, որի համար ես ստացայ 50,000 դոլլար

(Զգրուած ընագրից)

—

Բժիշկ Ուիլլիամսը նշանաւոր դիագնոստի ճշտապահութեամբ վնեելով իմ թոյլ մարմինը, վճռապէս յայտնեց, թէ սպառնացող մօտիկ մահից խուսափելու համար միակ միջոցն է—անյապաղ ընդհատում իմ բոլոր թէ գրական և թէ ոչ գրական զբաղմունքների, լիովին հանգիստ և օդափոխութիւն։

—Ճիշտ մի տարի դուք ձեր ձեռքը գրիչ չպիտի առնէք, —ասաց բժիշկը,—ճիշտ մի տարի դուք պիտի բացառապէս զուարճանաք, ոչ մի լուրջ բանի մասին չմտածէք, նոյն իսկ լրագիր չկարդաք, և ճիշտ մի տարի պիտի ճանապարհորդէք, իհարկէ ձեր ուժասպառ մարմնին անհրաժեշտ բոլոր յարմարութիւններով, և միևնոյն ժամանակ որքան կարելի է շուտ-շուտ փոխելով բնակութեան վայրը։ Նախ գնացէք Ֆրանսիա, ապա Իտալիա, Անգլիա...

—Բժիշկ,—յարեցի ես, — դուք այնպէս էք խօսում, իբրև թէ ձեր առաջ կանգնողը գրական յամառ աշխատանքով ապրուստ հայթայթող մի հեղինակ չէ, այլ միլիոնատէր, որի համար արժէ միայն մի աւելորդ հարիւր կտրոն դէն ձգել... Դուք մոռանում էք, բժիշկ, որ եթէ գրական պարապմունքներս ընդհատեմ, կզրկուիմ ապրուստի բոլոր միջոցներից և ոչ թէ մի տարի, այլ նոյն իսկ մի ամիս ապրել լոյս աշխարհում—անհնար կլինի ինձ համար...

—Իբրև բժիշկ իմ պարտքս է տալ ձեզ խորհուրդ, որ հիմնուած է բժշկական գիտութեան վրայ,—չոր-չոր պատասխանեց բժիշկ Ուիլլիամսը.—Իսկ ինչ վերաբերում է այն հարցին, թէ

խորհուրդը գործադրելու համար ո՞րտեղից ճարել միջոցներ, այդ արդէն այլ գիտութեան գործ է։

«Այլ գիտութեա՞ն»։ Օ՛, եթէ ես կարողանայի հասնել այդ այլ գիտութեանը,—մտածեցի ես զլխակոր տուն վերադառնալիս։

Անշուշտ տեսքս շատ տխուր էր, որովհետև միստեր Ջեմս Կլարկը՝ տանս դռան առաջ ինձ հանդիպելով, ասաց.

—Դուք նման էք կախաղանից հէնց նոր իջեցրած մէկին։

Դուք չէ՞ք ճանաչում միստեր Ջեմս Կլարկին։ Օ՛, դա մի նշանաւոր մարդ է։ Ո՛վ է նա և որտեղացի—ես ինքս էլ իսկապէս չգիտեմ. մէկ ասում է, թէ անգլիացի է, մէկ էլ՝ թէ ընիկ իրլանդացի, մի ուրիշ անգամ թէ մեքսիկացի է. և այլն։ Բայց չէ՞ որ լինում են մարդիք, որոնք չեն կարողանում ճիշտ որոշել իրենց ազգութիւնը։

Որտեղ եմ ծանօթացել Ջեմսի հետ—նոյնպէս չեմ յիշում։ Կարծեմ մեր ծանօթութիւնը առհասարակ սկիզբ էլ չէ ունեցել։ Ջեմս Կլարկը մի անգամ ժողովարանում ուղղակի սկսեց խօսել ինձ հետ՝ իբրև հին ծանօթի հետ, յետոյ արժանացրեց ինձ իւր այցելութեանը, ցոյց տալով, թէ իմ տան մէջ նա մի «մտերիմ բարեկամ» է, և այն օրից յաճախ լինում է ինձ մօտ իբրև անկոչ հիւր, ուտում է իմ նախաճաշիկները, խմում է իմ գինիները, ծխում է իմ սիգարները և հաւատացնում ինձ, թէ այդ բոլորը նա անում միայն այն պատճառով, որ իրեն հաճարում է իմ տաղանդի վառ երկրպագու։

Ասենք, միայն ես չեմ օգտւում Ջեմս Կլարկի այսպիսի բարեհաճութեամբ. նա ունի մի խումբ ծանօթներ, ամենքի մօտ լինում է, ամենքի մօտ ուտում է, խմում, ծխում, շատերի հետ միասին գնում է թատրոն, ժողովարան և ճիարշաւի, և ամեն տեղ, ամենքի մօտ նա «մտերիմ բարեկամ» է, թէև ուրիշներն էլ, ճիշտ այնպէս, ինչպէս ես, բնաւ չեն կարողանում յիշել, թէ ինչպէս են ծանօթացել նրա հետ։

Նոյնպէս ոչոք չգիտէ, թէ իսկապէս ինչով է պարապում Ջեմս Կլարկը և ինչ միջոցներով ապրում։ Նրա լոկ կցկտուր պատմածներից ես այն եզրակացութեան եմ եկել, թէ նա իւր կեանքում նախ եղել է գինեվաճառի գործակատար, յետոյ զեղարուեստի քննադատ, ապա մի ինչոր անատոմիական (անդամահատական) թանգարանի քարտուղար, ճիաքարշ երկաթուղու կասսիր, մի գնդի համար կաղամբի կապալառու, թաղման բիւ-

ռօի տէր, մի մեծ օրաթերթի լրաքաղ, ամուսնութիւններ կայացնող ընկերութեան վերատեսուչ և այլն և այլն։ Իւր կեանքում նա արդէն և հարուստ է եղել, և աղքատ—գումարը—դա մի ուրախ մարդ է, որին դուք սիրով կուզէիք տեսնել ձեզ հետ սեղան նստած, չնայելով որ նա բոլորովին առանց քաշուելու դատարկում է ձեր շիշերը և ծխում ձեր ամենալաւ սիգարները։

Երևի Ջեմս Կլարկը կամենում է, որ ամենքը նրան ճանաչեն։ Այդ իսկ պատճառով գրպանները միշտ լիքն են այցետոմսերով, որ նա ցրում է ամեն տեղ աջ ու ձախ. և երբեմն էլ անգիտակցաբար վայր է ձգում արիստոկրատների պարերեկոյթներին, թատրոնների դահլիճներում, ձիարշաւի հրապարակներում, վաճառատներում։ Այցետոմսերի վրայ տպուած են՝ մի անկիւնում ինչ որ տարօրինակ տոհմանշան—սագի գլխով, եռոտանի առիւծ՝ առաջի թաթով մի աւել բռնած. իսկ միւս անկիւնում մեծ տառերով գրուած է «Ջեմս Կլարկ, փողոց Ռոկֆելլեր 8. Գործերի համար ընդունելութիւն ցերեկը ժամի 2—3»։—Բայց արդեօք ինչ «գործերի» համար—այցետոմսում ասուած չէ։

Ուշի-ուշով ինձ ականջ դնելով՝ Ջեմս Կլարկը բոլորովին անվրդով նկատեց.

—Բայց և այնպէս ձեր պատմածից ես դեռ չեմ հասկանում, թէ ինչու պիտի դուք այնքան տխուր վշտահար տեսք ունենաք, որ կարծես ձեզ կախաղանից են իջեցրել։

—Մի թէ չէք հասկանում, որ ես բժշկի ժամ մահուան դատավճիռ լսեցի,—գոչեցի ես զայրացած։—Դուք հո գիտէք, որ միջոցներս թոյլ չեն տալիս ինձ ոչ ընդհատել աշխատանքս, ոչ էլ հեռանալ մի տարով։ Ուրիշ կերպ ասած—մի տարուայ ընթացքում ես անպայման պիտի մեռնեմ։

—Իսկ իմ կարծիքով ձեր վիճակը այնքան էլ վատ չէ, ինչքան ձեզ է թւում,—հանգիստ պատասխանեց Կլարկը,—շնորհիւ ձեր ժողովրդականութեան, հռչակին, շնորհիւ արար աշխարհին յայտնի ձեր տաղանդին, քանի մի տասնեակ հազար դոլլար աշխատել, որը ձեզ բաւական է ոչ մի, ոչ էլ երկու տարի—այդ բոլորովին չնչին բան է։

—Չնչին բան... Հանա՛ք էք անում, միստեր Կլարկ։ Ո՛չ թէ տասնեակ հազարներ, այլ դժուար է շահել նոյն իսկ հազար դոլլար արդի ժլատ հրատարակիչներից, մանաւանդ այժմ,

երբ հիւանդութեան պատճառով անկարող եմ մի աչքի ընկնող բան գրել, որ ֆուրոր անէր։ Ապա գտէք հրատարակիչ, որ համաձայնէր վճարել «քանի մի տասնեակ հազար դոլլար։

—Հէնց ես ինքս առաջինը պատրաստ եմ խսկոյն և եթ վճարել ձեզ 50,000 դոլլար,—ասաց միստեր Կլարկը։

—Դո՞ւք,—բացականչեցի ես զարմացած։

—Այո՛, ես... Գուցէ դուք ասէք թէ ես հրատարակիչ չեմ, բայց ձեզ համար միևնոյն չէ՛, թէ ում հետ գործ ունիք։

—Այո՛, այո՛, ի հարկէ, բայց... Բայց այդ 50,000 դոլլարի փոխարէն դուք երևի կըպահանջէք, որ ես գրեմ ձեզ համար 55 հատորով մի վէպ, վերջաբանն էլ հետը...։

—Բնաւ,—ընդհատեց ինձ միստեր Կլարկը,—ինձ վէպ պէտք չէ, այլ պատմուածք. 500 տողով մի փոքրիկ պատմուածք։

—Եւ այդ 500 տող պատմուածքի համար, միստեր Կլարկ, դուք ուզում էք վճարել ինձ 50,000 դոլլար, այսինքն իւրաքանչիւր տողին 100 դոլլար։ Բայց ձեր խելքը իւր տեղո՞ւմն է, միստեր Կլարկ։

—Կարող եմ հաւատացնել, որ խելքս գլխիս է։ Սակայն ես մի փոքր բան պիտի ուղղեմ ասածիս մէջ. ոչ թէ ես եմ ուզում վճարել 50,000 դոլլար, այլ այն առևտրական ընկերութիւնը, որ ես մասնաւորապէս այդ նպատակով կազմելու եմ։ Ես դրժբախտաբար ապատ դումար չունիմ և կամայ ակամայ ստիպուած եմ այս հրատարակչական ձեռնարկութեան օգտից մաս հանել և իմ ծանօթ դրամատէրերին։

—Եւ դուք ը՞ւրջ էք ասում։

—Բոլորովին ը՞ւրջ։

—Լաւ, այդ դէպքում ես հէնց այսօր կըսկսեմ պատմուածքը։ Միայն հիւանդութեան պատճառով չեմ կարող վստահ ասել, թէ երբ պատրաստ կըլինի. դուք գիտէք, որ բժիշկը պահանջում էր ինձնից անմիջապէս ընդհատել բոլոր գրական աշխատանքներս...

—Եթէ դուք կարիք էլ չունիք աշխատելու, պատմուածքը կըգրեմ ես ինքս,—վրայ բերեց Կլարկը։

—Դո՞ւք։ Ես ձեզ չեմ հասկանում։

—Այո՛, պատմուածքը կըգրեմ ես, իսկ դուք միայն թոյլ տուէք տպագրել այն ձեր անունով, առէք ձեր, այսպէս ասած, ֆիրմայի հովանաւորութեան տակ։

Ես աչքերս չռեցի։

Մինչդեռ միստեր Կլարկը շարունակեց.

—Ես ինչարկէ, չեմ կարող գրել այնպիսի տաղանդով, ինչպէս դուք։ Իմ պատմութիւնը գուցէ կըլլինի ձեր բոլոր գրուածքներից ամենից վատը, բայց միթէ այդ կարող է փոքրիկ ազդեցութիւն անգամ ունենալ ձեր արդէն յայտնի հռչակի, նըշանաւոր գրողի հռչակի վրայ։ Եթէ նոյն իսկ մէկը ասէ, թէ ձեր նոր գրուածքը միւսներից աւելի թոյլ է, չի կարելի համեմատել ձեր միւս երկերի հետ, այն ժամանակ ամեն ոք իսկոյն կաւելացնէ, թէ այդ բացառութիւն է։ Իսկ հէնց այդ բացառութեան համար առաջարկում եմ ձեզ 50,000 դոլլար ընկերութեան կողմից, որ կարող եմ այսօր իսկ կազմել։

—Միստեր Կլարկ, չգիտեմ իմ ուղեղս այսօր չի գործում, թէ ինչ որ խելքս գլխիս չէ, միայն թէ ես չեմ կարողանում ըմբռնել ձեր ասածները։

—Այդ պէտք էլ չէ,—պատասխանեց միստեր Կլարկը։

—Ստորագրեցէք միայն այսպիսի բովանդակութեամբ մի դոկումենտ. «Ես ներքոյ ստորագրեալս ծախեցի միստեր Ջեմս Կլարկին և նրա ընկերակիցներին իմ նոր պատմուածքը, որի վերնագիրն է»...

Այստեղ միստեր Կլարկը մի բոպէ կանգ առաւ, քիչ մտածեց և ապա շարունակեց.

—«Որի վերնագիրն է «Միլիոնատէր մարդասպան»,—և թողնում եմ միստեր Կլարկին հրատարակել այս պատմուածքն այնպէս, ինչպէս ինքը Կլարկը կը կամենայ։ Գրուածքիս և նրա հրատարակութեան իրաւունքի փոխարէն միստեր Կլարկը վճարում է ինձ 50,000 դոլլար։ Միստեր Կլարկը պարտաւորւում է փողերը վճարել այս դոկումենտը ստորագրելու բոպէից հաշուած քսանուչորս ժամուայ ընթացքում։

Այս ենթագրեալ դոկումենտի խօսքերը միստեր Կլարկը հէնց իսկոյն գրի առաւ և քաղցրութեամբ առաջարկեց ինձ ստորագրել։

Իսկ ես... ես, մեղաւորս, մի ինչ որ տարօրինակ շփոթման մէջ, տեսնելով աչքիս առաջ միայն «50,000 դոլլար» խօսքերը, չհամբերեցի և ալատ շարժելով գրիչս ստորագրեցի ազգանունս։

Նոյն օրը երեկոյեան միստեր Կլարկն ինձ տուեց 50,000 դոլլար արժողութեան չէկ և... հետևեալ առաւօտը Եւրոպա

մեկնող շոգենաւի մի տոմսակ։

—Ներեցէք, որ այսօր ես ձեզ մօտ չպիտի ընթրեմ,—նը-կատեց նա.—ես անպատճառ պիտի կարդամ ձեր (այս խօսքը նա մի առանձին տօնով արտասանեց) «Միլիոնատէր-մարդաս-պան» նոր գրուածքի սրբագրութիւնը։ Պատմուածքն արդէն տպարանումն է։ Բարի ճանապարհ ձեզ, ցանկանում եմ, որ ու-րախ անցնէք ժամանակը,—ժպտալով աւելացրեց նա և հրա-ժեշտ տուեց։

—

Հետևեալ առաւօտը ես արդէն ճանապարհին էի։ Շոգե-նաւի մէջ ունէի փառաւոր սենեակ, ամեն յարմարութիւն և հանգիստ կարող էի մտածել իմ հէնց նոր կատարած առևտրա-գրական արարքի մասին։ Ասենք երկիւղ կրելով խղճի խայթից ես աշխատում էի չմտածել այդ մասին, մանաւանդ որ շարու-նակ աչքիս էր երևում միստեր Կլարկի կերպարանքը, որ իմ պատմուածքի պատճառով աւերուելով՝ գնդակը ճակատին է ուղղում...

Ես եղայ Իտալիայում, Ֆրանսիայում և Գերմանիայում և արդէն քիչ-շատ մոռացել էի միստեր Կլարկի հետ կատարած արարքս, երբ յանկարծ Լոնդոն գնալիս կայարանում գրավա-ճառի մօտ նկատեցի երկու նորաձև-շքեղ բրոշիւր՝ փաթաթած մի բանդերոլով, որի վրայ խոշոր տառերով գրուած էր. «Մար-դասպան-միլիոնատէր»—նշանաւոր գրող (այստեղ ահագին տառերով գրուած էր իմ ազգանունը) նորագոյն պատմուած-քը—շուտով վերցրէք—բաժանւում է ձրի։

Եւ վերցրի երկու բրոշիւրն էլ, վագոնը թռայ և սրտա-տրոփ սկսեցի կարդալ իմ նորագոյն պատմուածքը։ Բայց հա-զիւ աչքերով անցայ առաջին երեսը, որ վագոնի պատուհանի ապակիները օդը թռան՝—այդ ես էի, որ կատաղած խփել էի բռունցքով պատուհանին։ Երկրորդ երեսը կարդալիս նստարա-նի կողքի փայտը ջարդուեց—այդ ես բարկութիւնից կոտ-րեցի։ Երրորդ երեսը կարդալիս վագոնի յատակը ճքճքաց՝—այդ էլ ես էի, որ յուսահատ ահագին ուժով ոտքս խփել էի յատակին։ Եթէ գնացքը չկանգնէր և կոնդուկտորը չհրաւիրէր ինձ դուրս գալ վագոնից, ես երևի կոչնչացնէի ամբողջ վագոնը։ Եւ այս բոլորը միայն կարդացած իմ նորագոյն պատմուածքի ազդեցութեան տակ...

Եթէ ես ձեզ պատմեմ բանի էութիւնը և պատմուածքի

բովանդակութիւնը, դուք հաւանաբար չէք դարմանայ իմ բարկութեան, քարասրտութեան ու յուսահատութեան վրայ։

Ահա թէ ինչպէս էր սկսւում կապոյտ բրոշիւրի մէջ իմ պատմուածքը.

— «Տունս աւերուած է,— բացականչեց Հերբերդ Մակսվելը և բացեց այն գրասեղանի արկղիկը, որ նախընթաց օրը գնել էր... (այստեղ տեղ էր թողած կահկարասիք վաճառող այն ֆիրմայի անուան համար, որ կը կամենայ դրա փոխարէն վճարել Ջեմս Կլարկի եւ ընկ. նոր բացած յայտարարութեանց բիւրոին երեք հազար դոլլար) ձեռքի արագ շարժմամբ նա դուրս հանեց այնտեղից մի ատրճանակ... (գործարանը, որ կը կամենայ այստեղ յիշուել, պիտի բարեհաճէ վճարել Ջեմս Կլարկի եւ Ընկ. նոր բացած յայտարարութեանց բիւրոին երեք հազար դոլլար) և մատեցրեց քունքին։ Հնչեց մի խլացուցիչ պայթիւն և ինչ որ վայր ընկաւ ծանր գորգի վրայ, որ գնուած էր... (գորգեր վաճառող այն ֆիրման, որ կը կամենայ այստեղ յիշուած լինել, վճարում է երեք հազար դոլլար)։ Հէնց այդ բոպէին միջանցքում լսուեց ոտնաձայն։ Այդ միսս Մակսվելն էր վերադառնում պարահանդէսից, որ տեղի ունէր (Նա, որ կը կամենայ այստեղ յիշուել, վճարում է երեք հազար դոլլար)։ Տիկինը հագել էր խիստ փառահեղ շորեր, այնպէս որ միայն արտաքին տեսքին ու շքեղութեանը նայելով ամեն մի կին կը ճանաչէր, որ կարուած են նշանաւոր կանացի դերձակ... (Ազգանունն այստեղ յիշել կամեցող դերձակը վճարում է երեք հազար դոլլար)։ Միսս Մակսվելի աչքերի առաջ հետևեալ պատկերը ներկայացաւ. միստեր Հերբերտը յենուել էր արհեստական մարմարից շինած բարձր սիւնին, որպիսիք այնքան հմտութեամբ պատրաստում է... (Գործարանատէրը, որ կը կամենայ այստեղ անուանուել, վճարում է Ջեմս Կլարկի եւ Ընկ. նոր բացած յայտարարութեանց բիւրոին երեք հազար դոլլար), իսկ նրա ոտների մօտ ընկած էր մի հսկայ արծիւ, որ կարծես թևերն էր թափահարում։ Բայց այդ միայն խրտուիլակ էր՝ պատրաստուած... (Այն գործարանատէրը, որ կամենում է յիշուած լինել, վճարում է երեք հազար դոլլար)... և այլն և այլն և այլն։

Երկրորդ կարմիր բրոշիւրի մէջ բոլոր կէտերով նշանա-

կած տեղերը արդէն լցուած էին համապատասխան ֆիրմաների անուններով։ Ակներև է, որ միստեր Ջեմս Կլարկի յոյսերը բոլորովին պսակուած են. իմ պատմուածքի օգնութեամբ ռէկլամներ տարածելու նոր եղանակը առևտրական շրջաններում համակրութիւն է գտել։ Այստեղ իհարկէ նշանակութիւն է ունեցել ոչ այնքան իմ ժողովրդականութիւնը, իբրև գրողի, որքան միստեր Կլարկի ծանօթները։ Պատմուածքի մէջ բոլոր ֆիրմաների թիւը հասնում էր 113-ի, կամ ուրիշ կերպ ասած միստեր Կլարկը բրոշիւրում զետեղած ռէկլամներից ստացել է զուտ օգուտ մօտաւորապէս 200,000 դոլլար։

Բայց այս դեռ բոլորը չէ։

Կարմիր բրոշիւրի վերջում աւելացրած էր, թէ ֆիրմանների անունները, ինչպէս նշանակուած են կարմիր բրոշիւրում, տպուած են միայն մի միլիոն օրինակի մէջ։ Իսկ երկրորդ միլիոնի համար, որ արդէն պատրաստում է տպագրութեան յանձնելու, ընդունում են նոյն գնով ուրիշ ֆիրմաների անուններ։

Ես իհարկէ յուսահատութեան մէջ էի։ Իմ՝ իբրև գրողի համբաւը ոչնչացած էր։

Լոնդոն հասնելով առաջին գործս եղաւ շտապել գինավաճառատուն. գնեցի մի ատրճանակ և վճռեցի իսկոյն և եթ մերադառնալ Ամերիկա միստեր Ջեմս Կլարկին սպանելու համար։ Յետոյ ես փոխեցի այդ դիտաւորութիւնս և աւելի լաւ համարեցի ինքս ինձ սպանել։ Բայց յիշեցի, որ այդ աւելի ևս կը-տարածէ իմ «միլիոնատէր-մարդասպան» նորագոյն գրուածքս։ Վերջ ի վերջոյ ատրճանակը թայմը նետեցի և ինձ մխիթարելով «չարին մի հակառակուի» խօսքերով՝ «Մարդասպան-միլիոնատէր» չարաբաստիկ պատմուածքի պատմութիւնն անուշադիր թողի։ Մի բան միայն արի—ապնիւ խօսք տուի ինքս ինձ, որ Ջեմս Կլարկը էլ չպիտի ուտէ իմ նախաճաշիկները, խմէ իմ գինիները և ծխէ իմ սիգարները։ Ասենք, նա այլևս կարիք չունի դրանց։ Իբրև վերատեսուչ «Ջեմս Կլարկի և ընկերակցած յայտարարութեանց և ռէկլամների համաշխարհային բիւրո» ֆիրմայի, նա Նիւ-Եօրկում ունի մի փառաւոր տուն, հիանալի խոհանոց, հրաշալի մառան... Եւ այդ բոլորը տուել է նրան «Միլիոնատէր մարդասպանը»։

Մօտ օրերս Ջեմս Կլարկից մի նամակ ստացայ, ուր նա հարցնում է, թէ արդեօք չե՞մ կամենում ծախել իրեն մի պատմուածք էլ նոյն պայմաններով։

Ցանդո՛ւգն մարդ։

Զգրուած բնագրի Ռուսակի ռուսերէն թարգմանութիւնից թարգմանեց Յ. Բ.

ԽՈՐԷՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԼՓԱՅԵԱՆԸ ԵՒ ՆԱԼԲԱՆԴԵԱՆՑԻ «ԱՂՅՄԻՔԸ» *)

Գլուխ Ը.

Խորէնի գրական պարապմունքի արդիւնքը Պոլսում լինում են բազմաթիւ գրուածներ, որոնցից մի մասը տպագրուած, ցրուած են 64 – 92 թուականների ընթացքում Պոլսում հրատարակուած հայ պարբերականների էջերում, մի մասը մնացել է անտիպ և նորա մահից յետոյ բոլոր նորա միւս թղթերի հետ միասին անցել է նորա եղբօր Գուիդոն Լուսինեանին, որ այժմ ապրում է Պարիզում, երրորդ մասը զոհ է գնացել Բերայի մեծ հրդեհին և, վերջապէս, չորրորդ մասը հրատարակուել է առանձին գրքոյկներով։

Խորէնի՝ հայ պարբերականներում իբրև լրագրական յօդուածներ հրատարակուած գրուածներից արժանի է առանձին ուշադրութեան Հոմերոսի «իլիականի» առաջին երգի թարգմանութիւնը, որ նա 1881 թուին պարբերաբար հատուած-հատուած թարգմանելով, տպագրել է «Մասիս» լրագրում, որ այն ժամանակներն ամենօրեայ թերթ էր։ «Գրաբարեան և աշխարհաբարեան» կռիւների ամենատաք ժամանակն էր։ Խորէնը, որ գրաբարեան էր թէ իւր նախնական կրթութեամբ և թէ իւր գրական ճաշակով ու ուղղութեամբ և որ մինչև այդ ժամանակներն իւր ամենաընտիր երկերը շարադրել էր գրաբառ, իսկ մի երկու բան էլ եթէ աշխարհաբառ էր գրել, այդ մի փոքրիկ զիջումն էր եղել միայն նորա կողմից նպատակի համար, չի վարանում այդ պայքարի ժամանակ անցնելու աշխարհաբարեանների կողմը։ Նա, իբրև խելօք մարդ հասկանում էր, որ

---

*) Տես «Լումայ» № 5.

այն հիմունքը, որ գրաբարեանները բերում էին յօգուտ գրաբառ լեզուի գործածութեան, սխալ է։ Գրաբառը չէր կարող գործածական լեզու դառնալ, որովհետև նորանով չէին խօսում ոչ թէ միայն հայ ժողովուրդը, այլ և նոյն իսկ հայ գիտնականները. նա չէր կարող գործածական լեզու դառնալ, որովհետև նա հասկանալի էր միայն մի բուռն գիտնականների, իսկ հայ ժողովրդի ահագին մեծամասնութիւնն իսպառ չէր հասկանում նորան. նա չէր կարող գործածական լեզու դառնալ, որովհետև նա մեռած էր և չէր կարող յարութիւն առնել, կենդանութիւն ստանալ, ինչպէս որ չէր կարող յարութիւն առնել և այն ժողովուրդը, որ մի ժամանակ խօսել էր այդ լեզուով, եթէ միայն ընդունենք, թէ եղել է մի ժամանակ, որ հայ ժողովուրդը խօսել է այդ լեզուով. նա չէր կարող կենդանանալ և գործածական լեզու դառնալ, ինչպէս որ չեն կարողացել կենդանանալ և կիրառութեան մէջ մտնել իտալացւոց համար լատին լեզուն և Յունաց համար հին յունականը։ Եթէ վերջապէս, հնարաւոր էլ լինէր մի օր յարուցանել գրաբառն իւր մեռելութիւնից, պէտք կլինէր նորան մշակել, յարմարեցնել ժողովրդի ներկայ մտածողութեան ձևին, աշխարհահայեացքին, մտաւոր արդիւնաբերութեան եղանակին, որ մի շատ էլ հեշտ բան չէ։ Այն ինչ աշխարհաբառն արդէն իսկ պատրաստ էր կենդանի, հասկանալի ամենին, ընդունակ ամեն տեսակ վերացական միտք յայտնելու և լիակատար մտաւոր գործիք լինելու համար, և միայն պահանջում էր զարգացումն, կատարելագործութիւն, որ միայն ժամանակի խնդիր էր, ուրիշ ոչինչ։ Գրաբառն էլ հայի համար հարկաւոր է և պէտք է ուսումնասիրել նորան, որովհետև, նախ, նա հայոց հին մատենագրութեան լեզուն է, երկրորդ, նա մեր եկեղեցական գրքերի և ժամասացութեան լեզուն է, երրորդ, նա մի առատ աղբիւր է, որից աշխարհաբառը կարող է և պէտք է իւր համար բառապաշարի, հարկաւոր ոճերի, դարձուածների առատ ատաղձ քաղէ, համբարէ։

Սակայն հանգուցեալն աշխարհաբարեանների հետ միասին այսպէս դատելով, այսպիսի հիմունքների վերայ

վիճաբանելով գրաբարեանների հետ, նոյն ժամանակ գործնականապէս ինքն իրան մասամբ հակասում էր։ Նա իբրև Մխիթարեան ուխտի դպրոցի մարդ, ըստ ամենայնի, հետևում էր մխիթարեանց, որոնք գրաբառի և աշխարհաբառի գործածութեան խնդրի վերաբերմամբ թունդ գրաբարեաններից մի փոքր տարբեր եղանակով էին մտածում ու գործում։ Նոքա ինքեանք գրում էին և առաջարկում էին գրել և աշխարհաբառով, միայն այնպիսի աշխարհաբառով, որ, ըստ ամենայնի, մօտենար գրաբառին։ Մխիթարեանք կարծում էին, որ հետզհետէ զտելով աշխարհաբառը գռեհիկ ոճերից, ձևերից ու դարձուածներից և տեղը մտցնելով գրաբառը, կարող են նորան մէկ օր այնքան մօտեցնել գրաբառին, որ նա բոլորովին գրաբառ դառնայ։ Դորանով, նոցա կարծիքով, կսպառուէր երկու կուսակցութեան վիճաբանութեան նիւթը, որովհետև մի կողմից գրաբարեանները բաւական կմնային, որովհետև վերջնական նպատակը գրաբառով գրելը կլինէր, միւս կողմից էլ աշխարհաբարեաններն անբաւական չէին լինի, որովհետև աշխարհաբառի հետզհետէ փոխուելը, գրաբառի վերածուելը կլինէր միայն աշխարհաբառի այն կատարելագործումը, որի մասին խօսում էին աշխարհաբարեանները։

Դորա, այդ ուղղութեան հետևանքը պէտք է համարել Մխիթարեանների աշխարհաբառի այնքան գրաբարախառն լինելը, որ դժուարհասկանալի է մեծամասնութեան համար, այդ ուղղութեան հետևանքը պէտք է համարել և Խորէնի աշխարհաբառի այն աստիճանի գրաբառի մօտիկ լինելը, որ համարեա նոյնքան արուեստական և անհասկանալի է ժողովրդի համար, որքան և գրաբառը։ Առնենք, օրինակի համար, հէնց Արշակ Բ ողբերգութիւնը, որ յայտնի սկզբունքներ ու գաղափարներ ժողովրդականացնելու նպատակով հանգուցեալը գրել է աշխարհաբառ լեզուով աշխարհաբարեանների ու գրաբարեանների վիճաբանութիւններից դեռ քանի տարի առաջ. առնենք «իլիականի» թարգմանութիւնը, որ նա արել է յոյն բնագրից աշխարհաբարեանների և գրաբարեանների վիճաբանութեան ամենատաքցած ժամանակ աշխարհաբառի ճկունութիւնը և ամեն

տեսակ վերացական մտքեր արտայայտելու ընդունակ լինելն ապացոյց տալու դիտաւորութեամբ, առնենք, վերջապէս, «Ստուերք հայկականք»-ը, որ նա յօրինել է իբրև համոզուած աշխարհաբարեան,—և մենք այդ բոլորի մէջ գործածած կտեսնենք մի լեզու, որով ոչ ոք չի խօսել, չի խօսում և չի խօսելու երբէք, մի զուտ արուեստական լեզու, մի զարհուրելի խառնուրդ աշխարհաբառի և գրաբառի, որ չի էլ կարելի իսկապէս կոչել աշխարհաբառ, այլ աշխարհաբառախառն գրաբառ կամ, ընդհակառակը, գրաբառախառն աշխարհաբառ։ «Իլիականը», բացի իւր լեզուի խառնուրդ լինելու պակասութիւնից, պակասաւոր է և իբրև թարգմանութիւն. նա չունի ոչ այն ճշտութիւնն ու ներդաշնակութիւնը, որ ունին հանգուցեալ Եղիա Թոմաճանի և Նորա աշակերտ Արսէն Բագրատունու նոյն երկի գրաբառ թարգմանութիւնները, և ոչ մինչև անգամ այն ճշտութիւնն ու գեղեցկութիւնը, որ ունի Փիլիպպոս Վարդանեանի աշխարհաբառ արձակ թարգմանութիւնը։

Եւ դորա պատճառը լեզուն չէ, որ որքան և խառնուրդ լինի, այնուամենայնիւ ընդունակ է լիովին արտայայտելու հեղինակի միտքը, այլ Խորէնի թարգմանչական արուեստի անյաջողութիւնը կամ Նորա թարգմանիչ լինելու ընդունակութեան պակասութիւնը։ Խորէնին իբրև թարգմանչի պակասում էր այն, որ կոչւում է թարգմանչական հոտոտելիք. նա չէր կարողանում թարգմանելիք երկի հեղինակի կաշուի մէջ մտնել, համակուել նորա զգացմունքներով, ոգևորուել նորա գաղափարներով և ինքն երկրորդ հեղինակ դառնալ, ինչպէս որ արել և եղել են մեր Թոմաճանները, Բագրատունիները, Էմինները, Սատաթեանները, Վարդանեանները և միւսները։ Թարգմանիչը, ինչպէս ասում է Բագրատունին, պէտք է անէ իւր թարգմանութիւնը «սեփականելով անձին զնոցա, այսինքն թարգմանելիք բերկերի հեղինակների, ոճն և ի նոցին տոգորս ներկեալ տարբացեալ՝ ապա այնուհետև չինքենէ իբրև ի բուն աղբերէ քղխել յինքնուրոյն տիպս կերպարանաց. և ոչ թէ զնոցա յօրինուածն և զարարածն յամենայնի ի փոխ և ի վար

առեալ՝ իբր ի թատր ինչ զնոցին բերել կերպարանս, հանգոյն իմն կապկաց առնելով հպտանս կամ պէս գունակ առակաւոր ճային աստի անտի փետրովք կցկցելոյ փերևետել։ Զի այդպիսեօք և այլ ևս մանր և դիւրագիւտ հայթայթանօք հանդերձ՝ մարթի տակաւին չլինել շարագրի՝ ինիկ հայագէտ և կատարեալ հայախօս, մանաւանդ յօտար լեզուէ թարգմանելն. իսկ բարձեալ ի նմանէ ապաւէն ամբարանոցին՝ յոր զակն պիշ ունի անթարթ, մնալ նմա գնչու և քաղթնատ և քան զխուժն դուժ ևս խաղտալեզու» [22])։

Ահա թարգմանելիք երկերի հեղինակների ոճի այդ անձին սեփականելու և նոցա տոգորով ներկուելու, տարբրանալու և այնուհետև անկախօրէն իրանից, ինչպէս բուն աղբիւրից, ստեղծագործելու ընդունակութիւնը, որ այնքան անգնահատելի է արել Բագրատունու թարգմանութիւնները մեր գրականութեան մէջ, Խորէնը չունէր։ Այդ պատճառով էլ նորա թարգմանութիւնները մեր գրականութեան մէջ արժէք չունին. նոքա չոր են, նիւթական են, կամ, ինչպէս ասում է Բագրատունին, «իբրև ի թատր ինչ զնոցին բերեն կերպարանս, հանգոյն իմն կապկաց առնելով հպտանս կամ պէս գունակ առակաւոր ճային աստի անտի փետրովք կցկցելոյ փերևետել»։ Նորա «Դաշակները» տեղ-տեղ այնքան անհասկանալի են կամ դժուար հասկանալի, որ չեն պատկերացնում մեզ համակ զգացմունք, համակ ոգևորութիւն Լամարտինի հրաշալի «Հառմոնեաները». նորա ողբերգութիւնների թարգմանութիւնները համ ու հոտ չունին, որ հեշտութեամբ կարելի է տեսնել, հաւաստիանալ, եթէ մենք, օրինակի համար, համեմատենք նորա «Սաւուղ»-ը Բագրատունու «Սաւուղ»-ի հետ. նորա «Իլիականը» աշխարհահռչակ Հոմերոսի գրչով անմահացած վերին աստիճանի պարզ և նոյն ժամանակ կախարդիչ յոյս ժողովրդի ստեղծագործութիւնը չէ, այլ նորա չոր ու ցամաք կմախքը, որ ոչ միայն չի թովում, չի կախարդում ընթերցողներին, այլ տաղտուկ ու ձանձրոյթ է բերում նոցա վերայ։

---

22) Տես «Քերականութիւն ի պէտս զարգացելոց» էջ 629.

Բայց ափսոս, որովհետև հանգուցեալն եթէ ոչ աւելի, գոնէ, յամենայն դէպս, ոչ պակաս բանաստեղծական աւիւն ունէր, քան թէ Բագրատունին, և կարող էր իւր ֆրանսերէն լեզուի հմտութեամբ, գոնէ, այդ լեզուից արած թարգմանութիւնների մէջ կատարեալ լինել։ Միակ բացառութիւնը կազմում է նորա թարգմանութիւններից Յովհաննէս Դարդելլու տարեգրութեան թարգմանութիւնը, որ տրել է Խորէնը 1877 թուին պ. Կարապետ Եղեանի խնդիրքով։ Դա մի վերին աստիճանի պարզ և գեղեցիկ գրաբառ թարգմանութիւն է, որ, մեր կարծիքով, յաջողել է հանգուցեալին, որովհետև այդտեղ բոլոր դժուարութիւնն եղել է ֆրանսիացի ժամանակագրի միջնադարեան լեզուն հասկանալը, որ Խորէնն իբրև լաւ ֆրանսագէտ կատարելապէս ըմբռնել է։

Մի կողմից մեր ընթերցողներին Խորէնի «Իլիականի» մասին մի ճաշակ տալու նպատակով, միւս կողմից էլ նորան յոյն բնագրի և հայ գրաբառ թարգմանութիւնների հետ համեմատելու միջոց տալու դիտաւորութեամբ, աւելորդ չենք համարում դնել այստեղ այդ այժմ դժուար ձեռք բերելիք թարգմանութիւնից մի քանի տող.—

1. Երգէ, աստուածուհիդ, Պելիսածինն Աքիլևսի
Կորստաբեր քէնն որ նիւթեց Ա.քայեցւոց բիւր աղէտներ
Շատ դիւցազանց վեհ ոգիներ թափեց դժոխքը տարաժամ,
Եւ աւար տուաւ զանոնք բոլոր թռչնոց և շուներու.
5. Եւ այսպէս Արամազդայ մտքին խորհուրդ կը-կատարուէր,
Այն օրէն որ՝ իրարու դէմ մաքառելով՝ բաժնուեցան
Ատրիդէս քաջաց արքայն և Աքիլևսն աստուածային։
Բայց ո՞վ արդեօք աստուածներէն գրգռեց զանոնք յոխ և ի կռիւ.
—Լեդոյայ և Զևսի որդին, որ արքային դէմ բարկացած՝
10. Զօրքին մէջ ձրգեց ժանտախտ, և ժողովուրդք կը մեռնէին,
Վասըն զի Ատրիդեանն ըզ Քրիսէս քուրմ թշնամանեց
Որ եկեր էր Ա.քայեցւոց արագընթաց նաւերուն մէջ,
Իւր աղջկանն ազատութեան անբաւ փրկանք բերելով,

Ձեռքն առած նա զվարսակալ կորովաձիգն Ապոլլոնի
15. Եւ գաւազանն ոսկեձոյլ՝ կը պաղատէր Աքայեցւոց,
Եւ մանաւանդ՝ Ատրիդեանց՝ զօրաց երկու վեհ պետերուն.
«Ատրիդեա՛նք, ով բոլոր գեղեցկամոյկ Աքայեցիք,
Տա՛ն ձեզի աստուածներն՝ որ զՈղիմպոս ունին կալեան՝
Պրիամու քանդել քաղաքն, և տուն դառնալ ողջ և առողջ.
20. Արձակեցէք սիրուն աղջիկս և փրկանքին առէք զգին,
Յարգելով Զևսի որդին՝ ըզշեշտաձիգն Ապոլլոն» [23]։
—Պատասխանեց կապուտաչեայ աստուածուհին Աթենաս
«Երկընքէն իջայ ցասումդ մեղմելու, թէ հնազանդես
Զիս յուղարկեց Օդոյի՝ սպիտակածղի աստուածուհին,
Որ երկուսդ ալ՝ նոյն չափ սրրտովը կը սիրէ ու կը խնամէ.
210։ Օ՛ն աղէ, դադրեցուր վէճդ, ու մի՛ քաշեր ձեռքովդ թուր,
Այլ միայն՝ կըշտամբանաց ըսէ խօսքեր, ինչ և ըլլայ։
Եւ ահա՝ կըսեմ քեզի, որ և պիտի իսկ կատարուի,
Օր մը քեզի տրրուին եռապատիկ շքեղ ընծայք,
Նախատինքին այն փոխարէն, զրսպէ ինքզինքդ, ու լըսէ մեզ»։
215. Առ նէ քաջոտն Աքիլլևս պատասխանեց և ըսաւ.
«Թէև սաստիկ եմ սրրտմրտած՝ բայց ինձի հարկ է կատարել.
Ձեր երկուսին իսկ հրամանն, ո դիցուհի, զի՝ այն է լաւ.
Ով որ հնազանդ է աստուածոց՝ անոր յաւէտ կը լսեն անոնք»։

---

[23]) Հոմերոսի իլիականի միայն առաջին երգն է թարգմանել Խորէնը—ընդամէնը 463 տող։ Խորագիրն է. «Իլիականին Հոմերոսի երգ առաջին. յոյն բնագրէն թարգմանեց Խորէն Արքեպիսկոպոս Լուսինեանց»։ Տպագրուած է Մասիս լրագրի 1881 թուի նոյեմբերի 28-ի և դեկտեմբերի 2, 5, 17, 19, և 26 համարներում։ Օգտուում ենք դէպքից մեր առ ի սրտէ շնորհակալութիւնը յայտնելու սրբազան Յուսիկ եպիսկոպոսին, որ իրան յատուկ սիրելութեամբ չմերժեց մեր խնդիրը և անձամբ արտագրելով Ս. Էջմիածնի մատենադարանում պահուած «Մասիս» լրագրից 60 տող այդ թարգմանութիւնից, մի համառօտ տեղեկութեան հետ միասին ուղարկեց մեզ։

Ըսաւ, ու իրեն ծանրը ձեռքով հրրեց արծաթ երա-
խակալն,
220. Ու մեծ թուրը վերրստին իրեն պատեանը ներս
խոթեց,
Մտիկ ընելով Աթենասայ՝ որ Ոլիմպոս սլացաւ ի վեր
Վահանազէն Զևսի կայանն և համօրէն աստուածներուն։
Իսկ որդին Պելեայ նորէն նախատալից նետեց խօսքեր
Առ Ատրիդեանն Ագամեմնոն, և չէր դադրեր բարկու-
թենէն.
225. «Ո՜վ գինեմոլ, որ ունիս շունի՛ աչեր, եղջերուի՛
սիրտ,
Ո՛չ երբէք բանակին հետ պատերազմով շահատակիլ,
Ոչ երթալ դարանամուտ՝ Աքայեցւոց քաջերուն հետ
Երբէք քու սիրտ չարիացաւ, զի աչքիդ՝ մահ այդ կերևի.
Զի դիւրագոյն է անշուշտ՝ նստել Արգեանց մեծ բա-
նակում,
230. Եւ քեզի դիմադրողին ձեռքէն ընծայքն| յափըշ-
տակել.
Ազգակուլ թագաւոր, որ վատերու ես իշխեցող,
Զի ստուգիւ, Ատրիադէս, վերջին է քու այս նախատինք»։
—«Ո Քրիսէս, արքայն արանց Ագամեմնոն զիս ուղարկեց
Քեզ բերել քու զաւակդ, ու փեբեայ զոհ նուիրական
Մորթել՝ համար Դանայեանց, որպէս զի մեզ հաշտի
Արքայն,
445. Որ վերայ Արգեանց այժմիկ արձակեց ցաւ բաղ-
մահառաչ»։
Զայս ըսելով՝ ձեռքը տուաւ, և նա առաւ ուրախութեամբ
Սիրուն զաւակն. ապա անոնք աստուածոյն զոհը փառաւոր
Գեղեցկաշէն բաղնին չորս կողմը շարեցին կարգ ըստ
կարգի.
Եւ ձեռներնին լըւալով՝ առին տարին նըւիրական։
450. Իսկ Քրիսէս բազկատարած բարձր ձայնով կաղօթեր
«Լսէ ինձ, Արծաթաղեղն, որ զՔրիսէ շուրջ կը պահես
Եւ զկիլլայն դիցային, և Տենեդի կիշխես հզօրդ.
Արդարև դու լըսեցիր յառաջ ըրած աղաչանքիս,
Եւ զիս ինքն պատուելով՝ պատժեցիր շատ զազգն Ա-
քայեան։

455. Աղէ, հիմակ ալ կատարէ՛ դու զայս իմ ուխտ պա-
ղատանաց.
Հեռացո՛ւր Դանայեանցմէ և այժմ հարուածս այս դժնդակ»։
Զայս ըսաւ աղօթելով, և Ապոլլոն լըսեց Փեբոս։
Յետ աղօթքն ընելու և ցանելու զսուրբ գարին,
Նախ ըսպանդից դարձուցին գլուխ, և խողխողեալ՝ քեր-
թեցին մորթ,
460. Եւ զիստերը կըտըրտելով՝ շուրջ ծածկեցին զանոնք
ճարպով,
Եւ կրկին զայն ընելով դըրին վերայ միսն արիւնոտ։
Ծերը կայրէր զայնս ի փայտի, և կը թափէր շուրջ սև
գինի,
Եւ պատանիք քովը կեցած էին ձեռքում տէգ հինգժանի։

Թէ ինչ անտիպ գրուածներ է ունեցել հանգուցեալն առհասարակ,— լաւ չ՝գիտենք. մենք միայն գիտենք, որ նա դեռ 1859 թուին, երբ լոյս է ընծայել իւր «Դաշնակք Լամարթինեայ» թարգմանութիւնը, արդէն թարգմանած պատրաստած է ունեցել հրատարակութեան համար և նոյն ֆրանսիացի հեղինակի միւս նշանաւոր գրուածքը—«Խորհրդածութիւնք»։ Այդ մասին մենք տեղեկութիւն ունինք դաշնակների յառաջաբանից, որի մէջ Խորէնը խօսելով դաշնակների հրատարակութեան մասին, ի միջի այլոց, մի քանի խօսք էլ հարևանցի ասում է և այդ «խորհրդածութիւնների» թարգմանութեան մասին։ «Թէպէտ, ասում է նա, և զխորհրդածութեանցն ևս յեղեալ է մեր զքերթուածս, այլ ընտրեցաք զդաշնակացն նախ հանդիսացուցանել ի լոյս, քանզի ի սոսին վեհագոյն իմն օրինակաւ զտիպս հանճարոյն իւրոյ թողեալ է Քերթողին, որպէս ի քննադատիցն առհասարակ վկայեցաւ»։ Մենք գիտենք նոյնպէս, որ նա թարգմանած-պատրաստած է եղել և մի շարք ողբերգութիւններ՝ Ալֆիէրիի «Սաուլ»-ը, Ռասինի «Գոթոդիա»ն, Կոռնէյլի «Պոդիկտոս»-ը, Վոլտերի «Զայիրէ»-ն, Առնոլդի «Մարիոս»-ը, Շեքսպիրի «Յուլիոս Կեսար»-ը և Շիլլերի «Ստուարտ»-ը, որոնցից միայն հրատարակուել են Բազմավէպի մէջ Սաուլն ամբողջապէս, Պոդիկտոսի մի մասը և Յուլիոս Կեսարի մի մա-

սը. իսկ միւսները մնացել են անտիպ։ Այդ մասին էլ մենք տեղեկանում ենք Արշակ Բ-ի յառաջաբանից, որի մէջ հանգուցեալը խօսելով իւր տաղաչափութեան մասին, ի միջի այլոց, ասում է. «Գիտեմք որ քաջ տաղաչափ մի առաջարկեց նախնեաց քառանդամը։ Մենք ևս երբեմն նորա խորհրդով՝ նոյն չափով քանի մի ևրոպական անուանի թատերախաղ փորձոյ համար թարգմանեցինք, ինչպէս Ալֆիէրի Սաուլը, Ռասինի Գոթոզիան, Քոռնէյլի Պոդիկտոսը, Վոլթերի Զայիրէն, Առնոյտի Մարիոսը, Շէքսպիրի Կեսարը ու Շիլլերի Սթիւարթը»։ Գիտենք, վերչապէս, որ նա ունեցել է Պոլսում 64 – 92 թուականների ընթացքում գրուած բանաստեղծութիւնների մի ձեռագիր հաւաքածու «Փունջք Արարատեան» խորագրով, որ, պէտք է կարծել, որ, երբ նորա մահից յետոյ նորա ճոխ մատենադարանը մաս-մաս ծախուել է և նորա թղթերն ուղարկուել են նորա եղբօրը Պարիզ. այդ էլ հանգուցեալի միւս թղթերի հետ միասին անցել է նորա, այսինքն եղբօր ձեռքը։

Բերայի մեծ հրդեհը, որ, ինչպէս յայտնի է, եղել է 1870 թուին, լափել է հանգուցեալի գրուածներից շատերը։ Թէև մեզ, բացի «Վէպք և Եղերերք» խորագրով աշխարհաբառ բանաստեղծութիւններից, որոնց այրուելու մասին յիշուում է հանգուցեալի «Ստուերք հայկականք» գրքոյկի յառաջաբանում, յականէ անուանէ յայտնի չէ, թէ ուրիշ ինչ գրուածներ են այրուել այդ զարհուրելի հրդեհի ժամանակ, բայց կարծում ենք, որ դորան զոհ գնացած պէտք է լինեն նորա գրչի արդիւնքից և ուրիշ ձեռագրեր և, գուցէ, հէնց վերոյիշեալ «Խորհրդածութիւնների և «ողբերգութիւնների» թարգմանութիւններն էլ։

Առանձին գրքերով Պոլսում Խորէնը հրատարակել է «Քնար Պանդխտին» և «Ստուերք հայկականք» բանաստեղծութիւնների հաւաքածուները։ Թողնելով մի կողմ առաջինը, որ հանգուցեալը հրատարակել է 1868 թուին և նուիրել է երջանկայիշատակ Գէորգ Դ կաթողիկոսին, որովհետև նորա մէջ համարեա թէ նոր բան չկայ, այլ միայն հաւաքուած ու ամփոփուած է նորա

Մխիթարեան վանքում գրած և Բազմավէպում տպած և Պարիզում գրած ու Մասեաց աղաւնիում հրատարակուած գրաբար բանաստեղծութիւնները, մենք կխօսենք երկրորդի մասին, որ հրատարակուել է 1874 թուին և որ նորա գրուածների մէջ ամենանշանաւորն է։ «Ստուերք»-ը մի փոքրիկ հատորիկ է. նա պարունակում է իւր մէջ ընդամենը միայն 30 հատ բանաստեղծութիւն, որոնք գրքի մէջ բռնում են 164 էջ։ Դա այդպէս փոքր չէր լինիլ, եթէ չպատահած լիներ վերոյիշեալ Բերայի հրդեհը, որ լափել, ոչնչացրել է գրրուած , տպագրութեան համար արդէն պատրաստուած «Ստուերք»-ի մեծ մասը. ազատուել են միայն այս կամ այն պարբերական թերթում զանազան ժամանակներում պատահաբար տպուածները և հեղինակի այս ու այն բարեկամի ձեռքին գտնուածները, որոնք և հաւաքուելով միասին և հրատարակուելով, կազմել են այժմուայ մեր ձեռքին գտնուած «Ստուերք»-ի հատորիկը։ Բանաստեղծութիւնների այդ հաւաքածուն բաղկացած է երկու մասից. առաջին մասում տպագրուած են 13 հատ բանաստեղծութիւն, որոնք մի անունով կոչուում են «Վէպք», երկրորդում—17 հատ, որոնք մի անունով կոչուում են «Եղերերգք»։ Առաջին մասի բանաստեղծութիւնները վիպական բնաւորութիւն ու բովանդակութիւն ունէին, երկրորդինը— եղերերգական. այդտեղից կամ դորանից էլ հէնց առաջ են եկել գրքի երկու մասի խորագրերը—«Վէպք» և «Եղերերք»։

Մենք ասացինք, թէ «Ստուերք»-ը Խորէնի ամենանշանաւոր երկն է, կամ, լաւ է ասել, նորա երկերի գլուխ-գործոցն է։ Դորա պատճառը մենք տեսնում ենք նորա մէջ արտայայտուած զգացմունքի համեմատական խորութեան և նորա ինքնուրոյնութեան մէջ։ Դորա, այդ զգացմունքի խորութիւնն էլ, մեր կարծիքով, մեկնուում է Ստուերքի մէջ ամփոփուած բանաստեղծութիւնների բովանդակութեան հարպատութեամբ և նորա մէջ գործածուած թէև խառնուրդ, բայց և այնպէս աշխարհաբառ լեզուի կիրառութեամբ, որ միջոց է տուել նորան լիակատար կերպով արտայայտելու իւր մէջ եռ եկած կրակը, սրտի զգացմունքը, հոգու հա-

ռաչանքը։ Ինչ որ վերաբերում է նորա ինքնուրոյնութեան,—պէտք է նկատել, որ թէև դա էլ իւր գրութեան ձևով, զգացմունքների արտայայտութեան եղանակով, իւր նիւթի բովանդակութեան զարգացումով և արտայայտուած մտքերի ու գաղափարների տեսակով իսպառ ազատ չէ Լամարտինի և առհասարակ ժամանակակից ֆրանսիական գրականութեան ազդեցութիւնից, բայց նորա մէջ, նախ, աւելի իշխող դեր է կատարում ռոմանտիք դպրոցի ազդեցութիւնն ընդհանրապէս և մասնաւորապէս Հիւգոյի ազդեցութիւնը, քան թէ կեղծ-կլասիքականութիւնը, քան թէ Լամարտինի թախիծը, մելանխոլիան, կէս-դասական, կէս-ռոմանտիք ուղղութիւնը, երկրորդ, նա աւելի հայի մտածողութեան, հայ կեանքի ծնունդ է, քան թէ նորա նախկին գրուածներից մէկը։ Ստուերքի մէջ չկայ այն կապկորէն նմանողութիւնը Լամարտինին և Հիւգոյին, որ երևում է նորա միւս բանաստեղծական գրուածներում, նորա մէջ համեմատաբար աւելի քիչ է աչք ծակում այն ուռածփքուածութիւնը, այն արուեստականութիւնը, որ յատուկ է կեղծ-դասական գրուածներին և որ նորա «Պանդխտի քնարի» յատկանիշն է, նորա մէջ չկայ և այն վերացականութիւնը, այն լոկ անհատական, եսասիրական վիշտն ու թախիծը, այն կրօնական-միստիքական մտածողութիւնները, դատողութիւնները, որ նորա ամբողջ «Վարդենիք»-ի և «Քնար պանդխտին»-ի մի մասի բնաւորութիւն է կազմում։

Եւ այդ շատ բնական է, շատ հասկանալի է, որովհետև մինչ նա իւր «Քնար պանդխտինի»-ի առաջին մասը գրել է Մխիթարեան վանքում, իսկ երկրորդը—Պարիզում, մինչ նա իւր «Վարդենիք»-ը յօրինել է Թէոդոսիայում, այսինքն մի միջոց, երբ նա կաթոլիկ հոգեւորական է եղել, երբ նա գտնուել է անմիջապէս Լամարտինի ազդեցութեան ներքոյ և երբ նա դեռ այնքան երիտասարդ է եղել, որ նորա մէջ տակաւին նրստած, հանգստացած չեն եղել նորա երիտասարդական կայտիռքը, նա իւր «Ստուերք»-ը, ընդհակառակը, գրել է իւր հասակն առած ժամանակ, երբ նորա բնաւորութեան թեթևութիւնը տեղի էր տուել լրջութեան, երբ

նա ճանապարհորդած լինելով հայաբնակ քաղաքները, երկար ժամանակ ապրած լինելով Պոլսի բազմամբոխ հայութեան մէջ և Պատրիարքարանում զանազան պաշտօններ կատարած լինելով, առիթ էր ունեցել հայ ժողովրդի կարիքներին ու պէտքերին ծանօթանալ, մի խօսքով, երբ նա սկսել էր ապրել հայի իրական և ոչ թէ վերացական կեանքով, իբրև հայ մարդ, իբրև հայ սրտացաւ հոգևորական։ Յայտնի է, որ մի հեղինակի գրուածքի վերայ սովորաբար երևում է նոյն իսկ հեղինակի հաստկի, զանազան ժամանակամիջոցներում վարած կեանքի, նորան շրջապատող հասարակութեան վարք ու բարքի ազդեցութիւնը։

«Ստուերք»-ի առաջին մասը—վէպերը, որոնց մէջ Խորէնը ներկայացրել է Հայոց հնագոյն և հին պատմութեան հերոսների՝ Հայկի, Արա գեղեցկի և Նուարդի, Զարմայրի և Շուշանի, Արտաւազդ Բ-ի և մրուսների սխրագործութիւնները, և երկրորդ մասը—Եղերգները, որոնց մէջ նա ներկայացրել է Հայոց կեանքի ներկայ թշուառութիւնները, ընդհանրապէս և համեմատաբար այնքան սրտառուչ նկարագիր ունին, որ մի յայտնի չափով կարող են գրաւել, յափշտակել ընթերցողների սիրտն ու հոգին, թէև այն էլ պէտք է ասել, որ դոցա մէջ, նամանաւանդ և գլխաւորապէս վէպերի մէջ կեղծ-դասականութեան տարրը դեռ շատ զգալի է։ Որ հանգուցեալը կարողացել է այնպիսի գոյներով նկարագրել, այնպիսի խոր զգացմունքներով ներկայացնել հայի թշուառութիւնները, որ նոքա ընթերցողի աչքից ակամայ արտասուքի ջերմ կաթիլներ են քամում,—այդ ինքն ըստ ինքեան հասկանալի է, որովհետև հայ ժամանակակից կեանքի այդ թշուառութիւններն այնքան մեծ, այնքան բազմատեսակ և այնքան թախծալից են, որ նոքա իբրև չոր, անմշակ նիւթ էլ արդէն ընդունակ են ամեն մի քար սիրտ ամոքել, ամենքին, տրխուր զգացմունքներով համակել ու ամենքի արտասուքը շարժել. բայց որ նա կարողացել է չոր պատմական նիւթից մի այնպիսի բան շինել, որ մարդ ոչ միայն առանց ձանձրանալու կարդում է մինչև վերջը, այլ և մինչև անգամ մի յայտնի աստիճանի տպաւորու-

թիւն է ստանում, մինչև իսկ համակւում է վաղուց անցած գնացած հայ կեանքի տխուր և ուրախ հանգամանքներով, առասպելաբանական և պատմական հերոսների սխրագործութիւններով, այդ արդէն մի այնպիսի աչքի ընկնելու բան է, մի այնպիսի արժանաւորութիւն է, որի վերայ արժէ մատնացոյց անել։

Խորէնը կարողացել է պատմական անձնաւորութիւններին այնպիսի զգեստ հագցնել, նոցա գործողութիւններին այնպիսի բնաւորութիւն տալ, որ նոքա չ՚հեռանալով պատմութիւնից, մնալով իբրև պատմական անձնաւորութիւն, նոյն ժամանակ համապատասխանում են մեր իդէալներին և համեստութեան, գեղեցկութեան, քաջութեան և առաքինութեան օրինակ են հանդիսանում մեզ համար։ Արժէ կարդալ վերոյիշեալ Հայկը, Արան, Զարմայրը, Արտաւազդը, որոնցից ամեն մէկը մեզ համար մի մի խրատական օրինակ են։ Հայկը եւ քաջ է եւ ազատասէր, Արան եւ գեղեցիկ է եւ համեստ, Զարմայրը եւ քաջ է և մարդասէր. Նուարդ և Շուշանը և գեղեցիկ, և սիրող, և համեստ եւ համբերող են, մի խօսքով, դոքա հայկական առաքինութիւններն են, միայն պատմական սեթևեթներով զարդարուած, պատմական համեմունքով համեմուած։

Շատ սիրուն է «Արա գեղեցիկ և Նուարդ» վէպի մէջ Արայի և Նուարդի գեղեցկութեան նկարագրութիւնը.—

«Հանց աղեղ լարած թուխ լայն լայն յօնքեր.
Ձակատուն հովտին կարծես ցանկ պատեր.
Ու գուռզ հոպոպիք ոլրելով սև սև՝
Կը ծփան մարմար վրզին ծաղկաձև։
Իսկ երբ բոցափայլ աչքվին եռանդնոտ
Վեր առած հայէր յարփին անաղօտ,
Կարծես դէմ ընդդէմ յերկիր և յերկին
Զոյգ մի արևներ յիրար պրշնուին։
Այն քաջին ուսոց կրոթընած քընքուշ՝
Կին մի տեսնուէր քան շուշանն անուշ.
Ինչպէս ձիւնաթոյր հեզիկ աղաւնի,
Թևերն ամփոփած բոյնին քով թառի։
Արշալոյսն երբ գայ այգուց ցողազարդ՝

Ոչ այնպէս փափկիկ ճակատն ունի վարդ,
Ինչպէս նէրա սուրբ այտերուն վերան՝
Բոսոր ու ճերմակ վարդեր կը ցոլան։
Կապոյտ աչուքներն՝ են ջինջ աւելի
Քան թէ այն գարնան մաքուր դէմք երկնի,
Ո՛չ չըկայ քըրքում մի այնպէս սիրուն՝
Որ նորա յաղթէ ոսկի մազերուն.
Զէ, նա մահացու կարծես թէ չէր կին,
Այլ երկնաբնակ հրեշտակն էր քաջին,
Որ կնոջ առել գողտրիկ կերպարանք,
Լոյս տալ աչքերուն, սըրտին՝ ըսփոփանք.
Անուշակ քամին իջաւ մէյմըն այլ
Եւ ծածանեցան ծամերն ոսկեփայլ,
Ու երկու կաթիլ այն ծաւի աչքէն
Ընկան ինչպէս շիթք ցօղոյ երկընքէն»։

Ինքնատիպ գեղեցիկ է և «Զարմայր և Շուշան» վէպի մէջ շուշան՝ ծաղկի անուան ծագումը մեկնաբանող հատուածը.—

«Կըսեն թէ Հայերն երբ երկրորդ օրին
Եկան որ իրենց փընտռեն թագուհին,
Հոն՝ ուր փակեց աչք նազելի Շուշան՝
Գեղազող միայն մի ծաղիկ գտան.
Թագուհւոյն ձիւնի պէս դէմքին նման
Ունէր նա սպիտակ շըղարշ լուսերփեան,
Եւ տերևներուն անուշիկ բուրում
Դըշխոյին մաքրիկ սըրտին էր բըղխում։
Իսկ ճակտին վերև մարգարտի ցողեր՝
Անշուշտ խեղճ հարսին վերջին արցունքն էր...
Որով հեզափայլ ծաղիկն այն օրէն
Ըզշուշան անուն առաւ դըշխոյէն։
Հայեր, երբ ճերմակ զայն ծաղիկ տեսնէք,
Զըքնաղ թագուհին ձեր ի միտ բերէք.
Ու գէթ ձեր աչքէն կաթիլ մ'ընդունին
Զարմայր ու նորա թշուառ ամուսին»։

Սակայն այդ վէպերի մէջ երբեմն պատահում են այնպիսի տեղեր կամ կտորներ, որոնք թէև գեղեցիկ արտայայտութիւն ունին, բայց իւրեանց բովանդակու-

թեամբ ու իմաստով ճիշտ չեն, գոնէ, չեն յարմարուում. չեն համապատասխանում Հայոց պատմութեան ընդհանուր բնաւորութեան։ «Հայկ» վէպի մէջ, օրինակ, Խորէնը ճգնում է մեր նախահօր ազատասիրութեան հոգին ընդհանրացնել, բովանդակ հայութեան յատկանիշ դարձնել, որ չի արդարանում մեր պատմութեան ընթացքով ու հանգամանքներով։ Հայ ազգն Առաջաւոր-Ասիայի այն փոքրիկ ազգերից մէկն է եղել, որ իւր պատմական կեանքում, ինչպէս յայտնի է, շատ կարճ ժամանակամիջոցով միայն լիակատար անկախութիւն է վայելել. նա առհասարակ գտնուել է այս կամ այն մեծ ազգի գերիշխանութեան ներքոյ և վայելել է միայն ներքին ընդարձակ ինքնավարութեան իրաւունքներ։ Այդտեղ, ուրեմն, ազատասիրութեան մասին իբրև մի ընդհանուր ազգային բնաւորութեան ու յատկանիշի մասին խօսք լինել չի կարող։ Մեր կարծիքով, մեր պատմագիրներից ոչ ոք այնպէս գեղեցիկ ու ճիշտ չի գծագրել հայ ազգի իբրև մի պատմական տարրի նկարագիրը, ինչպէս Մովսէս Խորենացին, որ իւր պատմութեան առաջին գրքի երրորդ գլխում ասում է այդ մասին. «Թէպէտ մենք մի փոքր ազգ ենք, թուով շատ նուազ և զօրութեամբ տկար ու շատ անգամ ուրիշ թագաւորութեան ձեռքի ընկած, բայց մեր աշխարհում ևս քաջութեան շատ գործեր են կատարուած, որոնք արժանի են գրաւոր յիշատակի։ Այս խօսքերով է գծագրում մեր ծերունի պատմագիրը հայ ազգի պատմական կացութեան խորհուրդը դեռ այն ժամանակ, երբ հայ ազգը տակաւին երկու պատմական շրջան էր միայն անցկացրել իւր գլխից։ Մեր յետագայ ժամանակների պատմութիւնն աւելի ևս արդարացնում է իւր ազգօ ու պատմութիւնը լաւ ճանաչող հեռատես պատմագրի խօսքերը, թէ մենք մի փոքր ազգ ենք, թուով ու զօրութեամբ շատ տկար և յաճախ ուրիշ ազգերի ձեռքի տակ ընկած։

Դոյն տեսակ արտայայտութեամբ շատ գեղեցիկ, բայց իմաստով ու բովանդակութեամբ մեր պատմութեան անհամապատասխան շատ կտորներ պատահում են և «Ստուերք»-ի երկրորդ մասի – եղերգների մէջ։

Առնենք, օրինակի համար, հէնց այդ եղերգներից ամենաընտիր համարուածները— «Հայ ապրենք» և «Հայ մեռնենք», որոնք իւրեանց հանրահռչակ ծանօթութեամբ, կարելի է ասել, մեր ժողովրդական երգերի կարգն են անցել։ Ի՞նչ է այդ,—պատմութիւն է, ջատագովութիւն է, խրախոյս է, թէ շովինիզմ։ Տարօրինակ է թւում մեզ հանգուցեալ եպիսկոպոսի բերանում այս խօսքերը.—

Մեր աշխարհն է սուրբ։—Մեր հողուն վրան,
Աստուած է քալեր, հանելով զԱդամ.
Մեր լեզուն ստեղծեր ու խօսեր նախ ինք.—
Ըսէք, ո՞ր Ազգին չորս Առաքեալներ
Երկնից թագաւորն է դեսպան ղրկեր,
Որ թագաւորին հետ թղթակցել ինք.—
Քրիստոսի ունինք անդրանիկ օրհնէնք.
Հաւատոց եղանք միշտ ախոյեան մենք
Հայը գարմացոյց զերկիր և զերկինք.—և այլն։

Եթէ սա պատմութիւն է,—ուղիղ չէ, որովհետև սորա մէջ յայտնուած փաստերը չեն համապատասխանում քննական պատմութեան ճշտութեան. եթէ սա մի ներբողեան, դրուատիք կամ գովասանական հիմն է հայի և նորա հայրենիքին,—չափազանցութիւն է, որովհետև թէ հայը և թէ նորա հայրենիքը ոչ այժմ և ոչ իւր պատմական կեանքում այդքան գովաբանելու հաւաստիքներ չեն ընծայել. եթէ սա խրախոյս է,—օգտաւէտ չէ, որովհետև ի՞նչ կ՚լինի միայն մեծահնչիւն խօսքերով շփանալով, քանի որ դառն իրականութիւնը բոլորովին ուրիշ բան է թելադրում. եթէ, վերջապէս, այս շովինիզմ է,—իսպառ տնտեղի ու վնասակար է, որովհետև շովինիզմը չի վայելում մինչև անգամ ամենամեծ ազգերին, ուր մնաց մեր պէս մի փոքր ու խեղճ ազգին, որ չունի մեծ ազգերի ոչ նիւթական ու բարոյական ոյժերը և ոչ նոցա կուլտուրան ու քաղաքակրթութիւնը։

Կրկնում ենք, մեզ տարօրինակ է թւում այդ բոլորը հանգուցեալի բերանում, որովհետև նա ապրել, գործել է մեր օրերում, ուրեմն և, պէտք է հասկա-

նար ազգի դրութիւնը և, փոխանակ ջատագովելու չեղած փառքն ու առաքինութիւնը և գորանով շոյելու նորա ինքնասիրութիւնը, ընդհակառակը, պէտք է զգուշացնէր, արթնացնէր նորան թմրութիւնից, որովհետև նա իբրև Եւրոպական կրթութիւն ստացած մարդ պէտք է լաւ հասկանար մեր առասպելների յարգը և տեղի ու անտեղի իբրև պատմական ճշմարտութիւն չկրկնէր նոցա, վերջապէս, նա իբրև խելօք մարդ պիտի իմանար, որ այդպիսի բովանդակութեամբ գրուածներն առաջ են բերում ազգի մէջ կոյր սնափառութիւն, ինքնախաբէութիւն և անցեալ փառքերի ու դափնիների վերայ նստել-հանգստանալու հակումն ու տրամադրութիւն։

Յամենայն դէպս «Ստուերք»-ի մէջ ամփոփուած վէպերից և եղերգներից մի քանիսն, եթէ ոչ իւրեանց ամբողջութեամբ, գոնէ, շատ հատուածներով, բնական, պարզ, սրտից բղխած, ներդաշնակ, սրտառուչ բանաստեղծութիւններ են, արժանի մեր բանաստեղծական գրականութեան մէջ իւրեանց վայել տեղը բռնելու։ Ափսոս միայն, որ այդ բանաստեղծական կտորների ներդաշնակութիւնը տեղ-տեղ խանգարւում է յանգերի արուեստականութիւնից, բռնազբօսիկ լինելուց։ Զարաբաստիկ «Յանգարանը», որի վերայ անկասկած հանգուցեալը շատ ժամանակ է կորցրել, այդտեղ էլ, ինչպէս նորա բոլոր գրաբառ ոտանաւորների վերայ, իւր հետքերն է թողել, իւր ազդեցութիւնն է ունեցել։ Ինչ բան են, օրինակի համար, «Արտաւազդ Բ» վէպի մէջ պատերազմի պատրաստութիւնը նկարագրող տողերը, եթէ ոչ «Յանգարանից» քաղած միայնագ բառերի աններդաշնակ և անիմաստ կուտակումն։—

Դափը անդ ի դրընդիւն, Աղեղանց ճայթիւն,
Նրժուգից վրնջիւն, Նետից ճարճատիւն,
Որսորդաց գոչիւն, Շրռինդ ընդ բոմբիւն,
Բարակաց հաչիւն, Այդ յընդ ոստ թընդիւն՝
Երէոց բաջիւն, Յանտառ, ձոր թըմբիւն
Զինուց շառաչիւն, Դրդրդիւն գանգիւն։ (²⁴)

---

²⁴) «Մասիս» լրագրի 1874 թուի նոյեմբերի 7—14 հա-

Գլուխ Թ.

Այն ժամանակ, երբ լոյս էր տեսնում Թէոդոսիայում Խալիբեան դպրոցի տպարանից Խորէնի «Վարդենիք»-ը, Նալբանդեանցը դատապարտուած առանձնութեան, իւր ամենանեղ, ամենադժուար օրերն էր անցկացնում Պետերբուրգում։ Սակայն ոչ այդ առանձնութիւնը, ոչ էլ այդ դժուար օրերն էին արգելք լինում Հայոց քանքարաւոր հրապարակախօսին հետաքրքրուելու իմանալու, թէ ինչ է կատարուում հայ

մարներում մի գրախօսութիւն կայ տպուած «Ստուերք»-ի մասին։ Մ. Ն. Ն. գրախօսը, նախ, չեշտում է բանաստեղծութեան կարևորութիւնը, երկրորդ՝ մի թռուցիկ հայեացք է ձգում հայկական բանաստեղծութեան վերայ ընդհանրապէս, անգիր կամ գողթան երգերն անուանելով «առնական», իսկ գրաւոր, այսինքն տաւերի գիւտից յետոյ եղած բանաստեղծութիւնը — «սրբազան»։ Ընդհանրապէս այդ գրախօսութիւնն աւելի ներբողեան է, քան թէ լուրջ քննադատութիւն, որ կարելի է եզրակացնել հէնց այն հանգամանքից, որ գրախօսը Խորէնի «Ստուերք Հայկականքը» համարում է բարոյական յեղափոխումներ անել տուող, փրկարար ցնցումներ պատճառող և անկշռելի օգտակարութիւն ունեցող մի գրքոյկ։ Նորագոյն բանաստեղծներից գրախօհ կարևորութիւն է տալիս Արսէն Բագրատունուն, նորա «Հայկ դիւցազն»-ը դրուատելով ոչ որպէս բանաստեղծութիւն, այլ որպէս բառերի ու ոճերի չտեմարան։ Բէշիկթաշլեանի բանաստեղծութիւնը նա կոչում է «մելամաղձոտ» և «փափուկ», իսկ Դուրեանինը — «ջղային»։ Մասիսի գրախօսի բոլոր ասածների մէջ եթէ կայ մի ճշմարտութիւն կամ ուղիղ դատողութիւն, — այդ էլ, մեր կարծիքով, նորա Արսէն Բագրատունու «Հայկ դիւցազնի» մասին ասածն է։ Մենք էլ կարծում ենք, որ Բագրատունու ոչ միայն «Հայկ դիւցազն» այլ և բոլոր ինքնուրոյն բանաստեղծական գրուածներն աւելի հայկաբանութեան չտեմարան են, քան թէ իսկական բանաստեղծութիւն։ Մասիսի այդ գրախօսականի մասին մեր ունեցած տեղեկութիւնը մենք քաղում ենք դարձեալ Յուսիկ սրբազանի մեզ այդ մասին գրած նամակից։

մտաւոր աշխարհում. նորա սրատես աչքերը թափանցում, հասնում էին և այդ հեռու հիւսիսից ամեն տեղ և ի նկատի առնում, կարդում, քննադատում էին ամեն մի երկ, որ դուրս էր գալիս հայ հեղինակների գրչից։ Նալբանդեանցը ստանում էր ամեն լեզուով գրուած, ամեն տեսակ գրքեր, կարդում էր, պարապում էր. լեզուաբանական և պատմագիտական հետազօտութիւններ էր անում, շարադրում էր և այդ միջոցով մի կողմից նա բաւականութիւն էր տալիս իւր հարցասիրութեան, միւս կողմից էլ մեղմացնում, աննկատելի էր դարձնում իւր միայնութեան տխուր, երկար օրերը։ Պահպանուել, մեր ձեռքն են հասել հանգուցեալի մի շարք վերին աստիճանի հետաքրքրական նամակները, գրուած ռուսերէն լեզուով և իւր եղբօր միջոցով ուղղուած բժիշկ Անանիա Սուլթանշահին, որոնց մէջ հայ գրականութեան այդ անխոնջ աշխատաւորը հաշիւ է տալիս իւր պարապմունքի, իւր մտածմունքների, իւր այս կամ այն գործի կամ խնդրի մասին ունեցած հայեացքների և կարդացած գրքերի մասին։

Թէև ոչ այդ նամակների և ոչ էլ նորա Պետերբուրգից գրած մեզ յայտնի միւս նամակների մէջ մենք չենք պատահում մի այնպիսի տեղեկութեան կամ ակնարկութեան, որից երևէր, թէ նա այդ ժամանակները կարդացել է և Խորէնի «Վարդենիք»-ը, բայց մենք հաստատ կարող ենք ասել, որ Վարդենիքը լոյս ընծայուելուց ետոյ, իսկոյն հասել է Պետերբուրգ, և Նալբանդեանցը կարդացել և ուսումնասիրել է նորան։ Դորան ապացոյց կարող է համարուել հանգուցեալի «Աղցմիք» երկը [25]), որ գրուած լինելով Վարդենիքի առթիւ և ընծայուած լինելով նորա հեղինակ Խորէն Գալփայեանին, հէնց դոյն այդ ուսումնասիրութեան արդիւնքն է։ Որ «Աղցմիք»-ը գրուած է Վարդենիքի առթիւ և ընծայուած է Խորէնին,—այդ երևում է այն չորս տող

---

[25]) «Աղցմիք» բառը Հայկազեան բառարանը մեկնում է այսպէս. «Աղցմի, Աղցմիք—եաց, գ. այսինքն Յաղուհացսն մի ասեր։ Այն են չարականք ի կարգի հարցիցն աղուհացից՝ աւելեալք և պահեալք ի պէտս միջոցի ապայից և այլն»։

ոտանաւոր ընծայականից կամ «Ուղերձից», որ գրուած է այդ գրուածքի սկզբում, յառաջաբանից առաջ.—

«Որում Խորէն հանապազ
Լարակտուր և քնարին
Վարդենեաց ոչինչ նիազ
Գողտրիկ անդրադարձութիւն»։

Իսկ որ «Աղցմիք»-ը գրուած է Պետերբուրգում, երբ Նալբանդեանցն առանձնացած էր այնտեղ,—այդ էլ երևում է այն հանգամանքից, որ, նախ, Խորէնի Վարդենիքը լոյս է ընծայուել 1863 թուին, ուրեմն և, Նալբանդեանցի առանձնացած կամ առանձնութեան մէջ եղած միջոցում, երկրորդ, նա Պետերբուրգից դուրս գալուց յետոյ, իւր հիւանդութեան ստստկանալու պատճառով, բացի նամակներից, այլ ևս ոչինչ չի գրել։

«Աղցմիք»-ը Նալբանդեանցի մինչև վերջին ժամանակները կորած համարուած երկերից մէկն է. դորա մասին մենք մինչև վերջերս, բացի մի քանի հատ ու կտոր տեղեկութիւններից, ոչինչ չգիտէինք։ Մենք գիտէինք այն էլ միայն Ղազարոս Աղայեանցի «իմ կեանքի գլխաւոր դէպքերը» գրուածքից, որ դուրս եղաւ «Մուրճ» ամսագրի 1893 թուականի համարներում, թէ «Աղցմիք»-ը գրաբառ բանաստեղծութիւնների մի հաւաքածու է եղել, որի մէջ նշանաւոր տեղ է բռնելիս եղել «Արկածք Ադամայ» խորագրով քերթուածը, որ և գլխէգլուխ բերան արած, սովորութիւն է ունեցել այստեղ ու այնտեղ արտասանել Մ. Բուդաղեանցը։ Գիտէինք նոյնպէս, դարձեալ Աղայեանցի նոյն գրուածքից, թէ «Արկածք»-ը հրաշալի գրաբառով է գրուած եղել և թէ նորա մէջ նկարագրուած է եղել բնականի կռիւն անբնականի հետ —Ադամը կռուելիս է եղել հրեշտակի հետ, որ չի թոյլ տալիս եղել նորան սիրելու Եւային։ Հրաշալի է եղել նամանաւանդ սիրահարուած Ադամի և Եւայի նկարագրութիւնը։

Սորանից երկու տարի առաջ, 1900 թուին, մեզ յաջողեց, վերջապէս, մի օրինակ այդ գրուածքից ստանալ մեր Հաշտարխանցի բարեկամ պ. Մկրտիչ Պապովից, որ իւր հերթով ընդօրինակել է դորան Հաշտար-

խանցի Եաղուբեան Տէր Յարութիւն քահանայի ձեռքում գտնուած օրինակից։ Մեր բարեկամի կարծիքով, տէր-Յարութիւնի ձեռքին եղած «Աղցմիք»-ի օրինակը, նայելով ձեռագրի հանգամանքներին, պէտք է որ հէնց հանգուցեալ Նալբանդեանցի իսկական ձեռագիրը լինի, թէև իւր, հեղինակի անունը և ազգանունը գրութեան թուականի հետ միասին քերուած, ջնջուած է ձեռագրի վերայից։ (26)

«Աղցմիք»-ի մեր ընդօրինակութիւնը բաղկացած է երեք մասից՝ վերոյիշեալ համառօտ ոտանաւոր «Ուղերձից», մի կարճ յառաջաբանից և բուն գրուածքից, որ իւր հերթով բաղկացած է 12 մանր բանաստեղծութիւններից և մի մեծ քերթուածից-պոէմայից։ Մանր բանաստեղծութիւնների ցանկը հետևեալն է.

Ա. Առաւօտուց.
Բ. Անցք.
Գ. Հրեշտակն աղօթից.
Դ. Տեղի տան տխրութիւնք.
Ե. Օրհնեալ լիցիս, քո՛յր.
Զ. Մոգպաշտէն յաղէ.
Է. Ոչ հանից արտաքս.
Ը. Հիմէն, ո՛վ կոյս.
Թ. Այս է հանգիստ իմ.
Ժ. Քերօղն-քերթող։
ԺԱ. Ցիշեա զիս.
ԺԲ. ԿիկոռիկՕՕՕ

---

26) Աղցմիքի մեր ընդօրինակութիւնը, բացի Աղցմիքից, ունի իւր մէջ և «Մամիկոնեան Մեծ Վահանի պատասխանը» և «Ցիշենք» Հիւսիս լրագրի դէմ։ Տետրակի առաջին թերթի առաջին երեսի վերայ գրուած է. «Գրուածք (ազգանունը քերած) Ս. Պ. Բուրգ. գործ հանգուցեալ Միքայէլ Նալբանդեանցի բանտարկութեան մէջ ընդէմ Վարդենիքի անուամբ գրքոյկին Խորէնի Գալֆայեան Թէոդոսիա»։ Երկրորդ թերթի առաջին երեսին գրուած է. վերը՝ «Աղցմիք». իսկ տակը—Վոլտէրի հետևեալ խօսքերը. «Nos prêtres ne sont point ce qu'en vain peuple pense, Notre crédulité fait toute leur science». Դոյն թերթի երկրորդ երեսին գրուած է Ժան-Ժակ Ռուսսոյի (Confession) հետևեալ խօսքերը «Le veux montrer à mes semblables un homme dans toute la vérité de la nature». Երրորդ թերթի առաջին երեսին գրուած է. վերը՝ «Ուղերձ», տակը—քառատող ընծայականը «Compte rendu!» խորագրով։ Եւ, վերջապէս, «Առ ընթերցանելիս» վերնագրով յառաջաբանի վերը

Իսկ քերթուածը կրում է «Արկածք նախահօրն» խորագիրը, բաղկացած է 340 տողից և բաժանւում է երկու մասի՝ Ա և Բ։

Դոքա, այդ թէ մանր բանաստեղծութիւնները և թէ քերթուածը բոլորն էլ, բացի մի երկուսից, պատկանում են քնարերգական բանաստեղծութեան այն ճիւղին, որ երգում է երկու սիրող սրտի սիրային յարաբերութիւնը, որ նկարագրում է կանացի գեղեցկութիւնը բնութեան հրաշալիքների հետ միասին։ Սիրահարական մասն այդ գրուածքի մէջ այնքան զօրեղ և աչքի ընկնելու տեղ է բռնում, որ շատ տեղ դա, կարելի է ասել, մոռնում է սիրահարական երգերի էրոտիքական տեսակին։ Թէև այդ գրուածքի ամեն մի կտորից, ամեն մի երգից փչում է այն հոտը, ստացուում է այն համը, որ յատուկ է Նալբանդեանցի գրուածներին, թէ և նորա ամեն մի մասի մէջ էլ երևում է մտքի այն սրութիւնը, այն ոգևորութիւնը, այն հումորը, այն ընթերցողի սիրտն իւր հետ կապելու կաշկանդելու յատկութիւնը, որ նորա գրական մեծ քանքարի յատկանիշն է, թէև, վերջապէս, դա իւր ամբողջութեամբ էլ իբրև գրական գործ մի արժանաւոր բան է, բայց դորա մէջ առանձնապէս արժանի է ուշադրութեան «Արկածք նախահօրն»քերթուածը, որ մի ամփոփ զուտ բանաստեղծական գործ է։ Նալբանդեանցը, ինչպէս յայտնի է, իւր գրական գործունէութեան ընթացքում բաւականաչափ ոտանաւոր բանաստեղծութիւններ է յօրինել, բայց դոցա մէջ շատ քչերը կան, որ յաջողել են, որ իսկական բանաստեղծութիւն են։ Այդ նորագիւտ «Արկածք»-ը գալիս է այժմ աւելացնելու հանգուցեալի յաջողած սակաւաթիւ բանաստեղծութիւնների թիւը մի ընտիր բանաստեղծական կտորով. ափսոս միայն, որ դա, գրաբար լեզուով գրուած լինելու պատճառով, ժո-

---

գրուած է Ժան Ժակ Ռուսսոյի Nouv. Heloise-ից առած խօսքերը—«Je ne veux pas passer pour meilleur que je ne suis» և Բեռանժէի—«Non, mes amis, non, je ne veux rien êtrede mon berceau près de bénir la paille. En me créant, Dieu m'a dit ne sois rien»։

զովուրդը չի կարող շահուել դորանից։

«Արկածք»-ը, ճիշդ որ, ներկայացնում է մեզ բնականի մաքառումն անբնականի հետ, բնական հակումների, զգացումների մրցումը վերացականի, խորհրդաւորի հետ և առաջինի յաղթանակը վերջինի վերայ։ Դոյն իսկ գաղափարը, որ Նալբանդեանցը մանրամասնաբար և ընդարձակօրէն մշակել, զարգացրել ու արտայայտել է Արկածքի մէջ, նա իւր վերոյիշեալ մանր բանաստեղծութիւնների մէջ էլ գլխաւոր հիմք և մի էական մոտիւ է դարձրել։ Ամեն տեղ առաւելութիւն է տրուած բնութեան գեղեցկութէան, սիրող սրտերի միմեանց հպելու բնականութեան, ամեն տեղ զոհ է մատուցուած, դրուատիք է հիւսուած սիրող սրտերի սիրային յարաբերութեան, որ աղբիւր է կենդանութեան, որ մարդկութեան անսպառ և յարատև գոյութեան միակ առհաւատչեան և կեանքի ու կենդանութեան անընդհատ յարատևելու միակ գրաւականն է։ Թող լռէ բարոյախօսը, որ կկամենայ իւր բարոյախօսական կեղծ ու պատիր խրատներով պատուար կանգնեցնել մարդկութեան այդ ամենաբնական հակումների դէմ. թող լռէ «անսէր անկըրօնը», որ ինքը սէր չունենալով, կամենում է, քարոզում է, որ ուրիշները ևս չունենան։ Մարդկութեան սէրն Աստուած ինքն է օրհնել և սրբագործել, ստեղծելով նորան այնպէս, ինչպէս որ նա կայ, ուստի և մարդը, որ մի չնչին որդն է Բարձրեալի վեհութեան առաջ, չպիտի ժպրհի արգելք լինելու իւր նմանների մէջ գործող այդ բնական, այդ աստուածադիր օրէնքին։

Այդ հանգամանքի վերայ է ակնարկում Նալբանդեանցը, երբ նա նկարագրում է իւր «Առաւօտուց» բանաստեղծութեան մէջ գեղեցիկ կոյսին, որ առաւօտեան կանուխ քնից զարթնելով, իջնում է բուրաստանը և թիթեռնիկի նման ծաղկէ ծաղիկ թռչելով, ծաղիկ է ժողովում, փունջ է կապում, թրջելով իւր փափուկ մատերը վաղորդեան ցօղի մէջ.—

«Զի՞ գեղեցիկ,
Զի ընդառաջ յայգորել
Բերի յուշիկ,
Եւ զվարդունս համբուրել
Սիրատոչոր
Եւ սրտացեալ հրեշտակ,
Եւ ի բոսոր
Վառի կուսին պերճ դիտակ։

Համբոյրք խաղան...
Եւ ի վանդակս կրծոց
Սիրտք թռչռան
Բիւր երանի արդարոց.
Վճիտ ի սէր
Զոր ցանգ և գիր պատուիրէ,
Հրեշտակն մեր
Սիրէ զկոյսն ի սրտէ։
Եւ ի ծաղկանց
Համասպրից թոյր ի թոյր,
Քնքուշ մատանց
Կազմեալ պսակ բազմաբիւր

Սրտացելոյն
Վտռեն զճակատ և հնչէ
Եղբօրորդւոյն
Քնար ւ՚աղաւնեակն զի մնչէ..
Եւ ի թաւուտս
Սաղարթախիտս պարտիզկան
Ընդ առաւօտս.
Կանխեն ամոլք ՝միաբան.
«Ո պատմեսցէ
Զորոց սիրոյն հանեն ձօն»...
—Մի՛ մեղիցէ
Նոցա՝ անսէրն անկրօն»։

Այդ հանգամանքի վերայ է ակնարկում նա, երբ իւր միւս «Տեղի տան տխրութիւնք» բանաստեղծութեան մէջ նկարագրելով երիտասարդի և կոյսի գրկախառնութիւնը վարդենու մօտ, ցօղոտ դալարիների մէջ, հիացած աւելացնում է.—

«Քանի՞ վսեմ, զի՞ վայելուչ, մեծ ես, Տէր,
Սիրոյդ ի շունչ որ զտիեզերս առլցեր.
Եւ ժպիրհիցի ստգիւտ դնել ի գոծ քոյ
Որդն չնչին, բանիւ անդուռն բերանոյ»։
Յորդան կարմիր ի շրթանց լարս կուսանին
Ժպիտ փայլի, յայտս գոհար վարդք վառին,
Հաւատարիմ մնայ սակայն լռութեան...
Ես ի՞մ անդէն.—եթէ ոչ սուրբ բնութեան։

Նոյն բնականութեան և բնական օրէնքի յաղթութեան վերայ է, վերջապէս, ակնարկում նա, երբ իւր «կիկոռիկոօ» ոտանաւորի մէջ զաւէշտօրէն նկարագրում է որձակի և մարիի սիրային յարաբերութիւնը թուխս գալու նպատակով.—

«Կուտ, կուտ, կուտ, կուտ,
կուտ, կուտ»։
Մարին կուտ կուտայ...
—Ծի՞փ, ծի՞փ, ծի՞փ, ծի՞փ
Ծիփծիփեմ նմա...
Մարին գայ և գգուի

Սէր եռանդն, յիս բորբոքի։
«Գողացան զձուս,
Ո՞ տայր ինձ որդիս,
Մինչ ես գամ ի թուխս՝
Ցիս, որձակ, քա՛ջ, յիս».
Ասէ, և կուտկուտայ

Եւ անդէն իսկ գառանայ։ «Կուտ, կուտ. կուտ, կուտ,
Mary, գէթ զերկուս կուղղ»,
Ունիմ ես զձուս, Մարին կուտկուտայ
Իցեն քեզ հերիք —Յուռթի լիցի ուղխ.
Իմ այս երկուորիք. Արբեալ ես ցնա։
«O, yes, please, vory qvod!» Եւ ի ձայն բարձր ազդոյ
Եւ ճեղն լեալ սորամուտ։ Հնչեմ զիմ կիկոռիկո։

Սակայն, ճիշդ որ, «Արկածք նախահօրն», ինչպէս ասում է, Աղայեանցը՝ մի սիրուն, մի գրաւիչ բան է— բովանդակութիւնը հետաքրքրական, գործողութեան տեղի և հանգամանքների պատկերացումը ճիշտ — նկարագրութիւնը վառ, առաջին մարդու խօսակցութիւնը, կգացածը, մտածմունքը բնական։ Նստած է Ադամ կենաց ծառի տակ, սրովբէներով շրջապատուած, և տխուր ու տրտում է նորա երեսը։ «Եւ ինչու համար, ասում է, ես ստեղծուեցայ, ինչու համար է այս փափկութեան դրախտը, ինչու ես բոլոր արարածների վերայ տէր և իշխան կարգուեցայ, ինձ ինչ պէտք են եթերի լուսանորոգ աստղները, ինչու համար են քերովբէների բանակը և երկնային զօրութիւնները, քանի որ այն փոքրիկ նաւակը, որ իմ սրտիս մայկոյկն է, անոյշ սիւք չունենալու պատճառով չի կարող առագաստել»։ Ասում է, և նորա աչքերը ցօղում են մարգարիտ. այդ առաջին արցունքն էր, որ թափում էր մարդն այս տրտմութեան հովտում։ Եւ սերովբէն որ կանգնած էր նորա մօտ, իւր թևով սրբելով նորա աչքերի ցողը և գգուելով ու սաւառնելով նորա չորս կողմը, եղեմայ բարբառով խօսում է նախահօր հետ։ «Մխիթարուիր, տէր Ադամ, ասում է նա, որ քո սրտին չը-տրուեց այն շարժական սիւքը, որի մասին խօսում ես, այդ միայն նորա համար էր, որ եթէ Տէրն այն բոցն ու կրակը փչէր, լցնէր քո սիրտը, դու այնուհետև իսպառ կկորցնէիր հոգուդ անդորրութիւնը. այն ժամանակ դու ում վերայ կթափէիր այն բոցն ու կրակի այրող շանթերը և դու կկարողանայիր արդեօք հանդուրժել, դիմանալ նորա ցոլմունքին, և ո՞վ կհոգար, կխնամէր քեզ, ո՞րն է այն էակը, որ ընդունակ լինէր ժողովել քո

կայծակների ամպրոպը, շանթն ու փայլակը»։ «Եւ ինչու ունայն պատճառներ ես առաջ բերում, պատասխանում է Սերովբէին նախահայրը, դու բնաւ իսկ անզգայ ես համարում մարդուն. մի՞թէ Աստուծոյ ձեռքով ստեղծուած տիեզերքը, որի մէջ դրուեցայ ես, իմ աչքիս առաջը չէ, մի՞թէ ինքն Եհովան չէ, որ ամեն օր արշալուսին երթևեկելով այցելում ու ողջունում է ինձ, և մի՞թէ նա ինձ բաւական չէ։ Ես զարմանում եմ քո անհանճար խօսքերիդ վերայ, Սերովբէ. քո կարծիքով, մարդու սիրտը դէպի ամեն մի վսեմ բան խսպառ զուրկ է. մի՞թէ ես չեմ կարող այդ սիրով սիրել Տիրոջը կամ Նորա անվեհեր արարածներին, Նորա ձեռքի գործերը՝ արևը, լուսինը, աստղները, երեկոն, առաւօտը, զով, խաղաղ գիշերները, ցերեկուայ պայծառ լոյսը, չե՞մ կարող սիրել բոյս, տունկ, գեղանի և քնքոյշ ծաղիկը, թփի վերայ ճոխ յեռուած վարդերը, գարնան շուշանը. չեմ կարող սիրել կենդանիների ուրախ երամները, սոխակի անոյշ երգը, որով ուրախանում է համայն բնութիւնը։ Դու մի առաջ տուր ինձ սէր, լցրո՛ւ իմ սրտի ամայութիւնը, յետոյ դու կտեսնես կսայթաքի՞ բնաւ մարդու բնութիւնը։ Ես իմ սիրտը վայրաքաշ կրքերի չեմ ծառայեցնիլ. այդ բանի համար անսուտ խոստումն եմ տալիս»։ «Քաւ լիցի, տէր իմ Ադամ, կրկնում է Սերովբէն, դու բնաւ չպէտք է շնչես այն բոցեղէն օդը, որին չի՛ կարող դիմանալ մարդը»։ Հեգնելով պատասխանում է Ադամ Սերովբէին, և Նորա դէմքի վերայ մի վայրկեան խաղում է դժպիհի ժպիտը։ «Նա, որ ինքը մարդ չէ հողեղէն, ասում է նա, ի՞նչպէս կարող է այդպէս ճանաչել մարդուս բնութիւնը, ո՞րտեղից է Սերովբէին այդ գիտութիւնը»։ Սերովբէն յօժարութեամբ համբերում էր մարդու թերութիւններին, որովհետև Արարչից պատուէր ունէր Նորա կամքին հնազանդելու։ Այդ պատճառով էլ ամենևին չվիրաւորուելով Ադամի դժպհելուց, սաւառնելով, դարձեալ թևարկում է Նորա չորս կողմը, ժպտում է և գգուում է։ Բայց որովհետև Ադամը կատակով չէր, որ վշտանում էր սէր չունենալուց, այդ պատճառով էլ սերովբէն հանգիստ քուն է իջեցնում Նորա աչքերին,

և Ադամը զեփիւռի մեղմ հովանուտակ ննջում, քնում է, իսկ նորա չորս կողմը դրախտը հնչում է սոխակի քաղցր դայլայլիկով։

Սերովբէն շարժելով թևերը, թռչում, սլանում է աստղների կաճառների միջից, սլտնում է հրեղէն երկնակամարի վերայով և բարձրանում, հասնում է մինչև Արարչի Աթոռի ասկմանները, ծխում է մարդու արտասունքը Տիրոջ սեղանի վերայ և հրաման է ստանում տալ մարդուն նորա ցանկացածը։ Վեցթևեանը ծխած սեղանի վերայից ունելիքով առնում է սիրոյ բոցավառ կայծակը և իջնելով երկիր, ճենճերում է Ադամի անփորձ սիրտն, որ քաղցր քուն էր վայելում տակաւին կենաց ծառի ստուերի տակ։ Եւ այդ սիրոյ բոցավառ կրակի զօրութիւնն այնքան մեծ, այնքան զօրեղ է լինում, որ նախաստեղծին շրջապատող կենդանիների երամակները մինչև անգամ միայն տեսնելով այդ կայծակը, ինքեանք ևս մասնակից են լինում նորան, և զոյգ զոյգ լինելով, ցրուում, թագչում են մենաւոր վայրերում։ «Այժմ շտապիր, ասում է Սերովբէն քնի մէջ ընկղմուած Ադամին, իւր գործը կատարելուց յետոյ, աշխատիր հմտօրէն նաւելու, որովհետև տիեզերասաստ հուրն ու բոցը լցրեց քո սրտի առագաստը. տեսնենք, այժմ կազատուի՞ք քո մակուկիկը»։

Ադամ սէր զգալուց յետոյ, կամենում է ունենալ և մի ընկեր, և Տէրը ստեղծում է նորա համար կնոջը, միայն որ նա սիրէ նորան, այդ կնոջը վերին սիրով, ինչպէս որ խոստացել էր, և իւր սիրտն երկրային մեղկ ախտին չծառայեցնէ։ Եւ Ադամը դարձեալ կրկնում է իւր ուխտը՝ սիրել, վերին սիրով միայն սիրել Աստուած և նորա արարածներին։ Սակայն Սերովբէն, որ գիտէր մարդուս սրտի կազմուածքը, զարհուրելով նորա տուած խոստումից, ակնարկում է Ադամին ներումն խնդրելու իւր տուած երդման համար, բայց նկատելով, որ նա դժկամակում է, թողնում, հեռանում է նորանից և բերում է նորա մօտ Եւային։

Եւ սկսուում է այնուհետև նախահօր մէջ մի զօրեղ մաքառումն իւր տուած խօսքի և մարդկային բնութեան հակումների մէջ։ Լուսեղէն հարսնածուի բերած

Եւան գեղեցիկ էր, իսկ մարդկային բնութիւնը թոյլ։ Հասկանալի է, ուրեմն, թէ այդ մաքառման մէջ, վերջապէս, ո՞վ պիտի պարտուէր և ի՞նչը պէտք է յաղթահարուէր։ Առաջին մարդու զօրեղ կամքը խորտակւում է կնոջ գեղեցկութեան հրաշալիքների առաջ, և կատարում է բնութեան, սիրոյ առաջին պատարագը։ Մարդկութիւնն ի դէմս Ադամ-Եւայի արտաքսուում է փափկութեան դրախտից և դատապարտուում է ապրելու փշերի ու տանջանքների աշխարհում, որտեղ մինչև ցայսօր էլ դեռ, թէև Մեսիան արդէն եկել է, Եւան ծնում է ցաւով և Ադամն իւր երեսի քրտինքով վաստակում է իւր աւուր պարէնը։

Գեղեցիկ է նամանաւանդ այդ քերթուածի այն կտորը, որի մէջ հեղինակը նկարագրում է հրեշտակի երկնքից նախահօրը սիրոյ կրակն իջեցնելու հանգամանքը.—

Թևապարեալ սերովբէն
'Նդ աստեղոյ կաճառս լանայր
Եւ ընդ կամարն հրեղէն
Անցեալ ճեպէր համբառնայր,
Մինչ յաթոռոցն ի սահման
Ի քերուբից պարառեալ,
Արարչին կալ յանդիման,
Եւ Տէր՝ յԱթոռն վերօրհնեալ։
Վեցթևանն անդ երկոքումբք
Քօղեալ զդէմս պակուցեալ,
Զոտսն՝ ներքին այլ թևովք
Իսկ միջնովքն թռուցեալ,
Ծխէ զմարդոյն արտասուս
Տեառն ի հոտ անուշից,
Հնչեն երկինք յալելուս
Համակ զօրութեանց երկնից։
Եւ հոտոտի Տէր ի խունկ,
Զոր արկանէր սերովբէն.
Բանին ականջք զգայունք
'Նդ երկնից մաղթանս համօրէն
Եւ աջն՝ հաւակ էութեանց
Ի վայր յերկիր կարկառի

Եւ բարեխօսք ի շրթանց,
Զայս գէթ լսեն, թէ «տացի»
«Սուրբ, սուրբ, սուրբ ես,
Տէր, Որէն,
Լի են երկինք փառօք քովք»,
Նուագս յօրինէ Սերովբէն,
Եւ մատուցեալ, ունելեօք
Առնու զկայծակն բոցավառ
Ի սեղանոյն ծխելոյ.
Եւ ի յերկիր ի խոնարհ
Անդրէն լինի փոյթ ուղղոյ։
Ոչինչ գիտէ մերս Ադամ,
Զի ի քուն կայ տակաւին,
Թող զ'ի թօթափել ական
Յառաջագրեալքս կատարին.
Տակաւ զնովաւ կենաց ծառ՝
Արկեալ ի զով զիւր ստուեր,
Ննչոյն դիւրէր տուրևառ
Եւ սերովբէն հասանէր։

Եւ առ Ադամ մատուցեալ
Նստի յահեկէ կուսէ.
Եւ զարտաշէկն փայլակեալ
Ի նա մերձեցուցանէ,
Ծխի մարմնոյն փափուկ մորթ
Եւ ճենճերի սիրտ անփորձ,
Ծառանայ ծուխ ընդ ուղղորդ
Յերկինս ի վեր խառն ընդ բոց։

Որ զԱդամաւն կենդանեաց
Ընդ սոսկ տեսիլ կայծականն
Շրտուցեալ երամակաց,
Առնուն, ասեն, սիրոյ զմասն.
Եւ զկծեալ զոյգ ի զոյգ
Ամոլք խուսեն խայտուցեալ
Ի մենաւոր վայրս անփոյթ
Առ ինչ, — այդ չէ ասացեալ։

Շատ սիրուն է և Ադամ-Եւայի սիրահարութեան և բնութեան յաղթութեան նկարագրութիւնը.—

Թէ ի թև հէգ կուսութիւնք
Սուրան գլին տագնապաւ
Եւ լուր լինի դատակնիք
«Անմեղութիւն, երթ բարեաւ»։
—Իսկ զինչ հարսն, իսկ զինչ քոյր.
«Ո՛հ, ցնցեին մկանունք,
Եւ խլրտէր և գելոյր
Եւ շողային վառ աչկունք.
Մերթ ի գիրկս կուսական
Ձնշէր, պրկէր, մերթ թողոյր,
Մերթ շօշափէր նա զԱդամ,
Մերթ հիանայր, մերթ ուռնոյր.
Եւ թռչէին ի սրտէն
Թառանչք հեշտինք, և հոսէր

Քիրտն ընդ կուրծս գետորէն...
— Իսկ Ադա՞մ, — «ինչ ո՛չ կասէր.
Էր երբեմն զի համբոյր
Կնքէր կուսին ի շրթունս,
Մերթ հատկլէր, զի ծփիւր,
Ձնշեալզվարդագեղ պտկունս՝
Ուռուցելոց ըստ նռանց
Ստեանց, 'ի փայլ 'ի գոյն ձեան,
Կրծովք իւրովք լուսազգեաց
Եւ բաբէ երանութեան.
Զի տարուբերս անդ, մարմաջ
Հեշտին՝ անօթն ընտրութեան
Զգայ... 'ւ 'ի մեղմ յոյժ աւաղ
Վարդի արհին բալասան...
Ամէն, եղև պատարագս՝

Բնութեան ի հոտ անուշից, Ցարդ իսկ ցաւօք ծնանի,
Եւ ամոլք գտան արտաքս Թէև եկեալ Մեսիայ,
Ըստ գրգարանն հեշտալից, — Իսկ Ադամ, — «Ցոկաւ
Ցաշխարհ փշոց, ուր Եւայ քրտնի»։

Բայց հատուածներով դժուար է գաղափար տալ կամ կազմել այդ քերթուածի գեղեցկութեան մասին։ Պէտք է կարդալ դորան ամբողջովին. դա գեղեցիկ է իւր ամբողջութեամբ։

Մենք, որ այդ քերթուածն իւր ամբողջութեամբ կարդացինք ոչ թէ միայն երկիցս ու երիցս, այլ և ուսումնասիրեցինք դորա ամեն մի տողը, խոստովանում ենք որ հոգով և սրտով զգացինք այդ գեղեցկութիւնը։ Դորա հետ միասին մենք զգացինք մեր սրտում և մի ուրիշ բան, ոչ պակաս քաղցր և գեղեցիկ, քան թէ այն, որ մարդ զգում է մի նոր գեղարուեստական գրական երկ կարդալուց. մենք մտաբերեցինք ու վերանորոգեցինք մեր սրտում մի հին, անցած-գնացած քաղցրութիւն, համարձակապէս ասում ենք, մենք ստացանք այն համն ու հոտը, որ երբեմն ստացել էինք մի ուրիշ այդպիսի գրուածքից, աւելի հզօր գրչից արտադրուած, աւելի տաք սրտից բղխած. մենք յիշեցինք անմահ Միլտոնի «Կորուստ Դրախտին» [27])։ Այո՛, Նալբանդեանցի «Արկածք նախահօրն» նմանում է անգլիացի մեծ բանաստեղծի դրախտերգակին։ Մենք հեռու ենք այն մտքից, որ կարծենք, թէ Նալբանդեանցը գրական փոխարինութիւն է արել, ոչ. ամբողջ նիւթը մշակուած է ինքնուրոյն, ինքնատիպ եղանակով, առանց մի տող փոխ առնելու, առանց մի որև է բանաստեղծական պատկեր մուրալու։ Նմանողութիւնն ընդհանուր է. նման է պատմելու ձևը, նկարագրելու եղանակը, նիւթի մշակութեան հանգամանքը, գաղափարը, նիւթը։

---

[27]) Միլտոնի «Կորուստ Դրախտին» երկու անգամ է թարգմանուած հայերէն—առաջին անգամ արձակ թարգմանութեամբ և հեղինակի մասին կենսագրական տեղեկութեամբ 1824 թուին, երկրորդ անգամ—անյանգ ոտանաւորով 1861 թուին, Հ. Արսէն Կոմիտաս Բագրատունու ձեռքով։

Անկասկած է, որ Նալբանդեանցը կարդացել և ուսումնասիրել է Կորուստ Դրախտին և նորա ազդեցութեան ներքոյ յօրինել է իւր քերթուածը [28]։

Միլտոնի գրուածքը, ի հարկէ, մի մեծ ամբողջութիւն է, որի մէջ հրաշալի պարզութեամբ պատմուած է Արարչի սքանչելի ստեղծագործութիւնը—կեանքն ու մահը, լոյսն ու խաւարը, չարն ու բարին, մի խօսքով սկիզբն ու կատարածը իւր բոլոր մանրամասնութեամբ, նկարագրուած, յայտնուած է վիպասանօրէն, վառ պատկերներով ամենամեծ փիլիսոփայական գաղափարը, մարդու գոյութեան խորհուրդը, չարի և բարու մաքառումը և փրկութեան յոյսը։ Նալբանդեանցն այդ չի արել և չէր էլ կարող անել. այդ վեր էր նորա բանաստեղծական շնորհքից. դորա համար պէտք էր Միլտոնի հսկայական բանաստեղծական ձիրքը, քանքարը։ Նալբանդեանցը միայն առել է նիւթի մի մասը, մի փոքր կտորը, բայց ամենագլխաւորը, որ ծառայել է իբրև ատաղձ, սաղմ և Միլտոնի համար, որ այդ սաղմը զարգացնելով, հիւսել է նորա չորս կողմը իւր անմահ վիպասանութիւնը։

Ծննդոց գիրքը պատմում է աշխարհիս և բոլոր արարածների ստեղծագործութիւնը զրոյցի պարզութեամբ և միամտութեամբ. նա ի միջի այլոց, պատմում է և մարդու ստեղծագործութեան մասին, իբրև

---

[28]) Միլտոնի Ադամը խօսում է Ռափայէլի հետ, Նալբանդեանցինը—Սերովբէի հետ. Միլտոնի Ադամը սէր է խնդրում ուղղակի Արարչից, Նալբանդեանցինը—Սերովբէի միջնորդութեամբ. Միլտոնի Ադամը բնութեամբ թոյլ է, ուստի և Ռափայէլը Տիրոջ հրամանով խրատում ու համոզում է պինդ կեանալ և չենթարկուել չարի փորձութեան, Նալբանդեանցինը կարօտում է Սերովբէի մխիթարանքին ու խրատին զգոյշ կեանալու սիրոյ հրապոյրից. Միլտոնի Ռափայէլը վեցթևեան է, Նալբանդեանցինը—

«Վեցթևեանն անդ երկոքումբք
Քօղեալ զդէմսն պակուցեալ,
Զոտսն՝ ներքին այլ թևովք,
Իսկ միջնովքն թռուցեալ» և այլն և այլն։

պսակ բոլոր արարածների։ Երկնքի թագաւորը դնում է նախաստեղծ մարդուն փափկութեան դրախտի մէջ և տալով նորան օգնական-կին, պատուիրում է տէր լինել համայն արարածների, օգտուել նոցանից և միայն ու միայն զգուշանալ մի բանից՝ չուտել ծառ գիտութեան բարւոյ և չարի պտղից, որ մահ չմտնի մարդու կեանքի մէջ։ Նախաստեղծն իւր բնութեան յատուկ թուլութեամբ չի կարողանում կատարել Արարչի այդ պատուէրը, և անմեղութեան կապանքը քակուում, վայր է ընկնում նորա աչքերից և նա ճանաչում է չարն ու բարին, որի համար և նա արտաքսւում է դրախտից ու դատապարտւում է իւր քրտնքի աշխատանքով ապրելու, տքնելու։ Ահա այն ատաղձը, սաղմը, որից օգտուել են անգլիացի բանաստեղծը և մեր Նալբանդեանցը։

Միլտոնը հրաշակերտել է իւր քրիստոնէական վիպասանութիւնը, ըստ ամենայնի, հաւատարիմ մնալով ծննդոց գրքի պատմութեան և Աստուածաշնչի վերայ կրթուած իւր հայրենակիցների այն հայեացքներին, որ նոքա կազմել էին այդ նիւթի մասին։ Դորանից, այդ հանգամանքից է առաջ եկել այն վերացականութիւնը, որ երևում է «կորուստ դրախտին»-ի մէջ, այն այլաբանական բնաւորութիւնը, որ կրում են կամ ունին նորա հերոսները — Ադամը, Եւան, հրեշտակները, սատանաները և միւսները։ Դորանից է առաջ եկել և հեղինակի բանաստեղծական թռիչքների այն սահմանափակումը, որ աչքի է ընկնում այդ գրուածքում ու զարմացնում նորա բանաստեղծական երևակայութեան լայն թռիչքներին ընտել ընթերցողներին, մի հանգամանք, որից ազատ են եղել Հոմերոսը և Դանտէն, որոնց դիւցազներգութիւնների իրականութիւնը և ամեն մի սահմանափակումից ազատ լինելը կազմում է հէնց նոցա ամենամեծ գեղեցկութիւնն ու գրաւչականութիւնը։ Դորա փոխարէն Միլտոնի այդ գրուածքում հզօր է հովուերգական մասը. նուրբ վրձինով քաշուած է դրախտի գեղեցկութեան պատկերը, հնչիւն տողերով, քաղցր, սիրտ գրաւող լեզուով պատմուած է մարդկութեան առաջին զոյգի եդեմական սիրոյ երջանկութիւնը, նկարագրուած է նո-

ցտ անմեղութեան, սրբութեան օրերը նոցա շրջապատող բնութեան հրաշալիքների հետ միասին և նոցա վիշտն ու դառնութիւնը և դրախտից արտաքսուելու հանգամանքները։

Մի կատարեալ հրաշակերտ է նամանաւանդ առաջին երգը, որի մէջ բանաստեղծը նկարագրել է Արարչից պարտուած ու անդնդոց սանդարամետը գահավիժուած «սատանին», որ գոռոզացած ու ամբարտաւանացած իւր դոյն իսկ պարտութեամբ, հաւաքում, կազմում է իւր ամբողջ սատանայական զօրութիւնը և սպառնալիք է կարդում դժոխքի խորքից երկնքին։ Միլտոնի կորուստ դրախտին-ի հէնց այդ առաջին երգն է իւր մէջ ներկայացրած դիւականութեան գոռոզ պատկերով և բնաւորութեամբ, որ ծառայել է իբրև դեմոնականութեան սկզբնական աղբիւր անգլիացի միւս ոչ պակաս նշանաւոր բանաստեղծ Բայրոնին և բոլոր ռոմանտիքներին ընդհանրապէս։ Կորուստ դրախտին-ի ամենամեծ խորհուրդը պէտք է որոնել նորա երկնքի և դժոխքի մաքառման հրաշալի պատկերի մէջ. Միլտոնը կարողացել է ստեղծել սատանայի վեհագոյն պատկերը, որի ազատ լինելու անպարագրելի և անհուն ձգտումն ու ցանկութիւնը հասցրել է նորան մեծագոյն չարութեան-ապստամբելու Արարչից և մաքառելու նորա դէմ։ [29])

Նալբանդեանցը դոյն նիւթից մի մեծ վէպ չի գրել, մի ամբողջ դիւցազներգութիւն չի յօրինել, այլ միայն մի փոքրիկ վէպիկ, մի սիրուն վիպական քերթուած։ Նա առաջին զոյգի պատուիրանազանցութիւնն ու սիրային յարաբերութիւնն է նկարագրել, շեշտելով մարդկային բնաւորութեան թուլութեան, մարդու և կնոջ միմեանց սիրելու բնականութեան վերայ։ Եւ այդ բոլորը-ոչ վերացական, երևակայական պատկերներով, ինչպէս արել է Միլտոնը, այլ զուտ երկրային, իրական հանգամանքներով։ Նալբանդեանցի Ադամ և Եւան ոչ մի այլաբանութիւն չունին. նոքա մարդ են մարդկային բոլոր պակասութիւններով ու առաւելութիւններով.

---

[29]) Միլտոնի և նորա «կորուստ դրախտին»-ի մասին տես Энциклопедическій словарь Брокгауза, томъ XIX.

նոքա ապրում, զգում, և ուզում են միմեանց սիրել, մինչև իսկ նորա սերովբէներն էլ օժտուած են իրականութեան հանգամանքներով։ Այդ կողմից ու տեսակէտից Նալբանդեանցն իւր այդ գրուածքով աւելի նմանում է Հոմերոսին, Դանտէին և միւս միջնադարեան դիւցազներգական վէպերի հեղինակներին, քան թէ Միլտոնին։

Որ Ադամն ու Եւան պատժուել են իւրեանց պատուիրանազանցութեան համար, այդ հասկանալի է, որովհետև երկնային թագաւորը ստեղծելով և ամենամեծ բարիքները վայելելու տալով առաջին մարդուն, միայն մի բան էր պահանջել նորանից,— որ նա չուտէ բարւոյ և չարի գիտութեան պտղից, իսկ նա չէր կատարել այդ պատուէրը։ Բայց թէ ինչ էր այդ ծառ գիտութեան բարւոյ և չարին, որի պտուղը «բարի էր ի կերակուր և հաճոյ աչաց հայելոյ և գեղեցիկ ի տեսանել», կամ թէ ինչ վնաս կար այն բանում, որ մարդկութիւնը ճանաչէր իւր չարն ու բարին ու կարողանար զգուշանալ չարից և միշտ բարի գործել,— դոքա այնպիսի խնդիրներ են, որը լուծելու կամ մեկնելու համար մինչև ցայսօր գիտնականները շատ թանաք են սպառել, շատ գրիչ են կոտրել, բայց տակաւին չեն կարողացել վճռել։

Ս. գիրքն ու եկեղեցին, ասում են աստուածաբանները, ընդունում են կամքի ազատութիւնը, ուրեմն, մարդս ազատ էր. եթէ ուզենար, կարող էր նա չմեղանչել և պատուիրանազանց չգտնուել, և այն ժամանակ չէր վերանալ անմեղութիւնը, սրբութիւնը, չէր առաջ գալ չարի գոյութեան գիտակցութիւնը և մահն էլ չէր մտնիլ մարդկութեան կեանքի մէջ։ Բարի է, հակաճառում են հակառակորդները, այն ժամանակ թող չստեղծուէր, գոյութիւն չունենար չարը, իսկ եթէ սատանայի գոյութիւնն անհրաժեշտ էր մարդուս փորձելու համար, թող մարդն էլ ստեղծուէր այնպիսի էութեամբ, որ բնութեան թուլութիւն չունենար, որ չմատնուէր, չենթարկուէր փորձանքի։ Եւ յետոյ, ինչու մի զոյգի պատուիրանազանցութեան համար ամբողջ մարդկութիւնը պիտի դատապարտուէր մահուան, մի-

թէ ծնողների կատարած յանցանքն անցնում է նոցա սերնդի վերայ և որդիքը պատասխանատու են իւրեանց ծնողների արածների համար, և այլն և այլն։ [30])

Ոչ ոք սակայն չի վիճում, որ մարդկութեան տրուած է հայր ու մայր լինելու յատկութիւնը, որից կախեալ է ծննդաբերութիւնը և մարդկային ցեղի աճելութիւնը։ «Աճեցէք և բազմացարուք»-ահա այն խօսքերը, որով Ստեղծողը մի անգամ ընդ միշտ սրբագործ

---

[30]) Կամքի ազատութեան կամ մարդուս անձնիշխանութեան և չարի ու սատանայի մասին շատ հետաքրքրական են Եղնիկ Կողբացու դատողութիւնները։ Մարդուս անձնիշխան լինելու մասին, օրինակի համար, նա մի տեղ ասում է. «Նա և զմարդոյ յիրաւի, ասեմք, կրել պատուհաս ընդ որոց գործիցէ քանզի կամաւ երթայ յուսումն այնպիսի իրաց, յորոց յորժամ և կամիցի՝ և մեկնել կարող է. քանզի և կամելոյն և չկամելոյն ունի իշխանութիւն, զորոյ զհետ երթայ և կարելն զոր ինչ կամիցի առնել»։ Սատանայի մասին նա ասում է. «Զի զսատանայ մեք ոչ յԱստուծոյ սատանայ եղեալ գիտեմք. այլ զսատան անուն՝ վասն խոտորելոյն էառ իւր անուն. քանզի սատանայ յԲրայեցւոց և Ասորւոց լեզուէ խոտորեալ թարգմանի. այլ զօրութիւն իմն զգայուն լաւութեանց հաստատեցաւ յԱստուծոյ, և ի թշնամութենէ ընդ մարդոյն ունելոյ՝ իւրն կամօք եղև բանսարկու. թողեալ զԱստուծոյ հպատակութիւն՝ սկսաւ անսաստել, և հակառակ կալ Աստուծոյ հրամանացն ուսուցանել մարդկան, և իրրև զապստամբ յետս կացեալ թիւրեցաւ յԱստուծոյ։ Եւ վկայ է բանիս աստուածական բարբառն, որ ապստամբ վիշապն կոչէ զնա՝ եթէ հրամանաւ ոպան զապստամբ վիշապն։ Եւ արդարև իսկ բանն Աստուած սպան զսատանայ, այնու զի կոխելոյն զնա ետ իշխանութիւն»։ Չարի մասին ընդհանրապէս նա ասում է. «Եւ արդ սկիզբն չարեաց զնախանձն ասեմք, և զնախանձն յառաւել զմարդն պատուելոյ, և զչարիսն յանհնազանդութենէն. Զի Աստուած այնպէս առաւել զմարդն պատուեաց, և նորա անսաստեալ՝ զընկէց զպատուիրանն։ Ուստի զամենայն ինչ որ լինի չար, ոչ բնութեամբ չար գիտեմք, այլ զի առանց կամացն Աստուծոյ գործին իրք ինչ՝ լինին չար»։ Տես Եղնկայ վարդապետի Կողբացւոյ «Եղծ աղանդոց հեթանոսացն»։

ման և վաւերացման անքակտելի կնիք է դրել մարդկային սիրոյ և զուգաւորութեան վերայ։ Նալբանդեանցը հէնց այդպէս էլ հասկացել է առաջին զոյգի ստեղծուելու և գոյութեան խորհուրդը և իւր Ադամին դուրս է բերել կատարեալ մարդ, բայց բոլոր մարդկային թուլութիւններով։ Նալբանդեանցի Ադամը պատրաստ է և ուխտել է իսկ կատարելու Ստեղծողի պատուէրը, ուստի և խնդրում է սէր ոչ թէ նորան վայրաքարշ կրքերի ծառայեցնելու համար, այլ նորանով սիրելու Ստեղծողին և նորա արարածները, բայց նա թոյլ է իբրև մարդ, ուստի և չի կարողանում չմերձենալ արգելուած ծառին, որի պտուղներն այնքան ակնահաճոյ էին երևում։ Ադամի, իբրև մարդու, այդ թուլութիւնը գիտէ և Նալբանդեանցի սերովբէն, որ համոզում է նորան այդ բոցն ու կրակը չուզենալ, որովհետև նա թոյլ է, նա չի կարող դիմանալ սիրոյ կայծակներին, և, որ գլխաւորն, է նա համոզում է նորան չուխտել, երդում չտալ՝ այլ ներումն խնդրել Արարչից... Նալբանդեանցի Ադամը զուրկ է երևում և փրկութեան լոյսից, այն լոյսից, որ իբրև փարոսի առաջնորդող լոյս անցնում է Միլտոնի ամբողջ գրուածքի միջից և կազդուրիչ ու սփոփիչ տպաւորութիւն է թողնում ընթերցողի վերայ։

Ըստ գրգարանն հեշտալից,
Յաշխարհ փշոց, ուր Եւայ
Յարդ իսկ ցաւօք ծնանի,
Թէև եկեալ Միսիայ,
—Իսկ Ադամ.—տակաւ քրտնի»։

Ակներև է, որ Նալբանդեանցը պատկանել է հակառակորդների բանակին և աստուաշնչական նիւթի վերայ նայել է բոլորովին ուրիշ, ներհակ տեսակէտից, քան թէ Միլտոնը։

Գլուխ Ժ.

Ի՞նչ խորհուրդ ունի «Ադամիք»-ը և ի՞նչ կապ Խորէնի «Վարդենիք»-ի հետ։ Ադամիքը, ինչպէս ասուած է վերոյիշեալ ընծայականի մէջ, Վարդենիքի մի անդրա-

դարձութիւնն է։ Հանգուցեալ Նալբանդեանցը կարդալով իւր միայնութեան մէջ Խորէնի այդ գրուածքը, արձագանգ է տուել, պատասխանել է դորան մի ուրիշ գրուածքով, որ, ըստ արտաքին երևոյթին, մի բոլորովին անկախ գրուածք է, բայց, ըստ ներքին բովանդակութեան, մի կծու քննադատութիւն «քերող-քերթող» կոչուած Խորէնի դէմ ընդհանրապէս և նորա Վարդենիքի դէմ մասնաւորապէս։

Յայտնի է, որ Նալբանդեանցն ընդհանրապէս չէր համակրում Մխիթարեանց. նա գնահատելով Սեբաստացու և նորա աշակերտների հայոց հին գրականութեան և լեզուի մշակութեան մատուցած ծառայութիւնները, նոյն ժամանակ չէր ընդունում նոցա հայերի մէջ եւրոպական լուսաւորութիւն տարածելու, հայերի և եւրոպացւոց մէջ միջնորդ լինելու ձգտումներն ու ջանքերը. նա ապարդիւն և վնասակար էր համարում նոցա մանկավարժական գործունէութիւնը և ատելութեամբ էր վերաբերւում նոցա քարոզութեան կամ առաքելութեան գործին։ Հանգուցեալ հրապարակախօսի կարծիքով, կաթոլիկութիւնն իբրև մի առանձին դաւանութիւն, իբրև մի առանձին եկեղեցի իսկապէս գոյութիւն էլ չունի. կայ միայն պապական եկեղեցի և պապական դաւանութիւն, իսկ կաթոլիկութիւնը միայն մի դիմակ է, որի տակ գործում է պապականութիւնը։ Դա, պապականութիւնը չի ընդունում ոչ ազգ, ոչ ազգային լեզու և ոչ ազգային պատմութիւն ու նուիրական աւանդութիւններ։ Դա մի ընդարձակ պետութիւն է, որի սահմանները ձգւում, տարածւում են բոլոր աշխարհում, որի գլուխը պապն է, որի հպատակներն ամբողջ մարդկութիւնն է։ Այդ պետութիւնը կրօնական է, բայց կրօնն այդտեղ միայն ծէս, միայն արտաքին կեղևն է. դա մի զուտ աշխարհական իշխանութիւն է իւր բոլոր մանրամասնութիւններով, բոլոր կազմակերպութեամբ. պապն էլ մի հայրապետ, մի կրօնապետ է, բայց աշխարհական թագաւորների լիակատար իշխանութեամբ և միայն աշխարհական անսահման թագաւորներին յատուկ և վայել սեթևեթներով։

Նալբանդեանցը, որ իւր այս հայեացքը կաթոլիկու-

թեան մասին շատ հմտութեամբ և ընդարձակօրէն զարգացրել է իւր «Մխիթար և Մխիթարեանք» գրուածքում, Մխիթարեանց միւս կաթոլիկներից չէր ջոկում, նա կարծում էր, որ նոքա իբրև կաթոլիկ ուխտ և միաբանութիւն ուրիշ պէս էլ չեն կարող լինել, քան թէ որ են, ուստի և պահանջել նոցանից, որ նոքա յարգեն իւրեանց մայրենի եկեղեցին, որ նոքա հերձուածող չանուանեն իւրեանց արենակից եղբայրներին, որ նոքա ծառայեն ազգի շահերին և նպաստեն բարոյապէս և մտաւորապէս նորա վերածնութեան գործին, մի խօսքով, որ նոքա ազգն աւելի սիրեն, քան թէ պապին ու պապականութիւնը, —այդ մի ապարդիւն բան է։ Պապականների համար ամեն մի բան, որ պապական չէ, որ չի ծառայում պապականութեան շահերին, հերձուածողական է, հեռու է հոգու փրկութիւնից։ Ամենաշատը, որ կարելի է պահանջել Մխիթարեաններից, այդ այն է, որ նոքա հաւատարիմ մնան իւրեանց ուխտի հիմնադրի աւանդածին-հայկական ձեռագրերը ժողովել, մաքրել և հրատարակել նոցա, գրաբառ լեզուն զտել եկամուտ տարրից, հայագիտութեամբ պարապել, գրաբառ թարգմանութիւններ անել, հայ հնագիտութիւնը մշակել, և այդ ոչ իբրև առհաւատչեայ ազգի յառաջադիմութեան ու զարգացման, այլ իբրև մի զուտ ուսումնական հայերէնասիրական գործ, մի սովորական «profession de foi»։

Այսպէս վերաբերուելով դէպի կաթոլիկներն ընդհանրապէս և դէպի Մխիթարեանները մասնաւորապէս, Նալբանդեանցը նոյն ժամանակ մի առանձին հակակրութեամբ էր նայում այն Մխիթարեան կրօնաւորների վերայ, որոնք երբեմն թողնում էին ուխտը և վերադառնում էին իւրեանց մայրենի եկեղեցու գիրկը, և այդ ոչ թէ նորա համար, որ այդ նա անօգուտ էր համարում, այլ որ նա չէր հաւատում այդպիսիների անկեղծութեան։ Մասնաւորապէս նա չէր սիրում, թշնամական դիրք էր բռնել դէպի այն չորս վարդապետները, որոնք 1853—57 թուականներին, թողին Ս. Ղազարու կղզին, հրաժարուեցին կաթոլիկութիւնից, վերադարձան հայոց եկեղեցու գիրկը և հիմնադիր եղան Պարի-

զի Հայկազեան դպրոցին։ Դոցանից նամանաւանդ նա չէր սիրում մէկին, Գաբրիէլ վարդապետ Այվազեանին, որ իւր Նախիջևանի և Բեսսարաբիոյ թեմի առաջնորդութիւնը հակառակ կաթուղիկոսի ցանկութեան ստանձնելու, Խալիբեան դպրոցի հիմնարկութեան և Նախիջևանի եկեղեցական գումարների հաշուետուութեան հանգամանքներով գրգռել էր իւր դէմ նորա ատելութիւնը և մասամբ արդարացրել էր նորա կասկածները։ Այդ ատելութիւնը, որ վերջին ժամանակներն աւելի ևս սաստկացել էր նորա մէջ, որովհետև նա կասկածում էր, թէ վարդապետի մատը պէտք է եղած լինի և իրան պատահած դէպքի մէջ, ոնցնում էր և Այվազեանի միւս ընկերների՝ Ս Թէոդորեանի և Խորէն ու Ամբրոսիոս Գալֆայեանների վերայ, որոնք դեռ ոչ մի այնպիսի աչքի ընկնելու գործ չէին կատարել, որ կարողանային փարատել այնպիսի մարդու կասկածները, ինչպիսին Նալբանդեանցն էր։ Նոքա, ընդհակառակը, իւրեանց մինչև այդ ժամանակներն արածներով աւելի հաստատել էին նորա կարծիքները, թէ վարդապետները վերադարձել են հայոց եկեղեցու գիրկը հանգիստ ապրելու, բարձ ու պատիւ ստանալու, վայելելու նպատակով։ Ս. Թէոդորեանը, այդ բնիկ Հայաստանցին, այդ Բաղէշի զաւակը չէր դիմացել Վաղարշապատի շոգերին և մոծակների խայթոցին, չէր կամեցել ստանձնել Արցախի թեմի կառավարութեան դժուար ու պատասխանատու գործը և վերադարձել էր Պարիզ, բռնելով Հայկազեան դպրոցի և Մուրատեան վարժարանի պատմութեան պոչից, կարծես, հայ վարդապետ չլինէր. Այվազեանն եղբայրացել էր աղա Խալիբի հետ և իւր հակաժողովրդական ընթացքով ահագին խռովութիւն էր ձրգել ամբողջ Նախիջևանի և Բեսսարաբիոյ թեմի մէջ, և, վերջապէս, Ամբրոսիոս և Խորէն Գալֆայեանները, ըստ ամենայնի, գործակից էին եղել Այվազեանին Խալիբեան դպրոցի, Նալբանդեանցի կարծիքով, վատթար կառավարութեան և դաստիարակութեան գործում։

Մանաւորելով մեր խօսքը Խորէն Գալֆայեանի մասին, մենք պէտք է ասենք, որ Նալբանդեանցը շատ լաւ էր ճանաչում նորան. լաւ յայտնի էր նորան այդ

վարդապետի Պարիզում վարած կեանքը, նա լաւ տեղեակ էր և նորա Թէոդոսիայի կեանքին և Խալիբեան դպրոցում ունեցած դաստիարակչութեան և ուսուցչութեան գործունէութեան հանգամանքներին։ Նալբանդեանցի սրատես աչքերը վաղուց արդէն նկատել էին այն երկուորութիւնը, որ երևում է նորա անձի մէջ, ուստի և բնական է, որ չէր կարող խուսափել նորա աչքից Վարդենիքը, որ, ինչպէս ասել ենք, ոչ այլ ինչ է, եթէ ոչ նոյն երկուորութեան արտայայտութիւնը, գրական մարմնացումը։ Դրելով իւր «անդրաձայնութիւնը» Նալբանդեանցը նպատակ է դնում իրան մի կողմից երեւան հանելու հայ գրականութեան մէջ ելևեցած այդ երկուորութեան հանգամանքը, միւս կողմից էլ սերկացնելու Խորէնի անձի երկդիմութիւնը, որ նա ամէն միջոցներով աշխատում էր ծածկել, գաղտնի պահել ժողովրդից։ «Աղցմիք» ինչպէս յայտնի է, կոչւում են այն շարականները, որոնք սովորաբար չեն երգուում եկեղեցում մեծ պասին։ Նալբանդեանցն իւր Աղցմիքով կամենում է ասել, որ Խորէնի Վարդենիքն այն վերին, հոգևոր սիրոյ իմաստով գրուած տաղերը չեն, ինչպէս որ նա ճգնում է ցոյց տալ, որ նորա տաղերի մէջ գործող «քոյր և եղբայրն» այն համահարազատ քոյր և եղբայրը չեն, ինչպէս որ նա աշխատում է ներկայացնել, և, վերջապէս, որ նորա երգերի մէջ մեծ տեղ բռնող կրօնական խորհրդածութիւններն ամենևին չեն քողարկում երգերի իսկական իմաստը, ինչպէս որ նա կամեցել է անել, այլ նոքա զուտ սիրահարական երգեր են, նոքա մի աղցմիք են աշխարհական մտքով, ինչպէս իւր «Աղցմիք»-ը։

Հէնց այդ հանգամանքն ապացոյց տալու դիտաւորութեամբ է, որ Նալբանդեանցն իւր բանաստեղծութիւններից մի քանիսի համար ընտրել է նոյն՝ խորագրերը, որ մենք տեսնում ենք և Վարդենիքի մէջ և նոցա այդ նոյնատեսակ խորագիր ունեցող բանաստեղծութիւնների մէջ պարզ ու ակներև կերպով երկու սիրող սրտի սիրային յարաբերութիւնն է նկարագրել, հակառակ Խորէնի նոյն խորագրերով բանաստեղծութիւնների մէջ նոյն բանի քողարկուած նկարագրութեան-

այդ նպատակով է հէնց, որ նա իւր բանաստեղծութիւնների մէջ իբրև գործող անձն ներկայացնելով «Հրեշտակ և կոյս», «Հարսն-քոյր և եղբօրորդի», նոյն ժամանակ և վերագրել է նոցա զուտ առօրեայ մարդկային, սովորական յատկութիւններ, հակառակ Խորէնի արածին, որ իւր Վարդենիքի մէջ կամեցել է ամեն բան ծածկել, ամեն բան քողարկել քոյր և եղբայր նուիրական բառերի սրբութեան տակ։

Բացի Խորէնի անձի երկդիմութիւնը և նորա Վարդենիքի երկուորութիւնը ցոյց տալու գիտաւորութիւնից, Նալբանդեանցը նպատակ է ունեցել իւր Աղցմիքով երևան հանելու և այն, որ Խորէնը և բանաստեղծ ու հայկաբան էլ չէ։ Նալբանդեանցի կարծիքով, Խորէնի և նորա նմանների բանաստեղծ լինելու ընդունակութիւնն այնքան է, որ նոքա կարող են արուեստական կերպով չափածոներ յօրինել, որ, յայտնի բան է, իսկական բանաստեղծութեան հետ ոչ մի կապ չունի, իսկ նոցա գրաբառի գիտութեան աստիճանն այնքան է, որ շատ մեծ բան է, եթէ նոքա կարողանան մեր առաքելանման թարգմանիչների լեզուն հասկանալ, այն ինչ նոքա իւրեանց քերթողական արուեստով ձգտում են հասնել Շեքսպիրին և Շիլլերին, իսկ իւրեանց գրաբառի գիտութեամբ յանդգնում են նմանել մեր բազմերախտ թարգմանիչներին։ Այդ մի մեծ յանդգնութիւն և ծիծաղի արժանի յատկութիւն է, որ սեփականացրել են իրանց Խորէնը և դորա նմանները, որովհետև յայտնի է, որ մի քանի բառ ու տող գրաբառ «կաղակրկին կակազելով» դեռ չի կարելի հայկաբան կոչուել, ինչպէս որ բազմաթիւ չափածոներ գրելով էլ չի կարելի քերթող համարուել։ Խորէնը քերթող չէ իւր գրուածներում, ինչպէս ինքը Նալբանդեանցը քերթող չի համարում իրան իւր Աղցմիքի մէջ, Խորէնը հայկաբան էլ չէ, ինչպէս որ Նալբանդեանցն իրան հայկաբան չի համարում իւր նոյն Աղցմիք գրուածքում։

Ահա այդ հանգամանքի վերայ է ակնարկում հանգուցեալ հրապարակախօսը, երբ իւր Աղցմիքի համառօտ յառաջաբանում ասում է. «Զայս մի և եթ կանխեմք աղաչել, զի մի՛ ոք համարեսցի եթէ և մեք առ

հայկաբանս կամ առ քերթողս զանձինս գրիցեմք. քաւ լիցի մեզ։ Դուշնաքեայ ոք, այր մի տառապեալ, խոստովանիմք, այլ՝ սպաս արարեալ ճշմարտութեան, ոչ երբէք զանձինս ունիմք առ որ չեմք, և ոչ երբէք։ Ընդէր իսկ բնաւ և մաղթանք. մի՛ որոց աչս ունիցին տեսանելով ոչ զդոյն գուշակիցեն, անդէն իսկ ի վերծանութիւն մատուցեալ։ Ծաղու արդար իսկ արժանի. միթէ ամենայն որ կաղակրկին կակազէ, լիցի ի բարբառ գրգարանին, հայկաբան իցէ. կամ որ չափաւն՝ քերթող. «Եւ Սաւուղ ի մարգարէս», որպէս ասեն Գիրք։ Քա՛ւ, և մի՛ լիցի, ասեմք և կնքեմք. այլ զդիպողն առանց բնաւ թանգուզանաց, արդիւնաւոր ճշմարտութեամբ և փորձոյ՝ զպատասխանին ճահեցուցանեմք. ոչ բազում իցեն, քան եթէ սակաւք, զի առ ծանր թեթևութեան անձամբ զանձինս յանդգնեցուցանեն, մինչև, թէ տա՛յր ոք, զբազմերախտ և զառաքելանման մերոց թարգմանչաց զգահուց բուռն հարկանել։ Սակա՛ւք իցեն առ մեզ, օրէն լիցի հարցանել, որ ի չափս ինչ արուեստակեալս զհողմս արածեալ միանգամ, զՇէքսպիրի կամ զՇիլլերի լրբին թեկն ածել, որոց և ո՛չ իսկ համբակացդ՝ անլուայից ստգիւտ թերևս ի ճահ։ Եթէ փութացաք ուրեմն քաւել յայդպիսեաց՝ թուի մեզ, թէև ոչ իւիք ինչ գրեցաք։ Շատ իսկ իցէ մեզ, ստուգութեամբ ասեմք, և կարի՛ շատ, եթէ զանձինս ի նախադրունս անդ համարձակեցուսցուք գիտութեան լեզուիս, զոր յերկնից արդեօք հրաման տայր ուսանել Քաջարանցն Արամ։ Թո՛ղ զքերթողականին վսեմ ճարտարութիւն, որով սակաւք յոյժ, քան եթէ բազումք, խելային ի բնութենէ՝ աստուածային զոգցես կոյծակամբք ջահաւորեալ, ըստ որոց՝ եթէ այլոցն միայն քերթողաց—հոկայից խելամուտ կարասցուք լինել սը խրալի վաստակոց, ալդէն երանելի զմեզ համարիմք»։

Այդ հանգամանքի վերայ է ակնարկում նաև, երբ իւր նոյն Աղցմիքի մանր բանաստեղծութիւններից մէկում հեգնօրէն «Քերող-Քերթող» անունն է տալիս Խորէնին, կամենալով դորանով ասել, թէ Խորէնի մէջ ամեն բան արուեստական է ու անբնական։ Խորէնը և դորա նմանները, Նալբանդեանցի ասելով, քերթող կամ

բանաստեղծ չեն այն մտքով, ինչպես մենք ենք հասկանում, այլ քերող են, այսինքն լոկ արհեստաւոր, զրկուած ստեղծագործութեան ընդունակութիւնից, զրկուած իւրեանց սրտի բղխմունքը և զգացմունքի զեղմունքը բնական, անարուեստ կերպով արտայայտելու յատկութիւնից։

Երբոր Նալբանդեանցն իւր այդ «Քերողն-Քերթող» բանաստեղծութեան մէջ ասում է, թէ բնութեան մէջ ընձեռած ատոք հասկից մաքուր ցորեն ստանալու համար, պէտք է նորան կալսել կալում և մաքրել թեփից, թէ երթևեկելու յարմար ճանապարհ պատրաստելու համար, պէտք է առապարները յարդարել, արգելքները հեռացնել և գետերի վերայ կամուրջներ շինել, թէ, վերջապէս, գոհարին շող ու ցոլք տալու համար, պէտք է ճարտարութեամբ քերել նորան,—այդ բոլորովին հասկանալի է, որովհետև բնութեան բոլոր տուրքերն ընդհանրապէս կարօտ են մշակութեան, բայց երբ նա գեղեցիկ կոյսին նմանեցնում է մեծագին գոհարի և խորհուրդ է տալիս տալիս նորան Քերթող կոչուած Քերողի մօտ, որ նա քերէ նորան փայլն ու գեղեցկութիւնն աւելացնելու համար, և խորհրդաւոր կէտեր է դնում,—դորա մէջ արդէն արտայայտուում է մի այնպիսի կծու հեգնութիւն, որ, բացի նորանից, որ բնորոշում է Խորէնին իբրև արհեստաւոր քերթողի և ոչ իսկական բանաստեղծի, այլև ակնարկում է և նորա աշխարհային հակումների և վարած կեանքի վերայ։—

Ցորեան՝ ատոք ի հասկին,
Մեզ ընձեռէ բնութիւն.
Այլ ո՛ ի կալ ոչ կասու,
Ո՞ զթեփ ոչ ընկենու.
Մնան միշտ բնութեան
Տուրք մշակութեան։
Ուղղոյ եղեալ այր ոք այր,
Ընդ բոխասէր առապար.
Ո՞չ զստանն՝ օն ի բաց,
Եւ ռահ հորդեալ դիւրագնաց?
Սոսկ ի մարգոյն մուրճ
Յարդարի կամուրջ։

Ո՞չ հրեշտակն ցցասաց
Պատկառ այդմ օրինաց,
Զամենայն փակեալ բանայ
Զիի որ զկնին նորա գայ՝
Ելցէ և մտցէ
Եւ ճարակ գտցէ?
Եւ ահա կոյս հրաշաւոր,
Ծոխ հեշտալեօք բիւրաւոր,
Այլ զի գոհար մեծագնոյ
Ոչ շողալ թարց քերելոյ,
Աձէք առ քերօղն
Անուանեալ քերթող!

. . . . . .

Քերի ակնն և թռչին
Բեկորք մանուանք ի գետին,
Ճարտարին բաբախէ սիրտ
Բեկորք փայլին ի յակինթ...
Երգի ի քնար
Ի վաղիւ գոհար։

Ո՞րքան ճշմարիտ ու արդարացի է Նալբանդեանցի այդ կարծիքը Խորէնի անձի վերաբերմամբ և ո՞րքան ստոյգ ու իրաւացի է նորա դատաստանը նորա գրուածքների մասին ընդհանրապէս և «Վարդենիք»-ի մասին մասնաւորապէս։ Որ Խորէնն ունենալով բանաստեղծութեան փոքրիկ կայծ ու շնորհք, այնուամենայնիւ իւր դաստիարակութեան շնորհիւ ու կեանքի զանազան հանգամանքների ազդեցութեան ներքոյ երբէք չկարողացաւ իսկական բանաստեղծ դառնալ, և որ նա հոգևորական լինելով, հոգևորականի կեանք չվարեց, միշտ կեղծաւորելով, միշտ իւր աշխարհային հակումները ծածկելով հոգևորականութեան դիմակի տակ և այդպիսով առաջ բերելով իւր մէջ մի տեսակ երկդիմութիւն և իւր գրուածների մէջ երկուորութիւն, – այդ մի զուտ ճշմարտութիւն է, որի մասին մենք արդէն իւր տեղում խօսել ենք, բայց որ նա այդ բոլորի հետ միասին հայկաբան կամ գրաբառագէտ էլ չէ, այդ ճիշտ չէ, կամ, առնուազն, շատ խիստ է։ Խորէնը, ինչպէս ցոյց են տալիս նորա գրաբառ ինքնուրոյն գրուածները—«Քնար պանդխտին», «Վարդենիք», նորա գրաբառ թարգմանութիւնները—«Դաշնակները», «Յովհան Դարդելլին», ողբերգութիւնները, լաւ գրաբառագէտ է, օժտուած հայկաբանութեան այն բոլոր առաւելութիւններով, որոնք յատուկ են ընդհանրապէս բոլոր Մխիթարեաններին։ Նա, ի հարկէ, Գաբրիէլ Այվազեանը, Արսէն Բագրատունին, Ղևոնդ Ալիշանը, Արսէն Այտնեանը և միւս Մխիթարեան գրաբառագէտ պարագլուխներից չէ, բայց նա և գրաբառ «կաղակրկին կակազողներից» էլ չէ, ինչպէս ասում է Նալբանդեանցը։ Նա մեր երանելի թարգմանիչների լեզուն ազատ հասկանում էր, նա արձակ գրում էր, սահուն, կանոնաւոր, անոյշ ոճով

շարադրում էր, մի յատկութիւն, որ միայն կարող են ունենալ լաւ գրաբառագէտները, հայկաբանները։

Մենք առհասարակ անարդարացի և խիստ ենք համարում հանգուցեալ հրապարակախօսի այն խօսքերը, որ նա իւր Աղցմիքի յառաջաբանում ուղղում է Խորէնի և Մխիթարեանների հասցէին ընդհանրապէս. «Ո՞չ բաղումք իցեն, քան եթէ սակաւք, զի առնեսցեն թեթևութեան անձամբ զանձինս յանդգնեցուցան, մինչև, թէ տեսցեն ոք զբազմերախտ և զառաքելանման մերոց թարգմանչաց զգահուց բուռն հարկանել»։ Մխիթարեանները, ինչպէս յայտնի է, զտեցին, մաքրեցին մեր դասական լեզուն այն բոլոր եկամուտ և օտար տարրից, որ երկար ու ձիգ ժամանակի ընթացքում առատութեամբ սպրդել էին նորա մէջ, ողողել էին նորան. նոքա ԺԸ դարում վերականգնեցին Ե դարի լեզուն և մի տեսակ գրաբառի վերաստեղծող հանդիսացան մեր մէջ, ուստի և չպէտք է զարմանալ, եթէ Մխիթարեաններից ոմանք գրաբառ շարադրելու ասպարիզում այն աստիճանի վիրտուոզութեան հասան, որ մինչև իսկ յաջողեցան Ոսկեդարեան լեզուով գրել և նոյն իսկ Ոսկեդարեան հեղինակների դափնիներին մրցակից եղան։ Դորան ապացոյց կարող են լինել նոցա բազմահատոր ինքնուրոյն և թարգմանական գրուածները, որոնց լեզուի կանոնաւորութիւնը, յստակութիւնը և անուշութիւնն ոչնչով յետ չեն մնում մեր Ոսկեդարեան հեղինակների գրուածների լեզուից, չենք խօսում արդէն մեր վեցերորդ ու յաջորդ դարերի հեղինակների մասին, որոնցից նոքա ամեն բանով գերազանցել են։

Եւ յետոյ, ի՞նչ խորհուրդ ունի այն համեմատութիւնը, որ Նալբանդեանցն անում է իւր Աղցմիքի և Խորենի գրուածների մէջ։ Այդ, ի հարկէ, մի կծու հեգնութիւն է, որով նա կամենում է ասել, թէ այնպիսի բանաստեղծութիւններ, որ պարունակում է իւր մէջ Վարդենիքը, ինքն էլ կարող է յօրինել, բայց այնուամենայնիւ ինքն իրան բանաստեղծ կամ քերթող չի համարում, թէ այնպիսի գրաբառ լեզուով, որով շարադրում է Խորէնը, ինքն էլ կարող է շարադրել, բայց դարձեալ իրան հայկաբան չի համարում։ Սակայն մենք

կարծում ենք, որ այդ մի մեծ համեստութիւն է, որ գիտակցաբար կամ անգիտակցաբար գործ է դնում Նալբանդեանցը և դորանով մասամբ ինքն իրան հակասում է։ Աղցմիքի մեծ մասը, ինչպէս արդէն մենք ասացինք, զուտ բանաստեղծութիւն է, ուրեմն, հանգուցեալի խօսքերից դուրս է գալիս, որ և Վարդենիքն եթէ ոչ ամբողջութեամբ, գոնէ, մասամբ բանաստեղծութիւն է։ Ակներև է, եթէ ոչ արտաքին, գոնէ, ներքին հակասութիւնը, որովհեան Նալբանդեանցն Աղցմիքում ինքն իրան համեստութեամբ բանաստեղծ չի համարում, այն ինչ իսկապէս նա հէնց իւր այդ գրուածքում հանդիսանում է իբրև քերթող։

Այստեղ խօսք միայն կարող է լինել լեզուի, գրաբառագիտութեան, հայկաբանութեան մասին։ Ինչ ասել կուզի, որ Աղցմիքի գրաբառն էլ մի կանոնաւոր ու սահուն լեզու է, ոչ հեռի իսկական հայկաբանութիւնից, բայց արդարութիւնը պահանջում է ասել, որ այդ լեզուն չի կարող հասնել Խորէնի երկերի գրաբառ լեզուին։ Նալբանդեանցի գրաբառը Տէր-Գաբրիէլ Պատկանեանցի և ընդհանրապէս Հայոց հին վարժապետների լեզուն է, իսկ Խորէնինը—Մխիթարեանների բոլոր այն բնորոշ տարբերութիւններով և առանձնայատկութիւններով, որ կայ Հայոց այդ երկու գրաբառագէտ դասակարգի լեզուների մէջ։

Ե. ՇԱՀԱԶԻԶ

1902 թ. օգոստոսի 6
Նոր-Նախիջևան

ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ [1])

Ի.

Սարիղամիշ. սեպաձև արձանագրութիւն, մայր անտառ, Սուրբ Խաչ Վանքը. Օբսիդիան հանքը, Սըրբասան գիւղը. Քեռաօղլու բերդը, Մուխտար փաշայի կացարանը, Ջաք գիւղը, Խանի չայ:

Սարիղամիշ, այսինքն դեղին եղէգն, չգիտեմ որտեղից է յառաջ եկել կամ ի՞նչ է եղել նորա նախկին անունը։ Միայն գիտեմ որ իմ այցելութիւնից 14 տարի առաջ այդ տեղ եղել է աւերակ գիւղատեղի, հին եկեղեցի, գերեզմանատուն՝ փոքրիկ մատուռով և գիւղից հիւսիս հին բերդի մնացորդ։ Դեռ ևս 1864 թուականներին Կովկասի լեռներից գաղթած օսերը հաստատուելով այստեղ, առևտուր են սկսել Սողանլուի անտառով Կարսի և Ալէքսանդրապոլի հետ։ Նորա քանդել են եկեղեցին և մատուռը և նորանց ու գերեզմանատան քարերով շինել են վերին Սարիղամիշում մի մէջիդ։ Երբ 1878 թուի Յուլիսին ես և հանդուցեալ Աղէքսանդր Երիցեանը միասին վերադառնում էինք Բասենից Ալէքսանդրապոլ, մի քանի ժամ հանգստանալու մնացինք Վերին Սարիղամիշում։ Ըստ սովորութեան գնացի շրջակայելու և կնոջութեան առարկաներ գտնելու, թողնելով Երիցեանին իւր հանգիստ քնի մէջ։ Ցիշեալ մէջիդը վնեելիս ես նկատեցի նորա պատի մէջ սեպաձեւ տառերով մի արձանագրութիւն մի մեծ քարի վերայ և ապա հրաւիրելով Երիցեանին, դարձրի նորա, իբրև հնախոյզի, ուշադրութիւնը արձանագրութեան վերայ։ Մի քանի տարի յետոյ նոյն արձանագրական քարը ես տեսայ Թիֆլիզում Կովկասեան թանգարանի մուտքի առաջ, ուր կայ և այժմ։

Երկու Սարիղամիշը գրուած են մի փոս տեղ երարից մի

---

[1]) Տես «Լուսայ» № 5 1903 թ.

վերստաչափ հեռու, Սողանլուի լեռնագոտու արևելեան ստորոտում, երեք կողմից շրջապատուած մայր անտառով։ Արզրումից Կարս գլխաւոր ճանապարհը անցնում էր այդ գիւղով։ Նուաճելու օրից իսկ, ռուսները մեծ ուշադրութիւն նուիրեցին այդ կէտին և սկսեցին շինել պօրանոցներ, հիւանդանոցներ և այլն։

Սարիղամիշը շատ մաքուր և առողջարար տեղ է, ունի 7031 ֆուտ բարձրութիւն ծովից և 1952 ֆուտով բարձր է Ալէքսանդրապօլից, ուստի ձիւնը շարունակւում է երկար. դեռևս մայիսին Սարիղամիշից ոչ հեռու, անտառի մէջ, լերան լանջում ես հանդիպեցի երկու սաժէն հաստութեամբ ձիւնի։ Մշտական ճանապարհը, դեռ ևս Թիւրքիոյ տիրապետութեան օրով, Սարիղամիշից Արզրում անցնում էր Սողանլուի լեռնագոտու հարաւային կողմով, Կարա-կուրուտ գիւղով, որ ապա շարունակւում էր Արաքսի ափերով։ Ռուսները բացին նոր ճանապարհ դէպի հիւսիս աւելի կարճ և մօտիկ։ Բայց նորա բանալու համար շատ ծառեր կտրտուեցին։ Ես գնացի այդ ճանապարհով, որ վերին Սարիկամիշից բարձրանում և անմիջապէս մտնում է հրաշալի անտառի մէջ։

Հրաշալի և զարմանագեղ անտառ։ Ուղղահայեաց բարձր ծառերը ձգւում էին դէպի երկնակամարը։ Երբ նորանց կոկ, հարթ բունները կանգնած են առանձնակի, վերևի հորիզոնական ճիւղերը մշտադալար մուք կանաչ նեղ սուր տերևներով զարդարուած, խճճւում են իրար հետ, ծածկելով շատ տեղ կամարակապ երկինքը։ Սողանլուի լեռնագոտու լայնարձակ անտառը, զարմանալի բան, բաղկացած է միմիայն մայր ծառից (շամ.) ուրիշ տեսակի ծառերի հետք ամենևին չէ երևում։ Եթէ ես ունենայի բանաստեղծական շնորհ, կդովէի անտառը ըստ արժանւոյն և ո՛չ այսպէս չոր ու ցամաք։ Սակայն մայր ծառի գեղեցկութիւնը ցոյց տալու համար բաւական է յիշել որ Սողոմոնը իւր սիրուհու կերպարանքը նմանեցնում է Լիբանանի ընտիր եղևիններին [1]։

Խորանում էի անտառում, նայում էի երկնաձեմ ծառերի վերայ, բայց մտքով տեղափոխուած էի ԺԳ. դարը, Թաթարաց տիրապետութեան օրերը, երբ Հուլաւու խանի Մուղանի դաշտում նորակառոյց քաղաքի շինութեան համար հայ ժողովուրդը հարկադրուած էր մահացու տանջանքներով գերաններ տանել

[1]) Երգ Երգոց, գլ. Ե. 15

սոյն այս անտառից մինչև Մուղան, Կասպից ծովին մօտ։ Այնպիսի հաստութեամբ և երկարութեամբ գերաններ էին լինում, որ հարիւր լուծ անասունները մեծ դժուարութեամբ էին շարժում, վկայում է ժամանակակից Կիրակոս վարդապետ Գանձակեցին. ժողովրդի այս ծանր աշխատանքները թաթար իշխանների համար՝ մի այլ տեղում աւելի ընդարձակ յիշատակած լինելով [1]), ես անցնում եմ սոյն ճանապարհորդութեանս, մանաւանդ որ ուշքս ակամայ գրաւեցին մի քանի ձայների աղաղակներ հեռուից։

Քայլ առ քայլ մօտեցայ և ի՞նչ, մի ֆուրգոն ղինուորական պաշարով լի, սխալմամբ ընկել և շրջուել էր ձիւնով մինչև երեսը ծածկուած ահագին փոսի մէջ։ Նորա հետ ձիւնի մէջ խորուել էին և լծկան ձիանքը։ Զինուորներ և կառապաններ աշխատում էին հանել փոսից ֆուրգոնը և չէին կարողանում։ Ի՞նչ կարող էին անել թշուառները, երբ նոր բացուած ճանապարհը միայն անունով էր ճանապարհ, այսինքն դիտմամբ կտրտած ծառերի մէջ բացած մի գետին, տեղ փոս, տեղ քար, տեղ ճահիճ, տեղ ձիւն և այլն։

Վերջապէս մի քանի ժամից յետոյ փոստակառքս հպիւ բարձրացաւ մի լայնանիստ բարձրադիր վայր, ուր ամեն կողմից վազում էին պարզ, վճիտ, սառնորակ աղբիւրներ և վտակներ։ Հարթավայրը ազատ էր անտառից, միայն տեղ տեղ երևում էին ծառերի խմբեր։ Սորա անունն էր Նազլի դաշ, իբրև թէ գտնուած է արձանագրած քար։ Վայրը նոր էր ազատուել ձիւնից, որ փոսերի մէջ դեռ ևս երևում էր։ Ձիւնի տակից վայրի խոտը նոր էր բարձրացրել իւր գլուխը։ Բայց յուլիսին, վերադարձիս, երբ այստեղ, ամայութեան մէջ, ժամանակաւորապէս կանգնեցրած կայարանում գիշերեցինք Աղէք. Երիցեանի հետ, վայրը ծածկուած էր խիտ խոտերով և բազմերանգ հրաշալի ծաղիկներով։ Ազատ և առատ շնչում էի մաքուր և սառն օդի հոսանքը 8077 ֆուտ ծովից վեր բարձրութեան վերայ։ Այս տեղից մի քանի վերստ հեռու դէպի հարաւ, բարձրագոյն անտառածածկ բլուրի գագաթին, հեռից ցոյց է տալի իւր տրեբալի աւերակները հայ ժողովրդից որբ մնացած Սուրբ Խաչ վանքը, 9562 ֆուտ բարձրութեան վերայ։ Նորա ուխտագնաց

---

[1]) Քաջբերունի. «Ճանապարհորդ. նկատողութիւնք գլ. Խէ» Արարատ Դեկտ. 1890

և պաշտող հայ ժողովուրդը 1830 թուականին Բասենից գաղթել է Ալէքսանդրապոլի գաւառը, ուր նոր սերունդը դժուար թէ մոքում պահած լինի իւր հօրերի և պապերի աւանդական յիշողութիւնները։ Սուրբ Խաչ վանքի բարձրագագաթ բլուրը ամեն ազգից և ժողովրդից, մինչև անգամ քիւրդից, այլ և գրականութեան ու աշխարհագրական քարտեսների մէջ կոչւում է «Սուրբ խաչ»։

Եալլի դաշ վայրում երևում է ահագին հաստութեամբ օքսիդիան հանքի մի երակ, որ թեք գծով կտրում է Սողանլուի լերան հաստութիւնը անյայտ երկայնութեամբ։ Օքսիդեան հանքաբանութեան մէջ յայտնի է և «հրարխային ապակի» անունով։ Լինում է փայլուն, ոչ թափանցիկ կամ քիչ թափանցիկ, կապմութեամբ ամուր, գունով մեծամասնութեամբ սև ինչպէս Սողանլուինը, բայց լինում է և կարմիր, դեղին, կանաչ։ Օքսիդիան շատ կայ Մեքսիկա և Պերու, ուր նորանից շինում են դանակներ և հայելիներ։ Մի քանի հայ գիւղերում (Ղազախ) նորան անուանում են կովի աչք։ Իմ սեպհական հանքաբանական ժողովածուի մէջ ունէի Սողանլուից վերցրած մի ահագին կտոր Օքսիդիան, որ միւս հանքերի հետ, 10 տարի առաջ, նուիրել եմ Ս. Էջմիածնի Ճեմարանին։

Եալլիտաշից մի քանի վերստ անցած դէպի արևմուտ մենք արդէն կանգնում ենք Սողանլուի արևմտեան լանջում, որ տեղից ստորև և բացւում է սքանչելի տեսարան դէպի Բասենները Արաքսի աւազանի հովտում։ Սողանլուի գագաթին երկարութեամբ ձգելով հարաւից, Արաքսի ափերից, Հիւսիս, բաժանում է՝ երբև սահմանագլուխ Թախտի հարթավայրը դէպի արևելք և ներքին ու վերին Բասէնի հովիտը դէպի արևմուտք։

Իմ կանգնած տեղից ճանապարհը տանում է դէպի Միլլիդիզ և Մժնկերտ, որով 1877 թուականի յունիսին գեներալ Հէյմանի զօրաբաժինը գնաց Զիվինի վերայ և դարձաւ իսկ աջակողմեանը տանում է Սրբասան և այլ գիւղեր։ Ես զբոնացի վերջին ուղղութեամբ։ Առաջին գիւղն էր վերոյիշեալ Սրբասանը, գուցէ Սրբասան որ մինչև 1856 թուականը եղել է աւերակ, յետոյ կենդանացել է թուրքերով, որ կային մինչև այցելութեանս օրը։ Նա համարեա կիսաւեր գրութեան էր, շատ տներից միայն պատերն էին մնացել, ոմանց տանիքն էր կիսով չափ քանդուած, ոմանց պատերն էլ էին քանդուած, սրա փախստական բնակիչներից միայն մի չնչին մասն էր վերադարձել։

Աւերման պատճառն էին նախ թուրքաց զօրքը և ապա ռուսաց։ Ահա թէ ինչպէս։ Ալաշայի յաղթուելուց յետոյ միւշիւր Մուխթար փաշան արագութեամբ հասնելով տեղ և ժամանակաւորապէս վերեղուելով Քեչասուր գիւղում, հրամայել է որ Սրբասան, Ենիքէօյ, Կարաուրդան, Քէչասաւր և մի քանի դրացի գիւղերի բնակիչներին տեղափոխեն հեռու Պարտիզակ և նորանց բնակարանները յարմարեցնեն Ալաշայի մնացորդ զօրքի համար. ժողովուրդը հնազանդութեամբ կրելով այդ ըստամենայնի ծանր պարտաւորութիւնը, կորցրել է նոյն ժամանակ և իւր բնակարանները, որովհետև տների մի մասը քանդել էր քիւրդ զօրքը, միւս մասը քանդել էր ռուս զօրքը, երբ Ալաշայից յետոյ գտել էր այս տեղ անմարդաբնակ տներ։ Ռուսները, գլխաւորապէս իւրեանց պէտքերի համար, պրել կամ գործադրել էին։

Կային գիւղեր, որոնց բնակիչները երկիւղ կրելով ռուսներից, կամ աւելի ճիշտը, ռուս անկանոն (միլիցիոներ) զօրքից, իւրեանք էին փախել։ Մի քանի օրինակներ աչքի առաջ ունենալով, ազգաբնակութիւնը կարող էր առիթ ունենալ երկիւղ կրելու, օրինակ Կարսի կողոպուտը կամ նոյն իսկ Զիվինի յարձակման ժամանակ՝ Կարաուզրանի և Խադիկի կողոպուտները։ գեներալ Հէյմանի զօրաբանակն, երբ 1877 թուի յունիսին Միլլիդիւզում պատրաստւում էր Զիվինի վերայ ընկնելու, եկել են բանակ Կարաուրդանի մեքանի ներկայացուցիչներ գրաւոր ապահովութիւն խնդրելու ռուս զօրքի կողմից կողոպուտի կամ սպանման չենթարկուելու համար։ Նորանց ներկայութիւնը բանակում կարևոր է համարուել իբրև ուղեցոյցների, որոնց օգնութեամբ տեղ են ընտրել թնդանօթների համար Ենչայ աւերակների բարձր բլուրի գագաթին։ Հէնց այն միջոցին, երբ Կարաուրդացիք ընտրութիւն էին անում բլուրի վերայ Զիվինի դէմ և բացատրում էին թիւրք զօրքի անեղադրութիւնը, միլիցիոներների մի ահագին խումբ Կովկասի լեռնաքնակ լեգզիներից, Սուրմալուի քիւրդերից և այլ տեղերի թաթար թարաքեամաներից, ջոկնուելով զօրաբանակից իջնում են Կարաուրդան, որ հեռու չէ Զիվինից, ու սկսւում է կողոպուտը։ Տեսէք, ինչպէս մարդիկ են—քիւրդեր, լեգզիներ և թարաքեամաներ, որոնք դժոխքումն էլ, արքայութիւնումն էլ, տանն էլ, պատերազմի դաշտումն էլ մի և նոյն աւազակաբարոյ գազաններն են։

Երբ ռուս կանոնաւոր զօրքն իւր արիւնով ներկում էր

Զիվինի գետակի ջուրը, վերոյիշեալ գաղանները իւրեանց գործն էին տեսնելիս եղել Կարաուրդանում։ Նորա չէին հարցնում ոչ մեծ, ոչ փոքր, այլ անխտիր վերցնում էին սորա վրայից չուխան, նորա վրայից արծաթի գոտի, խանչալ, կանանց գլխից ծածկոց և այլն, տներից տարել են պղնձէ ամաններ, խալիչաներ և այլ իրեղէններ։ Բացի այդ տարել են 6 ձի, 48 եզը, բազմաթիւ. ոչխար և այլն։ Եւ այդ բոլորը չնչին գնով ծախում էին մարկիտանտներին կամ ուրիշ այդպիսի բախտախնդիրներին։ Սոյն վիճակին էր ենթարկուել և Խաղիկ գիւղը, Զիվինից հիւսիս։ Հաղորդելով ինձ իւր ժամանակին յիշեալ մանրամասնութիւնները, Կարաուրդանցիք զարմացմամբ յիշում էին, որ կողոպուտի միջոցներում մի հատ անգամ ռուս զինուորը չը-մօտեցաւ իւրեանց նոյն նպատակով։

Այսքան միայն իմ լսածս ու գիտեցածս է, հապա ո՞րքան կան անյայտութեան մէջ, որ մենք չգիտենք և ի՞նչ կասկած որ այսպիսի դէպքէր կարող են փախստի դարձնել մի ժողովուրդ, որ տարաբաղդութիւն է ունենում լինել պատերազմի շրջանում։ Իսկ փախստի հետևանքն է զրկուել տնից, տեղից, տան միջից, ապրանքից, ոչխարից, ցորենից, մի խօսքով ապրուստի համարեա բոլոր միջոցներից։

Սըրբասանից 6 վերստաչափ հեռու, Սողանլուի արևմըտեան լանջում, մի բարձր բլուրի գագաթում, երևում էր հին բերդանման շինութիւն։ Բլուրի երկու կողմից, ձորակների միջով, վազում էր մի մի կարկաչահոս առու. հարաւային ձորակի մէջ դրած է Քեօռօղլի, իսկ հիւսիսայինի մէջ Սեօղիւդլի գիւղերը, երկուսն էլ Թրքաբնակ։

Բերդաբլուրի արևմտեան լանջում կանաչով ծածկուած էին ճանապարհի հետք, որ տանում էր դէպի վեր, դէպի բլուրի գագաթը։ Ճանապարհի երկու կողքի երկարութեամբ շարուած քարերը պահպանել էին նորա ուղղութիւնը։ Բլուրի գագաթում երևում էին բազմաթիւ տների աւերակներ, որոնց կենդրոնատեղում, իբրև բերդ, բարձրանում է մի որոշ սև ժայռ, գագաթի վերայ ունենալով ամրոց սրբատաշ շիկագոյն քարից։ Բերդը շրջապատող, բայց քարերով լցուած խրամի արևելեան կողմի մուտքը տանում է բերդի ներսը։ Մուտքն եղել է կամարաշէն, որի երկու կողմի սիւները թէև կանգուն, բայց խրուած էին հողի մէջ, իսկ կամարն ընկած էր գետին։ Երկայն շէմը դռնից խրամի վրայի աստիճաններով տանում էր մինչև բերդի

առաջին դուռը՝ կազմուած երկու սրբատաշ բուրգերից, կամարով միացած։ Դրան պատի մէջ երևում էր իւր տեղում պահուած հաստ նիզը բերդի դուռը փակելու համար։ Երկար շէմը յանկարծ թեքւում է այս դարպասից հարաւային կողմի վերայ և աստիճանաբար բարձրանալով մինչև երկրորդ դուռը, անցնում է բերդի մէջ, ուր երևում են սենեակների աւերակներ և հարաւային պարսպի մօտ յայն ջրամբար, որի հիւսիսային պատի վերայ դրոչմած է «1855» թուականը (երևի որև է հետաքրքիր ճանապարհորդի կողմից։

Բերդն ունի անկանոն քառանկիւնի ձև, 50 քայլի երկարութեամբ արևելքից արևմուտք և 32 քայլ լայնութեամբ։ Շարեշար բուրգերը թէև ամրացնում են երկու արշին հաստութեան կրաշաղաղ պարսպապատերը, վերջիններս սակայն ժամանակի ձեռքերից աւերուած են կիսով չափ։ Մի երևոյթ որ դրաւեց իմ ուշադրութիւնս, թողնում եմ այլոց բացատրութեան։ Այդ այն է, որ արտաքին պատերի քառանկիւնի սրբատաշ քարերի երեսի կենդրոնում մասը թողած է անտաշ և նորա վերայ փորագրած են գծեր հետևեալ ձևերի։ Մի քարի վերայ երկու զուգահեռական գիծ ուղղահայեաց դիրքով, կամ երկու նոյնպիսի գիծ հորիզոնական դիրքով. միւսի վերայ մի հորիզոնականի վերայ կանգնած է մի ուղղահայեաց, կամ երկու գիծ ծայրերի կցուելով կազմում են անկիւն, որ այս և այն քարի վերայ նայում է կամ դէպի վայր, կամ դէպի վեր, կամ աջ կամ ձախ և այս գծերի ձևերը միշտ կրկնւում են քարերի ճակատին։

Ո՛չ մի տեղեկութիւն չկարողացայ ձեռք բերել թէ ո՞վ և ե՞րբ է շինել այս բերդը, ի՞նչ է եղել նախկին անունը, որ այժմ կոչւում է Քեօռօղլու բերդ ի յիշատակ աւանդութեան, որ այդ հերոս-բանաստեղծը բնակուել է այդ տեղ։

Քեօռօղլի բերդից մեր առաջ բացւում է հրաշալի տեսարան, հարաւից երևում է Ալաշկերտի ձիւնապատ գոտին, հիւսիսից Պարտիզի լեռնային գոտին, իսկ արևմտեան կողմից Կարինի բարձունքները և այդ սահմանի մէջ սփռուած է Բասենը տեղական թիւրք բարբառով Փասընը, իւր գետերով և գետակներով, բլուրներով ու ձորերով, հովիտներով ու ժայռերով և այլն։ Իսկ Խանի ջայը՝ իւր արծաթափայլ օձապտոյտներով՝ խաղում վազում է համարեա ոտացդ տակից դէպի արևմուտք, դէպի Զիվին։

Վեց-եօթ վերստ այն կողմ, Խանի չայի աջ ափից ոչ հեռու, երևում է թրքաբնակ գիւղը, Ենի քէօյ (Նոր գիւղ) որ Թիլնիա դամի անունով նախկին աւերակների վերայ 1855 թուից այս կողմ շինուել է ներկան։ Ոչ մի հետաքրքրական կողմ չունենալով հանդերձ, գիւղն այնու գրաւում էր ինձ, ըստ որում ես կամենում էի տեսնել այն սենեակը, ուր մի քանի գիշեր և գերեկ անցուցել էր թուրքաց զօրքի գլխաւոր հրամանատար միւշիւր Մուխթար Ահմէդ փաշան, մին այն ժամանակ՝ երբ Զիվինի յաղթութիւնից յետոյ՝ նա գնում էր Կարս և մին էլ, երբ Ալաջայում յաղթուելուց յետոյ՝ նա վերադառնում էր Արզրում։

Գնացի Ենի քէօյ, որի բնակիչները տարան ինձ ուղղակի ցանկացածս տունը, որի մէջ գլխաւոր հրամանատարից յետոյ ընդունեցին ինձ և նստացրին այն թաղթի վերայ, ուր նստում էր կամ քնում Մուխթար փաշան՝ թէ ուրախ ժամանակ Զիվինից յետոյ և թէ չարաժամ օրերում՝ Արաջայից յետոյ։ Իմ և Մուխթար փաշայի բնակարանը երկու փոքր սենեակ էր, քարաշէն, երկրորդ յարկում և պատկանում էր մի մոլլի։ Սենեակի պատուաւոր անկիւնում բաղմեցրած էր Կուրանի գիրքը, իսկ պատերի վերայ շրջանակների մէջ կախած էին ոտանաւորներ, հանած պարսկական յայտնի բանաստեղծ Սահադի «Գիւլիստանից»։

Բնակիչները հէգնօրէն պատմում էին, որ միւշիւրը Ենի քէօյից ճանապարհ ընկնելու ժամանակ դէպի Կարս, դիմելով գիւղական հասարակութեան, ասում էր «Կարս հասնելուն պէս չարաչար հարուածներ պէտք է տամ ռուսներին...»։ Բնական է, որ Զիվինի յաջողութիւնից յետոյ նա այդպէս էլ կարծէր, բայց... Sie transit gloria mundi (որպէս անցողական է աշխարհի փառքը)։

Ինձ շրջապատել էին հետաքրքրուող գիւղացիք։ Մոլլան (տանտէրը) լսելով նպատակս, մանրամասնութեամբ բացատրում էր և ցոյց էր տալի՝ թէ որ տեղ էր կանգնում կամ նստում, կամ քնում, կամ խօսում, կամ ընդունում միւշիւրը...

Հրաժեշտ տուի Ենիքէօյին և թեքուեցի դէպի Զաք գիւղը, որ այն ժամանակ հալիւ 6—7 տուն թուրք բնակիչ ունէր, Ենիքէօյից ջոկուած, բայց առաջուց նա եղել է հայաբնակ և կրել է հայկական անուն Զագ։ Պէտք է յիշել որ Թասենում գիւղերի մեծ մասը կրում է հայկական անուններ, փոքր յարմա-

բեցրած Թրքական լեզուի արտասանութեան. օրինակ Զագ=Զաք, Պարտէզ=Փարթեզ, Բասեն=Փասէն. և այն։ Եւ այդ հայկական անուն կրող գիւղերում բնակւում են այժմ քիւրդ, Թուրք, կամ Թուրք և հայք միասին։

Զագ գիւղի դէմ, Խանի չայի ափին, բացի մի քանի այրերի, ժայռի գլխին կայ փոքրիկ ամրոցի աւերակ, հաշիւ 20 քայլ լայնութեամբ և երկարութեամբ։ Նորա պատերը 3 արշին հաստութեամբ՝ կազմուած է սև հաստամարմին քարերից, արտաքուստ նման մարմարիոնի։ Տեղացի Թուրքերն աւանդում են, որ բերդը մնացել է ջինիվիզներից։ Պէտք է նկատել որ Բասենում յաճախ կրկնւում է ջինիվիզների (Զենովացիների կամ Գենուացիների) անունը և ուղղակի դրանց են յատկացւում այստեղ հին բերդերի և աւանների աւերակները։

Բերդի մօտ կանգնած է մի բլուր, որի լանջերը լիքն են խոր փոսերով։ Մօտս եղող Թուրքերը բացատրեցին, որ Բասենի ժողովուրդն է ծակծկել այդ բլուրը նորա միջից գիլ հանելու, այսինքն մի տեսակ իւղալի դեղին կաւ, որ ամենուրէք գործէ ածւում աղքատ դասակարգի տներում սապնի փոխարէն։ Դորա պատճառով էլ բլուրը կոչւում է Քիլ Թաբիա։

Խանի չային այստեղ մտնում է ձորի մէջ, որով անցնում էր և բանուկ ճանապարհը իւր մի քանի կամուրջներով։ Յաճախ պատահում էին դադարած Թալկացած ռուս զինուորների փոքրիկ խմբեր, որ գնում էին կամ գալիս էին. նորանց յետեւից դանդաղ գլորւում էին 2-3 գիւղական սայլ զինուորների իրեղէններով։ Սայլերի վերայ իրեղէնների միջից գլուխները ցցում, յուսահատ նայում էին ուժից ընկած զինուորները։ Ահա մի տափարակ տեղ գետափում խմբուել են ուղտապանները, որը խմոր է ունցում, որը սաջի վերայ հաց է թխում, որը կրակի համար փայտ է կոտորում, որը պարկել ձգուել է գետնի վերայ, որը շորերը հանած՝ նորանց մէջ որոնում էր ինչ որ միջատներ. իսկ նորանց ուխտերը գետեզերքի վերայ դանուցիր՝ արածում էին։ Սոքա Բազուի նահանգի վրանաչու Թարաքեամայ Թուրքերից են, որոնք իւրեանց ուղտերով հանդերձ եկել են այստեղ պատերազմական պէտքերի համար։

Մի փոքր յառաջ և ահա ճանապարհորդի աչքին էին ընկնում գետի երկու եզերքում ևս կոնաձև բուրգերի շարքեր։ Մօտենալով՝ կարելի էր նշմարել, որ դոքա քամուց քայքայուած աւազոտ բլուրի աւելի պինդ և ամրակազմ մասերն են։

Խլէզը բարձրանում է մինի վերայ, բլէզը պտտւում է միւսի շուրջը, ճնճղուկը կանգնել է երրորդի գագաթին, կարծես ուշ չդարձնելով դէմի ժայռի մերկ ճակատին նստած բազէի վերայ։

Գետն իւր նեղ աւազանից դուրս եկաւ ահա, նորա հետ դուրս եկայ և ես։ Գետը վազեց գնաց Զիվին, իսկ ես մնացի առաջս դրած գիւղում — Կարաուրղանում։ Այսպէս էր պատուիրած ինձ, այսպէս էր կարգադրուած և ես պէտք է մնայի Կարաուրղանում, ուստի մի առանձին հետաքրքրութեամբ էի մտնում այդ գիւղը, առանձին աչքերով էի նայում նորա դիրքը, տեղը, տները, շրջակայքը, որովհետև մի առ ժամանակ այդտեղ պէտք է կենդրոնանար իմ պաշտօնական գործունէութիւնս։

ՊԱՌԶԵՐՈՒՆԻ

(Կը շարունակուի)

Դ. ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ [1])

Նոյն տեսարանը։

Մետրոդորի սան կողմնակի դուռը, ծածկուած է վարագուրով։ Նորա առաջ թափթփուած են մարմարիոնի խոշոր կտորներ։ Նոցանից դէպի վերայ գտնւում է զանազան գործիքներ, մուրճ և այլն։

ՏԵՍԱՐԱՆ I

ԵՒՊԷՑՏ ԵՒ ՀԵՐՈՍՏՐԱՏ. (*Դուրս են գալիս վերջինիս տնից*)։

ԵՒՊԷՑՏ — Դու՛, Հերոստրատ, իմ սրբազան
Պատերազմի մեծ դաշնակից,
Ճիշտն եմ ասում, ես առաւել
Նախամեծար կը համարեմ,
Թէ որ այժմ ինձ ցոյց տուած
Կաւից թրծած նախատիպար
Անդրու փոխան՝ ես դիտէի
Համակ ոսկուց և թանգագին
Աղնիւ, Հնդիկ փըղոսկրից
Կազմ ու պատրաստ՝ աստուածուհու
Վեհ արձանը։

ՀԵՐՈՍՏՐԱՏ — Մեծ քրմապետ,
Շատ հեռու չէ և այդ օրը։

ԵՒՊԷՑՏ — Ջանք ու եռանդդ ես գովում եմ.
Վերջին անգամ այս առաւօտ
Արշալոյսին թեթեսոլիկ
Աթենացին իւր արձանի
Վրայից անցրեց գրոցի լեզուն։

---

[1]) Տես «Լումայ» № 5 1903 թ.

ՀԵՐՈՍՏՐԱՏ Անկարելի բան ես պատմում։
ԵՒՊԷՑՏ Ազնիւ խօսքս քեզ երաշխէք։
ՀԵՐՈՍՏՐԱՏ (Ծաղրական եղանակով)
Աւելի վատ։
ԵՒՊԷՑՏ Ստրուկն յանկարծ
Բերնից թռցրեց։—Անդրին ամբողջ
Կազմ, պատրաստ է և փայլում է
Իւր մերկութեամբ։ Իսկ քոնը դեռ
Սկսուած էլ չէ։ Հէնց սկզբից
Խուժան ամբոխն հետաքրքիր
Իւր հայեացքին յագուրդ կտայ,
Աչքի առաջ պարզ տեսնելով,
Ինչ որ քնքոյշ գեղեցկութիւնն
Զգայնական քիմքն է չոյում։
ՀԵՐՈՍՏՐԱՏ Ամեն մի իր, անձ ու անհատ
Որ պատած է Արտեմիսի
Քող, շղարշով՝ անպարտ, անյաղթ
Միշտ կմնայ. իմ հաւատը,
Իմ յոյսն է այդ։
ԵՒՊԷՑՏ Աստուածուհու յոյսն էլ դեռ ես։
Դժուար բան չէ նորա համար
Անօրէնի կերտած անդրին
Կայծակ-նետով ջարդել, փշրել,
Հետք ու փետուր անհետ անել.
Բայց և յաճախ մահկանացուի
Ձեռքին բազուկն իւր բարկութեան
Զէնք ու գործիք է դարձրել։
ՀԵՐՈՍՏՐԱՏ Ասելդ ինչ է։
ԵՒՊԷՑՏ Եթէ այսօր,
Պատահաբար, եկուոր հիւրի
Մարմարիոնը ջարդ ու փշուր
Դարձած գտնուի՝ շատ հեշտութեամբ
Ես երկիւղած խուժ ամբոխին
Կը համոզեմ, թէ երկնքից
Ինքն իր ձեռքով է ուղարկել
Աստուածուհին իւր բարկութեան
Շանթ ու կայծակն։
ՀԵՐՈՍՏՐԱՏ (Զարմանալով նորան ոտքից-գլուխ)։

Խելօք խօսք է։
Աստուածուհին ինձ առաւել
Մեծ յաղթութիւն կը պարգևէ՝
Մի այլ զէնքով։

ԵԻՊԷՅՏ Ոչինչ չունիմ.
Քո ասածիդ պէս թող լինի՝
Բայց չմոռնաս, որ մրցակիցդ
Վտանգաւոր ախոյեան է։
Դու էլ գիտես՝ աստուածների
Պահած դառը գայլ չի ուտիլ։
Ով ինքըն է իւր գործի տէր,
Աստուածները նորան էլ միշտ
Օգնական են։ Յարմարագոյն
Ժուկ-ժամանակ դու չես գտնիլ,—
Արևն արդէն խոնարհւում է
Դէպի իւր մուտքն. ազմուկ, ժխոր
Վաղուց հետէ դադարել է,
Եւ սրբազան մեր մեհեանի
Շուրջը բոլոր հէնց այս ժամին
Անդորրութիւն է լոկ իշխում։—
Ահա որտեղ դու կգտնես
Քո թշնամու ձեռքի արդիւնք.

ՀԵՐՈՍՏՐԱՏ Մի փորձիր ինձ, մի հրապուրիր։

ԵԻՊԷՅՏ Միայն բարակ վարագուրով
Քողարկուած է իւր վարպետի
Անհոգ ձեռքով։ Այստեղ նայիր.
Տես ինչպիսի անհոգութեամբ
Գրոց, դուրիկ և ծանր մուրճն
Ընկած են վայր, ուրքի տակի։

(Առնելով մուրճը ձեռքը ծանր ու թեթև է անում)։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Ինձ փորձութեան մի տանիր դու։

ԵԻՊԷՅՏ Այժմ հեռու, շատ հեռու է։
Ես սրբազան անտառի մէջ
Հանդիպեցի նորան՝ ուրախ
Անհոգ, փայլուն ու վառ դէմքով
Զրօսնում էր նա թեանցուկ
Այն կնոջ հետ...

ՀԵՐՈՍՏՐԱՏ (Բացականչում է)։

Հ՞ը, նորա հետ...

ԵԻՊԷՑՏ Ընտրելուհու հետ միասին,
Որը նորան ի տրիտուր
Իրեն անմահ դիցանուշին
Համհաւասար բաղդատութեան
Դնելու համար, հէնց այժմենից
Երկրիս վերայ իւր սիրելուն
Արքայութիւն է պարգևում։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Օ՜, տուր ինձ այդ ծանր մուրճը։

ԵԻՊԷՑՏ (Թեթև կերպով թողնում է, որ մուրճը ձեռքից խլէ)։
Ազնիւ, արդար բարկութեամբ ես
Լցուել, վառւում։ Գնա, փչրիր
Եւ խորտակիր գեղեցկութեան
Արքայութիւնն։ Եւ տապալիր
Ցափշտակած, խլած գահից.
Ես քաղաքում ուրախառիթ
Այդ համբաւին եմ սպասում։
(Դուրս է գնում ձախ կողմից)։

ՏԵՍԱՐԱՆ II.

ՀԵՐՈՍՏՐԱՏ. Յետոյ ՏԻՄԱՐԻՏԱ.

ՀԵՐՈՍՏՐԱՏ (Միայնակ)։
Այժմ արդէն վրէժխնդիր
Ես կը լինեմ։
(Բարձրացրած մուրճով վազում է դէպի ծածկուած արձանը և քողը բարձրացնում, պոկում։ Մի առ ժամանակ նա կանգնած է, որպէս քարացած՝ տեսածի տպաւորութեան տակ։ Այդպէս նա կանգնած է մի փոքր ժամանակ էլ անշարժ, առաջուայ պէս անթարթ նայելով արձանին, ինչպէս մի երկնային տեսիլի։ Կակազելով յուզումից
Ես... ես... այնտեղ...
(Դողում է ամբողջ մարմնով։ Վերջապէս դժուարութեամբ շնչելով, գլուխը դարձնում է, կարծես ինքն-իրեն ստիպելով իրական տշխարհ դառնալ և նկատում է Տիմարիտային, որ նոր էր դուրս եկել տնից իւր անհաստատ քայլերով։ Մուրճը ձեռքից չթողնելով, օրօրուելով, դիմաւորում է նորան և բացականչում է յուսահատութեամբ)։
Մայր իմ...

ՏԻՄԱՐԻՏԱ Որդիս, դու այստեղ ես։
ՀԵՐՈՍՏՐԱՏ (Ջղաձգաբար սղմում է նորա ձեռքը)։
Նա այլ ևս ինձ չէ սիրում։
ՏԻՄԱՐԻՏԱ Ժամանակ է, կարծեմ, որդիս,
Մոռնալ, ձգել սիրադրժին։
ՀԵՐՈՍՏՐԱՏ Աստուածուհին նոյնպէս, մայր իմ,
Աստուածուհին նոյնպէս նորան
Առաւել է սիրում, քան ինձ։
ՏԻՄԱՐԻՏԱ Ի՞նչ ես ասում։
ՀԵՐՈՍՏՐԱՏ Ահա այնտեղ
Դրուած է նա՝ նորա արձանն..
Դա Կլիտիայի արձանացրած
Տիպ ու պատկերն է իսկապէս,—
Ի՞նչ եմ ասում. շատ առաւել
Վեհ, քան Կլիտիան։ Թէ որ տեսնել
Կարենայի՜ր։ Ա՜խ, թէ ես էլ
Կոյր լինէի, ինչպէս դու ես։
Այդ արձանը ես փչրելու
Էի եկել. բայց, մայր, ասեմ,
Որ արձանը ինքն ինձ փչրեց
Ու տապալեց...
ՏԻՄԱՐԻՏ Դեռն ես տալիս։
ՀԵՐՈՍՏՐԱՏ Չէ, ես կուզեմ ինքս ինձ խաբել,
Թէ չեմ տեսել այդ արձանը։
(Արագ մոտենում ծածկուած արձանին)։
Հեռու, հեռու, բանդագուչանք։
(Առնում, ձգում է ծածկոցը)։
Բայց և այնպէս՝ ես տեսնում եմ։
Առաջս կանգնած, կեցած է նա.
Եւ յաւիտեան՝ հուր-յաւիտեան
Պիտի կանգնած մնայ նա միշտ։
Ոչինչ, ոչինչ է իմ ձեռքի,
Մտքի ծնունդ, արտադրութիւն։
ՏԻՄԱՐԻՏԱ Ի՞նքդ ես ձգտում, դու թուլամորթ,
Ստորացնել, քեզ վայր ձգել։

---

[1]) Զառանցում ես։

Քո կոյը մօրդ ականջ արա,—
Ահա մօտ է փառքիդ ժամը,
Վեհ, ուղղամիտ է քո գործը։
ՀԵՐՈՍՏՐԱՏ Հա՛, հա՛, հա՛, հա՛... Ձեռքիս գործ՞ը։
Անվերջ ջանքի ու տանջանքի
Միայն պտուղ, իմ գեղեցիկ,
Անանց ու վեհ արտադրութիւն,
Ահա քեզ մօտ եմ չտապում։

(Մուրճը ձեռքին վազում է դէպի իւր տունը)։

(Այս տեսարանի ժամանակ մթնշաղն արդէն ընկել է։ Տաճարից դուրս են գալիս երկու ստրուկ, ձեռքերին մի-մի վառ ջահ, գնում են ջահակալների վրայ և գնում Գեղեսիայի տունը)։

ՏԵՍԱՐԱՆ Ա.

ՏԻՄԱՐԻՏԱ յետոյ ՊՐԱԿՍԻՏԵԼ և ԿԼԻՏԻԱ։

ՏԻՄԱՐԻՏԱ (կարծելով թէ դեռ ևս Հերոստրատի հետ է խօսում որի հեռանալը չէր նկատել)։
Այն վեհ գործը քեզ աւելի
Կլինի, անշուշտ, մխիթարող,
Քան թոյլ խօսքերս։

(Վերադառնում է իւր տունը։ Պրակսիտելն ու Կլիտիան երևում են աջ կողմից)։

ԿԼԻՏԻԱ Գիշերն արդէն
Վրայ հասաւ։

(Ինքնում է նեղ շաւղով)։

Ահա այսպէս
Քեզ հետ միասին առաջ երթամ
Անյայտ հեռուն. ո՛չ գիշերուայ
Խաւարն ու մութ, ո՛չ անախորժ
Վատ եղանակ, ո՛չ փրփրադէզ
Ծովի ալիք, ո՛չ սաստկաշունչ
Ահեղ մրրիկ, և գոցանից
Եւ ոչ մէկը ինձ փոյթ էլ չեն։

(Մութն աւելի ու աւելի է ընկնում ամպերի յետևից երևում է լուսինը)։

ՊՐԱԿՍԻՏԵԼ Այնտեղ, ահա, որտեղ հեռուում,
Մայր-մտոցի հրաժեշտ տուող

Ճառագայթը ոսկէ շողեր
Սփռած չերտով զիկ է բռնել՝
Այնտեղ չքնաղ իմ Աթէնքն է։

ԿԼԻՏԻԱ (Նորա գլուխը բռնելով և իրեն դարձնելով)։

Օ՜, ոչ. երբէք քո հայեացքը
Պիտի չիշխէ հեռուն փախչել
Եւ թափառել։ Ինձ, ինձ միայն
Այդ հայեացքի վառ, փայլ շողեր
Պիտի զուգեն։ Տես, տես ահա
Արտեմիսն էլ իւր սրարշաւ
Կառքի վերայ սուրում-սահում
Եւ գաղտ աչքով, աչքի-պոչով
Մութ սաղարթի ցանցի միջից
Մարմարիոնէ իւր սեփական
Տիպ արձանին աչք է նետում։

(Մի փոքր բարձրացնում է արձանի ծածկոցն, այնպէս որ լուսինը լուսաւորում է)։

Մի լաւ նայիր, ով դիցանոյշ,
Արուեստագէտի գործը, արդեօք,
Քեզ գահացում չէ՞ պատճառում։

ՊՐԱԿՍԻՏԵԼ (Նստելով մարմարիոնի կոպտար կտորի վերայ։

Մի՛ բաց անիլ։ Ինչ որ այնտեղ՝
Մթնշողում, քողով ծածկուած
Ու պահուած է—վերջացած է,
Բայց դորա հետ այս օրուանից
Է՛լ կորած է։

ԿԼԻՏԻԱ Քո արձանը
Այս օրուանից միայն սկսած
Կեանք է բուրում,—նա ապրում է։

ՊՐԱԿՍԻՏԵԼ Այո՛ միայն ուրիշների
Աչքի համար։ Իսկ ինձ համար՝
Արդէն մեռաւ, անկենդան է։

ԿԼԻՏԻԱ Երբ նուաճած ազգ ու ու լեզու,
Իբրև մրրիկ իւր թափի հետ
Առած կտանէ յաղթանակով
Նոյնպէս նոցա, որ սկզբում
Ոտք դէմ դրած նորա առաջ

Կանգնած էին, երբ դղրդող
Օրհներգութեան ձայների հետ
Իւր նոր տունը՝ դռներն արձակ
Լայն բաց արած տաճարի մէջ
Ոտք կը դնէ...

ՊՐԱԿՍԻՏԵԼ Օ՜, լուռ կեցիր։
Այդ բոլորը թոյլ արձագանդ
Կլինէր միայն այն նուագի,
Որ հնչում էր հոգուս խորքում,
Մինչ դեռ նորան կերտում էի։
Թող հիւրընկալս բոլորովին
Կազմ ու պատրաստ ձեռքիս պտուղն
Իւր տաճարի չքեղ, հարուստ
Ձեղնայարկի տակը տանէ,
Խունկ ու կնդրուկ, ողջակիզի
Հոգսերն ամեն վրան առնէ։
Ես չատ կանուխ լիքն ըմպանակ՝
Բաղտի բաժկից բաժինս առի։—
Տականքները ես չեմ սիրում։

ԿԼԻՏԻԱ (Կողքէ-կողք նստում է Պրակսիտելի հետ և սեղմում նորան)։
Այսպէս երբէք դու չես եղել։
Երկիւղ, սարսափ է տիրում ինձ,
Պրակսիտել։ Այս երեկոյ
Ցոյս ունէի տեսնել հպարտ,
Հրճուող, ուրախ...

ՊՐԱԿՍԻՏԵԼ Գիտես, Կլիտիա,
Անջատումի ամեն չիթից
Վիշտ է ժայթքում, ցաւ է ծորում...

ԿԼԻՏԻԱ Անջատումի։ Ի՞նչ անջատում...

ՊՐԱԿՍԻՏԵԼ Անջատուեցի իմ աւարտած
Մտքիս զաւակ, ձեռքիս գործից։
Հրաժեշտիս ողջոյն տուի։
Նորա չքեղ հանդէսներին
Մէկ էլ մարող այն արևը
Որ ծովն իջաւ, կծագի նորից
Երբ ես այնտե՞ղ... հեռւում կլինիմ։

ԿԼԻՏԻԱ Ասա, խօսիր, Պրակսիտել,

Ի՞նչ ես փնտռում, նորից խուզում
Ամպով պլլուած հորիզոնի
Գաղտնարանում։

ՊՐԱԿՍԻՏԵԼ Իմ Աթէնքս։

ԿԼԻՏԻԱ Բայց յիշում ես, որ ասացիր,—
«Այստեղ մի նոր Աթէնք գտայ»։

ՊՐԱԿՍԻՏԵԼ Օ՜, թէ գոնէ՝ լոկ մի անգամ
Տեսած լինէիր։

ԿԼԻՏԻԱ Այդչափ չքնաղ,
Գեղեցիկ է։

ՊՐԱԿՍԻՏԵԼ Մի ժամն ինչ է.
Մի ժամ անգամ հեռու լինելն
Կորած բան է. ամբողջ աշխարհս
Պարփակում է իւր մէջ միայն։
Նորա դռնից ոտք դուրս դնելն՝
Աքսորանքի ցուպ առնել է։
Նորա օդը, օդը անգամ
Ողջ հմայք է տեղն ու տեղը։
Այնտեղ գեղը, հաճ ժպիտով
Ողջունելով ծնուող մանկան,
Այնուհետև ամեն քայլում
Դարանակալ հետևում է
Այդ ծնուածին մինչ գերեզման։

ԿԼԻՏԻԱ Օ՜, թէ քեզ հետ այնտեղ լինեմ...

ՊՐԱԿՍԻՏԵԼ (Շարունակելով)։
Սաղարթախիտ լուռ պարտիզում,
Լեռան լանջին կանգնած է մի
Պարզ, հասարակ, բարձրահայեաց
Պայծառ, ուրախ տուն՝ մենաւոր.
Նուրբ, սիւնազարդ անդաստակով [1]),
Որ երեսի վերայ ձգուած
Որբ է մնացել. թէ չէ՝ ուրախ
Մուրճի զարկերն կեանք կտային
Կ՚աղմկէին են բոլոր տունը։
Դա — իմ տունս է։ Եւ նիրհում է
Այնտեղ ընկած անձև, կոպտար

[1]) Portique

Մարմարիոնը։ Նա եմ կոչին
Ականջ սրած սպասում է
Նոր կերպարանք ստանալու,
Ա՜խ, թախիծը...թախիծն օձի
Նման փաթթուել, սիրտս կրծում
Ու մաշում է՝ իմ մոռացուած,
Լքուած, թողած աստուածներիս
Սրտմաշուքով։ Ա՜խ, այդ թախիծն...-

ԿԼԻՏԻԱ (Արագ)

Քո Աստղկան խիստ կարօտով։

ՊՐԱԿՍԻՏԵԼ Նամանաւանդ նորա կարօտն...

ԿԼԻՏԻԱ (Տեղից վեր թռչելով)։

Դու սիրում ես, հա՛, դեռ նորան։

ՊՐԱԿՍԻՏԵԼ (Ելնելով տեղից)։

Միշտ սիրել եմ, պաշտել նորան։
Իսկ դո՞ւ, ասա, դո՞ւ չես սիրում
Փրփուր-ծնունդ Կիպրոսուհուն։

ԿԼԻՏԻԱ (Յուզմունքով)։

Նրա երկրաւոր նախատիպար
Կինը... արդէն սպասում է
Քեզ անհամբեր։

ՊՐԱԿՍԻՏԵԼ Այն կինը, ինձ։

ԿԼԻՏԻԱ Նորա կարօտն է քեզ մաշում։

ՊՐԱԿՍԻՏԵԼ (Հանաքով)։

Ա՜խ, դու խենդուկ։

ԿԼԻՏԻԱ Խոստովանիր։
Ի դէմս նորա աստուածուհուն
Ես դու սիրում, ինչպէս իմ մէջ
Մի քիչ առաջ սիրում էիր
Արտեմիսին, որի հետ էլ
Անհետ կորայ ես քեզ համար։
Դու ինձ համար ամեն ինչ էիր,
Եւ քեզ ամեն ինչ ձօնեցի
Առ՛ դոցա և կեանքս էլ։
Թպրտացող իմ խեղճ սիրտս
Տար դիր նորա ողջակիզի
Բագնի վերայ, իբրև նոր զոհ։

ՊՐԱԿՍԻՏԵԼ Եւ ասողը Կլիտիան է, հա՛,

Ազատակամ ընկերուհիս,
Որը գիտէր իմ նպատակս
Եւ համակուած էր ինձ տիրող
Վառ հաւատով։ Լուծ ես ուզում
Դնել վրաս· խանդոտ օղակ,
Շղթաներով՝ գործի սիրով
Բորբոք ձեռներս կապել կուզես,
Եւ իմ առաջ ընդ միշտ փակել
Գեղեցկութեան լեռ բարձունքում
Իւր բունն հիւսած յարկի դռներն։

ՊԼԻՏԻԱ Ա՜խ, ոչ· ներիր, ներիր ինձ դու։
Ներիր անմիտ զառանցանքներս։
Էլ միւս անգամ դու չես կրկնիլ
Քո հարցերդ։ Իմ սէրն երբէք
Քեզ կաշկանդող շղթայի դեր
Չի կատարիլ։ Ստեղծագործող
Բազուկդ երբէք ես չեմ խլիլ
Ժողովրդից։ Ինձ դու միայն
Հէնց այն չնչին հանգամաքով
Ուրիշներից շատ վե՛ր, շատ վեր
Տարար, հասցրիր, որ ողջ սիրտդ
Ի՛նձ ձօնեցիր։ Ես լաւ գիտեմ
Դու այն մէկին չես էլ կարող
Սիրել այնպէս, ինչպէս որ ինձ։
Եւ քո սրտի գաղտնարանի
Բանալիքը չես հաւատայ
Նորան երբէք։ Թող նա ինձնից
Շատ գեղեցիկ, չքնաղ լինի.
Եւ թէ նոյն իսկ աստուածների
Մեզ պարգևած ամեն մի օրն
Դու չարունակ աստուածուհու
Դիմագծերն առնես, կերտես
Նորա դէմքից, ապա գիտցիր,
Չեմ նախանձիլ ամենևին
Նորան երբէք։ Միայն թէ ես
Հետդ մէկտեղ կարող լինիմ
Ծծել չուրջդ պատող օդը,
Եւ մթնչող երեկոյին

Ցոգնած գլուխդ առնեմ գիրկս...
Քո յետևից քաշ գալ, ուր որ
Քայլերդ կուղղես, ուր որ երթաս՝
Ինչպէս ստրուկ հաւատարիմ։

ՊՐԱԿՍԻՏԵԼ Կամենում ես...

ԿԼԻՏԻԱ Ուր որ լինես,
Ուր էլ չերթաս՝ իմ հայրենիքս
Էլ այնտեղ է։ Տար ինձ Աթէնքդ։
Թող կապտին տայ հեռուում սրտիս,
Հոգուս հատոր, իմ անձկալի
Եփեսոսի անուշ ափերն,
Բայց ես գլուխս չեմ էլ թեքիլ
Նորա կողմը, չեմ էլ նայիլ։

ՊՐԱԿՍԻՏԵԼ Լաւ մտածիր որոշումդ։

ԿԼԻՏԻԱ Զափել, կշռել, մտածել եմ։

ՊՐԱԿՍԻՏԵԼ Նաւահանդիստ իսկոյն և եթ
Կ'իջնեմ այժմ,—պահապանը
Դեռ քնած չէ,—ես կիմանամ՝
Գուցէ վաղը, նաւս ուղղեալ
Կարողանայ առագաստներն,—
Մեզ Ատտիկէ հասցնելու։

ԿԼԻՏԻԱ Ի՞նչ։ Հէնց վաղը։

ՊՐԱԿՍԻՏԵԼ Դողում ես դու,

ԿԼԻՏԻԱ Օ՜, ոչ. ոչինչ։

ՊՐԱԿՍԻՏԵԼ Լաւ մտածիր.
Օտար երկրում սիրած բոլոր
Ծաղիկներդ իսկ չեն բուսնում։
Քո բնական հողդ սա է.
Եւ ինչ էլ ճոխ, փարթամ ծաղկել,
Բացուել ես դու։ Դու նորա հետ
Կապուած, կպած ես արմատով,—
Թէև նոքա քո աչքերից
Անտես լինեն,—արժէ միայն
Դանակ քաշել այդ արմատին
Եւ խեղճ ծաղիկն՝ անհետ կորաւ։

ԿԼԻՏԻԱ Ո՛չ, ոչ։

ՊՐԱԿՍԻՏԵԼ Ինչու ուրեմն այդպէս

Դող ու սարսուռ է քեզ պատել։

ԿԼԻՏԻԱ Պատճառն այն չէ, որ իմ սրտիս
Ցաւ ու կսկիծ է, որ յանկարծ
Հայրենիքից պիտի բաժնուիմ,
Այլ այն միայն, որ դու այստեղ
Իմս էիր, ամբողջապէս,
Իմս միայն, իսկ, ահ, այնտեղ
Էլ իմս չես։

ՊՐԱԿՍԻՏԵԼ Օ՜, սիրելիս։
Ես պարտք ունիմ, պարտք անվճար
Խղճիս, ինչպէս և քո առաջդ։
Ի՞նչ կանէի Եփեսոսը
Ես առանց քեզ։ Դու, դու դարձրիր
Նորան կեանքիս գագաթնակէտ։
Ինչու արդեօք վառ արևի
Հապճէպ ընթացքն ես չեմ կարող
Կանգնեցնել և կամ ասել,
Հրամայել, որ թանգագին
Ժամանակի բոպէները
Էլ չը շարժուին։ Արդէն ահա
Վաղուայ օրը դարբասի մօտ
Կանգնած, ծեծում և բարձրաձայն
Պահանջում է արքայական
Իւր իրաւունքն։ Ի՞նչ է բերում
Նա մեզ համար իւր թիկնոցի
Տակ թագցրած։ Մենք չգիտենք։
Սիրով նայենք մեր անցեալին։
Ինչպէս որ իմ ստեղծագործած
Անդրին դարեր պիտ հոլովէ,
Այնպէս մեր միտքն անցեալ բաղդի
Օրերն ամուր կը պահպանէ
Իւր սուրբ ծոցում։—Ես վայր կիջնեմ
Նաւահանգիստ, տեսնեմ ինչ կայ։

ԿԼԻՏԻԱ Բայց, ասա, ինձ, ե՞րբ կը դառնաս։

ՊՐԱԿՍԻՏԵԼ Շուտով կը դամ։

ԿԼԻՏԻԱ Քո լուր տալուն
Կսպասեմ ես։ Հէնց որ կանչես,—
Պատրաստ կլինեմ հետդ մեկնել։

ՊՐԱԿՍԻՏԵԼ Ե՛կ, մի անգամ էլ համբուրիր։

ԿԼԻՏԻԱ Հազա՛ր անգամ։

(Գրկախառնվում և համբուրվում են։ Պրակսիտելն արագ ազատվում է նորա գրկից և շտապով նաւահանգիստ իջնում)։

ՏԵՍԱՐԱՆ IV

ԿԼԻՏԻԱ։ Յետոյ ՀԵՐՈՍՏՐԱՏ։

ԿԼԻՏԻԱ (Մենակ. նորից նստում է մարմարիոնի կտորի վրայ։)

Զեփի՛ւռ, դու արի, այստեղս հովցուր,
Բայց իմ խեղճ սրտիս՝ իսկի ձեռք չտաս,—
Նորան հաճելի է կիրք ու բոցեր։
Թէ իմ մաղերիս հետ խաղաս, կասեմ,—
Սիրելուս մատներն են չոյում նոցա։
Հո՛վեր, դուք եկէք այստեղս համբուրէք,
Թող ձեր ամեն մի հով չունչ հոսանքում
Զգամ ես նորա ջերմ չունչ, գուրգուրանք.
Այդ չունչ, գուրգուրանք իմս են բոլոր։
Անտես լարերից օրհներգ էք հնչում
Ի պատիւ նորա. ձեր մեղմ հպումով
Ակացիոյ թուփը, արև չողերի
Շամանդ փոչիներն, հուժկու ծովերի
Գանգուր ալիքներն,—իմ շուրջս բոլոր,
Բոլոր տարերքը նորան են երգում,
Իմ խեղճ սկանջիս նորան չչնջում։

ՀԵՐՈՍՏՐԱՏ (Այլայլուած և բոլորովին պլակերպ դէմքով, ծանր շունչ քաշելով, դուրս է գալիս իւր տնից՝ մուրճը ձեռքին։ Նա անհաստատ քայլերով առաջ է գալիս)։

ԿԼԻՏԻԱ (Նկատելով նորան, սարսափում և տեղից վեր է թռչում)։

Ո՞վ է այնտեղ։

(Ճանաչելով)։

Ի՞նչ ես ուզում։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Հ՞ը, այդ դու ես, հա՛, դաւաճան,
Պահապան ես դարձել այստեղ։

ԿԼԻՏԻԱ (Զարհուրած նորա տեսքից)

Օ՜...

ՀԵՐՈՍՏՐԱՏ Նորից դողում, սարսռում ես

Քո պաշտելի անձի համար։
Մի՛ վախենար։ Միայն կուզեմ
Դարձնել նորան ինչ որ իրեն
է պատկանում։ Ցետ տուր իրեն։
(Մեկնելով նորան մուրճը)։

ԿԼԻՏԻԱ Սա ի՞նչ բան է... ինչի՞ նշան...
Այս մուրճն ի՞նչ գործ ունի ձեռքումդ...

ՀԵՐՈՍՏՐԱՏ Պրակսիտելի մուրճովն ահա,—
Հէնց այս մուրճով,—ջարդ ու փշուր
Արի իմ գործս, աշխատանքս։
(Շպրտում է մուրճը)։

ԿԼԻՏԻԱ Դո՞ւ, քո՞ ձեռքով...

ՀԵՐՈՍՏՐԱՏ Հարիւր կտոր
Դարձրի նորան։

ԿԼԻՏԻԱ Բայց... բայց ինչո՞ւ։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Ինչպէս էլ չուտ էր կատարւում,
Որքան ուրախ, թեթև սրտով։
Նըպատակիս արդէն հասայ։
Չէ՞ որ արժէր ջանք գործ դնել։
Հ՞ը, ճշմարիտ, չարժէր միթէ
Ջանք գործ դնել։

ԿԼԻՏԻԱ Օ՜, անմահներ։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Նպատակիս չատ թանգ գնով
Ես չհասայ։ Իզուր չէր, որ
Դեռ իմ քնքոյշ մանկութեանս
Հէնց առաջին իսկ օրերից
Ուտիչ մի միտք ճնշում էր ինձ.
Իզուր չէր, որ ամբողջապէս
Նորան մատնուած, տարուէտարի
Տանջւում էի ես անընդհատ
Ցաւերի մէջ և յուսահատ
Հծծում էի. իզուր չէր, որ
Երիտասարդ տարիներս
Ես զոհ բերի իմ ճիւաղին,
Ուրախութիւն և հրճուանք
Խիստ մտրակով ինձնից հեռու
Ես քշեցի. իզուր չէր, որ
Բաղդը ժպտուն չեմքիցս դուրս

Վռնդեցի։ Եւ այդ բոլորն
Այն պատճառով, որ դիտենամ՝
Թէ ով եմ ես,—մի խեղճ գաճաճ,
Անճար թզուկ, խլուրդների
Զարմ ու զաւակ, ուրիշ ոչինչ։
Թէև փոքրն ու չնչինը
Ատում էի բոլոր հոգւովս,—
Բայց և մեծին անընդունակ
Մարդ էի ես. մի խեղճ ճիճու
Փոշու, ցեխի մէջ սողացող,
Ողորմելի որդ ապիկար,
Որ արծուի թև ու թռիչք
Էր երազում։ Մեծ հսկայի
Գարշապարը կոխեց,՝ջնջեց
Խեղճ գոյութիւնս և ես ինքս
Ծաղր ու ծանակ ինձ դարձրի։

ԿԼԻՏԻԱ Որչափ հիւանդ ու ընկճուած ես։
Թէ որ հնարք ունենայի
Քեզ այդ ցաւից բժշկէի...
Եթէ վատ բան կամ չարութիւն
Քեզ արեցի, իմացիր, որ
Դիտմամբ եղած չէր արածս։
Քո անողոք վատ թշնամիդ
Հէնց քո մէջդ է բնակւում։
Ինձ հաւատա, Հերոստրատ,
Երբ որ սրտիցդ հանես, ձգես
Սև նախանձը, որ դչրի պէս
Սիրտդ փորում ու ծակում է,
Նորից ուրախ, անհոգ օրերդ,
Երիտասարդ ոյժերդ կը գան։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Եւ եթէ ես կարող լինեմ
Այդ կատարել...

ԿԼԻՏԻԱ Կարողացիր։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Նորան կը տամ անմահութիւնն
Յաղթութեան հետ, խոնարհութեամբ
Գլուխ կը ծռեմ ունայն, չնչին
Ու վաղանցուկ կեանքի լծին։
Ա՜խ, անաստուած, իմս եղիր,

Դու միայնակ։ Քեզ սիրում եմ·
Բայց սիրում եմ խելառի պէս,
Զար նախանձով, զզուանքով լի։
Ի՛մս եղիր։ Թող քո ջերմին,
Հրուտ կրծքիդ անցրած բոպէս
Անանց հաչուեմ։ Ի՛մս եղիր։
Թող ես մոռնամ, յափշտակուեմ
Կրքոտ հեշտանք փափկութեան մէջ
Իմ գոյութիւնս. սիրոյ անանց,
Շքեղ, պայծառ խնճոյք տար ինձ։
Բայց, մէկ ասէ՛ն,—յիմար, անմիտ,
Ի՞նչ անաղան հիւրի նման
Դուռ ես ծեծում...

ԿԼԻՏԻԱ (Ցեռ-յետ է քաշւում, դանդաղութեամբ գլուխը շարժելով)։
Ես չեմ կարող։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Ա՞յժմ դարձար հաւատարիմ։
Կոյր-աչիկայ, դու կարծում ես,
Արժէք ու գին կը տայ սիրուդ։
Երբ և իցէ նա կը սիրէ
Ինչպէս ես եմ սիրել՝ խելառ։
Դու ինձ համար եւ կեանք էիր,
Ե՛ւ փրկութեանս ամուր խարիսխ,
Ե՛ւ լոյս անշէջ, եւ կարևոր
Քան սեփական սրտիս բաբախ։
Միակ կինը երկրիս վերայ։
Նորա համար... Զոհ կը բերէ
Իւր ապագայ փառք ու համբաւ
Սիրուդ համար. կը մոռանայ
Իւր արուեստը լոկ քեզ համար։

ԿԼԻՏԻԱ Ո՛չ։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Եւ դարձեալ...

ԿԼԻՏԻԱ Սիրում եմ ես,
Սիրում նորան։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Թէև դորա
Փոխարէն քեզ արհամարհէր...

ԿԼԻՏԻԱ Սիրում եմ, սիրում նորան։...

ՀԵՐՈՍՏՐԱՏ Թէև լքէր, դէն շպրտէր...

ԿԼԻՏԻԱ Սիրում եմ, սիրում Նորան։
ՀԵՐՈՍՏՐԱՏ Կին դու, բաւ է, ինձ մի տանջիր։
Գոնէ յոյսի մի չնչին կայծ
Շնորհիր, տուր ինձ, որ ես Նորա
Մութ չողերով խղճուկ օրերս
Բարշ տամ անցնեմ. Մի մտածիր,
Պաշտած կուռքդ կերթայ չուտով
Եւ կմնաս դու մէն մենակ.
Նորա հմայքից կամաց-կամաց
Աչք կը բանաս և մի ուրիշ
Ներող սիրոյ ձեռք կը մեկնես...
ԿԼԻՏԻԱ Ես Նորա հետ Աթէնք կերթամ։
ՀԵՐՈՍՏՐԱՏ (Բացականչելով)։
Ո՛չ. չես գնայ։
ԿԼԻՏԻԱ Բոլոր սրտով
Խղճում եմ ես անբաղդ վիճակդ,
Բայց չեմ կարող մեղմել Նորան։
Արհամարհիր, ատիր դու ինձ։
Չեմ էլ կարող այլ բան սպասել,
Արարքս միայն դրան է արժան։
Բայց ես պէտք է նրան հետևեմ
Հետը մեկնեմ. պարտաւոր եմ։
ՀԵՐՈՍՏՐԱՏ (Ծիծաղելով)։
Զարմանալի արար-աշխարհ։
Ողջ աշխարհս մէկի համար
Իսկ ինձ համար—և ոչ մի բան,
Ո՛չ սեղանի փշրանք չնչին,
Ո՛չ մի թերթիկ չքեղ փնջից։
Այդպէս բաշխել միայն գիտէ
Վեհ դիցանոյշն իւր պարգևներ։
Եւ դեռ, ապուշս, սիրում էի
Հաւտալ Նորա արդարութեան։
Այդ դեռ քիչ է—պաշտում էի։
Այո, հարիւր անգամ աւել
Չերմ, բոց սիրով էի սիրում,
Պաշտում Նորան, քան ինքն ինձ։
Ճիշդ քեզ նման մի խորամանկ,
Նենգ ու խարդախ կին է միայն...
Թող անիծուի Նորա անունն։

ԿԼԻՏԻԱ Լռիր, անմիտ, խելակորոյս։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Արդարացի բաժինս կուզեմ։
Այդ տուր, գոնէ, ով դիցանոյշ։
Բայց այլ ևս ոչինչ, ոչինչ
Ես այդ մասին չեմ էլ խնդրում։
Ի՞նքս կարող կլինեմ բանալ
Կծկուած ձեռքդ։ Թէ կարծում ես,
Որ անզօր եմ՝ ոյժ, զօրութիւն
Ինձ չտալովդ։ Դու կարծում ես
Հռչակաւոր ձեղնայարկդ՝
Քո տաճարը քեզ կը փրկէ,
Կը պահպանէ՞... Ով չի կարող
Ստեղծագործել՝ քանդել, աւրել
Միշտ կարող է։

ԿԼԻՏԻԱ Ի՞նչ եմ լսում,
Սարսափելի բան ես ասում։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Եւ սարսափով ողջ մարդկութիւն
Կուզեմ կապել ու կաշկանդել,—
Ահա թէ փառք։ Կեանք ունենալ
Եւ ազգերի սրտի խորքում
Դող ու սարսափ միայն ազդել
Եւ այն էլ միշտ, հուր-յաւիտեան,—
Ահա որն է կեանք ասածդ։
Մի գիշերում ստեղծագործող
Վարպետի մէջ ողջ աշխարհի
Հրաշակերտի միտքը ծնեց։
Մի գիշերում ստեղծագործած
Հրաշակերտը բոց կրակի
Փայփլուքով կը զարդարեմ։
Լսում ես թէ, խուլ ես դեռ ևս,
Սուտ, խաբեբայ, աստուածուհի։
Թող վառ ջահից սփռող բոցը
Թող կեղծ փայլդ իբրև վառուող
Անչէջ մի ջահ՝ իմ անունս
Դարեր անանց անմահացնէ,
Եւ միշտ յիշուի։

ԿԼԻՏԻԱ (Նորա առաջը կարելով)։
Կանգնիր, անմիտ։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Թող ինձ, թող տուր։

ԿԼԻՏԻԱ (Աշխատելով զոռով պահել)։

Օ՜, օգնութիւն...

ՀԵՐՈՍՏՐԱՏ Դէն, դէն գնա։ Մի խանգարիր.

Այժմ միայն ճանաչեցի

Անմահութեան ճանապարհը։

(Արագ դիմում է դեպի բեմի խորքը, պոկում է ձողաջահի վրայից վառուող կերոնը և, ձեռքին բռնած սանդուղքներով վազելով բարձրանում մտնում է տաճարը և դուռը փակում իւր յետևից)։

ՏԵՍԱՐԱՆ V

ԿԼԻՏԻԱ *Ցետոյ իսկոյն* ՏԻՄԱՐԻՏԱ, *քիչ յետոյ* ԿԱԼԼԻՑ, ԴԻՕԿԼ։ *Քաղաքացիք։ Ժողովուրդ,* ՄԵՏՐՕԴՈՐ, ԳԵԳԵՍԻՑ ԵՒՊԻՑՏ։

ԿԼԻՏԻԱ (Ինքն իրեն կորցրած, վազում է դեպի ձախ. բարձրաձայն)։

Օ՜, օգնութիւն... օգնութիւն, վայ...

Օ՜, մայր իմ, մայր Տիմարիտա։

Սարսափելի ճակատագիր։

Ա՜խ, չուտ հասիր, կանչիր նորան։

ՏԻՄԱՐԻՏԱ (Դուրս գալով իւր տնից)։

Ո՞վ էր ինձ մայր կանչողն հիմա։

ԿԼԻՏԻԱ (Շնչասպառ)։

Հարցնելու ժամանակ չէ։

Կանչիր նորան։

ՏԻՄԱՐԻՏԱ Ուրեմն դու՞ ես։

Եւ դեռ ես վստահացար...

ԿԼԻՏԻԱ Որդիդ... որդիդ խելքն է թռցրել...

Ինքը իրեն չէ ճանաչում...

ՏԻՄԱՐԻՏԱ Ի՞նչ գործ ունիս դու որդուս հետ։

Դէ, հեռացիր, գնա, կորիր։

ԿԼԻՏԻԱ Դու՞, դու միայն նորան փրկել

Դեռ կարող ես։ Մի վայրկեանի

Գործ է միայն... Դէ, չտապիր։

ՏԻՄԱՐԻՏԱ Բայց ուր գնամ։

ԿԼԻՏԻԱ Դէպի տաճարը...

Խելագարը կամենում է

Անհետ կորցնել ողջ տաճարը։

ՏԻՄԱՐԻՏԱ Գնա, կորիր, իմ չէմքիցս։

(Բեմի խորքում ձախ կողմից երևում են քաղաքացիք. Նոցա մէջ և Կալիս ու Դիոկլ)։

ԿԱԼԼԻՏ Բարդ-բարդ ծուխ է քլքլում։

(Բոցը տաճարի առաստաղի տակից դուրս է ժայթքում)։

ԿԼԻՏԻԱ (Նկատելով այդ բանը)։

Սարսափելի բան պատահեց։

Այժմ արդէն, էլ շատ ուշ է։

ԶԱՆԱԶԱՆ (Աղաղակելով և իրար ընդհատելով)։

ՁԱՑՆԵՐ Տաճարն է, վայ մեր տաճարն է

Այրում-վառում։—Տաճարն է, ախ...

ՏԻՄԱՐԻՏԱ Կէս գիշերին ինչ են այսպէս

Գոռում-գոչում բարձրացրել։

ԿԼԻՏԻԱ Մեծ տաճարն է բոցավառուել։

ՏԻՄԱՐԻՏԱ Սուտ են ասում...

ԿԼԻՏԻԱ Որդի՛դ, որդիդ

Հրդեհ ձգեց։

ՏԻՄԱՐԻՏԱ Սուտ ես ասում,

Որ այդպիսով կորցնես նորան։

ԿԼԻՏԻԱ Թշուառակա՛ն, ես քեզ միայն

Հաւատացի և գաղտնիքը

Քեզ ասացի,—ուրիշ ոչ ոք

Չի իմանալ։

(Կրակը հետզհետէ բորբոքում է՝ շուտով ամբողջ ձեղունը կորչում է բոցերի մէջ)։

ՁՄԲՈԽԸ Հրդեհն անցրէք։

Մեծ տաճարը փրկելու ճար,

Հնար գտէք։—Է՜յ, օգնութիւն։—

Դէ՛, շուտ հասէք։—Ա՛յս կողմն եկէք...

(Տաճարի սանդուղքներից վեր բարձրանալով, հրում են դռները)։

ՈՒՐԻՇ ՁԱՑ- Դռներն ամուր փակուած են, պինդ։—

ՆԵՐ Ներսից սողնակ է անցրած։—

Զարդ ու փշուր արէք շուտով։

ՏԻՄԱՐԻՏԱ (Հանգիստ ու անխռով)։

Այդ անողը իմ որդին չէ։

Դժբաղտութի՜ւն....

ՁԱՑՆԵՐ (Ամբոխը արագ աճում է, վերջը ամբողջ բեմը բոլորովին լցնում։ Շասերը իրար յետևից գալիս են՝ Եւպէյոը նախաբեմի դռնից, ձախ կողմից Գեգեսիչ և Մետրոդոր իրենց տնից։ Ընդհանուր իրարանցում. ամենքը դէս ու դէն վազում, յուսահատութիւնից ձեռներ-մատները ջարդելով)։

ԱՄԲՈՒԽԸ Կացին տուէք, սանդուղք բերէք։

ԵՒՊԷՅԴ Սրբավայրը բոցերի մէջ
Անհետ կորաւ։ Փող փչեցէք,
Շեփորները հնչել տուէք։

ԳԻԳԵՍԻՑ Ի՞նչ, աշխարհիս վերջն է հասել։

ԿԼԻՏԻԱ Ո՞ւր է, արդեօք, Պրակսիտելն։

(Ճղում անցնում է ամբոխը և անհետանում բեմի խորքում)։

ՄԵՏՐՈԴՈՐ Օ՜, սարսափի անանց գիշեր։
Արիւնագոյն բոցերի մէջ
Սրբավայրն է անհետ կորչում.
Մի սրբավայր, որի հատը,
Հաւասարը չունի աշխարհս։

(Բեմի յետևից լսւում է փողերի անընդհատ ձայներ)։

ԺՈՂՈՎՈՒՐԴ Օ՜, չար, նենգ բաղդ... Դժբաղդութիւն։
Մենք կորած ենք։—Վա՛յ մեր գլխին։
Երկնքիցն է թափւում հուրը—
Աստուածների բարկութիւնն է։

ՄԵՏՐՈԴՈՐ (Ձայնը բարձրացնելով)։
Բոլորովին իզուր է ձեր
Ողբ, աղաղակ։ Աստուածների
Ցասումը չէ խառնուած այնտեղ,—
Դա մի մարդու անլուր, ստոր
Մեծ չարութեան, ձեռքի դործ է։
Անողն, անշուշտ, Եփեսոսի
Թշնամին է, մեր մեծութեան
Չար նախանձորդ։ Որոնեցէք,
Գտէք նորան։

ԺՈՂՈՎՈՒՐԴ (Կատաղած)
Որոնեցէք.
Գտէք չուտով։ Մահ, մահ նորան։
Հաղարաւոր կտոր արէք
Պիղծ մարմինը։

(Անընդհատ կայնի հարուածների տակ տաճարի երկփեղկ դռները բացւում են երկուսն էլ։ Շէմքի վրայ երևում է Հերոստրատը, վառուող ջահը բարձր բռնած. դէմքը կորած մուրի մէջ, մազերը գզգզուած։ Ամբոխը առրոպէ զարհուրած նորա տեսքից յետ-յետ է քաշւում)։

ՀԵՐՈՍՏՐԱՏ (Վազելով իջնում է սանդուխտներից, վայրենի ուրախութեամբ շարժելով ձեռքի ջահը)։

Մեղաւորին էք որոնում։
Գիտցէք, ուրեմն, լաւ իմացէք
Ե՛ս եմ, ես այդ, Եփեսացի
Հերոստրատս,—ձեր մտքերում
Թող պինդ դրոշմուի, արձանանայ
Իմ անունս, որ յաւիտեանս
Էլ չմոռնաք։—Ե՛ս եմ արել,
Ես՝ Հերոստրատս։ Եւ՝ արածովս
Պարծենում եմ։

(Ընդհանուր զայրոյթի և սարսափի աղմուկ։ Մի ակնթարթում կատաղած ամբոխը շրջապատում և կալանաւորում է նորան։ Տիմարիտան, որ մինչ այդ հպարտուղիղ կանգնած էր նախաբեմի վրայ, այդ խօսքերը լսելիս, առանց ձայն հանելու, ինչպէս կայծակնահար, գետին է գլորւում։ Տաճարի առաստաղը ահագին աղմուկով փուլ է գալիս)։

(ՎԱՐԱԳՈՅՐՆ ԻՋՆՈՒՄ Է)

Ե. ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

Ոչ շատ մեծ դահլիճ: Ձախ կողմը՝ առաջամասում մի դուռ, աջ կողմը, առաջամասում մի ուրիշ աւելի փոքր դուռ: Բեմի խորքում երկար սիւնաշար, սիւների մէջը լայն անցքերով, ոչ շատ բարձր ծովեզր, որտեղից բացւում է տեսարան դէպի ծովը: Նաւերի առանձին-առանձին երևացող կայմերի կատարներից նկատելի է, որ շինութիւնը կառուցուած է հէնց ծովափին նաւահանգստի մօտ: Յետևի մասում, դեռ ևս երևում է ծխացող և արևի շողերով լուսաւորուած, տաճարի կողմնակի ճակատի աւերակները: Ձախ կողմը բարձրավանդակի վրայ, առանձին տեղ դատաւորների համար: Աջ կողմը փայտէ նստարան:

ՏԵՍԱՐԱՆ I

ՀԵՐՈՍՏՐԱՏ (Շղթայակապ, գլուխը նստարանին յեց, քնած է յատակի վերայ: Երբեմն-երբեմն ձախ կողմից լսւում է դուրսն աղմկող ամբոխի խուլ ձայնը: Ձախ դրան դրսի կողմից դղրդոցով բացւում է դրան ծանր սողնակը):

ՄԵՏՐՕԴՈՐ (մտնում է զինուորի ուղեկցութեամբ):

ՄԵՏՐՕԴՈՐ (Դիտելով Հերոստրատին):
Քնած է նա:

ԶԻՆՈՒՈՐ Հէնց որ այստեղ
Բերինք նորան և ամբոխի
Զայրոյթ-վրէժից ազատեցինք,
Իսկոյն քնեց մահանման
Խորունկ քնով:

ՄԵՏՐՕԴՈՐ Բայց չփորձեց
Փախուստ տալու:

ԶԻՆՈՒՈՐ Առաջներս
Ընկած կգալ, կարծէք, հարսնիք
Կամ հրաւէր գնալիս լինէր:

ՄԵՏՐՕԴՈՐ Օտարոտի բան ես ասում:
Մի գուցէ թէ՝ ձեր աչալուրջ

Հսկողութեան դլխին անուշ,
Քաղցր երազ բերել կուզէր...

ՁԻՆՈՒՈՐ Իզուր. անմիտ փորձ կլինէր։
(Ցոյց տալով բեմի խորքը)։
Խոր, անյատակ գահավէժ է
Այնտեղ՝ ներքև...

ՄԵՏՐՈԴՈՐ (Ներքև նայելով և յետոյ ցոյց տալով աջակողմի դուռը)։
Իսկ այս դռուը։

ՁԻՆՈՒՈՐ Արթուն հսկող պահապան կայ
Եւ խիստ ամուր կողպէք ունի։

ՀԵՐՈՍՏՐԱՏ (Քնի մէջ)։
Մինչ յաւիտեան... հաւատարիմ...

ՄԵՏՐՈԴՈՐ Զառանցում է։
(Լսւում են ամբոխի «ղմուկի ձայներ)։
Ամբոխն հազիւ
Կարող լինինք զսպած պահել։
Իրաւացի պահանջ էլ է,—
Շուտ դատաստան կտրել, պրծնել։
Բայց բանն այն է, որ դորա հետ
Ազատ մուտք չեն տալիս գալու
Դատողներին։—Ուրք ճանապարհ
Բացէք եկող դատողներին։—
Ես կը մնամ առ այժմ այստեղ։

ՁԻՆՈՒՈՐ Այս բոպէիս։
(Դուրս է գնում ձախ կողմից)։

ՄԵՏՐՈԴՈՐ Զարթիր։ Վեր կաց։
Արդէն լոյս է։ Առաւօտ է։

ՀԵՐՈՍՏՐԱՏ (Փակ աչքերով)։
Առաւօտ է...

ՄԵՏՐՈԴՈՐ Ե՛լ, ելի. զարթիր։

ՀԵՐՈՍՏՐԱՏ (Աչքերը բանալով)։
Ո՞վ էր ասում առաւօտ է։
Դռուը էիր, հա։
(Ախորժանքով ձգուելով)։
Օ՜, շատ վաղուց,
Վաղուց էր, որ այսպէս հանգիստ
Չէի քնել։ Ի՜նչ կազդուրիչ
Անուշ քուն էր։—Սա առաջին
Անգամն է, որ երկար, անթիւ

Դառն օրերից յետոյ միայն
Այսպէս հանգիստ քնում եմ ես,
Վաղուան տանջող յաջողութեան
Հոգսից ազատ։ Արժէ, անշուշտ,
Որ մարդ հանդիստ, անդորր առնէ
Իւր կատարած գործից յետոյ։

ՄԵՏՐՈԴՈՐ Դու դեռ ես վառանցում ես։

ՀԵՐՈՍՏՐԱՏ (Կէս-բարձրացած, նայում, դիտում է տաճարը)։
Ա՜խ, ոչ։ Միայն դեռ նոր ծագող
Արեգակի շող ու լուսով
Հազիւ կարող եղայ զգալ
Իմ անկաշառ հայեացքովս
Արած գործիս ողջ մեծութիւն։
Գոհ եմ, գոհ չատ. արած գործս
Կատարեալ է։

ՄԵՏՐՈԴՈՐ Մի ականջ դիր,
Թելքի պտուկ։ Ժողովուրդը
Մի ընդհանուր բերան դարձած
Անէծքով է արտասանում
Քո անունդ։

ՀԵՐՈՍՏՐԱՏ (Հրացայտ աչքերով)։
Իմ անո՞ւնս։
Այն էլ ամբողջ ժողովո՞ւրդը։
Օ՜, գիտէի, ըզգում էի։

ՄԵՏՐՈԴՈՐ Այս բոլէիս դատաստանի
Առաջ պիտի ելնես, դիտե՞ս։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Եւ անվրդով սպասում եմ։

ՄԵՏՐՈԴՈՐ Չէ՞իր ուզիլ սրտիդ բեռը
Մի փոքր ինչ թեթևցնել։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Հը՜մ... քո առա՞ջ։ Չեմ ըմբռնիլ։

ՄԵՏՐՈԴՈՐ Մի՞ մոռանար, Մետրոդորն եմ,
Որ ամենից խոստովանած
Թելք-հանճարով դժուարագոյն
Առեղծուածներ է բաց արել։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Խղճում եմ քեզ բոլոր հոգովս։
Միայն ինքդ ես քո հոգածուն
Ու գնհատողդ։ Քո յիշատակդ
Կանցնի շուտով, կանցնի նոյնպէս

Իմաստութիւնդ։ Հպարտացիր,
Քանի դեռ ես մոռացութեան
Անլոյս, խաւար, անհոգ ովկիան
Չէ կուլ տուել տարիներդ։
ՄԵՏՐՈԴՈՐ Չէ որ, դժբաղդ, ես էլ նոյնպէս
Դատողներիդ թուի մէջ եմ։
ՀԵՐՈՍՏՐԱՏ Չէի ուզիլ մեր դերերը
Լոկ մի բոպէ փոխուած տեսնել։

ՏԵՍԱՐԱՆ II

ՀԵՐՈՍՏՐԱՏ, ՄԵՏՐՈԴՈՐ, ԹՐԱՍՈՆ, (և ուրիշ երեք հոգի էլ վեհ, յամրաքայլ մտնում են ձախ կողմից)։—ԵՐԿՈՒ ԶԻՆՈՒՈՐ. (մտնում են նոցա յետևից և կանգնում դռան երկու կողմը)։

ՄԵՏՐԱԴՈՐ Դատաւորներդ եկան արդէն։

(Դատաւորները լուռ նստում են իրենց տեղերը։ ԹՐԱՍՈՆԸ նստում է մէջ տեղը. առաջին նստարանը մնում է Մետրոդորի համար)։

ՄԵՏՐՈԴՈՐ (Դիմելով դէպի իւր աթոռը)։
Մեծարելի Թրասոնին
Ողջոյն յաւէտ։
ԹՐԱՍՈՆ (Գլխի շարժումով շնորհակալութիւն յայտնելով)։
Երբէք դեռ ես
Այսչափ թախիծ,՝ վիշտ ու մորմոք
Չենք զգացել մենք սրբազան
Դատաստանին ձեռք զարկելիս։
Դեռ մեր միտքը չէ կամենում
Հաշտուել, տեսնել,—թէ նոյն իսկ իւր՝
Եփեսոսի ծնունդ զաւակ,
Մեր իսկ արիւնն այդ անաստուած
Գործի տէրն է։ Երբ մեղանից
Ամէն մէկս վստահօրէն
Կարող էինք չը հաւատալ
Այդ ամենին։ Բայց դու ինքդ,
Քո բերանով քեզ մեղաւոր
Ճանաչեցիր ու յայտնեցիր։
ՀԵՐՈՍՏՐԱՏ Եւ նորից նոր, կրկին անգամ

Դատողներիս առաջ կասեմ
Բարձր ձայնով. Ես արեցի,
Չեմ թագցնում, այդ ամենը։

ԹՐԱՍՈՆ Քեզ ո՞վ դրդեց։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Եւ ո՛չ մէկը։

ԹՐԱՍՈՆ Բացի քեզնից ուրիշ ոչ ոք
Տեղեկութիւն անգամ չունէր
Քո չարամիտ գործի մասին։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Ո՛չ ոք։ Միայն ես գիտէի
Դիտում ու գործս. և արեցի։
Չեմ էլ զղջում դորա համար։

ԹՐԱՍՈՆ Ասա, գու մեզ, ինչ պատճառով,
Ի՞նչ դիտումով անվերջ, յաւէտ
Անէծքի տակ դրիր գլուխդ։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Միևնոյն չէ՞ ձեզ համար, թէ
Ի՞նչ դիտումով կամ պատճառով,—
Ահա հէնց այժմ իմ իսկ գլխովս
Ցանցանքս քաւել պատրաստ եմ ես։
Երկար հարցեր էլ չ'տաք ինձ։
Առէք կեանքս և այդ գնով
Փրկանք տուէք այն ամենին
Ինչ որ արի, կատարեցի։

ԹՐԱՍՈՆ Այդպէս, անշուշտ, չէիր խօսիլ,
Թէ որ անձդ արդարացնելու
Հնար ու ճար ունենայիր։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Ի՛նքս եմ ինձ արդարացնողն։

ԹՐԱՍՈՆ Բայց ո՞ւմ առաջ, եթէ ոչ քո
Առաջդ նստած դատողներիդ։
(Աչքերը երկինք դարձնելով)։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Աստուածուհու աչքի առաջ։

ԹՐԱՍՈՆ Հը՞մ, նորանով, որ անսահման
Անարգանքի՞ ենթարկեցիր։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Դորա փոխան և անսահման
Սիրում էի, պաշտում նորան։

ԹՐԱՍՈՆ Դեռ հայհոյել, սրբապղծել
Դու կարող ես նորա անունն։
Բայց մեզ պատճառն, պատճառն ասա
Քո նենգամիտ չար խորհրդի։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Մահուան դիմաց կանգնած բոպէն
Խոր լռութեամբ սքողելն, անչուչտ,
Շատ առաւել արժանի է։

(Թրասոնը նշան է տալիս զինուորներին, որոնք բաց են անում դուռը։ Շէմքի վրայ երևում է Տիմարիտան, որին զինուորներից մէկն առաջնորդում է դատաւորների մօտ)։

ՏԵՍԱՐԱՆ III.

ԱՌԱՋԻՆՆԵՐԸ և ՏԻՄԱՐԻՏԱ

ՀԵՐՈՍՏՐԱՏ (Ցնցւում է մօրը տեսնելիս)։
Օ՜...
ԹՐԱՍՈՆ Ճանաչում եմ դու այս կնոջն։
ՀԵՐՈՍՏՐԱՏ Իմ մայրս է, մայրս է դա։
ՏԻՄԱՐԻՏԱ (Բոլորովին գունատուած, բայց կամքի ոյժով ծածկում է իւր յոյզը. հանդիստ ձայնով)։
Նորա մայրն եմ։
ԹՐԱՍՈՆ Գիտե՞ս, ինչո՞ւ,
Տիմարիտա, այստեղ ես դու։
ՏԻՄԱՐԻՏԱ Գիտեմ, այո։
ԹՐԱՍՈՆ Դու չե՞ս կարող
Նորա արած սարսափելի
Գործի պատճառն մեր ամենքիս
Մտքի առաջ պարզել, մեկնել։
ՏԻՄԱՐԻՏԱ Ո՞վ անաչառ, դատաւորնե՛ր,
Մի՛ հաւատաք Նորա խօսքին։
Իզուր տեղը ցնորք-տապից
Խելքը կորցրած, սուտ է ասել,
Մատնել իրեն ու զրպարտել։
ԹՐԱՍՈՆ Ինչո՞վ, արդեօք, կարող ես դու
Ասած խօսքերդ ապացուցել։
ՏԻՄԱՐԻՏԱ Ինձնից Նորան ժառանգութեան
Անցած չիտակ, անչեղ ոգով։
Այն առաջին իրն, առարկան,
Որ գրաւեց իւր մանկական
Եւ առաջին անմեղ հայեացքն՝
Սուրբ տաճարն էր։ Եւ ես Նորա
Օրօրոցը օրօրելիս

Երգել եմ միշտ աստուածուհուն,
Նորա լոյսի, չքնաղ կայան։
Եւ երբ արևն արշալոյսին
Իւր վարդամատ փայլ շողերով
Դիցանոյշի սուրբ տաճարի
Եռանկիւնի դրուագաւոր
Բարձր ճակատն ալ ծիրանի
Երանգներով զուգում, պճնում,
Զարդարում էր, իւր մանկական
Մանրիկ թաթերն ամեն անգամ
Նոր հրճուանքով դէպի նա էր
Պարզում, մէկնում և ծափ զարկում։
Իմ աչքերս հանգան անյետ
Եւ մարեցին, որ նոր ի նոր,
Կրկին անգամ վառուին, փայլին
Նորա պայծառ աչերի մէջ։
Եւ ինչպէս որ խիստ հոգատար
Պարտիզպանը իւր մարգերի,
Ածուների ծաղիկներից
Բոլորի մէջ մէկը միայն՝
Հազուագիւտը գգւում, պահում,
Պահպանում է, այնպէս էլ ես
Իւր հոգու մէջ միակ ձգտում,
Իղձ եմ դրել, սնել, մեծցրել,—
Իւր անունը փառաւորէ,
Մեծ սրբութեան անուան հետ յար
Կապէ, ձուլէ հուր յաւիտեան։
Այժմ ասա, անգին զաւակս,
Դու ես արել այն ամենը։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Ե՛ս եմ արել, անուշ մայրիկս։

ՏԻՄԱՐԻՏԱ (Գոռալով)։
Սուտ ես ասում։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Ե՛ս եմ արել,
Ես միայնակ։ Եւ դու միայն
Կարող կլինիս ինձ հասկանալ։

(Զինուորներից մէկը արագ մօտենում և կամենում է վայր ընկնող Տիմարիտային բռնել)։

ՏԻՄԱՐԻՏԱ (Հեռացնելով նորան)։

Թողէք ինձ դուք։ Դեռ կարող եմ
Թոյլ ոտքերիս վերայ կանգնել։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Ինչ երազում, ըզձում էի,
Այժմ արդէն կատարուած է։
Հրճուէիր, մայր իմ։ Ցոյսերդ ամեն
Կատարուեցան։ «Փառք տուր ինձ, փառք,
Ինձ փառք չնորհիր, աստուածուհի»
Այդպէս էիր փոքրիկ մանկանդ
Սովորեցնում աստուածուհուն
Աղօթելիս։ Այժմ արդէն
Աստուածուհին պարգևել է
Ինձ այդ փառքը։ Թէև զօռով,
Ակամայից՝ բայց տուել է.
Իմ անունս այսուհետև
Իւր տաճարի յիշատակի
Եւ անուան հետ կապուած է միշտ,
Միշտ անբաժան։ Դու կը լես,
Թէ ինչպէս նա՝ իմ անունս
Բերնէ բերան կանցնի չուտով.
Դեռ ծխացող աւեր-բեկոր
Մնացորդներից նա թև կառնի,
Կը սաւառնի աշխարհ բոլոր,
Կը տարածուի և յաւիտեան
Մարդկանց մտքում բուն կը դնի։

ԹՐԱՍՈՆ Ուրեմն այդ է դրդել քեզ, հա։
Ցիմար, անմիտ, սխալուել ես։
Անհետ կանցնի քո չար գործի
Վատ համբաւը և ծխացող
Այս մեհեանի բեկորների
Վերայ նորից մի նոր տաճար
Կկանգի չուտով։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Բայց մի համեստ,
Ինչպէս և դուք, խղճուկ մի բան
Քարից կերտած չքեղ մի տուն—
Կնոջ համար։ Բայց ոչ այն վեհ,
Հուժկու, ահեղ սրբազան վայր,
Հսկայ նախնեաց հսկայ և գործ,
Որ խղճալի ձեր սերնդին
Եւ կուրացնում ու ճնշում է։

ԹՐԱՍՈՆ Մենք կփչրենք, անհետ կանենք
Քո ըղձերդ, երազներդ։
ՀԵՐՈՍՏՐԱՏ Անկարող էք։
ԹՐԱՍՈՆ Թող քո անունդ
Մարդկանց մտքից անհետ կորչի։
ՀԵՐՈՍՏՐԱՏ Ձերազէք իսկ...
ԹՐԱՍՈՆ Օրէնք, պատուէր
Մենք, կը հանենք —ծանր պատիժ
Կատանայ նա, ով այսուհետ
Քո անունդ արտասանէ։
ՄԻՍ ԴԱ-
ՏԱՒՈՐՆԵՐԸ Մահուան պատիժ թող սահմանուի
ՀԵՐՈՍՏՐԱՏ Ապարդիւն ջանք, զուր աշխատանք։
Նախ փորձեցէք չղթայ զարկել
Քամիներին, ծովի ալիքն
Ամուր կապով կաշկանդեցէք,
Սկիւթայի է՛ն ծայրերից
Մինչև սիւներն Հերկուլեսեան
Ստիպեցէք, որ ձեր օրէնքն
Ամենքն յարգեն, հնազանդուեն...
Ինձ սպանել դուք կարող էք,—
Բայց իմ անունս մինչ յաւիտեան
Կապրի անվերջ. ես այդ անունն
Բոց տառերով եմ քանդակել
Որձաքարի ժայռի վերայ։
Երբ ձեր կորած, մամռով պատած
Գերեզմանն իսկ չի էլ պատմիլ
Թէ աշխարհումս դուք եղել էք,
Երբ ձեր հողին հաւասարուած
Քաղաքն անհետ կորած կլինի,
Այն ժամանակ անդամ ամենքն
Դեռ կը յիշեն արած գործս,
Հերոստրատիս անունը դեռ
Կը յեղյեղուի մարդկանց բերնում։
ՄԵՏՐՕԴՈՐ Բայց անէծքով ու զզուանքով։
ՀԵՐՈՍՏՐԱՏ Ձեռ պարծենում, մայր, քո որդովդ։
ՏԻՄԱՐԻՏԱ Որդիս չէս դու,—եթէ հայրդ
Անհիւրընկալ մռայլ Ստինքսի

Ափերից իսկ վերադառնար,
Անշուշտ նա էլ քեզ կմերժէր՝
Ճիշդ ինձ նման։ Սրտիցս ահա
Ես հանում եմ դէպի քեզ իմ
Տածած սէրս, ինչպէս անպէտք
Մի մոլեխոտ, դէն շպրտում։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Մա՜յր։

ՏԻՄԱՐԻՏԱ Եթէ դորա համար էր, որ
Կուց-կուց թափած աղի արցունք,
Անվերջ հոգսեր, պահած-պաշտած,
Անուշ զաւակս պիտի մեծնար,
Հասակ առնէր և մարդ դառնար
Ապա, կասեմ, թող անիծուէր,—
Այն օրն ու ժամ, որ քեզ ծնայ։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Քեզ հետ մէկտեղ ես էլ կասեմ,
Թող անեծուի այն օրն ու ժամ։
Ինչու մէջս զարթեցրիր
Մեծ գործերի ծարաւ, փափագ.
Ինչու սրտումս դու վառեցիր
Ամպերի մէջ սաւառնելու
Անշէջ ձգտում, եթէ պիտի
Ինձ չտայիր և թռչելու
Թևեր, ասա։ Օ՜, թէ դու ինձ
Պարզև չտայիր այս դառնութեամբ
Լցուած կեանքի տանջանք, ցաւերն...
Այն ժամանակ ես ստիպուած
Չէի լինիլ մօրս անէծքն
Առած գլխիս, ոտքով հրել,
Հեռու քշել այդ կեանքն ինձնից,
Ինչպէս ծանր մի բեռն ու լուծ։

ՏԻՄԱՐԻՏԱ (Դառնալով դատաւորներին)։
Ապա ուրեմն ես էլ պատժի,
Պատուհասի արժանի եմ։
Ինձ էլ տարէք կառափնատեղ։
Դուք լսեցիք, որ ես ես
Մեղսակից եմ նորա գործում,—
Երբէք ներման արժանանալ
Ես չեմ կարող։

ԹՐԱՍՈՆ (Յուզուած)։

Խաղաղութեամբ

Տունդ դարձիր։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Ներիր, մայր իմ,

Ներիր որդուդ։

ՏԻՄԱՐԻՏԱ Մահուան ժամիս

Այդ կը փորձեմ։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Ներիր, մա՜յր իմ։

ՏԻՄԱՐԻՏԱ Իմ արի՜ւնս, անո՜ւշ զաւակս...

(Մի քայլ է անում դէպի նա։ Հերոստրատն ընկնում է նորա ոտները։ Մայրը ձեռքը դնում է նորա գլխին)։

ԹՐԱՍՈՆ Տարէք սորան։

ՏԻՄԱՐԻՏԱ Թող ոչ մէկը

Ինձ չուղեկցէ։ Այսուհետև

Իմ ճանապարհս ես մենամենակ

Խաւարի մէջ պիտի գտնեմ։

(Ցամրաքայլ ուղղւում է դէպի դուռը)։

ՏԵՍԱՐԱՆ IV

ԱՌԱՋԻՆՆԵՐԸ (առանց Տիմարիտայի)։

ԹՐԱՍՈՆ Այժմ արդէն, երբ մեր առաջ

Գործած ոճրիդ բուն չարժառիթն

Պարզ յայտնի է, մեզ մնում է

Միայն ցաւել ազնիւ ձիրքի

Եւ ոյժերի այսչափ դառն

Անկման վերայ։ Ինքդ արդէն

Քո իսկ բերնով խիստ անողոք

Դատավճիռ գլխիդ վերայ

Պարզ կարդացիր։ Մենք այս դէպքում

Միայն նորա գործադրող

Ոյժն ենք կազմում։ Այժմ դառնանք

Վճռահատին։

(Զինուորի տուած նշանի վրայ մտնում են երկու ստրուկ։ Մէկը բերում է մեծաղեայ մի քուէտուփ (urne) որ դնում է Թրասոնի առաջ. միւսը բաժանում է դատաւորներին մի-մի սև և սպիտակ քուէ։ Յետոյ ստրուկները դուրս են գնում։ Թրասոնն ելնում է տեղից)։

Տէր դատաւորք,

Ձեր ձայները։

(Առաջինն ինքն է ձգում իր քուէն տուփի մէջ։ Միւս ները հետևում են նորան. յետոյ կրկին նստում են իրենց տեղերը։ Թրասոնը զգուշութեամբ դատարկում է տուփը, համրում է քուէները և հանդիսաւոր կերպով յայտարարում է)։

Նա միաձայն
Մահուան պատժի է ենթարկւում։

(Դառնալով Հերոստրատին, որ մնացել էր կանգնած բոլորովին անշարժ)։

Գուցէ ունիս մի ցանկութիւն
Կամ ասելիք։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Մօրս միայն
Վրէժխնդիր չլինէք երբէք
Իմ արածիս, գործիս համար։

ԹՐԱՍՈՆ Այդ խնդիրդ կը կատարուի։
Ամենքս մէկ տեղ երաշխաւոր
Կլինենք դորան։—Այժմ՝ մահուան
Պատրաստուիր դու։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Ես պատրաստ եմ։

(Թրասոնը, Մեսրոդորը և միւս դատաւորները ելնում են ձախ կողմից. դինուորները հետևում են նոցա. լսւում է, ինչպես դրսից ամրացնում են դռան սողնակը)։

ՏԵՍԱՐԱՆ V

ՀԵՐՈՍՏՐԱՏ. (Յետոյ) ԿԼԻՏԻԱ։

ՀԵՐՈՍՏՐԱՏ (Մենակ)։
Օ՜, աստուածներ, ինչպէս յոգնել,
Դադրել եմ ես։ Քունն յեղյեղուկ,
Փոփոխամիտ բարեկամ է։
Մխիթարում, սփոփում է,
Բայց և նորից մեզ պատրանքի,
Հիասթափման մէջ է ձգում.
Անուշ օրօր է մրմնջում,
Որ մեզ նորից երկիւղ ազդէ։
Բաղդի ժպտուն ժամ-օրերին,
Պատրաստակամ, հաճկատար է,
Վշտի ժամին ագահ, ժլատ։
Այդ պատճառով քեզ իմ ողջոյնս,
Քեզ՝ յուսալից իր երկուորեակ։

Բաւական է, եթէ մէկին
Մի օր գոնէ քո գրկի մէջ
Օրօր կարդաս, նա այլ ես
Էլ յաւիտեան աչք չի բանալ։

(Ալ դռան յետևից թեթև փսփսոց է լսւում Նա ու-
շադրութեամբ ականջ է գնում)։

Ուրդ արդէն չէմքիս վերայ
Դրրեցիր, հա։

(Ելնում է տեղից)։

Ողջունում եմ։

(Դուռը բացւում և Կլիտիան շտապով ներս է մտնում)։

Դու ես, Կլիտիա։ Մահապարտի
Մօտ ինչ ունիս։ Ինչու եկար։

ԿԼԻՏԻԱ Որ ազատեմ քեզ այստեղից։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Ա՞յժմ միայն կամեցա՞ր այդ...

ԿԼԻՏԻԱ Դու չպէտք է կեանքից զրկուես։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Հիմա արդէն էլ շատ ուշ է։

ԿԼԻՏԻԱ Ակամայից քեզ վիշտ ու ցաւ
Պատճառեցի· չէի կարող,
Այժ չունէի զարհուրելի
Դէպքերի դէմ կռիւ մղել։
Բայց և այնպէս հոգուս վրայ
Մանր քարի պէս ճնշում են
Այդ բոլորը։ Եւ ես այժմ
Կամենում եմ մահուան ճանկից
Քեզ ազատել, - և կարող եմ։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Զուր աշխատանք·

ԿԼԻՏԻԱ Գեղեսիի
Ստրուկ ծառան, որ մի չան չափ
Հաւատարիմ է դէպի ինձ,
Դռան մօտ քեզ սպասում է։
Նորան գլխից ես հանել եմ՝
Խոստանալով ազատութիւն
Շնորհել իրեն։ Մեր փախուստի
Ցաջողութեան պիտի օգնէ
Եւ կուղեկցէ մինչև վերջը·

ՀԵՐՈՍՏՐԱՏ Բայց ուր։

ԿԼԻՏԻԱ Ներքև՝ սանդուղտներով
Մենք վար կիջնենք. թեթև, սահուն
Մակոյկը մեզ, որ այժմ պատին

Շղթայած է, իւր մէջ կառնէ,
Եւ նորանով նաւ կը հասնենք,
Ակնթարթում ու անվտանգ։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Եւ այդ նաւը...

ԿԼԻՏԻԱ Հէնց այժմ իսկ։
Խարիսխ կառնէ, ծով կը դիմէ
Մի դանդաղիր։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Ուրեմն Աթէնք պիտի երթայ։

ԿԼԻՏԻԱ Դէ՛, չուտ, գնանք։

ՀԵՐՈՍՏՐԱՏ (Զարմանքութեամբ)։
Վա՜ռ խորհուրդ չէ։
Լաւ ես խորհել։ Ասաուածային
Պրասկսիտելն իւր սիրուհուն
Փախցնում է. և որպէս զի
Այդ ժամանակ հարսանիքի
Ուրախ հանդէսն արիւնաներկ
Զոհի ստուերն՝ ուրուականը
Չը մռայլէ, նա առնում է
Ի՜նձ էլ իւր հետ։

ԿԼԻՏԻՏԱ Քեզ կազատենք...

ՀԵՐՈՍՏՐԱՏ Ի՜նչ ողորմած, գթասիրտ է,—
Քեզ թոյլ տուեց այդ անելու։

ԿԼԻՏԻԱ Իմ դիտումս ու ծրագիրս
Նորան դեռ ես յայտնած էլ չեմ։
Բայց ծովափը, նորա հանդէպ
Համբաւատար եմ ուղարկել
Եւ քաջ գիտեմ, որ իմ միտքս
Կը հաւանէ, խրախուսէ։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Բայց բանն այն է, ես չեմ կարող
Համաձայնել առաջարկիդ։

ԿԼԻՏԻԱ Ազատուելու միակ ելքն է...
Մէկ էլ տեսար յանկարծակի
Ժողովուրդը աղմկեցաւ...
Ուրիշ հնարք, միջոց չկայ։
Նաւահանգստից մեկնող նաւը
Մենակ նա է...

ՀԵՐՈՍՏՐԱՏ Եւ դու կարող
Պիտի լինես ազատութիւն

Կոչել այդ, հա՞։ Ես՝ անիծուած,
Անարգուածս, հայրենիքից
Դուրս վռնտուածս,—պիտի ընկնեմ
Երջանկութեամբ արբած, ուրախ
Մի զոյգի մէջ։

ԿԼԻՏԻԱ Կեանքի, մահու
Խնդիր է սա։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Այդպիսի կեանքն
Ամօթալի մահից անգամ
Մանր կլինէր։—Իսկ ես այստեղ
Ազատութեան եմ սպասում։

ԿԼԻՏԻԱ Բայց ժամանակ չունինք այլ ես...
Օ՜, լսիր ինձ։ Իմացիր, որ
Ես էլ նորան հետևում եմ
Ո՛չ հաւատար՝ իրեն ընկեր,—
Այլ թէ միայն իբրև ծառայ,
Իբրև խոնարհ մի աղախին.
Համեստ սիրով պիտի պատեմ
Նորա չորս դին, առանց ոչինչ
Պահանջ, խնդիր ունենալու։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Եւ ասողը մի կին է, հա։
Գնա, գնա կիսատուծուդ
Յետևից. ծառայ եղիր
Իբրև ազնիւ, հաւատարիմ
Ստրկուհի կամ աղախին։
Յաջողութի՞ւն եմ ցանկանում։
Գնաս բարև։—Իսկ ինձ համար
Ես ընտրել եմ...

ԿԼԻՏԻԱ Կորուստ և մահ։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Ինչպէս և դու։

ԿԼԻՏԻԱ Էլ այլ չունեմ.
Ժամանակը անցնում է... չուտ...

ՀԵՐՈՍՏՐԱՏ Գնա, չտապիր։

ԿԼԻՏԻԱ Վերջին անգամ։

ՖԷՕՆԻԴԱ (Դրսից)
Թողէք ներս գամ։

ԿԼԻՏԻԱ (Շտապով)։
Ֆէօնիդան։

Նորա կողմից է ուղարկուած.
(Բաց է անում աջակողմեան դուռը և կանչում)։
Որպէս բանքեր է նա դալիս
Եւ մեր գործի, մտադրութեան
Գաղտնիքներին քաջ ծանօթ է։
—Եկ, ներս արի։
(Մտնում է Ֆէօնիդան մի կողով վարդ ձեռքին)։

ՏԵՍԱՐԱՆ VI

ԱՌԱՋԻՆՆԵՐԸ և ՖԷՕՆԻԴԱՆ։

ԿԼԻՏԻԱ (Դիմաւորելով Նորան)։
Տեսա՞ր Նորան։
Եւ ասացիր ինչ որ պէտք էր։
ՖԷՕՆԻԴԱ Հա, տիրուհիս։
ԿԼԻՏԻԱ Անշուշտ, նա ինձ
Շտապցնում է։ Այնպէս է, չէ՞։
ՖԷՕՆԻԴԱ (Շփոթուած ու վարանելով)։
Ո՛չ, տիրուհի. ինձ ուղարկողն
Ուրիշ համբաւ է ուղարկել։
ԿԼԻՏԻԱ Դէ՛, չուտ արա, ասա չուտով։
ՖԷՕՆԻԴԱ (Կամաց)։
Ես...
(Նաւահանգստի կողմից ձայներ, աղմուկ է լսւում)։
ԿԼԻՏԻԱ Ինչ ձայներ են, ի՞նչ աղմուկ է։
ՖԷՕՆԻԴԱ Փողովուրդը Նորան «կեցցէ,
Գնաս-բարի» է ձայն տալիս։
Հրաժեշտի աղաղակն է...
ԿԼԻՏԻԱ Հրաժեշտ են տալիս Նորան...
Աղաղակ է... հապա Նաւը...
ՖԷՕՆԻԴԱ Նաւը մեկնեց։
ԿԼԻՏԻԱ Իսկ նա... ինքը...
Պրակսիտելն... ա՛խ, ուզում եմ...
Սիլտս Նորան է ցանկանում։
ՖԷՕՆԻԴԱ Անկարելի բան ես ուզում։
Ազատ, արձակ ծովի միջով
Արդէն Նորա նաւն է սուրում։
ԿԼԻՏԻԱ (Վազում է դէպի լեմի խորքը և նայում՝ է հեռուն)։
Այնտեղ... հեռուում... առագաստներ...

(Բարձրաձայն աղաղակով)։
Ա՜խ, Պրակսիտե՜լ...
(Վայր է ընկնում, իբրև շանթահար)։

ՀԵՐՈՍՏՐԱՏ (Ինքն իրեն)։
Ծանր է, գիտեմ։

ԳԷՕՆԻԴԱ (Կողովն շտապով դնում է Նստարանի վրայ և վազում դեպի Կլիտիան)։
Ինչո՞ւ այսպէս դառն ցաւեր
Պիտ բերէի ես քեզ համար։
Ա՜խ, չգիտես թէ ինչպէս ես
Կը ցանկայի ուրախ, բարի
Համբաւներով առաջդ ելնել։

ԿԼԻՏԻԱ (Դանդաղութեամբ տեղից ելնելով)։
Մենա՜կ գնաց,— և ինձ թողեց։
Այդպէս, կարծեմ, ասացիր, չէ՞։
Նաւահանգստում անդամալոյծ
Խեղճ աղքատը արժանացաւ
Նորա ժպտին, իսկ ես՝ թշուառս,
Որին երէկ դեռ իւր կրծքին
Ամուր սղմած, փայփայում էր,
Ինձ՝ հրաժեշտի և ոչ մի խօսք,
Ո՛չ մի համբոյր գէթ վերջին գամ...
Այժ ունեցաւ ինձնից զատուել
Եւ բաժանուել այդպէս, ահա...

ԳԷՕՆԻԴԱ Բայց և ինքն էլ ուրախ դէմքով
Չհեռացաւ. դողդոջ ձայնով,
Տամուկ դէմքով, թաց աչքերով
Շշնչում էր,— «Մատաղ բանբեր,
Երբ որ նաւս իւր կայանից
Ծով կը դիմէ և ինձ աչքից
Բոլորովին կը կորցնես,
Վազիր չուտով նորա մօտ դու,
Ասա նորան, թէ երբ միայն
Երջանկութիւնն ու զգլխիչ
Քաղցր մոռանքն տղամարդուն
Կարեւնային կապել, դերել,
Երբէ՛ք սիրտս ես նորանից
Չէի զատիլ։ Բայց առաւել
Մեծ պարտիք է ինձ կանչողը,

Նոյն իսկ կամքիս էլ հակառակ։
Կասես նորան այս բոլորը
Եւ կողովով վառ վարդերը
Լռիկ, անխօս ողջունիս հետ
Իւր ոտքերի տակ կը դնես։
Թող այդ անխօս վկաները
Նորա ներումն հայցեն, առնեն,
Ինձ ուղարկեն ապատ հովով,—
Թող գիտենայ՝ շրթունքներս
Ձերմ օրհնութիւն են մրմնջում։

ՊԼԻՏԻԱ Կորի՛ր, աչքիցս, քո վարդերովդ։
Հեռո՛ւ, հեռու տար ինձանից։
Նոցա չունչը—թոյն է, վարամ։
Տրորիր բոլորն, ոտքի տակ տուր
Մէկիկ-մէկիկ։ Իսկ երբ նոքա
Հոգոց հանեն և կամ հծծեն,
Նոցա ողջոյն, հրաժեշտ կտաս
Նորա կողմից, որ ինձ անխիղճ,
Ցմարդօրէն իւր ոտքերի
Տակ տրորեց։ Տեսաւ աչքով
Ինչպէս ուրախ ծաղկում էի,
Անխիղճ ձեռքով նա ինձ պոկեց—
Եւ չպրտեց։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Նա աստուած է։
Ահա նորա ողջ պարգևը
Սիրուդ համար։

ԿԼԻՏԻԱ Կորիր աչքիցս
Քո վարդերովդ, դէ՛ն կորցրու...

ՖԻՕՆԻԴԱ Ուրեմն ես պէտք է սոցա...

ԿԼԻՏԻԱ Ո՛չ անուշիկս, էլ ձեռք չտաս
Դու նոցանից և ոչ մէկին։
Առանց այն էլ շուտով նոքա
Կը թառամեն ու կը թոչնեն։
Ծովափ տար դու այդ բոլորը,
Ալիքների վերայ չաղ տուր,
Մէկ-մէկ հեռու, հեռու ձգիր
Դէպի այնտեղ, որտեղ. դեռ ևս
Նորա նաւի փայլուն հետքը
Ցոյց է տալիս առ յաւիտեան

Կորցրած բաղտիս արահետը։

ՖԷՕՆԻԴԱ (Առնում է վարդերով լի կողովը)։

Կկատարեմ, ինչ տիրուհիս
Պատուիրեց ինձ։ Թէ որ կարող
Լինէի ես դեռ աւելին
Էլ կատարել...

(Դուրս է գնում աջ կողմից)։

ՏԵՍԱՐԱՆ VII

ՀԵՐՈՍՏՐԱՏՈՍ, ԿԼԻՏԻԱ։

ԿԼԻՏԻԱ Թառամեցան, կորան վարդերն
Եւ սրբազան անտառի մէջ
Ծաղիկները թոթափեցին։
Դու էլ մնաս բարև, գարուն։
Բայց և այնպէս արդարացի,
Իրաւ էր նա։—Ես ինչ էի
Նորա համար։ Միայն պատկեր
Արտայայտիչ· հազարաւոր
Դէմքերից մինն։ Ինչպէս եկաւ,
Ճիշդ այնպէս էլ անցաւ-գնաց,
Լոկ մի բոպէ աշխարհ բոլոր
Գեղեցկութեամբ ճոխացնելու.
Ինձ էլ հետը աւերելով։

ՀԵՐՈՍՏՐԱՏՈՍ (Զարհուրանքով)։

Էլ ինչ կուզես դու նորանից։
Միթէ նա չէր, որ քեզ տուեց
Այն բոլորը, ինչ որ հոգով,
Ողջ էութեամբ, այնպէս կլքոտ
Ուզում էիր,—մշտափթիթ
Մատաղ մնալ։ Մեր երկուսիս
Ցանկութիւնն էլ կատարուած է։
Դու անթառամ գեղեցկութեամբ
Միշտ կը փթթես. աստուածային
Ցարգանքներով դեռ նոր կերտած
Ցար և նման երկուորեակդ
Շուք և փայլով տաճար կմտնէ։
Իսկ իմ անունս ժամանակի
Հզօր յորձանքն դարեր անվերջ

Պիտ գլորէ ու դէմ տանէ
Գալոց բոլոր սերունդներին։
Կեանքն ինձ համար մի տանջանք էր.
Սակայն այժմ՝ անմահութեան
Փայլ կստանայ։

ԿԼԻՏԻԱ (Հոգեվայլութեամբ ականջ է դնում)։

Սո՜ս... Ձայն մի՛ հանիր։
Լռի՛ր, մի՛ քիչ։ Դու չե՞ս լսում։
Իմ սիրելուս ձայնն է հնչում,
Ինձ է կանչում։ Ես գիտէի,
Նա չէր կարող զատուել ինձնից։
Եւ ջրերի, ծովի անհուն
Տարածքն անգամ չեն արգելում
Նորան բարձր, բարձր ձայնով
Ինձ կանչելու, —Ե՛կ յետեւից։—
Ա՜խ, գալիս եմ, Պրոկսիտել։
Ահա եկայ...

(Նաւամատոյցի պատից իրեն ծովն է ձգում)։

ՀԵՐՈՍՏՐԱՏ (Շտապով դիմելով դէպի ցանկապատը)։

Կլիտիա, Կլիտիա.

(Ձախ կողմի դռնից եկնում են դինուորները և դանդաղ մօտենում Նորան. նա գնում դէպի նոցա)։

Ինձ դէպի մա՜հ, տարէ՛ք չուտով,
Մահուան վերայ ծիծաղում եմ
Անմահ եմ ես։ Անմա՜հ, անմա՜հ։

(ՎԱՐԱԳՈՅՐԸ ԻՋՆՈՒՄ Է)

Տ. Վ.

ՎԵՐՋ

ՈՍԿԵԴԱՐԵԱՆ ԳՐԱԲԱՐԸ ԵՒ ՄԽԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ

—

Վերջին ժամանակներս Վենետիկի Մխիթարեան միաբանութիւնը առաջ քաշեց մի խնդիր, որին դարձրած ուշադրութիւնը խիստ աչքի ընկնող էր։ Սկզբում «Թաթուլ Վանանդացի»ն մի քանի անգամ յուզեց Ոսկեդարեան գրաբարի խնդիրը Հանդէս Ամսօրեայի էջերում, պոլեմիկայի բռնուելով Վենետիկի Բազմավէպի հետ։ Այնուհետև այս տարուայ Հանդէսի օգոստոս-սեպտեմբեր թուի մէջ երկու ընդարձակ յօդուած տպուեց. մէկը «Ոսկեդարեան հայերենի խնդիրը» Թաթուլ Վանանդացին, միւսը «Ոսկեդարեան և ոչ—Ոսկեդարեան» հայերէնները հ. Գ. Գալէմքարեանի։ Այդ յօդուածները առանձին ևս հրատարակուեցին, դեռ Վանանդացւոյ յօդուածը նոյնիսկ յառաջեց հրատարակութեամբ քան ին-քը Հանդէսի յիշած համարը։ Հուսկ ապա խմբագրութիւնը հարցասէրների ուշադրութիւնը հրաւիրեց միևնոյն խնդրի վրայ, այդ հրատարակութիւնները ուղարկելով բանասէրներին։ Սակայն, ինչպէս նկատուում է Համաագրի յիշուած համարից, այդ բոլորը միայն նախագուշակներ են. բուն խնդրի, ոսկէդարեան գրաբարի մասին։ Հայր Յակոբոս վ. Տաշեանը հանգամանօրէն մի ծանրակշիռ ուսումնասիրութիւն ունի, որը մամուլի տակ է. այդ աշխատութիւնը, նայելով ինչ ինչ պայմանների, խոստանում է թէ գրաբարագիտութեան մէջ նոր շրջան բանալ, և թէ հին մատենագիտութեան համար նորանոր ծանօթութեանց հորիզոն լուսաւորել։

Այդ բոլորի մէջ մի ուշադրութեան արժանի կէտն էլ այն է, որ լեզուագիտական այդ խնդիրը առաջ է ընթանում վիճակաւոր ոգով. մի խստաշունչ վէճ, որը երբեմն նոյն իսկ անարգութեան և վիրաւորանքի է հասնում. Վենետիկցիք չեն ընդունում Տաշեանին և Վենետիկի Հանդէսը այնպէս, ինչպէս սովոր

ենք ճանաչել նոցա և ընդունել. Վիեննացիք էլ հատուցանում են նրանով, որ Բագրատունու լեզուն ոսկեդարեան չեն ընդունում և նրա մի նամակը տգիտական են համարում։ Ի վերջոյ Հայր Թոռնեան հարկադրւում է միանգամից երկու կողմն էլ պախարակել ի մասին վիճական խստութեան և գրական չափի ու սահմանի մէջ ուղղել նոցա (Հ. Ամս. 1903 № 10, 320)։ Հետաքրքիր է այդ խրատականի մանաւանդ վերջին մասը, որը առաջ ենք բերում այստեղ.—«Մեր բնաբանն է, թէ համակիր և փոխոխակի յարգութեամբ (որ իրօք ալ պէտք է երևի թէ ի բանս և թէ ի գրութիւնս իւրաքանչիւրոց), երկու հայազգի, համանուն, համարիւն և համավախճան Մխիթարեան Միաբանութիւնք,—որոնցմէ իւրաքանչիւրն ունի զիւր չնորհս՝ ըստ չնորհելոյ Տեառն,—պէտք են իրարու ձեռք կարկառել և օգնել իբրև եղբայր եղբօր, որով կըլլան քաղաք ամուր, և կը կարողանան գործել մեծամեծս յասպարիզի բարոյական և աշխարհական գիտութեանց և գրութեանց, Նպատակաւ մեր հայ ազգին միտքն լուսաւորելու և սիրտն ազնուացնելու ի փառս Աստուծոյ»։ Ահա այս երկրորդ անգամն է, որ վերջին եռամեակի ընթացքում Վիեննայի աբբահայրերը միաբան իմաստը չեշտում են Ս. Ղազարու կղզու բնակիչների ականջին. առաջինը Այտնեանի տողերն են, որոնցով վերջանում է նրա չնորհաւորական նամակը առ Հայր Կիւրեղեան՝ Միաբանութեան 200 ամեակի առիթով.—Ցաւելյէ դարս և դարս ի կեանս միաբանութեանս և Արհիապատիւ Վեհիդ ընդ յամայր ամս ուրախ լինել յորդիս սիրելիս զօդեալս միաբան սիրով, որով և՛ս մեծամեծք գործեսցին ի փառս միոյն Աստուծոյ» (Ցիշատակարան 200-ամեայ յօբելինի Մխիթ. Միաբ. 1901, Բ. 26)։ Միևնոյն խօսքերն և իմաստը. բայց այդ աղօթքի որոշ ձևեր են միայն. իրենք աղօթողներն էլ գիտեն, որ Վենետիկն և Վիեննան իւրաքանչիւրը ունի զիւր (ինքնուրոյն) չնորհս՝ ըստ չնորհելոյ Տեառն. ուրեմն Տէրն է անմիաբանութիւնը նոցա մէջ գցել և արդարև՝ առանց տիրաբաշխ այդ չնորհքի չէր լինիլ թէ արդի Հանդէսը և թէ գրաբարի այն խնդիրը, որի հետ ծանօթացնել ենք կամենում «Լումայի» ընթերցողներին հետևեալ տողերի մէջ։

Բայց նախ և առաջ մի միջարկութիւն. «Լուման» և ուրիշները քանիցս նկատել են Հանդիսի մէջ Վիեննացւոց ցու-

ցած քննասիրական ոգին, գիտական և բանասիրական սառն անաչառ չունչը. այդ նոցա ինքնուրոյն չնորհքի մի մասնաւոր արտայայտութիւնն է, որը աւելի բելիէֆ է ոսկեդարեան գրաբարի խնդրի մէջ՝ չնորհիւ վենետիկցոց հակառակամիտ ջանքերի ու չնորհքի: Հանգուցեալ Երիցեանի գրքոյկից դեռ յայտնի է, որ գրաբարը վենետիկցոց ձեռքին անցեալ դարում մի գործիք էր նիւթական մեծ մասամբ չահերի հետամուտ լինելու. իսկ Վիեննացիք գրաբարը դարձրին ինքեան նպատակ՝ ուսում նասիրելու և մաքրելու. 1840 թուերին նոքա արին ոսկեդարեան գրաբարի գիւտը. և այն ժամանակ էլ ամբողջ Վենետիկը զինուեց այդ գիւտի դէմ. Բագրատունի, Ե. Հիւրմիւզ, Այվազովսկի արհամարհեցին ծաղրեցին Վիեննացոց, կապկութիւն համարեցին նոցա արածը. չահը նրանց սատիպում էր, որ իրենց խառնակ գրաբարի դասագրքերը, թարգմանութիւններն ու հեղինակութիւնները ինչ էլ որ լինի տարածուին, սպառուին. սակայն վենետիկցոց թշնամանքը իւր կարգով վիեննացոց աշխատութիւնն էլ չարունակուեցին անդադրում և մինչև մեր օրերը հասան նոցա սերունդների հակառակամիտ պնդումները այսպիսով գրաբարի խնդիրը մի որոշիչ պայման հանդիսացաւ, իբրև նրանց ինքնուրոյն չնորհքի արտայայտութիւն և համանուն, համարիւն միաբանութիւնները իրենց գործունէութեան մէջ երբէք չը միաբանեցին. թէ ինչով կը վերջանայ այդ հակառակամտութիւնը—այդ կարելի է եզրակացնել, տեսնելով խնդրի էութիւնը և նշանակութիւնը:

«Մեսրոպայ առաջին անմիջական աշակերտներու մահուընէն ետքը՝ Ե. դարու վերջերը Մեսրոպայ լեզուն զրկուեցաւ արդէն գիտական մշակներէ», կարդում ենք Հ. Դալեամքեանի բրոշիւրի էջ 19—20, և «սկսաւ լեզուն եկամուտ օտարութիւններու ենթարկուել, ոչ թէ բնական կերպով և օրինօք որ ամեն լեզուներու կեանքի պայմանն է, այլ արուեստական և բռնական կերպով այլափոխելով իրենցմէ հազիւ կէս դար յառաջ գրուած լեզուն» (էջ 17): Բացի յունարէնի և ասորերէնի ազդեցութիւնից կար նաև մի երրորդ հանգամանք, որը գրաբարի խանգարման խիստ նպաստում էր. «Գրաբարն ինչպէս Ե. դարուն ճշդիւ ժողովրդեան խօսած լեզուն չէր, նոյնպէս այնուհետև: Մինչդեռ ժողովրդեան լեզուն կաճէր կը զօրանար և կապրէր գրաբարէն դրեթէ ոչինչ ազդեցութիւն կրելով, նոյնչափ ալ կը հեռանար գրագէտներու լեզուէն: Եւ ո-

լովհետև Ե. դարու գրութիւնները (ա. կիսի) մեծաւ մասամբ ս. Գրոց մեկնութիւններ, ճառեր, գիտնական գրութիւններ էին, յաջորդ դարերու մէջ շատ չօրինակուեցան, շատ չը կարդացուեցան, շատ ազդեցութիւն չունեցան։ Միայն պատմական գրութիւններն յաջորդ պատմասէր դարերու ընթերցուածոյ նիւթ մատակարարեցին մինչև որ վերջապէս ԺԴ—ԺԷ դարերու գրաբարը բոլորովին կերպարանափոխուած էր, ազճատուած, որուն վերջին հարուածը տուած էր գրաբարագէտներու այն խումբն՝ որ հայերէնը լատիներէնի վրայ ձևեց և նմանեցուց, ինչպէս երբեմն Ե. դարուն վերջերը և Զ. դարուն յունարէնի վրայ ձևել փորձած էին ուրիշներ» (19)։ Այսպէս Մեսրոպայ ներիցագոյն աշակերտներու մահուընէն ետքը՝ Ե. դարու վերջերը Մեսրոպայ լեզուն զրկուեցաւ արդէն գիտնական մշակներէ, դարէդար ինկաւ, խառնակեցաւ, բարբարոսացաւ, համեմատութեամբ մշակեալ և զարգացեալ լեզուին Մեսրոպայ։ Միխիթար աբբահայրն և իր աշակերտները ջանացին դարձեալ լատինական տարազն հայերէնի վրայէն թօթափել, նոր ոյժ տալ գրաբարին, և յաջողեցան գէթ միջին դարերուն գրաբարին ստացած վիճակը վերադարձնել։ Սակայն աւելի բանաւոր էր փոխանակ միջին դարու հեղինակներու այլայլեալ գրաբարէն սորվելու գրաբարը, բուն իսկ ակնաղբեր դիմել, ուստի մէկալները բխած էին. լեզուի կանոն ընտրել Ե դարու գրաբարն, որ համեմատութեամբ յաջորդ դարերու՝ աւելի հարազատ և բարձրը էր (էջ 19-20)։

Հեղինակի յիշած գրաբարի խառնակութիւնները սկսուել են 460 թուից ասդին. նախ քան այդ՝ բուն գրաբարն էր թագաւորում. և որովհետև գրականութեան սկիզբը տառերի գիւտից է սկսւում, ուստի այդ նախնական գրաբարի մատենագրութիւնը գոյութիւն է ունեցել շուրջ 55 տարի (406—462)։ Այդ է ահա Վիեննայի Մխիթարեանների ճանաչած գրաբարի Ոսկեդարի ամբողջ ժամանակամիջոցը։ Ապա հեղինակը իւր գրքոյկի էջ 27-28 յիշում է այն նշխարները, որ հին մատենագրութիւնից հասել են մեզ այդ Ոսկեդարի լեզուով. իսկ էջ 22—26 յիշում է այն գրքերի ցանկը, որոնք հեղինակել են և թարգմանել վենեցիք այդ Ոսկեդարեան լեզուով։ Ամենից աչքի ընկնողը այն է, որ այդ ցանկերից ա-ի մէջ չկան շարականները, ծիսարանը, յաճախապատումը, Դ և Ե դարերի եկեղ. հայրերի երկերը, այլև Եղիշէ, Խորենացի, Փարպեցի,

Դաւիթ Անյաղթ և այլն։ Դոքա արծաթի դարի երկեր են (406-700)։ Թէ ինչ էութիւն են պարունակում այս գրաբարի և մեր՝ վենետիկեան դասագրքերից ուսած գրաբարի տարբերութիւնները—այդ այստեղ շարժելու խնդիր չէ և իրենք Վիեննացիք էլ դեռ իրենց դրութիւնը չեն բացատրած տեսականապէս. ուստի սպասելով Հայր Տաշեանից խոստացուած աշխատութեան, առ այժմ այս կասենք միայն, որ մեր ուսած գրաբարը մի խառնուրդ է հին և միջին դարերի գրաբարի, որը իւր կողմից ազդուած է օտար լեզուներից և աշխարհաբարից. իսկ վիեննացոց գրաբարը—«կանոնաւոր դաշնակաւոր, յընտրութեան և ի շարուածս բառից ամենաճարտար, ասացուածովք, բացատրութեամբք և նոյնանշանօք շատ հարուստ, մերթ պարզ՝ բայց այնպիսի պարզութեամբ յոր քաջ արուեստագէտք միայն կը հասնին, մերթ զարդարուն առանց բռնազբօսութեան, և ի վեր քան զամենայն՝ յստակ (գղ. clair)։ «Կորիւն վարդապետ և նորին թարգմ. Տփխիս, 1900, էջ 18; Նորայր Ն. Բիւզանդացի։—Որպէս զի «Լումայի» ընթերցողներին օրինակ ցոյց տուած լինենք այդ յստակ գրաբարի, առաջ ենք բերում Այտնեանի՝ արդէն մի անգամ յիշած նամակը առ Հայր Կիւրեղեան, կանխաւ զգալով, որ ոչ ամեն ոք իսկոյն կարող պիտի լինի նկատել մեր ուսած գրաբարի և այդ նամակի լեզուի մէջ տարբերութիւնը [1])։

«Արհիապատիւ գերապայծառ Տէր։ ուրախութիւն աշխարհի ծնաւ Մարիամ։ Ցուրախութիւն Մարեմայ ծնաւ զդասս որդւոց իւրոց մեծ ծառայն Աստուծոյ յորդեգիրս նորին։ Բերանք մեր լցեալ են այդ օրհնութեամբք՝ ընդ կրկին դրօշիւք անմահին Մեծի Մխիթարայ, և սիրտ բարախեն առ ցնծութեան լինել խնդակից միմեանց՝ վասն չնորհի լիոց երկուց դարուց կենաց և կենդանութեան՝ բոլորելոց զժողովովք ծննդոց նորին։ Անցք որ անցին ընդ ոգին մեծ և ընդ արի՝ յերկար ասպարիզի անդ կենաց նորա և գործոց և ճգանց, նոքին են մեզ իխրախոյս և ի քաջալերութիւն որով ունիմք զգրաւական զառ ի վերուստ անպակաս խնամոց, ուստի զուարթացեալ տքնի Հայրս հասարակաց ի վերայ հօտին իւրոյ կարգելու ընդ հովանեաւ սքանչելւոյ

([1]) Աւելի ընդարձակ օրինակ չընտրեցինք, տեղի սղութեան պատճառով, թէպէտ գիտենք, որ վիեննական գրաբար հրատարակութիւնները տարածուած չեն կովկասեան հայերի մէջ, և դժուար է որոնել գտնել նոցա։

Տիրամօրն, զորոյ զհրաշալի ծնունդն տօնէր նա ինքն երբմն ուրախութեամբ, և մեզ տայ այսօր զնոյն ծնունդ տօնել ընդ ծննդեան միաբանութեանս իւրոյ։ Հանցէ Տէր որդւոց իշնորհաց Մեծի նահապետին և Հօրն հաւատոյ Մխիթարայ բաժին՝ ինորին իսկ մխիթարութիւն բերել մեզ զնմանութիւն վարուց կարգաց առաքինութեան նորա։—Յաւելցէ դարս և դարս ի կեանս Միաբանութեան, և արհիապատիւ վեհիդ ընդ յամայր ամս ուրախ լինել յորդիս սիրելիս զոդեալս միաբան սիրով, որով եւս մեծամեծք գործեսցին ի փառս միոյն Աստուծոյ և ի ցնծութիւն և յառաւելագոյն պարծանս Մեծի անմահին Մխիթարայ։ Ես ամենայն խորին մեծարանօք և սրտագին ողջունիւ սիրոյ եղբայրութեան ամենապատիւ գերապ. տեառնդ խոնարհ ծառայ Հ. Արսէն վ. Այտնեան (Մխիթարեան Յորելեան. II 26)։—

Ոսկեդարեան գրաբարի, իբրև մեռեալ և անմշակ մի լեզուի նկարագրութիւնը մի մարդու և կարճ ժամանակուայ խընդիր չէ. դրա համար հարկաւոր է հոգու հանգստութիւն, բարոյական և նիւթական խրախոյս, նախնական նիւթերի մշակումը, ազգային հնութեան և ժամանակակից գիտութեան կատարեալ ծանօթութիւն. այդ հանգամանքների շնորհիւ է որ երևի պէտք է բացատրենք յարուցուած խնդրի դանդաղ ժողովրդականանալը և գիտնական հաստատութիւն գտնելը՝ այնքան դանդաղ որ վիեննացիք մինչև այժմ «իրենց դրութեան տեսականն՝ ընդարձակ և պատճառաբանեալ դրութեամբ մը չըներկայացուցին տակաւին հասարակութեան (Գալէմքարեան յօդ. էջ 25)· գիտն հետաքրքրութիւն չը շարժեց վիճաբանութեան նիւթ չեղաւ, որով կարելի էր աւելի պարզել և մանրամասնել դրութիւնը, նաև ըստ պատշաճի փոփոխել յապաւել հայլն։ Եւ այսպէս գրեթէ վիեննական դպրոցին մէջ միայն ամփոփուած մնաց անիկա (ib. 30)։

Եւ արդարև՝ ինքն Բագրատունին խոստովանել է իւր անկարողութիւնը՝ հնագոյնը և լաւագոյնը, բնիկ հարազատ հայկականը ընտրելու և նկարագրելու մէջ. առաջ ենք բերում այդ խոստովանութիւնը իւր մասերով, մի կողմից իբրև վկայագիր այն ոչ-գիտնականութեան և նեղ հայամոլութեան որ մինչև այժմ էլ դաւանել է փորձում Վենետիկի արդի գեղարուեստամոլ միաբանութիւնը, իսկ միւս կող-

մից իբրև դոկումենտ նրա և նորա ժամանակակիցների՝ ապա ուրեմն և նոցա արդի սերնդեան անկարողութեան մասին:

—«Ոչ եդաք ի մտի ի խնդիր լաւին և լաւագունին, հնոյն և հնագունին, ընիկ հարազատ հայկականին և եկամուտ ընտանեցելոյն ի զանազան դարս գրականութեան հարց լեզուին մինչև ցերկոտասան, բայց եթէ ուր հարկն ինչ բերէր։ Զի զայն ոչ միայն ի վեր քան զպարտս և զնպատակ քերականին համարեցաք, այլ եւ քան զկար մեր եւ զՁան. և ում և իցէ՝ գործ դժուարին և տաժանելի և բազմավտանգ, և օգուտն՝ ընդ խնդրով, կամ ոչինչ և կամ կարի սակաւ ինչ. նա՝ մանաւանդ և վնասակար իսկ, ազգատացուցանել զհոկութիւնս և գձձել զպերճութիւնս բարբառոյս և կապել կծկել զպատ և զառատ ձեռն ճարտարաց (յօդ. Գալեամք. էջ 51)։ Այս տողերը Բագրատունին գրել է 50 տարի առաջ և այքի առաջ ունենալով այն ժամանակուայ ազգային քաղաքակրթութեան, լեզուագիտութեան և բանասիրութեան ծաւալը, այլ և հայագիտութեան և նախնեաց մատենագրութեան ծանօթութեան չափը — այն տողերը հասկանալի են դառնում որոշ չափով, իբրև միջավայրի թելադրութիւն. նոյն իսկ Բագրատունու «տգիտական» նամակը, որի մէջ կապկութիւն է համարում նա վեննացոց Ոսկեդարեան դրարարի դրութիւնը, բացատրուում է այն մեծ ճնշումով որը անում էր միաբանութեան հրատարակչական-առևտրական գործունէութիւնը իւր միաբանակցի վրայ։ Բայց Բագրատունուց յետոյ 50 տարի է անցել և շատ ջուր է հոսել ազգային բանասիրութիւնը, գիտութիւնները, Վենետիկի դերը բոլորը փոխել են իրենց նախկին ծաւալը՝ և այնուամենայնիւ այժմ ևս վենետիկցիք թէ՛ ի քանս և թէ՛ ի գրութիւնս պնդում են Բագրատունու խօսքերի վրայ. նոքա դեռ հաւատում են որ կրգայ մի օր երբ գրաբարը կը թագաւորէ և ուրիշներին համոզելու պարապ ջանքն են յանձն առնում թէ՝ քանի գնում այնքան մեր աշխարհաբարը գրաբարին է մօտենում։ Եւ ահա այս անշարժ, անընկճուող դաւանութիւնը, այս նեղ հայամոլութիւնը ինքն է մի մեծ մասով պատճառը, որ վեննական դպրոցում ստեղծուել է մի հզօր ռէակցիա՝ զինուած նախապաշարումների դէմ գիտութեան զէնքերով, խորտակելու բոլորը ինչ որ ինքնագիտակցութեան և գիտնական ստուգութեան սահմանից դուրս է. այդ է ահա, այդ ռէակցիան է ինքնուրոյն Տիրաբաչխ չնորհքը, որի շահեցումով

պիսի նոքա յաղթանակեն մտավախութեան, տգիտութեան և շահամոլութեան դէմ։

Արդ գրաբարի Ոսկեդարի խնդիրը, նրա դանդաղ մշակուելը և Բազրատունու բոլոր ընդդիմութիւնը միայն այն են ապացուցանում, որ խնդիրը ժամանակից առաջ էր ծնունդ առել։ Այդ այդպէս լինելով հանդերձ, այնուամենայնիւ այսօր էլ դեռ, մեր համեստ կարծիքով, խնդրի լուծումը վաղ է սպասել։ Մենք մի՛ բոպէ չենք կասկածում Տաչեանի ոյժերի և պատրաստութեան մասին, որպէսզի խնդիրը նկարագրուի, և ամենայն մանրամասնութեամբ մատչելի դառնայ նաև վիճենայից դուրս. սակայն և խնդրի դէմ այնքան շատ առարկութիւններ դեռ պէտք է պարզաբանուին, որ շուտ ժամանակում չի կարելի սպասել այն առարկութիւնների զինաթափ լինելը։ Ուստի միայն երեք խնդիր յիշեցնելով ընթերցողներին՝ միտք ունինք աւելի առ աչօք անելու այն ծանրութիւնը, որը ներկայացնում է յարուցուած հարցը ներկայումս։ Առաջին. գրաբարի ոսկեդարը հանդէս է գալիս 406 թուին և տևում է—460 թիւը։ Արդ՝ գրաբարը երբ մշակուեց և կատարելագործուեց, ինչ քաղաքակրթութեան տակ և այբուբենով, իրաւ է որ մեր գրականութիւնը սկսուել է՝ հակառակ բնականի, հէնց ոսկեդարով, իսկ եթէ ունեցել է աստիճանաւոր կատարելագործումն, ունեցել է նա նաև տատանումներ և ուր պէտք է որոնել այդ կատարելագործման պատմութիւնը—արդեօք քրիստոնէական մոլեռանդութեամբ ջնջուած ու այրուած գրքերի մէջ թէ քաղաքական մրցակից շահերին զոհուած ազգային քաղաքակրթութեան մէջ, որի վերականգման համար ոչ միայն գետնի երեսը, այլ և գետնի տակն էլ պէտք է պրպտել։ Առաջին և մեծ *կանգը* ահա այս չբգոյութիւնն է և պարապութիւնը։ Բայց երկրորդ *կանգը* իւր գոյութեամբ աւելի մխիթարական չէ. բուն ոսկեդարի և նրան յաջորդող արծաթի դարի շրջաններից մնացած նիւթերը այնքան թոյլ և անմշակ են, որ ներկայացնում են միմիայն խապան դաշտը՝ կառուցուելիք շինութեան նիւթերի խառն և ցան ու ցրիւ պատկերով։ Յիշատակարանների լեզուն ուրոյն ուրոյն, անկախ որևէ խնդրից և կանխակալից քննուած չէ. նոցա բառարանը, քերականութիւնը և մատվարական առանձնայատկութիւնների նկարագիրը բացակայում են. ուստի հանրագումներ անելու ոչ մի միջոց չը կայ։ Բացի այդ՝ վերլուծութեան և համադրութեան սիստեմների գործա-

դրութեան արդիւնքը և արժէքը քննել ու դատելու համար ուզի չուզի մարդ հարկադրուած պիտի լինի դիմել հէնց իրան գործադրողին, նրա ծանօթութիւններով, հանրացումներով ու սահմանական տեսութեամբ բաւականանալ։ Այդ մեր կարծիքով էական խնդիր է և մենք կանգ ենք առնում նրա վրայ. երեք տարի առաջ լոյս տեսաւ Նորայրի մի աշխատութիւնը, որի մէջ՝ վիեննական ոսկեդարի դրութեամբ, հեղինակը այն հզրակացութեան է եկել որ Եւթաղ, Փաւստոս, Ագաթ. և Մակաբայեցւոց գրքերը Կորիւնն է թարգմանել Ե. դարի առաջին կիսին։ Հեղինակը 600—700 օրինակների խիտ խիտ ամբարներով ծանրացրել է իւր հզրակացութեան նշանակութիւնը. և այնուամենայնիւ, ըստ իս, բաց է մնում այն հարցը—միակողմանի չէ խնդիրը քննուած և թէ իբրև որոշ հզրակացութեան միտուած աշխատութիւն, օժտուած չէ արդեօք նա, նման դէպքերին յատուկ, այն պակասութեամբ, որը կոչւում է «դրամի մի երեսը դիտել». դժբաղտաբար այն յիշատակարանների ինչպէս նոյն ու նման, նոյնպէս և տարբեր ու հակառակամիտ լեզուական օրինակները, Նորայրի խնդրից անկախ և առանձին քննուած ու դիտուած չեն։ Բարեբախտաբար, այդպիսի անճարութեան դէմ ինքը հեղինակը հոգացել է՝ կարծես թերահաւատներիս հոգալու կանխատեսութեամբ, և իւր գրքի էջ ԻԱ կարդում ենք այս տողերը—«Որպիսի և վհիռ արձակէ քննասատութիւնն զմատենէս, կը համարձակիմ ըսել թէ միաձայնութեամբ պիտի վկայուի որ ի հրապարակ հանած եմ անկեղծ գործ մի, ուր հաւասար խնամով ամփոփեալ են իմ կարծեաց թէ նպաստաւորքն և թէ աննպաստաւորքն. և մանր նշանակելով զտեղիս բոլոր կողմանց՝ լիովին դիւրութիւն տուած եմ ընթերցողին որպէս զի ոչինչ ընդունի առանց անձամբ ստուգելոյ։ Հինգ բնագիրս Ոսկեդարու համեմատելով ընդ այլ քառասուն և երկու մատենագրութիւնս նոյն ժամանակին, 624 նմանութիւնք և նոյնութիւնք ոճոյ համոզեցին զիս թէ Կորիւն է թարգմանիչ Ագաթանգեղի, Բիւզանդայ, Մակաբայեցւոց, Եւթաղի»։ Արդարև ստուար, ծանր և բարեխիղճ աշխատութիւն է հեղինակի աշխատութիւնը. այժմ՝ աչքի առաջ պէտք է ունենալ, որ Նորայրի կատարածը ըստ քանակի մի մասնիկ է, և ըստ որակի մի չորրորդ մասն է այն բոլորի, որը Ոսկեդարեան գրաբարի համար պէտք է կատարել. բացի Նորայրի յիշած հինգ բնագրից, այդտեղ են մտնում Հին և Նոր կտակա-

բանները, Եղնիկ, Եւսեբիոսի եկեղ. պատմութիւնը և քրոնիկոնը, Զգօն, Լաբուբնա, ճառեր, մեկնութիւններ, վարքեր, թղթեր և այլն։ Բագրատունին ահա այս հսկայական գործից իւր չինքը ազատել է՝ համեմատաբար հեշտը կատարելով. բայց վիեննացիք կանգ չեն առնում արգելքների առաջ։ Պակաս նշանաւոր չէ երրորդ *կանգը*, որը մատենագրական իմաստ ունի. ըստ աւանդութեան մի շարք յիշատակարաններ բուն ոսկեդարից են և պէտք է ապացուցանել, լեզուից անկախ (որովհետև լեզուի նմանութիւն և մինչև իսկ նոյնութիւն կարելի է տարբեր դարերի յիշատակարանների մէջ ևս պատահել) որ այդպիսի նիւթերը ստուգիւ ոսկեդարից չեն. որ Խորենացին անմասնակից է աստուածաշնչի թարգմանութեան, որ Եւսեբիոսի քրոնիկոնն ու ժամանակագրութիւնը Խորենացին չէ թարգմանած, որ Եղիշէն չէ Մակաբայեցոց գրքերի թարգմանիչը և Եղնիկի մատը խառն չէ «Յովսէփ» եպիսկոպոս վերտառութեամբ Եղիշէի յիշած նամակին առ Միհրներսեհ, որ Յովհ. Մանդակունի, Յաճախապատում, Փարպեցի, Եղիշէ, Խորենացի, Մամբրէ, Դաւիթ անյաղթ ոսկեդարի կեանք ու լեզու իսկ չունին, այլ արծաթի դարի։ Կան, կան դեռ յարուցած և չը յարուցուած շատ խնդիրներ, որոնք հակառակամիտ հանդիպումներ են տալիս և կարող են տալ վիեննացոց դրութեան։ Այդ բոլոր խնդիրների լուսաբանութիւնը, իմի լուծ և նպատակ ուղղելու աշխատութիւնը ժամանակի խնդիր է։

Այդ բոլորը ապագայի գործ է. սակայն ապագայից աւելի հետաքրքիր է ներկան. գրաբարի խնդիրը հայոց հին կեանքի և մատենագրութեան համար էական նշանակութիւն ունենալուց բացի, ունի նաև ժամանակակից հետաքրքրութիւն, որ է հետևեալը։ Եթէ մի ակնարկ ձգենք Մխիթարեան կեանքի և գործունէութեան վրայ, կը տեսնենք որ երեք հիմնական տարր այն կեանքից ընկել է, հսկայական ծառի երեք էական արմատների նման, որոնք հնանում, փխրունանում և ի վերջոյ հողի մէջ անհետանում են. մերթ իբրև սխալմունք, որ է կրօնական մոլութիւնը, մերթ իբրև միակողմանիութիւն, որ է հրատարակչական գործունէութիւնը, և մերթ իբրև աւանդականութիւն, ոչ գիտնականութիւն, որ է միջնադարեան խառն գրաբարը և աւանդութիւնները։ Երկար կը լինէր եթէ այդ յաղթահարուած

տարրերի երբեմնի կենդանութիւնը, դերն ու նշանակութիւնը պատմէինք. դրա համար պէտք կը լինէր սկսել, եթէ ոչ աւելի շուտից, գոնէ Սիմէօն կաթ. տօնացոյցի յառաջաբանից և այնուհետև չարունակել պատմել հնդկական կտակների, վարդապետների դարձի, հասունեան օրերի պատմութիւնները և վենետիկեան ջրերի այլայլման վերջին դէպքերը՝ գրաբարի խնդրի միակ տեսքի հանդէպ։ Այդ բոլորից այն պէտք է միայն նկատենք այստեղ, որ մի կողմից տեսնում ենք կրօնական մոլութեան և հրատարակչական գործունէութեան գլխին դատավճիռը տուել է և տալիս է ժամանակակից կեանքն ու գրականութիւնը, միւս կողմից աւանդականութեան և ոչ գիտնական տարրին մահուան դեղ է պատրաստում ժամանակակից գիտութիւնը, ուր ջահակիրներ են միայն Վիեննական դպրոցի գիտնական հայրերը։ Այսպէս նախ քան բոլորը, Այտնեան 1865 թուին մահուան արձան բարձրացրեց այն բոլորի ջանքերին, որք աշխատում էին հին լեզուն կենդանացնել. յետոյ 1887 թուին հիմնած իւր հանդէսով գիտնական ինքնագիտակից գործունէութեան մի այնպիսի ընթացք բացեց նա, որ վենետիկցոց ամենաէական զէնքը — անկանոն գրաբարը — խիստ ըէակցիայի հանդիպեց. չը գիտենք միայն՝ թէ ինչու Բագրատունու «տգիտական» նամակը մի տարի անց իւր ծնունդից հրատարակեց Հանդէսը և ոչ թէ հէնց իւր առաջին աչքաբացին։ Ահա այդ ընթացքի չնորհիւ է, որ գրաբարի խնդիրը, միևնոյն ժամանակ Վենետիկի կեանքի և գործունէութեան այն երրորդ տարրը, ճգնաժամի մէջ են։ Այդ ընթացքն ու խնդիրը որքան ծանր ու մեծ են իրենց բովանդակութեամբ և լրմամբ, նոյնքան նշանակալից են իրենց լուծմամբ։ Վիեննական դպրոցի և նրա ինքնուրոյն չնորհքի նշանակութիւնը այդպէս պէտք է նկատել. և այդ նկատումներով, միանգամայն ցանկալի է, որ ամեն կերպ էական նրա յարուցած խնդիրը լուրջ ուշադրութիւն և համակրութիւն գտնէր մեր Կովկասեան դրական և դպրոցական կենդրոններում։

Դր. Տէր-Պողոսեան

Բալախանի

Տ. ՅՈՎՀԱՆ ՄԱՆԴԱԿՈՒՆԻ

1. *Կաթողիկոսութիւնը*

Հայրապետիս անունն ալ Թարգմանչաց շարքին մէջ կը դրուի, և Կանոնագիրքն ալ նորա անունը կը մակագրէ իբր «Կաթողիկոս և Թարգմանիչ աշակերտեալ մեծի սրբոյն Սահակայ հայրապետի» (կան. 213)։ Այդ Մանդակունիին կաթողիկոսութիւնը 478-ից դնելով և զինքն 65—70 տարեկան ենթադրելով, Սահակայ մահուան ատեն հազիւ թէ 30-ի մօտ եղած կը լինի և միայն յետին աշակերտներէն մին եղած կրնայ ըլլալ։ Իւր Մանդակունի մականունը կը ցուցնէ թէ նախարարական ազատ տունէ էր, իսկ բուն ծննդավայրն էր Արշամունեաց (այժմ Վարդոյ) գաւառին Ծախնոտ կամ Ծախնատ գիւղը (Առող. 82)։ Իւր անուամբ մեզի հասած մատենագրութիւնները կը ցուցնեն թէ յունական ուսմամբ զարգացած էր, և յոյժ հաւանական կընեն Յունաստան ալ գացած ըլլալը, թէպէտ ոչ ուրեք յիշուած կը գտնեմք։

Ս. Մեսրովպայ մահուան ատեն Յովհան աշակերտ մը կը գտնուի իրեն մօտ, որ յետոյ Տիզբոնի մէջ խոստովանողական կապանքներ կրելէ ետքը «Ի նոյն վերակացութիւն դառնայր յաշխարհին Հայոց» (Կոր. 46)։ Այդ Յովհանը անհնարին է Եկեղեցացին կարծել, որ 404-ին արդէն երիցագոյն քահանաներէն էր, ուրիշ Յովհան ալ չունիմք վերակացութեամբ ծանօթ, Մանդակունին միայն գիտեմք կաթողիկոսութեան հասած, բայց կաթողիկոսանալէ առաջ խոստովանողաբար Տիզբոն տարուած լինելը ոչ ոք կը պատմէ, բայց հնար է քաղել այդ կտորէն, որչափ ալ մութ լինի պատմական պարագայ մը հաստատելու համար։

Կաթողիկոսութենէ յառաջ ալ Մանդակունւոյն գործի գլուխ գտնուած լինելը կը հետևի ինչ ինչ կիսատ և չփոթ յիշատակներէ։ Ըստ մեզ ընդունելի կը թուի ըսել, թէ երբ Գիւտ

կաթողիկոս Տիզբոն տարուեցաւ, Մանդակունին ստանձնեց տեղապահութիւնը, և շարունակեց ևս երբ Գիւտ Պերոզի հրամանով պաշտօնապուրկ եղած Ոթմուսի մէջ հանդարտութեամբ կապրէր իբրև իրօք կաթողիկոս, և միայն նորա մահուանէն յետոյ Մանդակունին կաթողիկոսի անունն ալ առաւ։ Ի դէպ է կրկնել թէ երկուքին մէջ մուծուած Քրիստափորի կաթողիկոսութիւնը չկրնար հաստատուիլ, և պէտք է սովորական ցուցակներէ վերցնել։

Մանդակունւոյն կենաց նշանաւոր միջոցն է Վահան Մամիկոնեանի շարժման ժամանակը, որուն քաջալերողն եղաւ և հոգևորապէս առաջնորդողը։ Շարժումը սկսաւ Պերոզի 25-րդ տարին (Փարպ. 406), այսինքն է 481—482 տարին, որ մօտ է Յովհանի ամոռակալութեան 478 թուականին, և շատ կարճ միջոց կը մնայ նորա բարեկարգական գործունէութեան, որ մեծ տեղ մը կը գրաւէ պատմութեան մէջ։ Հետևաբար աւելի հաւանական է ըսել թէ պատերազմի շփոթներուն վերջանալէն և խաղաղութեան վերահաստատուելէն ետքը կատարեց նա ծիսական և կանոնական, բարեկարգական և մատենագրական աշխատութիւնները, թէպէտ և ամենուն մէջ աւելի երիտասարդական ժրութիւն կը փայլի քան ծերութեան հանդարտութիւն։

2. Շփոթ օրեր

Պատմեցինք թէ ինչպէս դառն էր Հայոց վիճակը Գիւտայ ժամանակէն Ատրվշնասպի մարզպանութեան ներքև։ Ապստամբութեան առաջին խորհուրդ մը ցրուած էր Գիւտայ Տիզբոն տարուելուն ատեն, որ հարկաւ իրեն պատժակից Նախարարներ ալ ունեցաւ։ Առաջին փորձ մըն ալ, ինչպէս ենթադրեցինք, Դրենայ կրակարանին կործանումն էր, այն ալ Վահանայ ուրացութեամբ վերջացեր էր։ Ազգը ընկճուած էր, բայց սիրտեր աւելի վառուած։ Պարսիկներն ալ զայն գիտէին։ Վասակ իւր ուրացութեան ժամանակ ալ ամբաստանուեցաւ Վրիւ Խորխոռունիէն և հազիւ ազատեցաւ իւր ճարտարութեան շնորհիւ (Փրպ. 404)։

Այդ միջոցին Պերոզ Հեփթաղներու հետ պատերազմ ունեցաւ և տկարացաւ։ Հայ բանակ մըն ալ գացած էր յԱղուանս ուխտապահ և ուրացեալ նախարարներու գունդերով կազմուած և Ատրվշնասպի գլխաւորութեամբ։ Պատերազմէն ետքը հայ բա-

նակը եկաւ ի Շիրակ, և ճիշտ այն միջոցին լուր եկաւ թէ Վախթանկ վրացին սպաննեց ուրացեալ Վազգէնը, Ս. Շուշանիկի ամուսինն ու դահիճը, և Պարսիկներէն ապստամբեցաւ։ Վախթանկ Հոներէ վարձու բանակ ուղած էր, իսկ Հայերը իրեն հետևելու կը հրաւիրէր։ Շիրակի մէջ հաւաքեալ ուխտապահներ և ակամայ ուրացեալներ հրաւէրը ընդունեցան, բայց Վահանը կուզէին գլուխ ունենալ։

Վահան ալ այնտեղ էր և գաղտնի բանակցութիւններ եղան։ Վահան թերահաւատութիւն ցուցուց նախարարաց հաստատամտութեան վրայ, և այն ատեն միայն համոզուեցաւ, երբ ասոնք յայտնեցին թէ ոչ Յունաց և ոչ Հոնաց վրայ յոյս կը դնեն, այլ աւելի կընտրեն մեռնել, քան թէ այս կերպ ապրիլ։ Վահան ալ խոստացաւ մինչև իսկ իւր պատանդ գտնուող Վարդ եղբօր սէրը զոհել։ Աթիկ Բզնեցի քահանայն, որ բանակին հետ էր, աւետարանը հանեց և անոր վրայ երդուան ուխտապահներուն հետ կեղծ ուրացեալներն ալ։ Պերոզի 25-րդ տարին էր (Փրպ. 406), որ է 481—2 տարին, բանակը ձմերոց մտնելու վրայ էր (Փրպ. 436), ուրեմն 481 տարւոյ աշնան մէջ Վահանեանց չարժումն ալ սկսաւ։

Խորհուրդին գիշերը Վարազշապուհ Ամատունի եղելութիւնը մարզպանին իմացուց, որ նախ Անի (Փրպ. 415), և անտի Արտաշատ բերդը փախաւ (Փրպ. 416), և անտի ալ Ատրպատական գնաց և ազատեցաւ, մինչ Գաղիշոյ Խորխոռունի գերի ինկաւ (Փրպ. 416), և հաւանարար սպանուեցաւ, որովհետև այլ ևս անունը չյիշուիր։ Ուխտապահները առանց դժուարութեան Դուինը գրաւեցին և առժամեայ կառավարութիւն ալ կազմեցին, Սահակ Բագրատունին մարզպան հռչակեցին և Վահան Մամիկոնեանը սպարապետ։ Յովհան կաթողիկոս ալ անոնց հետևեցաւ և Դուին գնաց նոր գործառնութեանց նախագահելու և աստուածային օրհնութեամբ օժանդակելու (Փրպ. 421)։ Ատրվշնասպ նոր բանակով դարձաւ, բայց Ակռուի պատերազմին մէջ սպանուեցաւ և յաղթութիւնը Հայերուն մնաց, հակառակ Գարջոյլ Խորխոռունւոյ դասալիք մատնութեան։ Կաթողիկոսը մեծ հանդիսութեամբ տօնել կուտայր այդ անդրանիկ յաղթութիւնը։

Ցուրտերը սկսելուն գործեր դադարեցան և այնպէս անցաւ 481—2 ձմեռը։ Վահան հրաւէր կարդաց Արծրունեաց, Անձևացեաց, Ռշտունեաց և Մոկաց նախարարներուն, և միայն մաս-

նաւոր օգնութիւններ ստացաւ։ Յովհան Անձևացի և Ներսէհ Սրուանդունի ուխտապահներ, աւագ շաբթուն մէջ Առեստի մօտ Սեւուկ Անձևացւոյն և Յովհան Մոկացւոյն ընդդիմութիւնը վանելով, զատիկը Վահանի հետ ըրին ի Դուին (482 ապրիլ 25։ Բայց յանկարծ Պարսից գալուստը լսուեցաւ. Վահան դէմ քաշեց և Արտազու դաշտին մէջ Ներսեհապատի յաղթութիւնը տարաւ, Աւարայրի պատերազմէն գրեթէ օրը օրին 31 տարի ետքը։ Յոհան կաթողիկոս մէկտեղ եկած էր և աղօթքով ու քարոզով մարտակից էր Վահանեանց (Փրպ. 426)։ Յանկարծ Վարդ ալ հասաւ պատանդութենէ ազատած. Վահանի համար բարեգուշակ եղաւ, վասն զի ըսած էր որ եթէ իւր գործը Աստուծոյ հաճոյ է՝ իւր եղբայրը կազատէ (Փրպ. 452). իսկ Վասակի համար հակառակը կարծուեցաւ, վասն զի ըսած էր, թող Վարդը ազատած տեսնեմ և այնպէս մեռնեմ (Փրպ. 456)։

Ներսեհապատի յաղթութենէն ետքը Վահան պարտաւորուեցաւ օգնութեան երթալ Վախթանկին, հաստատուած դաշնակցութեան համեմատ, թէպէտ կասկած ունէր անոր վրայ։ Ճարմանայնու պատերազմը Կուրի դաշտին մէջ, ամրան սաստիկ տաքերուն տեղի ունեցաւ և յաղթութիւնը Պարսից մնաց, Վրաց նենգութեամբ (Փրպ. 468) և Հայերէն ոմանց ուխտադրժութեամբ։ Սահակ Բագրատունի և Վասակ Մամիկոնեան մեռան, Հրահատ Կամսարական և Յազդ Սիւնի գերի ընկան, և Վահան Տայոց լեռները ապաւինեցաւ (Փրպ. 467)։ Միհրան Պարսից զօրավարը Վահանայ հետ բանակցելու ատեն ետ կոչուեցաւ. և Վահան ազատօրէն ուխտը կատարեց ի Ս. Էջմիածին, և նորէն 482—3 ձմեռը անցուց ի Դուին կաթողիկոսին հետ, որ Ներսեհապատէ եկեր էր այնտեղ։

Միհրան պարսիկ զօրավարը ի մեհասին կը տանէր երկու գերեալ սեպուհները, և Ներսէհ Կամսարական Պարսից կը հետեւէր եղբայրը ազատելու։ Բագուանու Ս. Գրիգորի եկեղեցիէ օթեան մը առաջ Հրահատ յաջողեցաւ փախչել և Ներսէհին միանալ (Փրպ. 482)։ Այլ այս պարագայն ծանրացոյց Յազդի կացութիւնը։ Միւս օր Բագուանայ մէջ Գդիհոն Սիւնիին գրգռութեամբ Յազդ Սիւնին ատեան կոչուեցաւ և ուրացութեան հրաւիրուեցաւ, և մերժելուն համար գլխատմամբ նահատակուեցաւ Ս. Գրիգորի մատուռին մօտ, հոռի ամսոյ 16 ին, որ է 482 սեպտեմբեր 12, կիրակի օր, և նոյն մատրան մէջ ամփոփուեցաւ (Փրպ. 488)։

Այս ձմեռուան մէջն էր որ Սահակայ և Վասակայ կենդանի լինելուն սուտ զրոյցներուն վրայ Մուշեղ Մամիկոնեան մասնաւոր գնդով ձիւնապատ լեռներու վրայ թափառեցաւ։ Իսկ 483 գարնան Զառմիհր Հազարաւուխտ նոր բանակով Դըւնայ վրայ յարձակեցաւ։ Վահան դէմ ելաւ և «Քաջաբար փախուստ»-ով (Փրպ. 501) Խաղտեաց լեռները ապաւինեցաւ. այլ Որդի Դիմաքսեան և Քաջաջ Սահառունի պատերազմի մէջ ինկան, և Յովհան կաթողիկոս ձիէն իյնալով կիսամահ մնաց, մինչև որ ոմանց օգնութեամբ դարձաւ ի Դուին և Ժողովրդեան երևնալով քաջալերեց և մխիթարեց (Փրպ. 502)։ Հազարաւուխտ մտաւ ի Տայս, երկու Կամսարականներուն կիները գերեց և պահեց իբր գրաւական։ Վահանեանք մեծ պատերազմէ խուսափելով ամառը անցուցին, մինչև որ Հազարաւուխտ ալ Պարսկաստան դարձաւ աշնան մօտերը, երբ արդէն հնձողներ Կարնոյ լեռնակողմները կաշխատէին (Փրպ. 516)։ Այդ միջոցին պէտք է դնել Տեառնթագ Արշարունւոյն նահատակութիւնը Հազարաւուխտի ձեռօք (ասող. 81), թէպէտ պարագայք անյայտ կը մնան։

Շապուհ Միհրան որ Հազարաւուխտի յաջորդած էր, ձմեռուան մէջ ալ Վահանեանները հալածեց, որք Արշամունեաց և Հաչտենից կողմերը իջած էին։ Ասոնց թիւը շատ նուազած էր (Փրպ. 526), հարկաւ ցուրտին և նեղութեանց պատճառով։ Յաջողութիւնը աւելի մօտ գտնուեցաւ, երբ աւելի հեռու կը կարծուէր։ Շտեայ պատերազմին մէջ Գդիհոն սպանուեցաւ, և Վահան պաշարումէ ազատեցաւ։ 10 օր ետքը երբ Շապուհ Բասենոյ Ալվար գիւղը կը գտնուէր (Փրպ. 541), 484 տարւոյ գարնան սկիզբը լսեց Պերոզի Հեփթաղաց պատերազմին մէջ յաղթուելը և սպանուելը, և ուրիշ պարսիկ զօրավարաց ինքն ալ բոլոր բանակով բնիկ երկրին պաշտպանութեան գնաց։ Վաղարշ թագաւորեց իւր եղբօր տեղ և խաղաղական կառավարութեամբ ջանաց ապահովել թագաւորութեան ամբողջութիւնը։

3. Խաղաղ օրեր.

Այս վայրկենէ սկսաւ Վահանայ վերջնական յաջողութիւնը։ Ազգն բովանդակ զգաց նախախնամական Աջոյն յայցելութիւնը և բոլոր ուխտապահներ Վահանայ շուրջը ամփոփուեցան, Վաղարշապատու կաթողիկէին մէջ ուխտի մեծ հանդէս մը կատա-

բեցին աղօթիւք և երդովք, աղքատաց օգնութիւններով և եկեղեցւոյ նուէրներով։ Յովհան կաթողիկոս ցնծութեանց նախախագահեց։ Սահակ Բագրատունւոյ մահուանէ ետքը առժամեայ կառավարութեան նոր պետ մը չդրուեցաւ, և հարկաւ այն ալ Վահանի մնաց սպարապետութեան հետ։ Բայց որովհետև Վահան գրեթէ վտարանդի կը թափառէր, արժան է ըսել թէ Դբունայ ոստանին մէջ ինքն կաթողիկոսն էր, որ ազգին ամեն պէտքերը կը հոգար։

Ճիշտ այդ կէտին կը յիշէ Փարպեցին Վաղարշապատու կաթողիկէին վերաշինութեան սկզբնաւորութիւնը, «զոր հիմնարկեալ նորոգեաց մեծապայծառ շքեղութեամբ զհնացեալ գործ նախնեաց իւրոց» (Փրպ. 544), և այս նորոգութեան հետ կապուած է Փարպեցւոյն անունը, զի իւր ալ այնտեղ պաշտօնավարութիւնը սկսաւ «ի նմին աւուր յորում հիմն արկաւ տեղւոյդ» (Փրպ. 666)։ Փարպեցւոյն անունը յիշեցինք երբ ի մանկութեան խաղակից և սննդակից էր Վահանայ և եղբարց (Փրպ. 644)։ Հարկաւ աստի սկսաւ նոցա մօրեղբօր Աղան Արծրունի վարդապետին աշակերտեցաւ (Փրպ. 644), անկէ ետքը «ըստ վարդապետացն հրամանի գնաց ի Հռոմս» (Փրպ. 642), և յունական ուսմանց պարապեցաւ (Փրպ. 656), և ի դարձին քահանայացաւ, եթէ կանուխ քահանայացեալ չըսեմք։

Այդ միջոցին Ղազար Կամսարականաց մօտ ապրեցաւ «յամենայն ամբոխսն» (Փրպ. 643), և այդ բառերով կուզէ հարկաւ ակնարկել Դբունայ կրակատան գործոյն։ Իսկ «յամենուաճման» Վահանայ (Փրպ. 643), այսինքն Վահանայ ուրացութեան միջոցին, Փարպեցին յուսահատեալ Սիւնեաց լեռներուն մէջ ճգնելու գնաց։ Այդ կերպով Վահանայ ուրացութեան ակնարկելը կը հաստատուի նոյն իսկ Վահանի այդ իրողութիւնը «կործանումն» կոչելէն (Փրպ. 478), և հարկաւ ուրիշ որևէ փորձանք չպիտի կարենար Փարպեցին յուսահատեցնել և փապարներու մէջ ճգնաւոր մը դարձնել, Մովսէս անունով ծեր կրօնաւորի մը քով։ Մուշէ եպիսկոպոս Սիւնեաց, հաւանաբար հին ընկեր մը, արգահատեցաւ Ղազարու հոգեկան վիճակին վրայ, և գոնէ ամառները իրեն հետ հովասուն տեղեր կը տանէր մխիթարելու և հանդարտելու համար։

Երբ Վահան համարձակ իր քրիստոնէութիւնը հոչակեց և պաշտպանել սկսաւ, անձամբ գնաց աւետել և մխիթարել և ի միասին բերաւ Սիւնեաց առանձնութենէն, և այս վայրկե-

նէ պէտք է նկատել Փարպեցին իբրև յամենայնի ընկերակից և գործակից Մանդակունւոյն, որուն վրայ այնչափ զարմացմամբ կը խօսի և բոլոր եղելութիւնները այնչափ մանրամասնութեամբ և ոգևորութեամբ կը պատմէ, որ անհնար է ինքն ալ անոնց մէջ եղած չլինի։ Շապուհ Միհրանի քաշուելէն յետոյ, Վահան իբրև գիտակ դրից փոփոխութեան, ներքին կարգադրութեանց ձեռնարկեց, և առաջին գործերէն մին կաթողիկէին նորոգութիւնը եղաւ, և ինքն Վահան տարաւ Փարպեցին և այդ գործին գլուխ դրաւ (665)։

Միջադէպ մըն ալ կը պատմուի այդ առթիւ.

«Գիւտ կաթողիկոսի եղբօրորդի երանելի Յովհաննէս» ոմն պաշտպանութիւն կընէր որ կաթողիկէին պաշտօնը տրուի ոմանց որ Սկոյ դրախտին մէջ Վահանի դիմացը ելնելով կաշուք ալ կառաջարկէին։ Վահան բարկութեամբ մերժեց խնդրողները և Տէր Յովհաննէսն ալ մեղադրեց պաշտպանութիւն ընելուն համար» (Փրպ. 670)։ Ոմանք կարծեցին թէ այդ Յովհաննէսը նոյն ինքն Մանդակունի կաթողիկոսն է, սակայն հարաւարնակ նախարարազուն Մանդակունի մը հիւսիսարնակ հասարակ Տայեցի Գիւտին եղբօրորդի չկրնար ենթադրուիլ. իսկ *երանելի* ածականը կաթողիկոսի պատուանուն չէ, այլ լոկ մեռած լինելը ցուցնող, ինչպէս մեր այժմեան *երջանկայիշատակ* և *հոգելոյս* ածականները. և ըստ այսմ միայն Յովհաննէսը պէտք մեռած ըսել նամակի գրուելուն տարին, որ բաւական ետքն է։ Կաթողիկոսի եղբօրորդի եպիսկոպոս մըն ալ շատ դիւրաւ կրնար պաշտօնաբաշխութեանց առիթներէն ազդեցութեան կամ շահու միջոցներ ստեղծելու վարժ ըլլալ։ Զմոռնանք դիտել թէ թերևս ի դէպ էր կէտը փոխել և ընթեռնուլ. «պատգամս Յովհաննու՝ Երանելւոյն Գիւտայ կաթողիկոսի եղբօրորդւոյն». վասն զի ստորեւ միայն «Տեառն Յովհաննայ» կըսէ պարզապէս (Փրպ. 670, 671)։

Վաղարշ թագաւորելուն յաջորդ օրը (Փրպ. 547) Հայոց գործով զբաղեցաւ. Հազարաւուխտ և Շապուհ որք Վահանի դէմ պատերազմած էին, իրենք սկսան Վահանը արդարացնել։ Վաղարշ հաճեցաւ և Նիխոր Վշնասպդատ պատգամաւոր ղրկուեցաւ, ձեռքի տակ ապահովութեան բանակ պահելով։ Բանբերներ գացին և եկան, ինքն Վահան ալ Նիխորի հետ տեսնուեցաւ, և վերջնական կերպով ընդունուեցան Վահանի պայմանները։ 1. Քրիստոնեայք ազատութեամբ իրենց կրօնքը պաշտեն։

2։ Ուրացեալներու և անարժաններու պաշտօններ և տանուտիրութիւններ չտրուին։ 3. Հայոց երկրին խնդիրները թագաւորին դատաստանին ելնեն ուղղակի։ Վահան բանակով գացեր էր առ Նեխոր և դրած էր զայն Արտաշու Եղինդ գիւղը, և Աւարայրի նահատակութիւնը և Ներսեհապատի յաղթութիւնը կը լրանային Եղինգի խաղաղութեամբ, միևնոյն Արտազեան դաշտին մէջ։

Խաղաղութիւնը վերջնական ընելու համար որոշուեցաւ որ Վահան Վաղարշի ներկայանայ, և իբր բարեկամութեան առհաւատչեայ գունդ մը ալ ղրկէ ապստամբ Զարեհի դէմ, որ Պերոզի որդի էր և կուզէր թագաւորութիւնը խլել։ Վահան Դուին դարձաւ և Լուսաւորչին նշխարաց օրհնութիւնն առաւ Յովհան կաթողիկոսին ձեռքէն և նախարարաց ընկերակցութեամբ ուղևորեցաւ ի Տիզբոն։ Վրէն Վանանդացի օգնական գունդին զօրավար նշանակուեցաւ, և Վահանէ առաջ ճանպայ ելաւ։ Վաղարշի ցուցած բարեկամութեան և պատուոյ նշանները ալ աւելի մեծ եղան. բոլոր ուխտապահներ փառաւորուեցան և ուրացեալներ անարգուեցան և մերժուեցան։ Վահան սպարապետ ալ անուանուեցաւ, իսկ մարզպանութեան ընտրուեցաւ Անդեկան պարսիկ, զոր խելացի և մտադիր և իմաստնահայեաց կանուանէ պատմիչը (Փրպ. 614)։ Կաթողիկոսն ի գլուխ մեծամեծաց և ժողովրդոց դիմաւորեց զՎահան, և նախ Վաղարշապատու կաթողիկէին մէջ գոհացողական պաշտօն կատարելէ յետոյ, հասան ի Դուին։ Այս ամենը տեղի ունեցաւ 484 տարուոյ աշնան մօտ։

Անդեկան քիչ մը ատեն պաշտօնավարելէն ետքը խորհուրդ տուաւ մարզպանութիւնն ալ Վահանի յանձնել, թէ երկրին և թէ գանձին համար աւելի շահաւոր տեսնելով։ Անձամբ ալ Տիզբոն գնաց (Փրպ. 616), և Վաղարշը համոզեց։ Վահան Մարզպանութեան հրովարտակը առնելուն կաթողիկոսին դիմեց, յատուկ տօնախմբութիւն մը կազմուեցաւ սաղմոսներով և ընթերցուածներով կաթողիկոսին կարգադրութեամբ և բոլոր քաղաքին և մեծամեծաց ներկայութեամբ։ Թէպէտ՝ օրը յայտնի ըսուած չէ, այլ գրեթէ ստոյգ է 485 տարուոյ զատկին կամ քիչ ետքը դնել այդ հանդէսը։

Մանգակունւոյն այն օրուան ատենաբանութիւնը ընդարձակօրէն յառաջ բերած է Փարպեցին (Փրպ. 622—630), այնպիսի անարուեստ և կցկտուր կերպով մը, որ պէտք է ը-

սենք թէ ուղած է հաւատարմութեամբ ըսածը և յիշածը աւանդել ընդհատ նախադասութիւններով, առանց իւր կողմէն բան մը աւելցնելու կամ կապակցութիւններ յօրինելու։ Ատենաբանութեան արտաքին ձևը յղկեալ չէ, բայց անպատմելի է զգացումը և բարձր է միտքը։ Նկատելի է թէ ինչպէս անկելոց հանդէպ ներողամտութիւն կը քարոզէ, թշնամեաց սէր և անարգելոց արգահատանք, և կուզէ վանել արդար վրէժխնդրութեան մտադրութիւնը։ Ուխտապահաց լաղթութեան և ուրացելոց կորագլուխ անկման պահուն կը վախնայ Մանդակունին թէ Վահանեանք ամեն իշխանութիւն ձեռք անցնելով, ուրացելոց գլուխը պիտի դարձնեն անոնց ըրած չարիքը, կը յիշէ թէ անոնք ալ իւր հօտին մոլորեալ ոչխարներն են, թէ ինքն այդ անառակներուն ալ հայրն է, և անոնց պաշտպանութեան համար կը խօսի, յաղթութեան և ցնծութեան ամենափառաւոր վայրկենին մէջ։ Այդ ծառը և այդ զգացումը Մանդակունւոյն վեհ հոգւոյն և բարձր մտաց և ճշմարիտ հովուութեան լուսաւոր փաստն է։ Անով կը փակէ Փարպեցին իւր պատմութիւնը և աւելի լաւ կերպով չէր կարող վերջացնել։

4. Վերջին օրեր

Փարպեցիին պատմութեան հետ մեր պատմութիւնն ալ կարծես կը փակուի, այլ ևս միապաղաղ և ճոխ պատմութիւն չենք ունենար և կցկտուր յիշատակներ իրարու մօտեցնելով, և մէջերն ալ համեմատութեամբ լրացնելով կը պարտաւորուիմք բաւականանալ։ Վահանի մարզպանութեամբ խաղաղութեան միջոց մը կը սկսի, և պէտք ունէր երկիրն այսպիսի հանդարտութեան իւր երկարատև աւերածներէն ոգի առնելու համար։ Վահան սկսաւ երկիրը բարեկարգել, Յոհան սկսաւ եկեղեցին բարեզարդել, և այդ առթիւ յիշեմք ինչ որ Մանդակունւոյն եկեղեցական գործունէութեան վրայ ցրիւ աւանդուած կը գտնեմք։

Նախ իւր անունը գրուած է ժամագրքին ճակատը՝ Սահակ և Մեսրոպ և Գիւտ անուններէն ետքը չորրորդ և վերջին, որոշ կիմանամք թէ Թարգմանչաց դարուն կարգադրութիւնք՝ որք Սահակով սկսան, Մանդակունւով փակուեցան, և անկէ ետքը իբր հաստատուն նուիրագործուեցան և մնացին։ Միայն հեռու ժամանակներու մէջ Օձնեցին և Շնորհալին այդ ծիսա-

կան կարգադրութեանց մէջ փոքր յաւելուածներ կամ փոփոխութիւններ մուծած են։ Ժամագիրքին աղօթքներէն ուղղակի Մանդակունւոյն տրուած են գիշերապաշտաման *Զարթուցեալքս* քարոզը և *Զքէն զոհանամք* աղօթքը (Օձն. 28) և երեք հաշուներուն մեծ քարոզներն ու աղօթքները որք այժմ մեծ պատոց յատկացուած են. (Կիրակ. 20 և Ժամագիրք), բայց դեռ ուրիշներ ալ կրնան Մանդակունւոյն եղած լինել։ Շարականներէն ալ պիտի ունենայ բաւական մաս մը. թէպէտ սովորական ցուցակներուն մէջ իրեն վերագրուած Հռիփսիմեանց համբարձին յետագայ դարու գործ կերևի, բայց հնագոյն ճանչցուած շարականներուն Մանդակունիէն յարմարագոյն հեղինակ մը ցուցնել դժուար է։ Աւելի մանր զննութիւններ մատենագրական հետազօտութեանց կը պատկանին։

Ծիսարանի կամ մաշտոցի կարգաւորութիւններէն շատեր ալ Մանդակունւոյն տրուած են, կարգ մկրտութեան, ձեռնադրութիւն սարկաւագի և քահանայի և եպիսկոպոսի, օրհնութիւն եկեղեցւոյ (Ասող. 82), որ և հիմնարկէք եկեղեցւոյ, օրհնութիւն ժամահարի, օրհնութիւն սկիհ և մաղզմայի, խաչօրհնէք, և պսակ (Կիր. 20), և թերևս ուրիշներ ալ որք ընդհանուր յիշատակութեանց ներքև պարունակուած են։ Պատարագամատոյցն ալ՝ Աթանասի կոչուած Աղէքսանդրեան պատարագամատոյցին հետևողութեամբ կազմուած՝ Մանդակունւոյն կը տրուի (Ասող. 82)։

Կանոնագիրքն ալ Մանդակունւոյն անուան ներքև ինը գլուխ կանոններ ունի, տօնից և պահոց վրայ, և ընդարձակ կանոն մըն ալ եկեղեցականաց գիտութեան և արժանաւորութեան վրայ (Կան. 210)։ Կանոնները բնականաբար ժողով մը եղած կենթադրեն, և իրօք ալ Օրբելեան կը յիշէ թէ «ի ժողովն Նահապիվանի, ուր էր Յովհան Մանդակունի, արարին կանոնս եկեղեցւոյ» (Օրբ. Ա. 97)։ Շատ ալ հաւանական է որ խաղաղութեան վերահաստատուելէն յետոյ Մանդակունին ժողով մըն ալ գումարեց ի Նահապիվան, և այնտեղ հաստատուեցան Մանդակունւոյ կոչուած կանոնները, որոց պարունակութիւնը այդ ենթադրութեան հակառակ բան մը չցուցներ։ Բայց դժուարին է կարծել Օրբելեանի հետ թէ նոյն ժողովոյն ներկայ էր նաև Անանիա Սիւնեաց եպիսկոպոսը, որ 450 տարւոյ Արտաշատու ժողովոյն մէջ գտնուած էր (Փրպ. 138)։ Թէպէտև 35 տարիներու հեռաւորութեամբ գումարուած երկու

ժողովներուն միանգամայն ներկայ եղած ըլլալ անհնարին են-թադրութիւն չէ, այլ Փարպեցւոյն պատմութեամբ արդէն Մուշէ էր Սիւնեաց եպիսկոպոսը Վահանի ուրացութեան միջոցին (Փրպ. 613), և ըստ Օրբելեանի, Անանիայի և Մուշէի մէջ տեղ ուրիշ երկու եպիսկոպոսներ ալ եղած են, Նուն 8 տարի և Գաղատ 17 տարի (Օրբ. Բ. 246), որ անհնար կրնէ Անանիան և Մանդակունին ժամանակակից ընդունել 485 տարին, հաւանական թուական Մանդակունւոյն ժողովին։

Մանդակունին երբ մատենագիր ալ յօրինած է «զճառս խրատուց» (Վարդ. 55), կամ լաւ ևս «զճառս զգուշացուցիչս դիտաւորական կենցաղոյս՝ որ բերէ զոգւոցն փրկութիւն» (Յովհ. 79)։ Իրօք ալ Մանդակունւոյ ճառք մակագրով հատոր մը հրատարակուեցաւ ի Վենետիկ, բայց ինչպէս հրատարակողներն ալ կը դիտեն, նոյն ճառերէն ոմանք երբեմն Եփրեմի և Ոսկեբերանի անուամբ ալ կը տեսնուին, նոյն իսկ ոմանց իմաստն ու ոճը չեն համաձայներ տեղական հանգամանաց։ Այսու հանդերձ Մանդակունւոյն մատենագրական արժանիքը իրմէ չկապտուեր, եթէ նախկին Ս. Հարց գործերէն օգտուած լինելն ալ ընդունիմք։ Վարդան պատմիչ կըսէ ևս թէ «Սա թարգմանեաց զԵրկրորդ Կորնթացւոց թուղթն և զՅոհանն» (Վարդ. 55), բայց չփոթ է թէ արդեօք ընդհանուր Ս. Գրոց թարգմանութենէն մաս մըն ալ Մանդակունւոյն կը հանէ, թէ ոչ Երրորդ (և ոչ երկրորդ) Կորնթացւոց թղթին և Յովհանու Յայտնութեան վերջամնաց գիրքերը կուզէ ակնարկել։

Մանդակունւոյն բարեկարգիչ գործունէութիւնը կը գըրաւէ ամբողջաբար իւր կենաց վերջին մասը. «Եւ այլ բազում օգուտս գործեաց ի կեանս իւր» (Վարդ 55)։ Նաև երկրին չինութեան և եկեղեցեաց պայծառութեան համար ալ գործակից էր մարզպանին, որ կը գործէր «Թելադրութեամբ և խրատու և աղօթից Նպաստիւ սուրբ հայրապետին Յովհաննու Մանդակունւոյ» (Յովհ. 79)։ Միևնոյն ժամանակ Ղազար Փարպեցի կաթողիկէին չինութեան և պայծառութեան աշխատած ատեն, իրեն հովանի և պաշտպան ունէր հաւասարապէս երկու անբաժին ամոլները, Յովհանն ու Վահանը, Մանդակունի կաթողիկոսը ու Մամիկոնեան մարզպանը, որ անուան աղաւաղմամբ Մանգնոս մարզպան ալ կոչուած է պատմութեանց մէջ (Կիր. 21, Սամ. 71) երկու մեծամեծ անձեր, որոց խաղաղասէր արդասիքը դժբաղտաբար մանրամասնօրէն հասած չէ մեզի։

Մանդակունւոյն կաթողիկոսութեան տևողութիւնը երկու տարբեր, այլ կատարելապէս հաստատուն ձևով նշանակուած է պատմագրաց և ցուցակագրաց մօտ. կէսք 6 տարի կուտան և կէսք 12, և այդ երկու անհամաձայն թիւեր անայլայլակ կերպով կը կրկնուին։ Դժուարին է գրչութեան կամ տառի սխալ մը տեսնել այդ տարբերութեան մէջ, ինչպէս և դժուարին է 6 տարւոյ համառօտ տևողութեան մէջ ամփոփել Մանդակունւոյն բազմարդիւն և բազմակողմանի կաթողիկոսութիւնը։ Մեք ժամանակագրութեան պահանջներն ալ նկատի առնլով 12 տարին կը վերադասեմք. բայց այնպէս որ 6 տարիներ զետեղուին 484 ի խաղաղութենէն առաջ, և 6 տարի ալ անկէ ետքը խաղաղաւէտ պաշտօնավարութիւն ունեցած լինի Մանդակունին արքունական հաստատութեամբ զօրացեալ. զոր հարկ է ընդունել Վահանայ սպարապետութեան հետ միևնոյն ժամանակ։ Մանդակունին կաթողիկոսացաւ ուրեմն 478-ին, և խռովայոյզ օրեր անցուց մինչև 484, այն ատեն արքունական հաստատութեամբ նոր պաշտօնավարութիւն սկսաւ, և 6 տարի ևս խաղաղական հայրապետութենէ յետոյ հանգեաւ 490-ին. տարիքը ստուգիւ 75 է վեր, և հաւանաբար 80-ի հասած պէտք է ըսել։ Մահուան պարագաները և գերեզմանին տեղը անծանօթ են պատմութենէ և աւանդութենէ։ Տօն և յիշատակ ալ հաստատուած չէ, բայց արժան էր որ ամեն կերպով հռչակուէր «իմաստասէր» (Վարդ. 53), և «Թարգմանիչ» (Կան. 213), և «Սուրբ» (Փրպ. 612) Հայրապետիս անունը։

Ա. ԲԱԲԳԷՆ ՈՌՄՍԵՑԻ

1. Ղազար եւ Բաբգէն

Կաթողիկոսութենէ առաջ Բարգէնի անունը յիշուած չէ, և ոչ ալ վրան պատմական տեղեկութիւններ ունիմք։ Իւր հայրենիքին անունը, որ է Վանանդ գաւառի Ոթմուս գիւղը, մտածել կուտայ թէ պէտք է տեղւոյն պատեհութեամբ աչակերտած լինի Գիւտ կաթողիկոսին, և այդ հովանաւորութեամբ բարձրացած, և վերջապէս կաթողիկոսութեան կոչուած, Վահանայ մարզպանութեան խաղաղ և հանդարտ միջոցին։ Նեբքին գժտութիւնք և կուսակցութիւնք չատ կը բուսնին և լաւ կաճեն հան-

դարտ մթնոլորտի մէջ· և հեռուէ հեռու այսպիսի մի բան ճըշ-մարտուած կը տեսնեմք Վահանայ մարզպանութեան խաղաղ և ապահով միջոցին մէջ, և բոլոր մեր եզրակացութիւնները կը հիմնուին Փարպեցւոյն առ Վահան թղթոյն վրայ, որ հին ժամանակաց եկեղեցական ներքին կեանքին միակ տեղեկագրութիւնն է։

Փարպեցւոյն կաթողիկէի տաճարին և նախկին հայրապետանոցին մէջ վարած պաշտօնին սկիզբը դրինք Վահանի սպարապետութեան տարին։ Հարկաւ այդ ժամանակին ևս գրեց իւր պատմութիւնը, զի ոչինչ այլ պատճառ չենք կրնար գտնել թէ ինչու Վահանայ մարզպանութեան գործերը չգրեց· բայց եթէ որ պատմութիւնը այդ միջոցին աւարտեց։ Իսկ թէ ինչչափ ատեն պաշտօնի վրայ մնաց Փարպեցին չեմք գիտեր, զի բոլոր թղթոյն մէջ բան չըսեր· այլ կը յիշէ ուրեք թէ «Միանգամ և երկիցս ջարդեցաւ բոլոր գահն յանհաստատութենէ չինուածոյն այլ (թէ) զվերջինսն... զերևելիս գոլ» պէտք է ընդունէր տեսնողը (Փրպ. 667)։ Եթէ Ղազար աւեր տեղ մը առնելէ և յարդարելէ ետքը, միանգամ ջարդուած, դարձեալ շտկուած, և դարձեալ ջարդուած, և վերջին անգամ նորէն պայծառացած թողուց, ուրեմն Մանդակունւոյն խաղաղաւէտ հայրապետութեան 6 տարիներուն հետ Ղազար ալ շարունակեց Վաղարշապատու հոգաբարձութեան մէջ, և միայն Մանդակունւոյն մահուանէ յետոյ զօրացան հակառակութիւնք և հալածուեցաւ անտի։

Այդ հակառակութիւնք կանուխ սկսան երբ Գիւտի եղբօրորդի Տէր-Յովհաննէսէն պաշտպանեալք Վահանէ մերժուեցան (Փրպ. 670), և երբ Մամիկոնեանց տան աւագ քահանայն ուրիշ աւագ ծառաներու հետ գաղտնի խորհրդակցութեամբ կը ջանային իրենց դարձնել Վահանի պաշտպանութիւնը (Փրպ. 669)։ Ղազար դաւին անգիտակ իւր շինարար գործը կը շարունակէր (Փրպ. 671)· վասն զի կաթողիկոս և մարզպան իրեն կողմն էին։ Ահա թէ ինչպէս եկեղեցական կուսակցութիւնք և մեքենայութիւնք խաղաղութեան մէջ աճեցան և նպատակին հասան, Մանդակունւոյն մահուանէ յետոյ։ Շատ բնական է կարծել որ Ղազար՝ մարզպանին ընկերակիցն ու մտերիմը և պաշտպանեալը և կաթողիկէին հոգաբարձուն, յարմարագոյն կաթողիկոսացուն պէտք էր ըլլար, այլ Բարդէն կընտրուի, վասն զի Ղազար դժպհի է յետսամիտ կուսակցութեան և կուսակցա-

կան ոգին ծանր զրպարտութիւններ յարուցած էր անոր դէմ։

Զրպարտութիւնք Վահանի վրայ ալ կազդեն վերջապէս, իւր պաշտպանութիւնը կը հեռացնէ Ղազարէն, և Ղազար հալածեալ կը քաշուի Ամիդ (այժմ Տիարբէքիր) և այն տեղէն փաստաբանական թուղթ մը կուղղէ Վահանի, Համազասպ Մամիկոնեանի ձեռքով, յորում Արեղեանին կամ Արեղայական խմբին զրպարտութիւնները ցրած ատեն, ծանրապէս կը գանգատի կաթողիկոսին դէմ, որ զինքը պաշտպաննեց։ Կաթողիկոսին անունը չտար, այլ Բարգէն լինելը ակներև է։ Փարպեցին մեկնելէ առաջ ուղած է կաթողիկոսին ներկայանալ և իւր պաշտպանութիւնը խօսիլ (Փրպ. 673), իսկ կաթողիկոսն ըսած է. «Ես և ի տեսանել իսկ չիշխեմ զքեզ առ երկիւղի. դու ասես եթէ գամ բժշկեմ, և կամ թաղեա. մի՛ գուցէ զգացեալ ուրուք և զիս ընդ քեզ թաղիցէ» (Փրպ. 674)։ Այդ լեզուն՝ զինքն տկար զգացող և չուքէն վախցող, աթոռոյն վրայ նոր և ընտրողաց շնորհին պարտական մարդու չեղու է. շատ լաւ կը յարմարի կուսակցութեանց մէջ պաշտօնի կոչուած նորընտիր Բարգէնին. բայց չյարմարիր ազգային և եկեղեցական արդիւնքներով զօրացած և աթոռին վրայ ծերացած ուխտնամեայ Մանդակունւոյն։

2. *Կաթողիկոսութիւն։*

Բարգէնին անձին վրայ պատմութիւնը ուղղակի բան մը չուանդեր, և գրեթէ նստաւ ու մեռաւ խօսքերէ աւելի բան մը չունի, Սերէոս անունն ալ չունի, Ասողիկ երկու տող միայն ունի, և Յովհան Քաղկեդոնի խնդիրը մէջ տեղ նետելով ալ, քանի մը տող միայն կը գրէ խնդրոյն վրայ, իսկ Բարգէնի անձին վրայ գրեթէ ոչինչ։ Ի չգոյէ ժամանակակցաց՝ մերձաւորագոյնները ասոնք են։

Կաթողիկոսութեան տևողութիւնը Յովհան 5 տարի կը դնէ (Յովհ. 82), և Ասողիկ 3 (Ասող. 82), իսկ մնացեալ բոլոր պատմագիրք և ցուցակագիրք հաստատուն կերպով 5 տարի կուտան և քիչեր 6 (Սամ. 270)։ Բայց անհնար է այդչափ կարճ տևողութիւն տալ Բարգէնի կաթողիկոսութեան։ Մեք երբ Մանդակունւոյն մահը մինչև 490 յետաձգեցինք, ամենէն ընդարձակ ենթադրութիւնն ըրած եղանք, խաղաղութեան սկիզբէն ամբողջ վեց տարի հաշուելով, 484-է 490, և անհնար է 490-է ետքը թողուլ Բարգէնի աթոռ բարձրանալու թուականը։

Իսկ վերջը որոշելու համար պէտք է նկատի առնունք նոյն

Բարգէնի ժամանակ գրուած ժողովական թուղթն առ Պարսս, որ Դիրք Թղթոցի մէջ կը գտնուի, և չեմք գիտեր թէ ինչու մինչև վերջի ատեններ անտես եղած էր, թէպէտ և ինչ ինչ գրութեանց մէջ յիշատակութիւնն ալ կրկնուած է։ Այդ թուղթին համեմատ Կաւատայ 18 րդ տարին է Բարգէնի գումարած ժողովին թուականը։ Այդ թուականը կրկնուած է թէ նոյն թուղթին մէջ, և թէ «Ժողովոց պատմութիւն» մակագրով Օձնեցւոյն կարծուած գրութեան մէջ։ Իսկ Կաւատայ 18 րդ տարին Քրիստոսի 505—6 թիւն է, վասն զի արդի պատմաբանք դրամներու վրայ հիմնուելով ցուցած են թէ Կաւատ իւր վրայ համրեց Համասպի 4 տարիները (Նէօլտէքէ 427)։ Ըստ այսմ հարկ էր գոնէ 490-է 506, այսինքն իբր 17 տարի տալ Բարգէնի կաթողիկոսութեան։

Բայց այսչափն ալ չբաւեր. զի Հայոց երկրորդ թուղթին մէջ, նորէն Բարգէն է կաթողիկոսը, իսկ մարզպանն է Վարդ Վահանի եղբայրն ու յաջորդը. և որովհետև Վահանի իշխանութիւնը 25 տարի եղած է, 484-էն 509, աւելին ևս կը յերկարձգուի Բարգէնի կաթողիկոսութիւնը։

Եւ եթէ յետս ընդդէմ հաշուենք և Աբրահամ Աղբաթունեցի կաթողիկոսին ընտրութենէն, իւրաքանչիւր հայրապետին տրուած տարիները հաշուենք, 490-է 515 միջոցը ազատ կը մնայ Բարգէնի համար, և փոխանակ 5 տարիներու 25 տարի կաթողիկոսութիւն ըրած կը գտնուի Բարգէն։ Վերջին հաշիւը այսինքն Աբրահամէ ետև հաշիւը այդ տեղ մանրամասնել հարկ չեմք տեսներ, միայն թէ հարկ է յիշել թէ Աբրահամու ընտրութիւնը, ըստ անստերիւր հաշուոյ Ուխտանէսի, պէտք է դրուի Խոսրովու 17 րդ, է այսինքն 600—7 տարին. և աւելի ճիշտ 607 տարուոյ զատկին յաջորդ կիրակէին (Ուխ. Բ. 61)։

Բարգէնի կաթողիկոսութեան վրայ ուրիշ տեղեկութիւն չունինք։

Քաղկեդոնական խնդիր։

Միայն իւր օրով յուզուած Քաղկեդոնի ժողովին խնդիրը կայ իբր գլխաւոր նիւթ. հիմնուելով իւր գումարած ժողովին և Պարսկաստանի քրիստոնէից ուղղած թուղթերուն վրայ։ Սակայն այդ կէտը Հայոց եկեղեցւոյ պատմութեան մէջ նոր դիրք մը կրբանայ. և խնդրոյն բացատրութեան համար հարկ կը լինի ետև դառնալ և Քաղկեդոնի ժողովին պարագաներն ալ յիշել։ Այս պատճառով այստեղ կը փակենք մեր յօդուածներուն շարքը, և Հայոց եկեղեցւոյ առաջին միջոցին պատմութիւնը։ Միայն թէ այս ալ ամբողջացնելու համար պէտք կզգամք Լուսաւորչէն առաջ դարերուն և առաքելական քարոզութեան պատմութիւնն ալ քաղել, որով Թադէոս Առաքեալէն մինչև Բարգէն կաթողիկոս, ամբողջ հինգ դարերու և մեր եկեղեցական պատմութեան առաջին միջոցը լրացուցած կը լինիմք։

ՄՏՔԵՐ ԵՒ ԿԱՐԾԻՔՆԵՐ

Մարդկային պայմանական օրէնքները որքան աւելի մօտ են բնական օրէնքներին՝ նոյնքան էլ աւելի տանելի է կեանքը։

Վոլտէր.

—

Այն մարդը, որ յաճախ ենթակայ է իւր այլ և այլ քմահաճոյքին՝ կին պէտք է ծնուած լինէր աշխարհիս վերայ։

Դիոգինէս.

—

Ամենքը խօսում են. չը կայ մէկը որ լսէ թէ ինչ է ասում միւսը։

Վիկտոր-Հիւգօ.

—

Արդեօք կա՞յ աշխարհիս վրայ մի բան որ վճռուի, վերջանայ, պրծնի գնայ երբ և իցէ. արդեօք հէնց բոլորը վերսկսուելու չէ՞ միշտ։

Սէնդ—Բէով.

—

Վիճել կարելի է համակարծիք մարդկանց հետ միայն, և այն էլ վիճելի առարկայի նրբութիւնների մասին։

Վալտուր.

—

Մարդկանց լաւ ճանաչելու և դատելու համար պէտք է որ խառնակութեան ժամանակ ապրես նրանց հետ։

Տ. Դը. Ստալ.

—

Մեր արատների պատճառած վէրքերը թէև ժամանակով բժշկւում են, սակայն նրանց սպիները մնում են յաւիտեան։

Վալտուր.

—

Պատուաւոր մարդը կը խոստովանի երբեմն երբ սխալ գործէ, իսկ ստահակը երբէք։

Վ. Թակրոէ.

—

Ոճը մտքի խանձարուրն է։

Սենտ—Բէօվ.

—

Չափէն մինք քաշեցինք, սափէն եադիրը։

Սայաթ—Նովա.

—

Աշխարհս թէկուզ քոնն ըլի, ինչ պիտի տանիս։

Նոյն.

—

Աշխարհս ումն է մնացի, որ ինձ ու քիզ մնայ։

Նոյն.

—

Շահն էր քաշի՝ չէր դիմանայ էս իմ քաշած զիանին։

Նոյն.

—

Հէքիմ ու դատաստան չը կայ, մէկ դրուստ ադալաթ չը կայ։

Նոյն.

Դաղկաբաղեց Ն ՑԱՐՈՑ

Տ. ՄԵԼՔԻՍԵԴԵԿ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՒՐԱՏԵԱՆ

Գարեգին վարժապետ

Բ. Նորա գործունէութիւնը Տաճկաստանում

Գարեգինը Կ. Պոլիս հասնելով և տեղաւորուելով՝ ցանկութիւն է յայտնում հոգևորական դառնալու, բայց Շուշուայ լուրերը իրանից առաջ էին հասել Կ. Պոլիս և չարամիտ մարդիկ սկսում են ամբաստանել Նորան իբրև բողոքական գաղափարներ ունենալու համար և խանգարել Նորա դիտաւորութեան իրագործումը։ Այդպիսիներին սանձելու համար Գարեգինը հրատարակում է առանձին բրօշիւրով մի պատասխան, որի մէջ հերքում է այդպիսի անհիմն զրպարտութիւնները։ Բայց որովհետև այդ միջոցին նա մի շարք յօդուածներ զետեղեց «Մասիս լրագրի մէջ ազգային ժամանակակից խնդիրների մասին՝ կարճ միջոցում Գարեգինը յայտնի եղաւ Կ. Պոլսում, ծանօթացաւ այն ժամանակուայ պատրիարքի և նշանաւոր գրագէտների հետ և շատերի համակրութիւնը վաստակեց։

Երկու տարու չափ մնաց նա Կ. Պոլիս, ուսուցչական պաշտօնով և այնուհետև գնաց Երուսաղէմ Եսայի պատրիարքի օրով, ընդունեց Ս. Յակոբայ վանքի միաբանակցութիւնը և հանգուցեալ պատրիարքի յատուկ հրաւէրով և ցանկութեամբ նշանակուեց վանքի ժա-

---

[1]) Տես «Լումայ» № 5։

ռանգաւորաց դպրոցի տեսուչ և ուսուցիչ։

Երուսաղէմի ականատես միաբաններ ինձ պատմել են, որ Գարեգինի տեսչութիւնը նոր զարկ տուեց իրանց դպրոցին, ժառանգաւորաց այդ հինաւուրց դպրոցը հիմնական փոփոխութեան ենթարկուեցաւ թէ ուսման ծրագրի և թէ ներքին բարեկարգութեան կողմից, որի հետևանքն եղաւ վարժարանի արտակարգ յառաջադիմութիւնը. ապացոյց այս բանին կարող են լինել այդ ժամանակուայ այն սաները, որոնք այժմ իբրև հայ հոգևորականութեան լաւագոյն գործիչներ պաշտօնավարում են Երուսաղէմի վանքում և այլուր։ Գարեգնի գործունէութեան յաջողութեանը բաւական օգնում էին վանքի մատենադարանը, թանգարանը, տպարանը և այլ հաստատութիւնները, որոնք բաւական բարգաւաճ էին այդ միջոցին յիշատակաց արժանի Եսայի լուսամիտ և ուսումնասէր պատրիարքի օրով [1]։

Ամբողջովին նուիրուած լինելով Երուսաղէմի վանքի բարգաւաճման և հայ մանկտւոյ կրօնական և բարոյական դաստիարակութեան գործին, երկու տարուայ տեսչութիւնից և ուսուցչութիւնից յետոյ Գարեգինը կնքում է իւր ուխտը, ուխտում է կուսակրօնութեան, ընդունում է հոգևորականի կոչում և 1869 թուին Ս. Էջմիածնի հանդիսաւոր տօնին Տ. Եսայի պատրիարքից ձեռնադրւում է վարդապետ, վերակոչուելով Մելքիսեդեկ. և, ինչպէս ասում է «Արևելեան Մամուլը», իւր

---

[1]) Եսայի պատրիարքը միևնոյն ժամանակ լաւ լուսանկարիչ էր. նորա շնորհիւ է պատրաստուած Երուսաղէմի տեսարանների այն նշանաւոր ալբոմը, որ այժմ խիստ հազուագիւտ է։ Նորա եռանդով և ջանքերով ծաղկեց Երուսաղէմի տպարանը, կազմատունը, վիմագրատունը, «Սիոն» ամսագիրը և այլն. և նորա հրամանով շատ հայ մատենագիրներ առաջին անգամ լոյս տեսան Երուսաղէմի վանքի տպարանից հարազատ և անաղարտ տպագրութեամբ և ոչ թէ կաթոլիկ հրատարակութիւնների նման աղճատուած և պապական հոգի տուած։

վարդապետական առաջին պատարագը մատուցանում է Վարդավառ կիւրակէին և զարմանալի կուգադիպութեամբ՝ նորա հանգուցեալ դին ևս օծւում է դարձեալ Վարդավառ կիւրակի օրը։

Այնուհետև արդէն Մելքիսեդեկ վարդապետը դառնում է Ս. Յակովբեանց վանքի հոգին, որի շուրջը խմբւում է վանքի ամբողջ միաբանութիւնը և Եսայի պատրիարքի արթուն հսկողութեամբ վանքի անունը արագ քայլերով սկսում է բարձրանալ ամբողջ հայութեան մէջ։ Նա առնում իւր ձեռքը «Սիօն» ամսագրի խմբագրութիւնը, հրատարակում է մի շարք դասագրքեր, շարունակում է իւր տեսչական և ուսուցչական պաշտօնները և իւր շնորհալի քարոզներով մխիթարում և ոգևորում Երուսաղէմի վանքի բազմաթիւ ուխտաւորներին։

Ս. Յակովբեանց ժառանգաւորաց դպրոցի յառաջադիմութեան աւելի փայլ տալու նպատակով իւր աշակերտներից երեքին ուղարկում է Կ. Պոլիս գիտութեանց մէջ կատարելագործուելու, որոնցից մէկը լինում է Սահակ Խապաեանց, Կիլիկիայի այժմեան վեհափառ կաթուղիկոսը, որ հանգուցեալ սրբազանի ամենասիրելի աշակերտներից մէկն էր և որ վերադառնալով վանքը՝ Մելքիսեդեկ վարդապետի բացակայելուց յետոյ ամեն կողմից լիուլի կերպով փոխարինեց իւր սիրելի ուսուցչին։

1873ին Մելքիսեդեկ վարդապետը, գիտնական աշխարհին շփուելու, գիտութեան նոր պաշար հաւաքելու համար թողնելով Ս. Յակոբեանց վանքը, մի ճանապարհորդութիւն կատարեց Եւրոպական այլ և այլ երկիրներ՝ Ռումինիա, Տրանսիլվանիա, Հունգարիա, Աւստրիա, Գերմանիա, Լեհաստան, Շուեցարիա և Իտալիա, այցելեց այնտեղի հայ գաղութներին և Ֆանօթացաւ նոցա վիճակին, որ մի շարք յօդուածներով նկարագ-

բեց «Մասիս» լրագրում։ Նա նորից վերադարձաւ Երուսաղէմ, բայց, փոխուած գտնելով վանքի դրութիւնը, էլ երկար չկարողացաւ մնալ այնտեղ, այլ տեղափոխուեցաւ Կ. Պոլիս, տասը տարի անդադրում գործելով Երուսաղէմի ս. Յակովբեանց վանքում։

Կ. Պոլսում, ինչպէս նաև գաւառներում, արդէն վաղուց ճանաչում էին Մուրատեան վարժապետին, բայց մանաւանդ մեծ անուն էր վաստակել նա՝ Երուսաղէմի վանքի բարգաւաճման համար ունեցած իւր տասնամեայ անդուլ և եռանդուն աշխատութեամբ. ուստի և շուտով Զմիւռնիայի հայերը ընտրեցին Մելքիսեդեկ վարդապետին իրանց վիճակի առաջնորդ և վերջինս գնալով Զմիւռնիա՝ փառաւոր ընդունելութիւն է գտնում տեղական հայերի կողմից, իւր հոգեբուղխ ու սրտաշարժ քարոզներով գրաւում է նոցա սէրն ու համակրութիւնը և մանաւանդ մտերմանում է «Արևելեան մամուլի» խմբագիր նշանաւոր գրագէտ Մատթէոս Մամուրեանի հետ. և այնուհետև մենք տեսնում ենք Մելքիսեդեկ վարժապետին ձեռք ձեռքի տուած գործելիս անբաժան Մամուրեանի հետ ամեն ասպարէզներում։

Կարճ միջոցում Մելքիսեդեկ վարդապետը այնպիսի մեծ ժողովրդականութիւն վաստակեց Զմիւռնիայի ամբոջ վիճակում, որ շուտով տեղական գաւառական ժողովը եպիսկոպոսութեան վկայագիր տուեց նորան և Մելքիսեդեկը ուղևորուելով ս. Էջմիածին՝ Գէորգ Դ. կաթողիկոսից ձեռնադրուեց եպիսկոպոս 1879 թուի մայիսի 27-ին և վերադարձաւ Զմիւռնիա։

Մելքիսեդեկ սրբազանի առաջնորդութիւնը Զմիւռնիայում, կարելի է ասել, մի յեղաշրջում առաջ բերեց այնտեղի եկեղեցական, դպրոցական և հասարակային գործերում։ Նորա առաջնորդութեան ժամանակ վերաշինուեցան Մեսրովպեան և Հռիփսիմեան միջնակարգ

ուսումնարանները, ուր նա ինքը դասախօսում էր հայկական առարկաներ [1]։ Նորա ջանքով և աշխատութեամբ նոր ի նորոյ շինուեց Զմիւռնիայի ս. Լուսաւորչեան հիւանդանոցը, որի յօբելեանը տօնեցին դեռ անցեալ տարին, նոր գերեզմանատունը և ուրիշ շատ կրթական հաստատութիւններ։ Այդ գործերում նորան օգնում էին և համբաւաւոր Սպարթալեան եղբայրները։

Մելքիսեդեկ արքեպիսկոպոսը իւր բազմակողմանի ազգօգուտ գործունէութեամբ Թիֆլիս, Շուշի, Կ. Պոլիս, Երուսաղէմ և Զմիւռնիա, հայութեան այդ գլխաւոր կենդրոններում, այն աստիճան մեծ ժողովրդականութիւն էր վայելում ազգի ամեն խաւերում, որ Գէորգ Դ. կաթողիկոսի մահից յետոյ երկու կաթողիկոսական ընտրութեան համազգային ժողովում երկու անգամ էլ ընտրուեցաւ ամենայն Հայոց կաթողիկոսութեան թեկնածու, մէկը 1884-ին Ներսէս արքեպիսկոպոս Վարժապետեանի հետ իբրև երկրորդ և միւսը 1885 թ. ընտրութեանը որպէս առաջին ընտրելի։

Ընտրութիւնից յետոյ Մելքիսեդեկ եպիսկոպոսը մնաց Զմիւռնիայի առաջնորդ դարձեալ մի քանի տարի և 1888-ին 11 տարուայ պաշտօնավարութիւնից յետոյ վերջնականապէս հրաժարուելով Զմիւռնիայի առաջնորդութիւնից՝ գնաց Կ. Պոլիս, 10 տարի քարոզչի պաշտօն վարեց Գատը գիւղի եկեղեցում և ուսուցչութիւն՝ Կենդրոնական վարժարանում, միևնոյն ժամանակ նուիրելով իրան գրական պարապմունքներին։

1896-ի ամառն էր, որ մենք այցելեցինք սրբազանին Գատը գիւղի եկեղեցու բակի իւր համեստ բնակա-

---

[1]) Մեր աշխատակից պ. Ցարոն պատմում է մեզ, որ ինքը 1883 թուին ներկայ է եղել այդ դպրոցներում սրբազան Մելքիսեդեկի դասատուութեանը, ուր նա աւանդում էր հմուտ ու ձեռնհաս ուսուցչի ձայնով, հեաը միասին կրթելով ու դաստիարակելով նոցա իւր հեղինակութեամբ։

բանում։ Մի անշուք սենեակ, ամենահասարակ կահաւորուած, մի տախտ, մի փոքր գրասեղան, մի երկու աթոռ և գրադարան—ահա՛ նորա սենեակի բոլոր կահաւորութիւնը։ Ինձ տեսնելիս զգացուեցաւ սրբազանը, նորա յիշողութեան մէջ վերարտադրուեցան իւր անցեալ կեանքից բազմաթիւ դէպքեր ու յիշատակներ. բայց մենք վերջ ենք դնում այստեղ, ապագային թողնելով այդ ամենը։ Սրբազանի ալիքները ներկուել էին սպիտակ գոյնով, ձիւնի նման սպիտակ, փառազարդ դէմքը պահում էր իւր թարմութիւնը, երևակայութիւնը վառ, ձայնը խրոխտ և զմայլելի, արտայայտութիւնը խոր և տպաւորող, վշտերն ու ցաւերը չէին ընկճել նորա հոգին, բայց սակայն գանգատւում էր մարմնական տկարութիւնից։ Առաջարկեց ինձ իւր նոր հեղինակած՝ իւր աննման ուսուցչի՝ Պետրոս Նանշեանցի կենսագրութիւնը տպել «Լումայ»-ի մէջ (որ և տպուեցաւ հետևեալ 1897 թուին) և իմ խնդիրքով յանձն առաւ գրել իւր քառասնամեայ դպրոցական և գրականական կեանքի յիշողութիւնները դարձեալ «Լումայ»-ի համար [1]։

Երբ 1898-ին սրբազանին այցելեցի Գատը գիւղ՝ նորան աւելի ընկճուած գտայ մարմնապէս, բայց և այնպէս այդ տարին նա, Զմիւռնիայի ժողովրդի միաձայն ընտրութեամբ նորից առաջնորդութեան կոչուեցաւ այդ կարևոր հայ թեմի, որ և վարեց մի քանի տարի, սակայն հիւանդութիւնն սկսել էր զօրանալ, նորա օրերը հետզհետէ սկսել էին սպառել և երկու

---

[1]) 1898 թ. ամառը Պոլիս լինելով, դարձեալ տեսայ սրբազանին իւր միևնոյն բնակարանում և իմացայ, որ սրբազանն արդէն գրում է իւր յիշողութիւնները։ Միևնոյնը նա կրկնեց հետևեալ օրը ճաշի վերայ Հ. Յ. ա. ք. Մկրեանի տանը և սորա ներկայութեամբ։ Արդեօք մնաց սրբազանի մահից յետ այդ կարևոր աշխատութիւնը թէ ոչ՝ չկարողացանք ստուգել մինչև այժմ։

տարուայ ծանր հիւանդութիւնից յետոյ կնքեց իւր մահկանացուն Հայ եկեղեցու այդ պայծառ ջահերից մէկը։

—

Մելքիսեդեկ սրբազանը իւր մանկավարժական և վարչական գործունէութեան հետ և լաւ գրագէտի համբաւ ունէր։ Թիֆլիս եղած ժամանակ նա Մարկոս Ադաբէգեանի «Կռունկի» առաջին և գլխաւոր աշխատակիցն էր, գրում էր նաև «Մեղու Հայաստանի» լրագրում. նորա յօդուածները, որոնք երբեմն լոյս էին տեսնում Ոսկեփորիկ կեղծ ստորագրութեամբ, գրուած են ոգևորութեամբ և բուն հայ ոգի են կրում։ Թիֆլիսում նա հրատարակեց և հայ լեզուի մի քերականութիւն և թարգմանեց Շիլլերի Վիլհելմ Տելը։

Գրական գործունէութիւնը նա շարունակեց և Կ. Պոլիս ու Երուսաղէմ. աշխատակցում էր «Մասիս» լրագրին, խմբագրում էր «Սիօն» ամսագիրը, գրեց և տպեց բազմաթիւ ինքնուրոյն աշխատութիւններ՝ նոր կտակարանի պատմութիւնը, Հայոց եկեղեցական պատմութիւնը, «Երկու խօսք», «Հովուական աստուածաբանութիւն», «Ընդհանուր եկեղեցական պատմութիւն», «Պետրոս Շանշեանցի կենսագրութիւն», «Նամականի», «Թուաբանութիւն» և այլն, բայց այս ամենի մէջ նշանաւոր է և գերազանց և կարելի է ասել իւր գրուածների գլուխ գործոցը, նորա ազգու «Պատասխանը Լևոն ԺԳ պապի կոնդակին», որ մի քանի անգամ տպուեցաւ։

Այս անգամ այսքանով բաւականանալով՝ մենք մի այլ անգամ կծանօթացնենք մեր ընթերցողներին հանգուցեալ սրբազանի հայեացքների հետ՝ տոհմային մի քանի լուրջ խնդիրների նկատմամբ, երբ կփկսենք հրատարակել նորա՝ մեզ և ուրիշներին ուղղած նամակների շարքը։

ԳԻՒՏ Ա. ՔԱՀ. ԱՂԱՆԵԱՆՑ

ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ

—

1. *Կոմիտաս վարդապետ եւ Մանուկ Աբեղեան. Հազար ու մի խաղ. ժողովրդական երգարան, առաջին յիսնեակ. Վաղարշապատ 1903. էջ 70. գ. 10 կոպ.։*

Մեր շնորհալի երաժշտագէտ և ժողովրդական երգերի յայտնի ձայնագրող Կոմիտաս վարդապետը՝ հմուտ բանասէր պ. Աբեղեանի հետ միասին, մի գեղեցիկ գործ են ծրագրել. Նրանք մտադիր են հրատարակել հայ ժողովրդական երգերի մի ճոխ ժողովածու, որի առաջին մասն է «Հազար ու մի խաղ» այս յիսնեակը։ Կար ժամանակ, որ առհասարակ տարածուած էր այն կարծիքը, թէ հայ ժողովուրդը բանաստեղծութիւն չունի. շատ փաստերի հետ այս փոքրիկ ժողովածուն էլ հաստատում է այդ կարծիքի հիմնովին սխալ լինելը։ Հայ ժողովուրդը միշտ արտայայտել է իւր սրտի ուրախութիւնն ու վիշտը. ժողովրդական բանաստեղծներ միշտ ունեցել ենք, միայն թէ մեր անհետաքրքրութեան շնորհիւ դրանք անյայտ են մնացել մեզ համար. Եւրոպացիք էլ մեզնից տեղեկութիւն ստանալով՝ այն համոզում են կազմել թէ հայ ժողովուրդը բանաստեղծութիւն չունի։

Այս փոքրիկ ժողովածուի մէջ ժողովրդական բանաստեղծութեան այնպիսի գոհարներ կան, որ պատիւ կարող են բերել ամեն ազգի ժողովրդական բանահիւսութեան. մի՞թէ ժողովուրդը յանցաւոր է, երբ անկեղծ կերպով իւր զգացմունքն է արտայայտում, իսկ այդ զգացմունքը մեծ մասամբ վիշտ ու թախիծ է. դարերի ընթացքում ժողովուրդը յուսահատուել է Աստուծուն ու մարդկանց գանգատուելուց և ահա՛ նա բնութեանն է ազերսում.

«Սարե՞ր, ձորե՞ր, դաշտե՞ր ու ջրե՞ր,
Մարմանդ-մարմանդ վազող աղբիւրնե՞ր,

Մի վե՛ր կացէք, իմացէ՛ք,
Տեսէ՛ք իմ սըրտի ցաւեր։
Հո՛վ արէք, սարեր ջան, հո՛վ արէք,
Իմ դարդին դարման արէք»։— (էջ 6)

«Ա՜խ կանեմ, արուն կու գայ.
Սև սըրտիս գարո՞ւն կու գայ...
Սարերին գարուն կու գայ
Սև սըրտիս արուն կու գայ... (էջ 19)

«Ա՜յ, հեա՛, հեա՛, սի՜րտըս,
Ճընճըղկան թև ա սիրտըս.
Քան պուտը կարմիր չը կայ,—
Բաց անեմ՝ սև ա սիրտըս»։ (էջ 31)

«Քա՛մի, մի՛ տա մեր դըռան։
Սիրտս ի մըրմուռ, աչքերս ի լաց.
Ասօր նըստիմ, էնքան տի լամ,
Քարէ կարկուտ աչքերէս գայ։

Քա՛մի, մի՛ տա մեր դըռան։
Իմ խոցերն է շատ.
Վանայ ծով գըմէն դեղ ընի,
Չիմ դառ վէրքեր չի՛ դեղի»։ (էջ 52)

Ահա՛ ձեզ թէ բանաստեղծութիւն, թէ զգացմունք և թէ հոգեբանութիւն ուրտայայտող մրմունջներ։ Սակայն.

«Սարերը հով չեն անում,
Իմ դարդին դարման անում» (էջ 1)։

2. Ն. ՆԵՊԼԻՒԵՒ. Ի՞նչ է Ճշմարտութիւնը. Թարգ. Մամբրէ վարդապետ. Վաղարշապատ. 1903. 64 էջ. գ. 10 կոպ.

Քրիստոնէական ոգուով գրուած այս գրքոյկը ջատագովութիւն է սուրբ գրքի. հեղինակը բացատրում է, թէ մոլորութիւն է, երբ մարդիկ իբրև թէ հիմնուելով մարդկային բանականութեան վրայ, չեն ընդունում ս. գրքի ճշմարտութիւնները դոքա իսկապէս ծանօթ չեն սբ. գրքի բովանդակութեանը «Ովքերն հաւատացող քրիստոնեայ է երևակայում և միևնոյն ժամանակ գրագէտ է կամ կրթուած, նորա համար Ս. գրքի բո-

վանդակութիւնը հիմնաւորապէս չիմանալը նախատինք բերող տգիտութիւն է...» էջ 21—22. Հեղինակն ընդիմախօսում է նը-բանց, որոնք կարծում են թէ հին հեթանոսական և նոր ժամանակի փիլիսոփայութեանց մէջ կարելի է գտնել նոյնչափ բարձր և բարոյական հասկացողութիւններ, որպիսիք կան սբ. գրքի մէջ. «դուք չէք հաւատում Աստուածային Յայտնութեանը, բարի. ձեզ համար Ս. գիրքը մարդկային բանականութեան արդիւնք է. բայց կրկնում ենք, այդ գրքի առաջ երկիւղածութեամբ խոնարհուել է միլիոնաւոր մարդկանց բանականութիւնը 19 դարերի ընթացքում և այժմ ևս քաղաքակիրթ ազգերը չեն վստահանում մի ուրիշը նորա տեղը դնել։ Եւ մարդկային բանականութեան այդ թանկագին յիշատակարանը՝ դո՛ւք, բանականութեան երկրպագուներդ, հարկաւոր չէք համարում հիմնաւորապէս ուսումնասիրել։ Մարդկային բանականութեան այդ սրբութեանը դուք գոռոզ անփութութեամբ էք վերաբերուում և դրանից յետոյ ձեզ իրաւունք էք համարում խօսելու մարդկային գիտակցութեան և բանականութեան բարձր նշանակութեան մասին՝ առ մարդկութիւնը տածած յարգանքի մասին»։ էջ 29. թարգմանութեան լեզուն պարզ ու հասկանալի է. տպագրական սխալներ շատ կան։

3. ԱՆՏՕՆ ՉԵԽՈՎ. Գրազ. թարգմ. Տ. Վ. Բագու, 1903 18 էջ. գ. 3 կոպ.

«Գրազը» տաղանդաւոր Չեխովի փոքրիկ, բայց իմաստալի գրուածքներից մէկն է, մի փիլիսոփայութիւն՝ երկրային կեանքի անցաւորութեան և ունայնութեան վերայ։ Արդեօք մահուան պատիժն է լաւ, թէ ցմահ բանտարկութիւնը. այս խնդրի մասին եղած վիճաբանութեան միջոցին մի երիտասարդ իրաւաբան ասում է. «Թէ մահուան պատիժը և թէ ցմահ բանտարկութիւնը հաւասարապէս անբարոյական է, բայց, եթէ ինձ առաջարկէին ընտրել մահուան պատիժ կամ ցմահ բանտարկութիւն, այն ժամանակ, ի հարկէ, ես երկրորդը կընտրէի։ Կեանքը, ինչպէս էլ ապրելու լինենք, աւելի լաւ է, քան չապրելը» (էջ 4)— Վիճաբանութիւնը տաքանալով՝ իրաւաբանը գրազ է գալիս երկու միլիոնով, որ տասներեքհինգ տարի բանտարկուած կմնայ և կատարում է իւր խօսքը։ Բանտարկուած 15 տարուայ ընթացքում նա հարիւրաւոր հատորներով գրքեր

է ուսումնասիրում, 6 լեզու է սովորում, բայց երբ լրանում է տասնևհինգերորդ տարին և նա երկու միլիոնը պէտք է ստանար, մի քանի ժամ առաջ գրում է, «... Ես արհամարհում եմ ձեր գրքերը, արհամարհում եմ ողջ աշխարհի բոլոր բարիքներն ու իմաստութիւնը։ Ամեն ինչ դատարկ է, եղծանելի ու ապականացու, ցնորական ու խաբուսիկ, ինչպէս շամանդաղ։ Վնաս չկայ, որ դուք հպարտ էք, իմաստուն և գեղեցիկ, բայց մահը ձեզ էլ կսրբէ կտանէ աշխարհիս երեսից, ինչպէս յատակի տակ ծածկուած մկներին, իսկ ձեր սերունդը, պատմութիւնը, ձեր հանճարների անմահութիւնը կսառչին կամ կայրուին երկրագնդի հետ...»

Այսպիսի եզրակացութեան գալով կեանքի և ապրելու մասին, տասնևհինգ տարի բանտարկուածը, հարկաւ միլիոնների կարիքը չէր զգայ այլ ևս. և որպէս զի երկու միլիոնը ստանալու իրաւունքից զրկուի, պայմանաժամից 5 ժամ առաջ փախչում է բանտից։ Թէ Նիւթի հետաքրքրութեան և թէ հայացրած ու յաջող թարգմանութեան շնորհիւ՝ «Գրաղը» հաճոյքով է կարդացւում։

4. ՆԻԳԻՆԷ ՏՈՒՐ. Մարգարտէ մանեակ. թարգ օր. Նուարդ, Թիֆլիզ, 1903. 47 էջ. գ. 10 կոպ.

Զգձգուած և հեքիաթային պատմութիւն է. «Որքան մարդ աւելի հարուստ լինի, այնքան աւելի պարտական է բարեգործութիւն անել. մեր ունեցած հարստութիւնը Աստծու շնորհած մի պարգևն է, որ Նա յանձնել է մարդուն՝ իր մերձաւորներին, կարիք ունեցողներին օգնելու համար, իսկ ուսումն ու գիտութիւնն էլ նոյն հարստութիւններն են. հետևապէս նրանց ևս պէտք է բաժանել բոլորի մէջ, գործ ածել մարդկանց և մերձաւորների օգտի համար, որովհետև բոլոր մարդիկ մեր եղբայրներն են և մի Աստծու որդիք» (էջ 44)։ Ահա այս հասարակ բարոյականը դուրս բերելու համար, հեղինակն ինչ ասես, որ չէ նկարագրում. հարուստ հրէայ ընտանիք, գեղահրաշ աղջիկ, որ երկար ժամանակ—ամիսներ, գուցէ և տարիներ մնում է մեռած գրութեամբ—միայն թոյլ շնչում է.—հրէան պարապում է գիտութիւններով, ոչ ոքի հետ յարաբերութիւն չունի, գիւտեր է անում, իրեն Աստուած երևակայում, բայց աղջկան չէ կարողանում բժշկել. յետոյ երազ է տեսնում, որ իւր

շինած մարգարտէ մանեակով միայն աղջիկը կլաւանայ, երկար, երկար աշխատում է մարգարիտ շինելու գիւտն անել, գնում է ծովեզը, Սահարա, բայց չի կարողանում. Սահարայում մեռնող մօր զաւակը վերցնելով և խնամելով «երախտագիտութեան արցունք» մարգարիտ է ստանում և դրանով բժշկում աղջկան...: Թարգմանուած է խնամքով և կանոնաւոր հայերէնով։

5. Ա. ՉԻԼԻՆԳԱՐԵԱՆ. Մանուկների ստախօսութիւնը եւ նրա առաջն առնելու միջոցները. Ալէքսանդրապոլ. 1903 57 էջ գ. 15 կոպ.

Վերջին ժամանակներս մեր հասարակութիւնը բոլորովին չէր հետաքրքրւում մանկավարժական-դաստիարակչական խնդիրներով և հայ գրականութեան մէջ էլ հազուագիւտ բան էր դարձել այդ բովանդակութեամբ գրքերի ու գրքոյկների երևալը. հրատարակուածներն էլ անուշադիր էին մնում։ Լուսայում մենք արդէն խօսել ենք այդ ընթացքի սխալ լինելու մասին. սերնդի դաստիարակութեան խնդիրը երբէք չպէտք է մոռացութեան տրուի, որովհետև ինչպէս ժողովրդական առածն ասում է. «Ինչ կցանես, այն կհնձես»։ Ինչ ուղղութեամբ էլ որ նոր սերունդը կրթուի, ապագայում հասարակական խնդիրներն էլ նոյն ուղղութեամբ կարծարծուեն. բարոյական սկզբունքներով կրթուած սերունդը՝ ապագայում բարոյական սկզբունքներով էլ կգործէ և ընդհակառակը՝ թոյլ, մեղկ և առանց բարոյական սկզբունքների դաստիարակուած սերնդի ապագայ գործունէութիւնն էլ անորոշ, տատանուող և անիմաստ կլինի։

Մեր հին և նոր սերունդների և առհասարակ ասիական ժողովուրդների բարոյական թերութիւններից մէկն է ստախօսութիւնը, որ շատ անգամ անմտութեան և առասպելական չափերի է հասնում. սուտ խօսելը մի այնպիսի սովորական բան է շատ շատերի համար, որ առանց որևէ խղճի խայթ զգալու և անհանգստանալու՝ գիտակցաբար ասում են այն, ինչ որ ճշմարիտ չէ՝ երբեմն նպատակով, երբեմն էլ առանց նպատակի, յիմարաբար։

Ահա այս բարոյական թերութեան մասին է խօսում պ. Չիլինգարեանն և յատկապէս մանուկների ստախօսութեան մասին։

«Մանուկների ստախօսութիւն»ը զուտ մանկավարժական,

դաստիարակչական մի գրուածք է, որ հեղինակը յարմարեցրել է ժողովրդի ընթերցանութեան համար՝ կեանքից վերցրած բազմաթիւ օրինակներով տարրական դարձնելով նիւթը։ Կարելի է ասել, որ պ. Զիլինգարեանին յաջողուել է այդ։ Գրքոյկը մատչելի է ժողովուրդին և դիւրըմբռնելի. միայն այն հատուածը, ուր խօսւում է «ժառանգականութիւնից առաջացած ստախօսութեան» մասին, լաւ չէ բացատրուած։ Պ. Զիլինգարեանի հայերէնը պարզ ու հասկանալի է, միայն վերջ չէ անկանոնութիւններից. «Մի փոքր վերևում ասացի, թէ ստախօսութիւնը ժառանգական է. տղան իրա հետ աշխարհ է բերում և օրօրոցից սկսած հետզհետէ շատանում, մեծանում է»։ (էջ 15)։ «Այսպիսով առաջ է գալիս փոքրիկ ստախօսներ, որոնք ...» (էջ 15) «Իհարկէ սա շատ սխալ վարմունք է, այլ պէտք է համբերութիւն ունենալ, ասածները տեղն ու տեղը հանգիստ կերպով աշխատել, ուղիղ, կրկնել տալ և սովորեցնել» (էջ 22)։ «Ուրեմն, եթէ այդպէս հաշուենք, նշանակում է կառքերը պէտք է այս ինչ փողոցից մինչև մայր եկեղեցին հասնէր»։ (էջ. 23) «Ես հաւատացած եմ, որ դու ինձ սուտ բան չես ասէ»... (էջ 24)։ «Աւելի ուշք է դարձնելու նպատակով ստեր հնարող և սուտ խօսող երեխաների վրայ» (էջ 25) և այլն։

Իրենց փոքրիկ սիրելիների բարոյական կրթութեան մասին մտածող մայրերին՝ խորհուրդ ենք տալիս կարդալ այս գրքոյկը։

6. Մ. ԳՕՐԿԻՑ. Մակար Զուղրա. թարգմ. Սիմ. Բաբիեան հրատ. Յ. Դաւթեանի, Թիֆլիզ, 1903. 30 էջ գ. 10 կոպ.

Մակար Զուղրան տաղանդաւոր Գորկիյի փոքրիկ, բայց շնորհալի երկերից մէկն է. նիւթը վերցրած է գնչուների կեանքից։ Մակար Զուղրան 58 տարեկան ծեր գնչու է, որ պատմում է բոլորը մի աներևոյթ անձի. սկզբում մարդկային կեանքի և գոյութեան մասին փիլիսոփայութիւններ անելով՝ բաւականին յոռետես (պեսիմիստիկական) կարծիքներ է յայտնում. «ծիծաղելի են նրանք, այդ քո մարդիկ (?)։ Կուտակուել են իրար վրայ և ճնշում են միմեանց, իսկ տեղ աշխարհիս վրայ՝ ահա՞ որքան կայ,—նա լայն տարածեց(?) ձեռքը դաշտի վրայ (?)։

—Եւ միշտ աշխատում են։ Ինչո՞ւ. ո՞ւմ համար։ Ոչ ոք չգիտէ։ Տեսնում ես, ինչպէս մարդը հերկում է, և մտածում ես. ահա՛ նա քրտինքի հետ կաթիլ-կաթիլ սպառում է իր ոյժը հողի վրայ, իսկ յետոյ կը պառկի նրա մէջ և կը փտի այնտեղ։ Ոչինչ չի մնում նրանից, ոչինչ չի տեսնում նա իր դաշտից և մեռնում է, ինչպէս ծնուեց—յիմար։—Ի՞նչ է, միթէ նա ծնուեց նրա համար, որ քչփորէ հողը և մեռնէ, չկարողանալով նոյն իսկ գերեզման փորել իր համար։ Տեղեկութիւն ունի՞ նա ազատութեան մասին։ Դաշտային լայնութիւնն ըմբռնելի՞ է նրա համար։ Ծովային ալիքի զրոյցը կուրախացնէ՞ նրա սիրտը։ Էհէ՞. Նա ստրուկ էր—հենց որ ծնուեց, ողջ կեանքում էլ ստրուկ մնաց, ահա՛ այդ է բոլորը. ի՞նչ կարող է նա անել իրան (?)... միայն խեղդամահ լինել, եթէ մի քիչ խելօքանայ։—(էջ 5—6)։

Յետոյ Զուդրան պատմում է քաջ գնչու Լոյկո Զօբարի և գնչուհի Բադդայի ողբերգական պատմութիւնը։ Ամբողջը պատմուած է գեղարուեստօրէն և կարդացւում է հետաքրքրութեամբ։ Թարգմանութեան լեզուն առհասարակ պարզ, բայց խրթնութիւններ շատ կան, հայացրած չէ, ընագրի ազդեցութիւնը նկատելի է։ Այսպիսի անկանոնութիւններ կան։ Ո՞վ է շինել քեզ (?)· այդպիսի հնչուն և գեղեցիկ ջուրթակ». (էջ 14) «Այո՛ այսպէս ահա մի գիշեր նստած ենք մենք և լսում ենք՝ երաժշտութիւն է լողում (?) դաշտով։ (?) Լաւ երաժշտութիւն. ջղերում արիւն էր վառում նրանից և կանչում էր նա (?) մի տեղ։ Զգում էինք բոլորս այդ երաժշտութիւնից մի այնպիսի բան ուզեցինք, (?) որից յետոյ էլ ապրել պէտք չլինէր կամ եթէ ապրել (?) իբրեւ թագաւոր ամբողջ երկրի վրայ.!! (էջ 13)։ Արդեօք ընթերցողն ի՞նչ հասկացաւ։

7. Մ. ՄԱՆՈՒԷԼԵԱՆ. Էսքիզներ. Բագու 1903. 30 էջ. գ. 5 կոպ.։

Երեսուն էջից բաղկացած այս գրքոյկի մէջ չորս վիպական պատկեր կայ ամփոփուած. 1) «Երեք կոպէկ» 2) «Խրուելակը» 3) „Գարեջրատանը“ և 4) „Սև քաղաքում“։ Չորսն էլ համարեա նոյն նիւթն են պարունակում— աղքատ և թշուառ մարդկանց կացութեան նկարագիրը։ Նոր ասպարէզ եկած անծանօթ հեղինակը երևի ուղում է ռուս ժամանակակից վիպագ-

րող և «բոսեակների» կեանքը նկարագրող Գորկիյի հետևողութեամբ գրել։

Պատկերներից առաջին երկուսն այնքան թոյլ և աշակերտական փորձեր են, որ չարժէր հրապարակ բերել. վերջին երկուսից էլ «Գարեջրատանը» պատկերը քիչ թէ շատ շնորհքով է գրուած և ապացոյց է, որ հեղինակը դիտելու և տեսածը նկարագրելու ընդունակութիւնից զուրկ չէ։ Նկարագրական լեզուն թէև աղքատ, բայց կանոնաւոր է։

8. Վ. ՓԱՓԱԶԵԱՆՑ. Լուր—դա—լուր (Քրդական պոէմա) Բագու. 14 էջ գ. 3 կոպ.։

Այս փոքրիկ պատկերի հիմնական միտքն իսկապէս շատ սովորական և յաճախ կրկնուած վիպական նիւթ է. հովիւը յանդգնում է սիրահարուել իւր աղայի աղջկան. աղջիկն էլ փոխադարձաբար սիրում է նրան. խրոխտ աղայի դասակարգային պատիւը վիրաւորուում է և նրա մեքենայութեան զոհ են գնում թէ հովիւը և թէ իւր աղջիկը։

Ընայելով Նիւթի պարզութեանը, հեղինակին յաջողուել է մի գեղեցիկ պատկեր նկարել գեղարուեստական վրձինով և քուրդ Հասօի համակրելի ու պարզասիրտ նկարագիրը տալ։ Քուրդ Հասօի սրնգի ձայնը դիւթում է ամենքին. «քարերին էր դողացնում, սև ջրի ալիքները յուզում։ Բնութիւնն էր քարացնում, զեփիւռին ողբացնում. ամեն ինչ շարժում ու հրեշտակների նախանձը զրգռում... Ապրում էր Հասօն այսպէս երջանիկ, հեռու մարդկանցից, բնութեան գրկում, լեռների կրծքում։ Երջանիկ էր նա որպէս մի իշխան, սիրուած իր հօտից և նուիրուած իր երգերին»։ (էջ 4 — 5)

Երաժշտութիւնը, ճիշտ է, մեծ ազդեցութիւն ունի ինչպէս մարդկանց, այնպէս էլ անասունների վրայ. յունական դիցաբանութեան մէջ անգամ նկարագրուած է երաժշտութեան այդ յատկութիւնը, որով մարդիկ վայրենի գազաններին իսկ մեղմացնում էին. սակայն մեր հեղինակը մի փոքր չափազանցութեան է հասցնում, ստիպելով խեղճ ոչխարներին՝ ինչսուն եւ ինչը աստիճանից բաղկացած սանդուխքի մինչև մէջտեղը բարձրանալ ի սէր երաժշտութեան։

Փափազեանի յաջող գրուածներից մէկն է «Լուր-դա-լուրը». արժէ կարդալ։

9. ՋԱՆ ԳԻՒԼՈՒՄ. 600 տուն. յառաջաբանով և ծանօթութիւններով. ժողովեց Հայկ Տէր Աստուածատրեան. Պարիս. 1903. 42 էջ. գ. 30 կոպ.:

Մեր ժողովրդական երգերի մէջ առանձին տեղ են բռնում ջանգիւլումները, որ յայտնի են բոլոր հայաբնակ տեղերում և հայ կանանց ու աղջիկների սիրած երգերն են. մինչև այժմ մեր բանասէրներից ոչ ոք լուրջ ուշադրութիւն չէ դարձրել ժողովրդական բանաստեղծութեան այս ինքնուրոյն տեսակի վրայ և չէ ժողովել ու բազմաթիւ վարիանտները համեմատելով հրատարակել։ Պ. Հայկ Տէր-Աստուածատրեանը առաջին փորձն է արել՝ ժողովելով ու ծանօթութիւններով հրատարակելով 600 տուն ջան-գիւլում (որոնք նախապէս տպուած են եղել «Բանասէր»—ում)։ Ժողովողն աշխատել է նաև անհասկանալի բառերի բացատրութիւնները տալ, բայց այդ բացատրութիւններից շատերը ճիշտ չեն. առաջին չորս էջերի բացատրութիւնների մէջ նկատեցինք հետևեալ սխալները. «ղառղու շուին բերանին» ղառղու բառը բացատրուած է «փորձանք» (?) բառով, որ բոլորովին անհասկանալի է դարձնում նախադասութեան միտքը. ղառղու նշանակում է եղեգն, ղամիշ, որից շուի կամ սրինգ են շինում։

«Օսկէ ղայթան եմ գործել». ղայթան բացատրած է «հաստ թել». ղայթանը թել չէ, այլ թելերի պինդ ոլորուածք որ կարում են զգեստի շուրջը որպէս զի շուտ չփչանայ, չպատռուի։

«Քաղել ես կակուղ բէզա» բէզա բառը բացատրուած է «զարդարած» (?), որ անհասկանալի է դարձնում միտքը.

«Թայերիս մէջ նմուշ եմ» թայերիս բառը բացատրուած է «քուռակ»(?!) թայ նշանակում է հաւասար, նման, ընկեր, հասակակից։

«Ալ աղլուխը ի՞նչ կանեմ». ալ բացատրուած է «կարմիր՝ մուք». ընդհակառակը ալ նշանակում է բաց կարմիր։

«Մէ բէյմուրազ եար ունիմ» բէյմուրազ բացատրուածմ է «անպէտք» (?). բէյմուրազ «մուրաղ» բառից է, նշանակում է անմուրաղ. մուրաղ—իղձ, ցանկացած նպատակ. մուրազիդ հասնես—ըղձիդ, ցանկացած նպատակիդ հասնես. բէյմուրազ լինիս—ըղձիդ, բաղձալի նպատակիդ չհասնես։

«Աչչի ինաղ մի անի» ինաղ բացատրուած է «յամառու-

թիւն» (?) ինաղ անել նշանակում է ջիգր անել։

«Բայց թողալը բալայ ա» բալայ բացատրուած է «վըտանգաւոր (?), խաթաբալայ, բալայ նշանակում է ցաւ դարդ ևայլն։

Ցանկալի է, որ պ. Հայկ Տէր-Աստուածատրեանցը հետզհետէ ճոխացնէ իւր ժողովածուն, բացատրութիւնները ճշտէ և այնպէս հրատարակութեան տայ։

10. Հռովմայեցի իմաստասէր ԷՊԻԿՏԵՏԻ կեանքն ու վարդապետութիւնը. թարգմ. ՋԱՀԷՆ վարդապետ, Ս. Էջմիածին. 1903. 135 էջ. գ. 40 կոպ.։

Մեր օրերում, երբ մարդիկ ոչ մի միջոցի մէջ խտրութիւն չդնելով՝ հարստութեան, պատուի, փառքի և զեղխութեան են ձգտում, երբ կեանքի վայելչութիւնը մարդկանց ապրելու նպատակն է դարձել և այդ նպատակին հասնելու համար գործ են դրուում ամեն տեսակ անպիտան միջոցներ, մի տեսակ հոգեկան մխիթարութիւն ես գտնում՝ կարդալով վաղուց անցած դարերի, անհատների պարզ ու անպաճոյճ կեանքն ու վարքը, նրանց փիլիսոփայական անխառն և սառը դատողութիւնները՝ մարդկային կեանքի ունայնութեան ու ոչնչութեան վրայ։

Ահա այսպիսի անհատների կարգին է պատկանում Հռովմայեցի փիլիսոփայ Էպիկտետը, Էպափրոդիտեսի նախկին ստրուկը, որ հետևելով Ստոյիկեան վարդապետութեան, կարճ ժամանակի ընթացքում մեծ հռչակ ստացաւ իբրև ուսուցիչ՝ իւր շնտակ բնաւորութեամբ և բարոյական վարք ու բարքով։ Նա իւր ամբողջ կեանքն անցկացրեց աղքատութեան մէջ. նրա խրճիթը դուռ ու փականք չունէր. փայտեայ նստարանը, խսիրը և կաւէ ճրագը կազմում էին նրա տան ամբողջ կահ-կարասիքը նրա սկբունքն էր. «պէտք չէ տունը զարդարել, որովհետև դրանով միայն աշխատում ենք ուրիշներին զարմացնել. խելօք մարդը գեղեցկացնում կամ զարդարում է ոչ թէ տունը, այլ իւր հոգին բարութեան և ճշմարտութեան հասկացողութեամբ»։ Առհասարակ նորա գրոյցները լի են մարդկային հոգեկան յատկութիւնների ուսումնասիրութեամբ, բարոյական բարձր գաղափարներով և կեանքի փորձառութեամբ։ Նրա արտայայտուած մտքերի նման ոճն էլ պարզ ու անպաճոյճ է. «Սիրելի

բարեկամ, առաջ քո ցանկութիւններն անկեղծ էին, հասկացողութիւնդ, պարզ, յստակ և արարքներդ բարի. դու կարդում էիր իմաստնոյից գրքեր և ուրախանում, ցնծում էիր Սոկրատէսի և Դիոգինէսի նման մարդկանցով. իսկ այժմ ուրախանում ես քո այն բարեկամներով, որոնք քեզ դէպի անառակութիւն են առաջնորդում, անբարոյականացուցիչ գրքեր ես կարդում և քո խօսքերն ու գործերն ամօթալի են... սխալւում ես, սիրելի բարեկամ, դու կորցրել ես ամենից կարևորը. չլինի՞ թէ մտածում կամ կարծում ես, որ կորուստները միայն նիւթական են լինում. ո՛չ, կան աւելի վատ կորուստներ, հոգեկան կորուստներ՝ պարզև մաքուր միտք, լաւ ցանկութիւններ, բարի վարք և այլն. այժմ դու այդ ամէնը չես տեսնում, որովհետև մոլորուել ես։ Ցիշիր, իմ թշուառ բարեկամ և փրկիր քեզ հենց ամենից առաջ քեզանից. եթէ ինձ հետ մի որևիցէ դժբախտութիւն պատահէր, չէ՞ որ կօգնէիր ինձ. ինչո՞ւ քեզ չպիտի օգնես, մանաւանդ որ այդ անելու համար չպէտք է ոչ օրի ոչ ձանձրացնես, ոչ ծեծես, ոչ էլ սպանես. պէտք է միայն մտածես, խորհես և խօսես ինքդ քեզ հետ. դու քեզ աւելի սիրով և ուրախութեամբ կը լսես քան ուրիշներին. լսիր ուրեմն քո խղճի ձայնին և քո խելքին. զննիր ինքդ քեզ ինչպէս որ պէտք է...» (էջ 22—23)։

«Քո ընկերոջ բոլոր դաղտնիքները պատմիր ինձ. կասէ, կը ստիպէ ինձ իմ թշնամին։

Ո՛չ, ես այդ չեմ ասի քեզ, կը պատասխանեմ ես. որովհետև իմ բարեկամի դաղտնիքներն ասելը կամ չասելն ինձնից է կախուած։ Բայց քեզ կը շղթայեմ և աքսոր կուղարկեմ, եթէ ընկերոջդ դաղտնիքները չասես։

Ի՞նչ ես ասում, դու ինձ չես շղթայի. կը շղթայես միայն իմ ոտները, ձեռքերը, իսկ ինձ, իմ հոգուն, իմ կամքին, իմ մտքին չես կարող շղթայել. որովհետև բացի ինձանից ոչ օք պիտ, կարողութիւն չունի նրանց վրայ իշխելու։» Խորհուրդ ենք տալիս ընթերցողին կարդալ այս գրքոյկը։ Հայր թարգմանիչը մոռացել է յիշել թէ ո՞ւմ աշխատութիւնն է թարգմանութիւնը և ի՞նչ լեզուից (էջ 74—75)։

11. ԱՐԱՔԻ. Գերբնական հիւանդութիւն. Թիֆլիս 1903. 25 էջ. գ. 20 կոպ.։

Մեղքս ինչ թագցնեմ, երբ խմբագրութեան ուղարկուած

գրքոյկների մէջ այս հատորիկի վերնագիրն և կեղծանունը կարդացի, մտքումս ասացի, ահա էլի մի նորելուկ բանաստեղծ, որ սովորականից դուրս անունդ տալով իւր մտքի ստեղծագործութեանը, դրանով է ուզում հասարակութեան ուշադրութիւնն իւր վրայ դարձնել։ Արդէն սրում էի կարմիր մատիտը, որ նշանակեմ մեր նորագոյն էժանագին բանաստեղծներին վերջերս այնքան յատուկ դարձած անճոռնի տողերը, անմիտ ֆրազները, բացագանչութիւնները, չսովորած ու չհասկացած իրերի մասին փոխ առած դատողութիւնները և այլն։ Սակայն բարեբաղդաբար այս անգամ սխալուեցայ և գոհութեամբ կարդացի մինչև վերջը։

«Գերբնական հիւանդութիւնը» լուրջ և խորամիտ բանաստեղծութիւն է. տեսնում ես, որ գրողը երևակայական թռիչք ունի, որ ա՜յնքան անհրաժեշտ է բանաստեղծի համար, և որից ա՜յնքան զուրկ են մեր շատ նորելուկ ոտանաւոր գրողները։ Նշմարւում է հրոյ այն կայծը, որով իսկական բանաստեղծը տարբերւում է միմիայն յանգերով գրողից և որով ազդեցութիւն է գործում բանաստեղծը բազմաթիւ ընթերցողների սրտերի ու զգացմունքների վրայ։

Հենց առաջին էջից ընթերցողի միտքը կենդրոնանում է կարդացածի վրայ.

«Ինձ թրւաց, թէ ես հրաշագործ քնարի
Քաղցրաձայն լարի
Հնչիւն եմ անուշ, մրմունջն աննման.
«Եւ մեղմ հովի պէս՝ սլանում եմ արագ,
Պըտոյտ եմ գալիս
Ողջ տիեզերքը արձակ—համարձակ,
Միայն ճընշւած է, հիւանդ է հոգիս։ (էջ 5)
«... Կախարդի՞չ է նա վեհ ու գեղունակ.
Եւ համոզւում եմ, որ վեհութիւնը
Ու Աստուածային գեղեցկութիւնը
Մենք ճանաչում ենք սոսկ այն ժամանակ
Երբ թափանցում ենք մենք մէկի հոգին
Եւ ճանաչում ենք նորան լիովին...»(էջ 7)

Բնութեան նկարագրութիւն

«Տեսնում եմ անթի՜ւ չքեղ հովիտներ
Պըճնուած փարթամ այգեստաններով
Ու ճոխ, երփներանգ բուսական՝թիւնով.
Մըթին ծաղրծորներ, անթիւ բլուրներ
Այստեղ ու այնտեղ անկարգ չըուայլած,

Բիւր չէն աւաններ՝ խառն ի խուռն փռուած
Կամ ծաղկափըթիթ վառ հովիտներում,
Կամ բլրի գլխին, սարերի լանջին,
Կարծը ժայռերի ըստորոտներում...
Վ՞ի՞հ են ու գրաւի՞չ այդ սէգ լեռները,
Այդ գեղադալար դաշտ-դուրանները.
Նոքա ծնեցնում են մարդու մէջ մտքեր,
Վառում կրծքի տակ տենչեր ու յոյզեր...» (էջ 8)

Մտքի թռիչք

Նստում եմ այնտեղ և երկար նայում.
Միտքս սլանում է գնդակից արագ,
Ինչպէս ուր-կայծակ,
Բայց ոչ մի տեղի բնաւ չէ հասնում...
Ու ինձ թըւում է,-եթէ նայէի
Ես հազարաւոր ու խըրոխտ դարեր,
Եւ միտքս սլանար՝ դարձեալ չէր հասնի
Եւ ոչ մի տեղի,—կշարունակէր
Անվերջ, անընդհա՞տ յառաջ ընթանալ,
Սըրնթաց գընալ...» (էջ 9—10)

Մեր բանաստեղծը իւր սիրած աղջկայ «չամամ ծծերն ու սև սև աչքերը» չէ գովում սովորական չաբլօնով, այլ տեսէ՛ք ինչ պատկերաւոր յատկութիւններ է վերագրում նրան.

«Թըւում է, թէ նա հով է շնկշնկող,
Որ միշտ սուրում է կանաչ դաշտերում.
Թէ նա սրբազան Փերի է դիւթող,
Որ միշտ ապրում է ջրերի խորքում...
Թըւում է, թէ նա բնութիւնն է զուգած,
կամ քնքուշ Ֆլօրան չրթունքներն անրիծ.
Թըւում է, թէ նա ցօղից է ծնւած,
Կամ թէ՝ կարկաչիւն առւի փրփուրից.
Թըւում է, թէ նա ողջ տիեզերքի
Կախարդ ոգին է, ժըպիտը դէմքին.
Մարդկանց, բընութեան, հոգուս, երկնքի
Սուրբ, երանաւէտ, հըզօր դիցուհին...
Թըւում է, թէ նա գաղափարս է իմ,
Ներդաշնակութիւնն զգացմունքիս, մտքիս,
Թէ նա անմեկին ընկերս է մտերիմ,
Փարոսը կեանքիս...(էջ 12)։

«Նա է մի թոյլ կին՝
Որ իր երկնային գեղեցկութիւնով
Գերել է սիրտս. մի փոքրիկ մարմին,
Որին սառնօրէն համեմատելով
Սէգ տիեզերքի,
Մարդկային գանգի խորհրդածութեան,
Մտքի թըռիչքի
Եւ զգացմունքների անհուն խորութեան

Հսկայութեան հետ՝ թրուում է այնքան
Զնչի՞ն, աննըշան.«Բայց այդ մարմինը
Այնպիսի՞ գաղտնի հրմայքներ ունի՝
Որ սառն մտքի, խոհականութեան
Վրճիռըն անգամ մի թունդ հարուածով
Չէ՛ կարողանում չանթել յաւիտեան,
Տապալել գետնին և կրծու ծաղրով
Անվրդով ասել «Արժէ՞ տառապել
Այսպիսի փոքրիկ գոյութեան համար...»(էջ 21)

Մենք դիտմամբ այսչափ երկար հատուածներ առաջ բերինք, որպէս զի մեր ընթերցողն էլ տեսնէ, թէ «Արաբի» անուան տակ ծածկուած մեզ անծանօթ բանաստեղծը կարող է ապագայ ունենալ։ Միայն թէ մտքի լրջութեան հետ բանաստեղծը պէտք է միացնի նաև *ոճի պարզութիւնը*։ բանաստեղծութիւնը որքան պարզ ոճով և կանոնաւոր լեզուով լինի գրուած, այնքան աւելի կլինի նորա ազդեցութիւնը մեր սրտի ու մտքի վրայ։ Մեր կողմից կարող ենք պ. Արաբիին խորհուրդ տալ, որ աշխատէ չհանգցնել իւր մէջ գտնուող հրոյ կայծը ուսումնասիրէ, լաւ ըմբռնէ և իւր վառ երևակայութեան չնորհիւ աւելի խորը թափանցէ մտքի անհունութիւնը։

12. «*Լոյս*» Ա. Հատուածական օրացոյց 1904 թ. 12 պատկերով և ընդարձակ յաւելուածներով. խմբագրեց Ե. Թոփչեան. Տփխիս. գ. 50 կոպ. Բ. Նոյնը. ծոցի օրացոյց. 1904 թ. պատկերազարդ յաւելուածով, գ. 20 կոպ.։

Կովկասում տպուած հայերէն օրացոյցների պատմութեան մէջ «հատուածական» կամ «պատի» օրացոյցի առաջին ձեռնարկութիւնը պատկանում է Արժ. Գիւտ ա. ք. Աղանեանցին, որի կազմած այդ տեսակ օրացոյցները տասնևչորս տարի շարունակ տարածուած էին հայ ժողովրդի մէջ։ Այնուհետև ուրիշներն էլ սկսեցին հրատարակել այդպիսի օրացոյցներ, բայց դրանցից ոչ մէկն առաջինի ճոխութիւնը չունէր։ Այժմ, երբ Հայր Աղանեանն այլ ևս չէ հրատարակում իւր օրացոյցը, հանդէս եկան պ. Ե. Թոփչեանի կազմած օրացոյցները, որոնք հարկաւ պէտք է աւելի ճոխ բովանդակութիւն և հարուստ նիւթ ունենան՝ քան ուրիշների կազմածները, որովհետև միայն մի անհատի աշխատանք չեն. կազմողը ուրիշների աջակցութեանն ևս դիմել է և նրա օրացոյցները խմբական աշխատանքի արդիւնք են։

Հատուածներն օրացոյցի տախտակի վրայ դասաւորուած են մեր առաքելից թիւը կազմող, տասներկու վիպասանների լուծատիպ պատկերները. այդ տասներկուսից երեքը (Խ. Աբովեան, Մերենց, Բոֆֆի) արդէն յաւիտենականութեան գրկումն են հանգստանում, իսկ մնացած ծեր ու երիտասարդ վիպագրողներն էլ շատ կամ քիչ ընթերցողներ և համակրողներ ունին հայ ժողովրդի մէջ:

Հատուածական օրացոյցը բացի սովորական մասից, ունի և գրական բաժին. 1) Ընտիր մտքեր հայ և օտարազգի նշանաւոր հեղինակներից, 5) Եկեղեցական և ազգային տօների մասին, 3) Բժշկի փոքրիկ խրատները, 4) Խոհարարական խրատներ, 5) Բանաստեղծական փնջիկ և այլն:

Լաւ ապաւորութիւն են անում և պարզ ու հասարակ ոճով գրուած են եկեղեցական և ազգային տօների մասին փոքրիկ յօդուածները և բժշկի կարճ ու ազդու քարոզները: Շատ թոյլ են «Ընտիր մտքեր հայ և օտարազգի նշանաւոր հեղինակներից» հատուածները: Երբ ասում ենք *ընտիր մտքեր*, պէտք է այդ մտքերն էլ բովանդակութիւն և խորը մտածմունք պարունակեն և ոչ թէ սովորական ֆրազներ. օրինակ ընթերցողն ինչ խորը միտք է գտնում այսպիսի «*ընտիր մտքեր*» կարդալով. «Ո՞ր-քան նեխուած է մեր հասարակական կեանքը», «Ճշմարտութիւնը դագաղներ ունի պատրաստած ոչնչութիւնների (?) համար», «Լեզուն ինչ մեղաւոր է, երբ ժողովուրդը սեր չունի դէպի գրականութիւնը», «Անզարդ ցնցոտին բնութեան սիրելին է» (?) «Մենք էլ ունինք լատիներէն լեզուի նման մի լեզու: Դա գրաբառն է»: «Թմրած ու քնած են մեր ինտելիգենտները»՝ «Վա՜յ այն հասարակութեանը. որի միտքը մանր է» (??) և այլն. սրանք ամենահասարակ ֆրազներ են, որ մեր լրագրութեան մէջ չարունակ կրկնում է ամեն ոք, և ոչ թէ *ընտիր մտքեր*»:

Օրացոյցի մէջ կան փոքրիկ պատմութիւններ, որ մի քանի էջի վրայ են չարունակւում. գործնական անյարմարութիւն ունի այդ բանը. կամ պէտք է կէսն այսօր կարդաս, կէսը վաղը, կամ մնացած էջերն էլ դջլես օրացոյցից:

Մարդիկ *մի անգամ* մեռնում են շատ գոհ են, որ պ. Թոփչեանը հանգուցեալ Խորէն արքեպիսկոպոս Գալֆայեանին *երկու անգամ* է մեռցնում:

Նոյեմբերի 4-ին գրուած է. «Վախճանւում է Տ. Խորէն արքեպիսկոպոս Նար.Պէյ, լեզուագէտ, բանաստեղծ և մատենագիր»:

Նոյեմբերի 14-*ին*. «Վախճանում է Խորէն արքեպիսկոպոս Նար.Պէյ (Գալֆայեան)»: Գուցէ և կազմողը սրանց տարբեր մարդիկ է համարել, քանի որ առաջինը «ազգուագէտ, բանաստեղծ և մատենագիր» է՝ իսկ երկրորդը միայն «Գալֆայեան»:

Փոքր օրացոյցն աւելի ճոխ է ժողովրդի համար գործնական և օգտակար տեղեկութիւններով. գրական բաժինը կարդացուում է հետաքրքրութեամբ:

13. *ՅՈՎԱԿԻՄ ՍՕԼՕՎԵԱՆ*. *Հարազատ զծեր*, Առաջին պրակ, Ս. Պետերբուրգ 1903 36 էջ գ. 15 կոպ.

Հարազատ զծեր անբովանդակ վերնագիրը կրող այս գրքոյկի մէջ երկու զրոյց կայ ամփոփուած. 1) *Զենք ուզում* (պատկեր) և 2) *Հին երգ* (զատկական զրոյց): Երկուսն էլ՝ թէ պատկերը և թէ զրոյցը, բացի դատողութիւնների կուտակութիւնից ոչինչ չեն պարունակում. հեղինակը գեղարուեստօրէն զրելու ընդունակութիւն չէ ցոյց տալիս, չունի երևակայական թռիչք և զուրկ է նկարագրելու շնորհքից:

«*Զենք ուզումը*» քահանաներին ռոճիկ նշանակելու խնդիրն է արծարծում իբրև թէ. վիճակային առաջնորդի կարգադրութեամբ քահանաները ծրագիր են կազմում և սրբազանն էլ այդ ծրագիրը առաջարկում է ծխականների ժողովին: Ժողովը չէ ուզում այդ նորաձևութիւնն ընդունել—և նախագահ սրբազանն էլ խնդիրը վերցնում է մէջ տեղից. ահա բոլորը:

«*Հին երգ*»-ում նկարագրուած է, կամ աւելի լաւ է ասել պատմուած է մի աղքատ աստիճանաւորի վիճակը, որի ռոճիկը չէ բաւականում ընտանեկան ծախքերի համար և աստիճանաւորը Զատկի օրը քահանային ու տիրացուին տալու փող չունենալով՝ ստիպւում է փակել իր տան դուռը:

Երկուսն էր կարող էին մի մի լրագրական յօդուածի կամ թղթակցութեան նիւթ լինել միայն. վիպական գրուածքի հետքն անգամ չկայ սրանց մէջ: Պ. Գեղամ Աֆտանդիլեանցը (հրատարակիչը) կարող էր հանգիստ խղճով հրաժարուել այս գրքոյկը տպագրելու պատուից:

ԲՐԻԶ

ՍՏԱՅՈՒԱԾ ԳՐՔԵՐ

Տեղեկագիր և հաշուեցոյց Թաւրիզի Հայուհեաց Բարեգործական միացեալ Ընկ. 1902—3 ուս. ամ. Թաւրիզ 1903

Կ. ԿՈՍՏԱՆԵԱՆՑ Ցակովբ Կարնեցի. Տեղագիր վերին Հայոց. յիշատակարան ԺԷ. դարու. Վաղարշապատ 1903.

Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆ. Կեանքի դասը. պատմուածք. Թիֆլիս 1903

Ե. ԹՈՓՁԵԱՆ. Լոյս. հատուածական օրացոյց, 1904 թ. Թիֆլիս 1903

« « Փոքր օրացոյց 1904 թ. Թիֆլիս 1903.

« « Սեղանի օրացոյց 1904 թ. » »

Է. ՆԻՆՕՀՎԻԼԻ. Հրաման. պատմուածք. վրաց. թարգմ. Ղ. Կ Թիֆլիս 1903.

Մ. ԹԱՄԱՄՇԵԱՆՑ. Զրադաշտ. հրատ. Ց. Արամեանց. Ս. Պ. Բ. 1903.

Ն. Վ. ՄԵԼԻՔ-ԹԱՆԳԵԱՆ. Հայոց եկեղեցական իրաւունքը. Ա. գիրք. Շուշի 1903

ՑԱՐ. ԵՍԱՑԵԱՆ. Կեանքի խորշերից. պատկերներ. Ալէքսանդրապոլ 1903

Հռոմայեցի իմաստասէր Էպիկտետի կեանքն ու վարդապետութիւնը. թարգմ. Զաւէն վարդ. Ս. Էջմիածին 1903

Տեղեկագիր Պարսկաստանի հակալկոյական ընկերութեան ե-ռամեայ գործնէութեան. Դաւրէժ 1903

Ե. ՏԷՐ-ԱՍՏՈՒԱԾԱՏՐԵԱՆ. Ջան գիւլիւմ. Պարիս 1903

Христ. Кучукъ-Іоаннесовъ Письмо Императора Іоанна Цимисхія къ армянскому царю Ашоту III. С П Б. 1903.

Վ. ՓԱՓԱԶԵԱՆ. Ասի. վէպ Պարսկական կեանքից, հեղինակի պատկերով. Թիֆլիս 1903

« « Լուր-դա-լուր. քրդական պոէմա. Բաղու 1903

ՑՈՎ. ՍՕԼՕՎԵԱՆ. Հարազատ գծեր. Ա. պրակ. Ս. Պ. Բուրգ 1903 (հրատ. Գեղ. Ախտանգիւլեանցի).

ԱՆՏՕՆ ՉԵԽՈՎ Գրաղ. թարգմ. Տ. Վ. (Լումայից) Բաղու 1903

Ղ. ԱՂԱՑԵԱՆՑ. Պատկերաւոր այբբենարան մեծերի և փոքրերի համար. մեծերի համար իբրև ինքնուսուցիչ. բ. տպ. Թիֆլիս 1903

Մ. ՄԱՆՈՒԷԼԵԱՆ. Էսքիզներ. Բաղու 1903

Ն. ՆԵՊԼԻԻԵԻ. Ի՞նչ է ճշմարտութիւնը. թարգմ. Մամբրէ վ., Վաղարշապատ 1903.

ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ

—

ՄԻ ՆՈՐ ԹԵՐԹԻԿ

Ահա մի քանի ամիս է, որ Թիֆլիսում բժշկ. Վ. Արծրունու հրատարակութեամբ, լոյս է տեսնում 2 շաբաթը մի անգամ «Առողջապահիկ թերթ» անունով մի տետր։

Խօսել թէ որքան մեր ժողովրդի համար կարևոր է մի պարբերական հանդէս, որ կարողանար նրան ծանօթացնել առողջապահութեան տարրական պայմանների հետ—աւելորդ է։ Հայ բժիշկներն այս կարիքը շատ վաղուց են զգացել։ Բժշկ. Լ. Տիգրանեանի դեռ 20 տարի սրանից առաջ հրատարակուող «Առողջապահական թերթ» ամսագիրը մեր ասածի ապացոյց։ Ապացոյց նաև հանգուցեալ բժ. Ռոստոմեանի, այնուհետև բոլոր բժշկապետներ Ա. Բաբայեանի, Տէր-Գրիգորեանի, Բաբեանի, Քոչարեանի, իսկ վերջերս Բուդուղեանի գործունէութիւնը, որոնք տարիներ շարունակ գրել են և գրում են ժողովրդի համար մատչելի բժշկական գրոյցներ։

Պ. Արծրունին, հետևելով մեր ժողովրդասէր բժիշկների գեղեցիկ օրինակին, ասպարէզ է գալիս իբրև խմբագիր հրատարակիչ մի առանձին պարբերական հանդիսի։ Գովելի ձեռնարկութիւն և արժանի խրախուսանքի։ Ճշմարիտ է, նոր թերթիկը բժշկականութեան մասին նոր խօսք ասելու յաւակնութիւն չունի և, ի հարկէ չի կարող ունենալ։ Ճշմարիտ է, նրա խմբագիրը վերոյիշեալ բժշկապետներին մի առանձին բան աւելացնելու ընդունակութիւն տակաւին չի ցոյց տուել և չի կարող ցոյց տալ։ Բայց և այնպէս, «Առողջապահիկը» աւելորդ բան չէ։ Զէ որ այն գոնէ տեխնիկական թեթևութիւն կարող է տալ մեր բժիշկներին և յանձն առնելով հրատարակել նրանց գրոյցները, ազատում է նրանց տպագրական ծախսերից և դէս ու դէն վազվզելու ձանձրոյթից։

Այս տեսակետից ահա մենք կարող ենք շնորհաւորել «Առողջապահիկի» երևան գալը։ Սակայն մի բարի խորհուրդ՝ Մի ղուտ մասնագիտական հանդէս, որ կոչուած է ժողովրդի բարիքներին ծառայելու, պիտի և պարտաւոր է աշխատել զոնէ կարողացածին չափ լուրջ դիրք բռնել։ Դժբախտաբար, պ. Արծրունին ձգտումներ է ցոյց տալիս իւր թերթը հէնց առաջին քայլերից իսկ ծաղրի և ծիծաղի առարկայ դարձնելու։ Մեր խօսքը նրա վերջին համարներից մէկում տպուած երկու խմբագրական յօդուածների մասին է, որոնց մէջ գիտութեանը ծառայելու նկրտումներ ունեցող բժշկապետ խմբագիրը զարմանալի անհամեստութեամբ խունկ է ծխում «Մշակ» լրագրին լոկ այն պատճառով, որ այդ լրագիրը մի թերուսի բերանով տպել էր իւր մասին մի ընդարձակ ռեկլամ և խոստանում է պաշտպանել նրան։ Մեզ համար հասկանալի է պ. Արծրունու անպատճառ ժողովրդականութիւն վայելելու բուռն փափագը։ Բարոյական թուլամորթութիւնը մտքի տկարութեան հետ է պայմանաւորուած, միայն հոգեկան հարուստ պաշարի տէր անձինք խուսափում են էժանագին ժողովրդականութիւնից, որովհետև ժողովրդականութիւնը ինքը վազում է նրա ետևից։ Նա, որ գուրկ է ներքին աստուածային կայծից, գիմում է սրհեստական միջոցներին իւր փոքրիկ անձը ընդհանրութեան խոշորացոյցով մեծացնելու։ Այս էլ հասկանալի է. ինչպէս հասկանալի է եթէ մի մրջիւն հեալով և տնքալով գարու մի հատիկը գլորելով երևակայում է, թէ ահագին նաւ է շարժում առաջ։ Հասկանալի է նաև, որ «Առողջապահիկի» տէրը ուզում է մի «տարածուած» թերթի միջոցով ձեռք բերել իւր երկու ռուբլանոց լրագրի համար մի քանի տասնեակ աւելորդ բաժանորդներ։ Փողը ո՞ւմ չէ հրապուրել։ Բայց մոռանալ անձնասիրութիւնը, մոռանալ գիտութեանը ծառայելու ձգտում ունեցողի պատուասիրութիւնը մի քանի տասնեակ ռուբլիներ կամ որ միևնոյն է փողոցային ժողովրդականութիւն վաստակելու համար—այս արդէն անպատուաբեր վարմունք է։ Եւ այս տեսակէտից «Առողջապահիկի» երկու յօդուածները, որ լի են շողոքորթութեամբ մի էժանագին լրագրի և նրա տգէտ աշխատակցի հասցէին —մեզ վրայ զզուելի տպաւորութիւն գործեցին։

ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏ

ՀԱԿԱԹՈՒԲԱԽՏԱՑԻՆ ՇԻՃՈՒԿ։ Նոյեմբեր մէկին բժիշկ Մարմորեկը ներկայացրեց Պարիզի բժշկական ճեմարանին մի զեկուցում իր նոր գտած հակագնդկախտային շիճուկի մասին։

Երկար տարիների փորձերից Մարմորեկը համոզուեց, որ Կոխի տուբերկուլինը գնդկախտի իսկական թոյնը (токсинъ) չէ. տուբերկուլինը, որ մեծ մասամբ պատրաստուում է հին գնդկախտային բացիլներից, միայն նրա տարրաբանական ֆերմենտն է. որ ներգործում է բացիլների վրայ և առաջացնում գնդկախտի նոր գտած իսկական թոյնը։

Մարմորեկի կարծիքով դրանով է բացատրուում այն հանգամանքը, որ Կոխի տուբերկուլինը, մտցնելով առողջ կազմուածքի մէջ, ուր առաջ գնդկախտային բացիլներ չկային, նրա վրայ ոչ մի ներգործութիւն չէ անում։ Մարմորեկը մշակում էր Կոխի մատաղ բացիլները, որոնց ճարպային մաշկը դեռ ևս չէ զարգացել, յատուկ միջավայրում, բաղկացած հորթի «серумъ-левтоксинъ» ից և լեարդի քաղցրիտա ին (глицеринъ) արգանակից. այդ վայրում բացիլները արձակում են իրենցից ոչ թէ տուբերկուլին, այլ միմիայն գնդկախտային նոր գտած թոյնը (токсинъ)։ Այդ թոյնով պատուաստուած ճագարները և ծովային խոզերը չուտով սատկում են, իսկ ձիերին նոյն թոյնով պատուաստելով Մարմորեկը դտաւ հակագնդկախտային շիճուկը։ 15 հարիւրագրամ այդ շիճուկից դարձնում է ճագարին գնդկախտին անընդունակ։

Եւրոպայի զանազան քաղաքներում այդ փորձերը կատարուեցան և մարդկանց վերայ։

Մի տարուայ ընթացքում 2 հազարից աւելի փորձեր կատարուեցան։

Այդ բոլոր փորձերը հետևեալ հետևանքն ունեցան. 1) Թոքերի գնդկախտային ամենասուր հիւանդութեան ժամանակ, բացիլների և խորխի քանակութիւնը զգալի կերպով պակասեց։ Կրծքի հետազօտութիւնից ապացուցուեց հիւանդութեան ընթացքի յետադիմութիւնը։ 2) Քրտնքային շատ հիւանդութիւններ, բարդուած խոցերով և թարախներով, բոլորովին լաւացան։ 3) Լանջամաշկատապի ժամանակ արագ պակասում է հեղուկը։ 4) Վզի, աճուկի (паха) և փոքր կոնքի գնդկախտի ժամանակ երկաթային զանգուածը կանոնաւորապէս պակասում է։

5) Կաչուի գնդկախտային խէժը (гумма), որոնց երկար ժամանակ անկարելի էր բժշկել, չորանում է։ 6) Մարմորեկի չիճուկը երբէք ոչ ընդհանուր և ոչ էլ մասնաւոր հակազդեցութիւն չէ գործում հիւանդի վրայ։ (Нов. об.)

ՀԱԿԱՀԱՐԻՆՔԱՅԻՆ ՇԻՃՈՒԿ. Բժշկապետ Շանտեմիսը գտել է հակահարինքային չիճուկ։ Կատարած 100 փորձերից բժշկուել են 97։

Լրագիրների ասելով, Շանտեմիսի չիճուկը շուտով կսկսեն գործածել բժշկականութեան մէջ (Нов об.)

ՐԱԴԻԻ ԱՐԴԻՒՆԱԲԵՐՈՒԹԻՒՆԸ։ Բադին, որ այդպէս կարճ ժամանակում ահագին հռչակ ստացաւ, մի զարմանալի փայլող մարմին է, որի մէջ մեծ քանակութեամբ բնութեան ոյժ է թագնուած և ամենից թանգ առարկաներին է պատկանում աշխարհիս երեսին։ Պէտք է ահագին քանակութեամբ հանք մշակել, որ կարելի լինի մի գրամ մաքուր բադի ստանալ։ Ձնայելով դրան, Ֆրանսիայում և Գերմանիայում վերջին ժամանակներս սկսել են բադին արդիւնագործել։ Մի գրամ բադին մօտաւորապէս 3,700 ր. արժէ։ Ներկայումս արդիւնաբերողները արդէն մի քանի հարիւր գրամ բադի պատուէր ունին։ Բադին ունի Ռէօնդգենեան ճառագայթների բոլոր յատկութիւնները և միևնոյն ժամանակ անփոփոխ մի մարմին է։ Այժմ ապացուցուած է, որ բադի փետուրից ոչ հասա մի փոքր խողովակով բադին, պարունակելով իր մէջ ոչ աւելի քան մէկ միլիգրամ, միևնոյն ոյժն ունի, ինչ որ թանկագին և ուժեղ էլեկտրական գործիքը և օգուտ է բերում խլիրդի բժշկման ժամանակ. բադիի յատկութիւնը, այն է լոյս և տաքութիւն արձակել և բոլորովին առանձին կերպով ներգործել ինքնափայլ մարմինների վրայ, լոյս տուեց, որ նա մեծ դեր պիտի խաղայ լուսաւորութեան արդիւնագործութեան ասպարիզում։ (Д. Р.)

ԳՐՈՂ ՀԵՌԱԽՕՍ. Բերլինում սկսել են գործածել արդէն գրող հեռախօսը, որի կազմութիւնը այսպէս է. գրող մեքենայի վրայ գրածը հաղորդւում է գրող մեքենային տառերով, երբ որ այդ մեքենան միացնում են արոնենտի հետ հեռախօսի ժապաւէնով։ Այդպիսով մարդ, եթէ միայն գիտէ գրել գրող մեքենայով, կարող է հաղորդել ինչ որ կամենայ միւս արոնենտին. վերջինս կարող է գործիքի մօտ չլինել, ինչպէս որ լինում է սովորական հեռախօսի ժամանակ, որովհետև լուրը հաղորդւում է ուղղակի թղթի վրայ գրած, եթէ միայն գործիքը չէ փակուած։

Նոր հեռախօսի շատ առաւելութիւններից հարկաւոր է ուշադրութիւն դարձնել այն բանի վրայ, որ հաղորդուածը ուրիշներից ոչ ոք չէ կարող լսել և որ նա հաղորդւում է ճշտութեամբ. կասկած չկայ, որ այդ նոր գիւտը շուտով կտարածուի։ (Нов. об.)

ՄԱՐԴԿԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ՃԱՌԱԳԱՅԹՆԵՐԸ։ Փարիզի գիտութեանց ճեմարանում Արսոնվալը ներկայացրեց մի շատ հետաքրքրական զեկուցում, անգլիական համալսարանի Շարպանտէ և Բլոնդիլո պրոֆէսորների կողմից։

Ինչպէս երևում է մարդկային մարմինը բադդիի և կամ Կրուկսի գործիքի նման ճառագայթներ է արձակում։

Մարդկային մարմինը, ինչպէս և բադին, յատկութիւն ունի իրանից ճառագայթներ արձակելու, որոնք ներգործում են մի քանի զդայուն մարմինների վրայ։ Այդ ճառագայթների յատկութիւնը դեռ ևս լաւ չէ հետազոտուած։ Նրանք կարծես թէ պատկանում են N ճառագայթներին, որ գտել է Շարպանտին և որոնք կոչւում են այդ անունով ի պատիւ Նանսի քաղաքի, որտեղ ապրում և գործում է գիտնականը։ Բոլոր այդ ճառագայթները համարեա թէ նոյն արագութիւնն ունին, ոլքան և լոյսի ճառագայթները և այն յատկանիշն ունին, որ ջրով թաց արած թղթից ճառագայթները բեկրեկւում են։

Որպէս զի կարելի լինի մարմնի ճառագայթները տեսանելի դարձնել, Շարպանտին և Բլանդիլոն այսպէս են վարւում.

Մի որոշ տեղի վրայ ուղղում են Կրուկսի ճառագայթները. այդ տեղը կսկսի լուսաւորուիլ և ֆլորափայլի (флоресценія) յատկութիւնը ստանալ։ Եթէ Կրուկսի գործիքի տեղ դնենք բադին միևնոյն տպաւորութիւնը կստանանք, միայն աւելի թոյլ։ Վերջապէս եթէ այդ տեղին մօտեցնենք մարդու մարմինը, ֆլորափայլը թեթև կերպով կաւելանայ, եթէ մկանը ձգենք տուած տեղի վրայ համապատասխան տեղում։

Այստեղից երևում է, որ նոր ճառագայթների օգնութեամբ, կարելի է թուաբտնական ճշտութեամբ որոշել մկանների և ջղերի աշխատանք։

Նոր ճառագայթները անփոխարինելի միջոց կլինին նաև որոշելու մարդու մահն ու կեանքը։

Ֆրանսիական գիտնականների նոր գիւտի ամբողջ արժէքը կարելի է գնահատել ապագայում։

ՍՐՏԻ ՄԱՍՍԱԺ։ Ամերիկայի բժիշկ դոկտոր Ստերլինգին յաջողուեց, սիրտը մերսելու միջոցով, կենդանացնել մարդու համարեա թէ տնչունչ յորինուածքը։

Առաջ էլ, շատ անգամ դիմել են այդ ծայրայեղ միջոցին. սիրտը կտրում էին և վերցնելով ձեռքին մերսում, դադարուած բաբախումը կրկին զարթեցնելու համար Բայց մինչև այժմ ոչ մի հետևանք չէր ունեցել։

Ստերլինգին յաջողուեց կենդանացնել համարեա թէ մեռած մարդուն. նա անդամահատեց փակաղիքի բորբոքումով հիւանդ 65 տարեկան ծերին, առաջուց թմրեցնող դեղ տալով նրան։ Ցանկարծ բժիշկը նկատեց որ զարկը և շնչառութիւնը սկսում են թուլանալ և վերջապէս բոլորովին դադարեցին։ Երբ սովորական միջոցները չօգնեցին, արհեստական միջոցով

շնչառութիւնը զարթեցնելու համար, նա դիմեց ծայրայեղ միջոցի, ձեռքը ներս տանելով անդամահատութեան ժամանակ փորի վրայի կտրած տեղից, ստոծանիի միջով չոչափեց անկենդան սիրտը և ձեռքով ճնշեց: Սիրտը սկսեց նորից բաբախել, թէպէտ ձեռքի զարկը դեռ ևս չէր նկատւում: Անմիջապէս կըրկնեցին արհեստական կերպով շնչառութիւնը կատարելու և կենդանութիւնը վերականգնելու ուրիշ միջոցները և 12 րոպէից յետոյ շնչառութիւնը բոլորովին վերականգնեց: Անդամահատութիւնը շարունակուեց առանց թմրեցնող դեղի և հիւանդը բոլորովին առողջացաւ: Թէպէտ այս դէպքը առաջինն է, բայց ցոյց է տալիս, թէ ինչքան բան կարելի է սպասել բժշկութեան այս եղանակից: (Д. Р.)

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

—

ՊԱՐԻԶԻ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ ՆՈՐ ԵԿԵՂԵՑՈՒՆ ԿԻՑ

Ինչպէս յայտնի է, ներկայումս Պարիզի մի նշանաւոր փողոցում գնուած ընդարձակ գետնի վերայ կառուցւում է տեղական հայերի համար եկեղեցի: Արտասահմանի հայ թերթերը խօսելով այդ եկեղեցու կառուցման մասին՝ առաջարկում են դորան կից հիմնել մի հայկական մատենադարան և վերջնիս ակզբնաւորութեան համար գնել այն հարուստ գրադարանը, որ թողել է իւր մահուանից յետոյ Նորերումս վախճանուած գիտնական Սուքիաս վարդապետ Պարոնեանը: Գեղեցիկ դիտաւորութիւն:

—

Վ. ԿՕՐՕԼԷՆԿՕ և Ա. ՉԵԽՈՎ.

Ներկայ թուականին ռուս մամուլը և գրական շրջանները տօնեցին երկու նորագոյն գրողների՝ Վ. Կորօլէնկօի և Ա. Չեխովի քսանհինգամեայ գրական գործունէութիւնը: Երկու գրողներն էլ, ինչպէս յայտնի է, յառաջադէմ ուղղութեան վիպագրողներից են և հաւասար պատիւ են վայելում

միս նորագոյն գրողների՝ Մաքսիմ Գորկու և Լ. Անդրէևի հետ։ Ի պատիւ Կորոլէնկոի յուլիսի 14 ին Պ. Բուրգում տեղի է ունեցել մի մեծ հացկերոյթ, ուր ներկայ են եղել աւելի քան 450 հոգի։ Հացկերոյթը պատրաստուած էր 12 պարբերական հրատարակութիւնների նախաձեռնութեամբ և մասնակցում էին ռուս նոր գրականութեան լաւագոյն ներկայացուցիչներ, խմբագիրներ, պրոֆէսսորներ, բանաստեղծներ, գրագէտներ և այլն։ Հանդէսի ժամանակ կարդացուել են բազմաթիւ ուղերձներ, որոնց մէջ նաև Պ. Բուրգի համալսարանի ուսանողներից, Մոսկուայի 1250 ուսանողներից, Մոսկուայի դպրոցական 850 սաներից և բազմաթիւ խմբագրութիւններից, հասատատութիւններից, խմբերից և անձերից և վերջապէս հրէայ ուսանողներից։

Երկու ժողովրդական գրողների հրատարակութիւնները տպուած են ռուսերէն բազմաթիւ տպագրութիւններով, իսկ նոցա գեղեցիկ վէպերից ու պատկերներից շատերը թարգմանուած են հայերէն և մեծ մասամբ տպուած «Լումայի» էջերում։

—

ՏՆՄՅԻՆ ԲԺՇԿԱՐԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՏՈՐԸ

Այս օրերս լոյս տեսաւ բժշկապետ Գ. Բաբեանի խմբագրութեամբ հրատարակուող բժշկարանի երկրորդ ստուար հատորը՝ Դիւտ ա. քահ. Աղանեանի և պ. Իսահակ Ցարութիւնեանցի թարգմանութեամբ։

Այդ հատորը պարունակում է իւր մէջ վարակիչ, ներքին, կաշուի և վեներային հիւանդութիւնները, տնային դեղարան և բժշկական բառարան։ Գրքին կցուած է մալեարիան տարածող մոծակի դանազան ձևերի նկարը։

—

ԷՆՖԻԱՃԵԱՆՑԻ ԳՐՉԱԳԻՐՆԵՐԸ ՎԱՃԱՌՈՒԱԾ

Մասնաւոր հայ անհատներին պատկանող ձեռագիր ժողովածուներից ամենահարուստը պ Աւետիք Էնֆիաճեանցինն է, որ յիսուն երկար տարիներ գրավաճառի խանութ ունենալով Թիֆլիսում՝ միջոց է ունեցել հետզհետէ ի մի ժողովել իւր ձեռքն անցած հայ գրչագիրները։ Շատ հայ և նոյն իսկ եւրոպացի բանասէրներ ծանօթ են այդ թանկագին հաւաքածոյին։

Որքան մեզ յայտնի է, այդ ձեռագիրները գնել ցանկանում էին բազմաթիւ հայ հաստատութիւններ և մասնաւոր մարդիկ։ Սակայն, ինչպէս այժմ հաղորդում են մեզ ամենահաստատ աղբիւրներից պր. Ֆինկը ամսոյս 4 ին հաղորդել է իրան Էնֆիաճեանցին, որ Տիւբինգէնի համալսարանի մա-

տենաղարանի վարչութիւնը հայագէտ պրոֆէսոր Ֆէտտէրի միջնորդութեամբ որոշել է գնել այդ ձեռագիրները և արդէն կարգադրել է անմիջապէս վճարել և գրքերն ընդունել այստեղ, որտեղից կուղարկուին Տ իւրինդէն։

—

ԱՅՆԹԱՊԻ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՒ ՕԺՈՒՄԸ.

Ամբողջ Կիլիկիայի մէջ ամենից փառաւոր և հոյակապ եկեղեցին Այնթապի Մայր եկեղեցին է, որի ճարտարապետական յատակագիծը պատրաստել է հանգուցեալ արքունի ճարտարապետ Յակոբ Պէյ Պալեանը, որը երկար տարիներից ի վեր շինւում է և որի շինութեան վերայ ծախք է եղել մօտաւորապէս 200,000 ռուբլի։ Այժմ, ինչպէս հաղորդում է «Բիւզանդիոնը», Մայր եկեղեցու շինութիւնը աւարտուած լինելով՝ մօտ օրերս նաւակատիքն ու օծումը կատարել է Կիլիկիոյ Տ. Սահակ կաթուղիկոսը։

—

ՄԻ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

Մեր ընթերցողները անշուշտ յիշում են, որ գեր. Տ. Բարդուղիմէոս եպիսկոպոս Ճուղուրեանցը իւր «Խորենացուն Խ. պէտք է հասկանալ» գրքոյկում մեր դէմ գրած մի յօդուածում ասել էր, թէ այն նորագոյն սիստէմի ձուլիչ մեքենան, որ մենք գնել էինք Բերլինում, ինչպէս *ղօռղա* երկաթ ընկած է ս. Էջմիածնի տպարանում։ Մենք պատասխանեցինք, ի միջի այլոց, որ մեքենան անպէտք ընկած էլ կմնայ միշտ, մինչև որ մասնագէտ հմուտ վարպետ չբանեցնի այն։ Այժմ մեզ հաղորդում են ս. Էջմիածնից, որ անցեալները հրաւիրուելով այնտեղ Թիֆլիսից մասնագէտ ձուլարանապետ պ. Մադէրը՝ կարգի է դրել ձուլիչը, որ այժմ բանում է խիստ կանոնաւոր կերպով և այնքան գործ է արտադրում, որ տպարանը դիտաւորութիւն ունի տառերի պատուէրներ ընդունել ուրիշ տպարաններից։

—

Խմբագրութիւնս ստացաւ Նորին սրբութիւն տ. Հայոց վեհ. Կաթուղիկոսից Հայրապետական Դիւանի գրութեամբ երկու օր. Էջմիածնատիպ օրացոյց նոր տարուայ շնորհաւորութեան առիթով։

---

† ՄԱՀԳՈՅԺ

—

ՄԱՏԹԻԱ ԳԱՐԱԳԱՇԵԱՆ

Անցեալ նոյեմբերի 19 ին Կ. Պոլսում վախճանուել է Մատթիա Գարագաշեանը, որ ծանօթ է ռուսահայ բանասիրութեան իւր քառահատոր «Քննական հայոց պատմութիւն» երկով։ Հանգուցեալի մասին հետևեալ տեղեկութիւններն ենք քաղում «Բիւզանդիոնի» նոյ. 20 համարից. —

Գարագաշեանը բնիկ Բերացի էր հայ կաթոլիկ ծնողների զաւակ. սկզբում աշակերտեցաւ Վենետիկի Մխիթ. վանքում, ուր ցոյց տուեց մտքի ընդունակութիւն. և ցանկալով ազատուել վանական կեանքի կապանքներից, թողեց քահանայութիւնը, վանքը և գնաց Պոլիս։ Գարագաշեանը մեծագոյն ջատագովն հանդիսացաւ Ոսկեդարու հայերէնի՝ Վինետիկի դպրոցի դէմ և այդ առթիւ հրատարակեց «Նկարագիր ուսմանց», Ռասինի «Հռակինեայ երգք վասն կրօնից» և «Առակք Լաֆոնտէնի», և «Ճաշակ ոսկեղէն դպրութիւն» տետրակների շարքը։ Նորա հաւատն այնչափ մեծ էր գրաբարի վերայ, որ հաւատում էր, թէ հայերը կարող են թօթափել աշխարհաբարը և վերադառնալ նախնեաց գրաբարի։ Համամիտ չէր նոյն իսկ Այտընեանի եզրակացութիւններին և իւր այս կարծիքները պաշտպանեց մի շարք յօդուածներով 1881 ին «Թէրճէմանը էֆքեար» լրագրում։

Կ. Պոլիս դառնալուց յետոյ յարուելով կրօնական ազատամտութեան՝ թողեց կաթոլիկութիւնը և հայ բողոքական հասարակութեան անդամ գրուեցաւ։ Մտաւ Պայպլ Հաուզի (Աստուծաշնչական ընկ.) ծառայութեան մէջ

և իբրև քաջ հայագէտ, կատարեց նոցա տպած Ս. Գրքի սրբագրութիւնը, հեղինակեց զանազան դասագրքեր և միսիոներական «Աւետաբեր» շաբաթաթերթում թարգմանութիւններ էր անում գրաբարախառն այլանդակ լեզուով։ Տպեց իր եռհատոր (ոչ, այլ քառահատոր) քննական պատմութիւնը, որի մէջ միայն հետևող եղաւ 25 տարի առաջ հրատարակած Եւրոպական կարծիքներին մեր քերթողահօր մասին։ Իւր իդէալը Աւետարանն էր։ Հեղինակեց դիւրուսոյց քերականութիւններ գրաբարի համար։ «Գարագաշեան գրաբարագէտ մեր, գրաբար մատենագիր, գրաբարի ուսուցիչ, բայց երբէք լեզուաբան մը (ֆիլոլոգ) չեղաւ... լեզուներու շարքին մէջ հայերէնին տեղը երբէք չճշտեց...չստուգեց հայերէնին աղերսն ասիական նախալեզուներուն հետ։ Աստի յառաջ եկաւ իր թիւր կարծիքը գրաբարը վերակենդանացնելու կարելիութեան վրայ։ Եւ ասով պիտի բացատրենք որ կրցաւ հաւատացող մը ըլլալ Հիւնքեարպէյէնտեան Տ. Յովհ. հօր «Ստուգաբանական բառարանին»։

Գարագաշեանը վախճանուեցաւ մօտ 90 տարեկան հասակում և Նորա մարմինը յաջողեցաւ թաղել հայ-կաթոլիկ կղերը՝ թաղելով նորան քահանայաթաղ կարգով... որպէս նախկին... Մխիթարեան միաբան՝ Հ. Անտոն վարդապետին։

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

ՄՈՍԿՈՒԱ. Ղ. Ք. — «Զար բաղտ» և «***» բանաստեղծութիւնները չեն տպուիլ։ Նագեժդինի «Խօսակցութիւնը» կը տպուի իւր հերթին։

ՄՈՍԿՈՒԱ. Ա. Կ. — «Դէպի Օշական» որոշուած է տպել № 1 համարում։ շատ հաւանեցինք։ Պ. Բուրգ ուղարկեցինք այս տարուայ 5 օրինակ «Լուսայ Ձեր ուղարկած հասցէներով։ Գրքերը դեռ չստացանք։

ԲԱԳՈՒ. Ա. ԽՕՋ.— Ստացանք Ձեր «Վրիժառու», «Իմերեթիայի Մարիա թագուհին», «Կեանքի ձախորդութիւններ», «Մեռնող փիղը» և «Մի ճաշկերոյթ» յօդուածները։ Կկարդանք և որոնք յարմար կլինին կտպենք հետզհետէ, ոչ շատ շուտ, որովհետև թարգմանական նիւթեր չափազանց շատ են դիպուած խմբագրատանը։

ՍՂՆԱԽ. Ա. Ք. տ.-Ստ.—Ուրախ ենք, որ ուզում էք մեզ աշխատակցել, բայց Ձեր ընտրած նիւթը համապատասխան չէ մեր թերթին։ Թարգմանելու պէտք է ընտրել ամենահետաքրքրական պատկերներ և նիւթեր։

ԹԻՖԼԻՍ. Գ. Վ. — «Փիլիսոփայական զրոյցները» կտպենք միւս համարում։

Ս. Պ. Բուրգ. Ն. Ա.—«Հ. Կարամզինը» նոր ստացանք. իւր ժամանակին կյանձնենք տպագրութեան։ «Լուսաները» ուղարկեցինք Ձեր հասցէով։

ՄՈՍԿՈՒԱ. Ա. Գիւրչեան.— «Եզդի քրդեր»ը ստացանք և կը տպենք հետևեալ համարում։

ՇՈՒՇԻ. Պ. Զ. – Ստացանք Ձեր երկու թարգմանութիւնը. 1. Տօլստոյի «Կարմա» և Բրէտ գարտի «Ծննդեան գիշերին»։ Առաջինի թարգմանութիւնն արդէն վաղուց կայ խմբագրութեանս մէջ։ Երկուսն էլ կկարդանք և յարմարաւորները հետզհետէ իրանց հերթին կտպուին «Լուսայում»։ «Լուսայ» ուղարկուեց Ձեզ։

Ս. Պ. ԲՈՒՐԳ. Վ. Ա.—Ձեր թարգմանութիւնը՝ Գիւի դը Մոպասանի «Քեռի Մելօն» և «Կայրը» ստացանք. կկարդանք և կպատասխանենք.

ԵՐԵՒԱՆ Ա. ԱԳ.—Ստացանք ձեր ուսումնասիրութիւնը Մամիկոնեան տոհմի մասին և կտպենք առաջիկայ համարում։

ԿԱՐՍ. Զ, Զ. — „Մոռացուած աստուած" թարգմանութիւնը դտպուի։

ԿԱՐՍ. ՏՈՐ. Ստացանք, բայց չպիտի տպուի։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Բացուած է 1904 թուի

ԱՂԲԻՒՐ

պատկերազարդ ամսագրի XXII Տ. և

ՏԱՐԱԶ

պատկերազարդ լրագրի XV Տ.

բաժանորդագրութիւնը

Յունուարից բաժանորդները կըստանան. 50 №№ ՏԱՐԱԶ, գրական-գեղարուեստական, հասարակական-քննադատական լրագիր, 12 №№ ԱՂԲԻՒՐ, մանուկների և պատանիների համար, շատ շքեղ զարդարուած ընտիր նկարներով, պատկերներով։ 12 №№ ԳԵՂԱՓՆՋԻԿ, ընտանեկան հանդէս ամսօրեայ։ 24 №№ ԻԼԼԻՒՍՏՐԱՍԻՕՆ, երկշաբթեայ գեղարուեստական-գրական թերթ։ ՊՐԷՄԻԱՆԵՐը յունուարի №№-ի հետ՝ 1) Ս. ՍԱՀԱԿ, 2) Ս. ՄԵՍՐՈՊ, 3) ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԻԿԸ ՕՇԱԿԱՆՈՒՄ ֆոտո-գրաւիւրը 40×50 սանտիմետր մեծութեամբ պատրաստուած Լայպցիգում և Բերլինում, 4) ՁՆԱՇԽԱՐՀԻԿ, էլէքտրոՃիթանկար, պատրաստուած Նիւ-Եօրկում, բոլորովին նորութիւն Նոյնիսկ Եւրոպայում։ Բացի այս պատկերները, տարվայ ընթացքում կտրվին իբրև յաւելուածներ ԱՂԲԻՒՐԻՆ ԳԵՂԱՓՆՋԻԿԻՆ 50 լուսատիպ գունաւոր պատկերներ և տեսարաններ մեր սրբազան, նուիրական վայրերից։

ԱՂԲԻՒՐԻՆ և ՏԱՐԱԶԻՆ առաջիկայ 1904 թ. համար հրաւիրուած են աշխատակցելու մեր գրական ամենաընտիր ոյժերը, ոյոնց մեծամասնութիւնը սկսել է արդէն իր աշխատակցութիւնը։

Մեր հրատարակութիւնները առաջիկայ 1904 թ. լոյս կըտեսնեն շատ ընդարձակուած ծրագրով. մանրամասնութիւնները կըյայտարարուին։

ԱՂԲԻՒՐԻ տարեկան բաժանորդագինը՝ 3 ր. (արտասահման 5 ր.) ՏԱՐԱԶ 6 ր. (արտասահման 10 ր.) Աղբիւր-տարազ միևնոյն հասցէով —10 ր. (արտասահման 18 ռուբլի կամ 50 ֆր.)։

Պրէմիաներ, յաւելուածներ, ստանում են միմիայն Աղբիւր-Տարազ միևնոյն հասցէով ստորագրուողները։

Հրաւիրում են հայերն ուղարկելու իրանց և իրանց

հարևանների հասցէները, որոնք կարող են տարեկան 10 ր. վճարել, բայց զլանում են... Այդպիսիներին կուղարկուին ձրի։ Ապառիկ կամ մաս մաս վճարող բաժանորդներ չեն ընդունուում, այլ ընդունուում են կամ վճարող և կամ բոլորովին ձրի։

Խմբագիր-Հրատարակիչ Տիգրան Նազարեան

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція АГБЮРЪ, կամ ТАРАЗЪ. Tiflis. (Caucase) Rédaction AGBUR կամ TARAZ.

„Тифлисскій Листокъ"

(ГОДЪ ИЗДАНІЯ XXVII-й)

Въ 1904 году, какъ и раньше, газета будетъ выходить ежедневно, заключая въ себѣ слѣдующіе отдѣлы в подъотдѣлы; I. Дѣйствія и распоряженія правительства. II. Телеграммы отъ собственныхъ корреспондентовъ и «Россійскаго телеграфнаго агентства». III. Статьи по общимъ краевымъ вопросамъ, а также по вопросамъ городской жизни и городскаго самоуправленія. IV. Внутреннія исвѣстія. V. Иностранныя извѣстія. VI. Мѣстный отдѣлъ (хроника тифлисской жизни и другихъ мѣстъ Кавказа и Закавказья). VII. Корреспонденціи изъ разныхъ мѣстъ Кавказа (отъ нашихъ корреспондентовъ). VIII Злободневные Фельетоны. XI. Судебный отдѣлъ. X. Письма читателей. XI. Обзор печати (общей и кавказской). XII. Фельетоны (городской, обозрѣніе кавказской жизни, популярно-научный, историческій, беллетристика, иностранной и внутренней общественной жизни, журнальное обозрѣніе и др.). XIII. Театръ и музыка. XIV. По россіи. XV. Смѣсь. XVI. Справочный отдѣлъ и объявленія.

По понедѣлникамъ подписчикамъ будутъ разсылаться телеграммы съ справочнымъ отдѣломъ и объявленіями.

Подписная цѣна

На годъ: съ доставкой въ Тифлисѣ—5 р., съ пересылкой иногороднимъ—7 р.—за границу—12 р. На полгода въ Тифлисѣ—3 р., для иногороднихъ—4 р. и заграницу—7 р. На 3 мѣсяца въ Тифлисѣ—1 р 75 к., для иногороднихъ—2 р. 50 к. и заграницу—4 р. На одинъ мѣсяцъ: въ Тифлисѣ—75 к., для иногроднихъ—1 р. и заграницу—1 р. 50 к.

ПОДПИСКА ПРИНИМАЕТСЯ на любой срокъ, но Только съ 1-го числа каждаго мѣсяца, исключительно въ конторѣ изданія, Головинскій проспектъ № 3.

ПЛАТА ЗА ОБЯВЛЕНІЯ: для Закавказья за мѣсто, занимаемое строкой петита передъ текстомъ—10 коп. и послѣ текста —5 копъ. Извѣщенія о зрѣлищахъ печатаются на первой страницѣ по 20 коп. за строку и на 4—по 10 коп. За объявленія въ эправочномъ отдѣлѣ взимается по 8 коп. за строчку. Объявленія внѣ предѣловъ Закавказья принимаются исключительно въ центральной конторѣ торговаго дома Л. и Э. Метцль и К-° въ Москвѣ, Мясницкая, д. Ситова и въ отдѣленіяхъ его—въ С-Петербургѣ, на Большой-Морской, № 11; въ Варшавѣ, Краковское предмѣстье, № 53 по 24 к.—передъ текстомъ и 12 коп. послѣ текста.

ОТКРЫТА ПОДПИСКА НА 1904 г.

на большую ежедневную съ полной программой, выходящую, газету

„БАКИНСКІЯ ИЗВѢСТІЯ"

ВЪ ГАЗЕТѢ ПРИМУТЪ УЧАСТІЕ:

Н. А. Азеф, Н. П. Ашешовъ, Е. З. Барановъ, кн. В. В. Барятинскій, Г. А. Берлинъ, Безпокоиный. В. Богучарскій (В. Я. Яковлевъ), В. В. Брусяникъ, Л. К. Бухъ, Х. С. Варданьянцъ, П. Л. Васильевъ, Ю. А. Веселовскій, В, С. Веишалъ, К. Воиновъ, Вѣди-Азъ, Л. Е. Габриловичъ, П. П. Гелейшвили, Б. Г. Голцевъ. Горичъ, С. О. Гулишамбаровъ, М. М. Гутманъ, Н. К. Дживилеговъ, К. И. Диксонъ, С. Докукинъ (С. Д.), В. Е. Ермиловъ, З. Н. Журавская Б. И. Ивинскій (Б Борскій), А. С. Изгоевъ, Ю. Кавказскій, М. В Кечеджи-Шаповаловъ, Н. П. Козеренко, А. Н. Котельниковъ, Е. Д. Кускова, Д. А. Линев (Далинъ), Мечтатель (Ѳ Ѳ. Трозинеръ). Мрачный Типъ, Е. С. Некрасова, А. И. Новиковъ, П. Огловецъ, Н. Паларинъ, А. Б. Петрищевъ, Конст. М. Пономаревъ, В. Португаловъ, С Н. Протопоповъ, Д. Д. Семеновъ, С. С. Семеновъ, М. В. Сабинина, Орестъ-Семинъ, А. С. Скларъ, М. А. Славинскій, И. Ф. Сливинская. Ю. Стекловъ. В. Ѳ. Тотоміанцъ, М И. Туганъ-Барамовскій, А. Ю. Финнъ, М, И. Фридманъ, Б. І. Харитовъ, Чужой (И. К. А), Г. И. Шрейдеръ, И. И. Шрейдеръ и друг.

Газета имѣетъ собственныхъ кореспондентовъ въ крупныхъ городахъ Кавказскаго края, а также въ С-Петербургѣ, Москвѣ и заграницей.

ПОДПИСНАЯ ЦѢНА

	Для городск. подписчиковъ	Для иногород.
На годъ	7 р.	8 р. 50 к.
На 6 мѣсяцевъ .	4 р. 50 к.	5 р. 25 к.
На 3 мѣсяца . . .	2 р. 50 к.	3 р. 25 к.
На 1 мѣсяцъ . . .	1 р. — »	1 р. 25 к.

Для годовыхъ подпис. допускается разсрочка:

	Для городск.	Для иногород.
При подпискѣ. . .	3 р.	3 р. 50 к.
Къ 1 апрѣля . . .	2 р.	3 р. — »
Къ 1 іюля . . .	2 р.	2 р. — »

Редакторъ-Издатель Н. А. Гриневъ.

ОТКРЫТА ПОДПИСКА НА 1904 ГОДЪ

на ежедневную политическую и литературную газету

„НОВОЕ ОБОЗРѢНІЕ"

(XXI—й годъ изданія)

Изданіе газеты будетъ возобновлено съ 15-го января 1904г.

Подписчики нынѣшняго года, какъ городскіе, такъ и иногородные желающіе, подписаться на будущій годъ, вносятъ 6 руб. за годъ и 3 руб. за полгода. Новые же подписчики на обычныхъ основаніяхъ вноястъ 7 руб. за годъ и 4 руб. за полгода.

Допускается разсрочка платежа: къ 1-му января—4 р. къ 1-му іюня —3 р.

Для сельскихъ учителей, народныхъ и школьныхъ библіотекъ и благотворительныхъ учрежденій сдѣлана скидка: годовая плата для иногородныхъ—6 руб., для городскихъ —5 руб.

Лицъ, желающихъ подписаться, контора проситъ увѣдомить ее о томъ и внести плату заблаговременно, по возможности не позже января, чтобъ успѣть заготовить адреса.

Подписка принимается въ Тифлисѣ, въ конторѣ газеты, Барятинская ул., д. № 8.

ОТКЫТА ПОДПИСКА НА 1904 ГОДЪ

На дешевую, ежедневную вечернюю газету общест. жизни. литературы, телеграммъ, справокъ и объявленій

"ТЕЛЕФОНЪ"

УСЛОВІЯ ПОДПИСКИ:

ВЪ ТИФЛИСѢ: (съ доставкой)		для иногородныхъ: (съ пересылкой)	
На 12 мѣс. . .	3 р	На 12 лѣс. . .	3 р. 50 к.
„ 6 мѣс. . .	2 „	„ 6 мѣс. . .	2 р. 50 к.
„ 3 м. . . .	1 „ 50 „	„ 3 мѣс. . .	2 „ — „
„ 1 м. . . .	„ „ 60 „	„ 1 мѣс. . .	„ „ 75 „

(Окраины по соглашенію)

Въ розничной продажѣ номеръ газеты стоитъ 2 коп.

Подписка принимается исключительно въ конторѣ газеты

ТАКСА ДЛЯ ОБЪЯВЛЕНІЙ:

строка петита на 1-й стр., или мѣсто заним. ею — р. 5 к.
На остальныхъ страницахъ . . . . . — р. 3 „
Траурное на 1-й страницѣ . . . . . 2 р. 50 „
„ „ „ 4-й страницѣ . . . . . 1 р. 50 „

(Многократныя объявленія со скидкой).

Редакціонныя письма и деньги просятъ адресовать на имя редактора Н. А. Грикурова Михайловскіи пр., д. № 65.

Открыта подписка на 1904г.

на ежедневную литературно-политеческую газету

ДОНСКАЯ РѢЧЬ

въ форматѣ большихъ столичкыхъ изданій

52 воскресныхъ номера съ иллюстраціями **52**

Помимо ежедневной газеты всѣ годовые подисчики, внешіе ил всю пидписную плату при подпискѣ или въ разсрочку — при подпискѣ 5 руб. и къ 1 мая 3. полу атъ въ 1904 году

БЕЗПЛАТНОЕ ПРИЛОЖЕНІЕ

12 книгъ

„ЖУРНАЛЪ ДЛЯ ВСѢХЪ“

Допускается разсрочка для желающихъ получить „Донскую Рѣчь“ и „Журналъ для всѣхъ“—при подпискѣ 5 р., остальн. 3 р. не позже 1 мая; для желающихъ получать только «Донскую Рѣчь»—при подпискѣ 3 р., къ 1 мая 3 р., къ 1 сентября 2 р.

ПОДПИСКА ПРИНИМ. въ Главн. Конторѣ въ Ростовѣ и Д., Б. Садовая Д. Чурилина и въ книжн. магаз. Г. Б. Городецкаго, Б. Садов., Д. Панченко.

И ВЪ ОТДѢЛЕНІЯХЪ: Новочеркасскѣ, Таганрогѣ, Новороссійскѣ. Екатеринодарѣ, Армавирѣ, Ставрополѣ, Маріуполѣ, Ейскѣ, Александровскѣ, Грушевскомъ, ст. Каменской, Юзовѣ, Азовѣ и Луганскѣ.

ПОДПИСНАЯ ЦѢНА
съ доставк и пересылк.

	Р.	К
На 12 мѣс.	8	—
» 11 «	7	50
» 10 «	7	—
» 9 «	6	—
» 8 «	5	50
» 7 «	5	—
» 6 «	4	50
» 5 «	4	—
» 4 «	3	—
» 3 «	2	50
» 2 «	2	—
» 1 «	1	—

Открыта подписка на 1904 годъ на журналъ

VI г. изд. **Новый Міръ** VI г. изд.

Иллюстрированный вѣстникъ современной жизни, политики, литературы, науки, искусства и прикладныхъ знаній, съ преміями и приложеніями

Изданіе товорищества М. О. Вольфъ.—Общая Редакція П. М. Ольхина.

Въ теченіи года каждый подписчикъ НОВАГО МІРА" получаетъ съ доставкой и пересылкой

Слѣдующія изданія и преміи къ нимъ:

НОВЫЙ МІРЪ богато иллюстрированный литературно-художественный журналъ, въ форматѣ лучшихъ европейскихъ иллюстрацій, заключающій въ себѣ: беллетристику, поэзію, исторію, критику и статьи по всѣмъ отраслямъ знаній. Всего въ годъ 24 №№.

ЖИВОПИСНАЯ РОССІЯ иллюстрированный вѣстникъ отчизновѣдѣнія, исторіи, культуры, государственной, общественной и экономической жизни Россіи. Въ годъ 24 №№

ЛИТЕРАТУРНЫЙ КУРЬЕРЪ обзоръ событій и явленій въ русскомъ и иностранномъ литературномъ мірѣ, составляющій. вмѣстѣ со „Всемірной Лѣтописью", составную часть „Новаго Міра", 24 №№

ВСЕМІРНАЯ ЛѢТОПИСЬ иллюстрированный обзоръ текущей жизни—политической, общественной и художественной—24 №№

ВРЕМЕННИКЪ Живописной Россіи обзоръ текущей русской жизни, представляющій собою газету-лѣтопись, - 24 №№

МОЗАИКА иллюстрированный журналъ прикладныхъ знаній и новѣйшихъ изобрѣтеній, съ хроникой самообразованія и справочнымъ отдѣломъ,—24 №№

ЛИТЕРАТУРНЫЕ ВЕЧЕРА въ колич. 24 книжекъ, въ составъ которыхъ войдутъ 20 романовъ въ 24 томахъ русскихъ и иностранныхъ беллетристовъ. Серія эта будетъ заключать въ себѣ историческіе, бытовые и соціальные романы.

Изданія, преміи и прилож., которыя получ. въ 1904 г. въ теченіи гг. подписчики „Новаго Міра" уплачивая по 2 рубля въ теченіи семи мѣсяцевъ.

библіотека

РУССКИХЪ И ИНОСТРАННЫХЪ ПИСАТЕЛЕЙ

въ 21 книгахъ, въ составъ которыхъ войдутъ:

Сочиненія Лессинга

въ 10 томахъ, въ переводѣ русскихъ писателей, подъ редакціей П. Н. Полевого, съ портретомъ и біографіей Лессинга.

полное собраніе

ПОСЛОВИЦЪ РУССКАГО НАРОДА

поговорокъ, реченій. присловій, чистоговорокъ, прибаутокъ, загадокъ, повѣрій и пр.

Капитальный трудъ В. И. Даля въ 8 томахъ.

ЭНЦИКЛОПЕДІЯ ОСТРОУМІЯ

собраніе перлсвъ всемірнаго остроумія въ 2 томахъ, составленное В. Поповымъ.

Независимо отъ всего вышеперечисленнаго, всѣ подписчики получатъ еще:

великолѣпное художественное, историч. изданіе:

ЦАРЬ ІОАННЪ ГРОЗНЫЙ

Его царствованіе, его дѣянія, его жизнь, современники и дѣятели въ портретахъ, гравюрахъ, живописи, скульптурѣ, памятникахъ зодчества и пр. и пр. (около 300 иллюстрацій), подъ редакціей Н. Б. Головина.

Особую цѣнную, роскошную премію:

17 ГЕЛІОГРАВЮРЪ

съ картинъ всемірно-извѣстныхъ художниковъ, исполненныхъ въ Лондонѣ въ художественномъ ателье Rembrandt Printing Co, которыя могутъ служить для украшенія стѣнъ и для большого настольнаго кипсека или альбома.

Годовая подписная цѣна „Новаго Міра" на веленевой бумагѣ на 1904 г., со всѣми вышеобъявленными преміями и приложен.. съ доставкою пересылкою 14 рублей.

Годовые подписчики, уплачивающіе сразу вею подписную сумму, получаютъ всѣ 17 геліогравюръ при самой подпискѣ.

Допускается льготная разсрочка платежа по 2 руб. въ мѣсяцъ, или-же, по желанію, отъ 2 р. при подпискѣ и отъ 1 р. въ мѣсяцъ до полн й уплаты всей подписнои суммы. 2 РУВ.

Печатается ограниченное количество экземпляровъ журнала на лучшей слоновой бумагѣ. Подписн. цѣна такого изданія, съ указанными выше преміями и прилож. 18 Р.

Подписка на „НОВЫЙ МІРЪ" принимается въ книжныхъ магазинахъ Товарищества М. О. ВОЛЬФЪ: въ С.-Петербургѣ, Гостиный Дворъ, 18, и въ Москвѣ, Кузнецкій Мостъ, 12, д. Джамгаровыхъ, а также въ редакціи журнала: С.-Петербургъ, В. О., 16 л., 5—7, с. д.

Открыта подписка на 1904 годъ

подписной годъ начался 1-го ноября

задушевное слово

XXVIII г. изд. 1904 Г.

Въ 1904 г., какъ и до сихъ поръ, „Задушевное Слово“ будетъ выходить

Въ видѣ 2-хъ самостоятельныхъ еженедѣльныхъ журналовъ

изъ которыхъ—„Задушевное Слово для младшаго возраста“ предназначается для дѣтей отъ 5-9 л. и „Задушевное Слово для старшаго возраста“—для юныхъ читателей въ возрастѣ отъ 9—14 лѣтъ.

52 Въ теченіи года каждый подписчикъ на то или другое изданіе „Задушевнаго Слова“ получитъ съ доставкой и пересылкой №№ БОГАТО ИЛЛЮСТРИРОВАННАГО ИНТЕРЕСНАГО ЖУРНАЛА И, КРОМѢ ТОГО, **52**

Рядъ цѣнныхъ безплатныхъ премій и приложеній

изъ которыхъ будетъ выдано, между прочимъ, при журналѣ:

ДЛЯ МЛАДШАГО ВОЗРАСТА (5—9 л.)

Болш. картина худ. Эльслея для украш. дѣтской комнаты

„МИЛѢЕ ВСѢХЪ!“

великолѣпно исполненная въ 24 краски;

12 игръ и занятій для дѣтей на большихъ раскрашенныхъ и черныхъ листахъ;

12 отдѣльныхъ картинъ раскрашенныхъ и черныхъ;

12 книжекъ „Библіотеки дѣтскихъ сказокъ“,

иллюстрированныхъ извѣстными художниками;

Для старшаго возраста (9—14 л.)

12 книгъ соч. А. Е, Разина и С. М. Макаровой,

заключающія въ себѣ лучшіе разсказы этихъ знаменитыхъ писателей для юношества.

Генералъ фельдмаршалы Русской арміи болш. изданіе въ листъ. съ 62-мя портретами, допущенное Учен. Комит. Мин. Нар. Просв. въ ученическія, старшаго и средняго возрастовъ, библіотеки учебныхъ заведеній.

Юные герои Севастополя историческій очеркъ Н. Корсакова, съ портретами, картинами сраженій и пр. и пр

9 выпусковъ историческихъ разсказовъ „Откуда пошла

Домино Мурзилки — игру для дѣтей на большой табл. въ краскахъ, съ 28 фиг. Въ текстѣ журнала „Задушевное Слово для младшаго возраста" съ перваго же нумера начнется печатаніемъ, между прочимъ,

„ЛИЗОЧКИНО СЧАСТЬЕ" — новая большая иллюстрированная повѣсть для дѣтей Л. А. Чарской, автора «Записокъ институтки», „Товарищей", «Записокъ сиротки», „Княжны Джаваха" и др.

Русская Земля А. Е. Разина и В. И. Лапина. Изящно переплетенная

ЗАПИСНАЯ КНИЖКА-КАЛЕНДАРЬ

для русской учащейся молодежи Въ текстѣ журнала „Задушевное Слово для старшаго возраста" съ первыхъ нумеровъ начнутся, между прочимъ, печатаніемъ: „ЛЮДА ВЛАСОВСКАЯ", повѣсть для юношества Л. А. Чарской; „ЦАРСКІЙ ВѢНЕЦЪ", повѣсть А. Е. Зарина; „ДВА КАДЕТА", разсказъ А. Апраксина.

Независимо отъ всѣхъ перечисленныхъ премій и приложеній, подписчикамъ каждаго изданія, въ теченіи года будутъ высылаться безплатно: ДѢТСКІЯ МОДЫ на всѣ 4 сезона, съ рисунками новѣйшихъ дѣтскихъ платьевъ, работъ, практическими совѣтами и пр., и ПЕДАГОГИЧЕСКІЙ ЛИСТОКЪ—пособіе для родителей воспитателей, въ видѣ отдѣльн. самостоятельн. книжекъ.

Въ литературномъ отдѣлѣ „Задушевнаго Слова" принимаютъ участіе: В. П. Андреевская, Н. П. Анненскій, гр. А. Д. Апраксинъ, С. А. Бердяевъ, В. В. Березовскій, Н. Н. Брешко-Брешковскій, М. М. Бродовскій, К. А. Горбуновъ, И. А. Гриневская, Н. Ѳ. ф.-Дингельштедтъ, С. Д. Дрожжинъ, Вл. Забрежневъ, А. Е. Заринъ, Н. Зоречъ, М. Н. Кладо, А. Королевъ, А. В. Кругловъ, К. Н. Льдовъ, С. А. Миклашевская, гр. А. З. Муравьева, Н. Новичъ, Н. Д. Носковъ, П. М. Ольхинъ, А. Ѳ. Пановъ-Вѣрунинъ, свящ. Ф. М. Пестряковъ, Е. К. Понюшева, Н. Н. Рослякова, Г. П. Рукавишниковъ, Викторъ Русаковъ (С. Ф. Ливровичъ, Е. Г. Тихомандрицкая, А. Б. Хвольсонъ, Л. А. Чарская, Е. Э. Шварце и мн. др. въ художественномъ отдѣлѣ; В. В. Арнольдъ, Ѳ. Г. Беренштамъ К. И. Вагнеръ, Н. П. Ольшанскій, В. В. Поляковъ, Е. П. Самокишъ-Судковская, И. В. Симаковъ, Э. К. Соколовскій, А. И. Сударушкинъ, В. А. Тавуринъ и мн. др.

ПОДПИСНАЯ ЦѢНА „ЗАДУШЕВНАГО СЛОВА" ДЛЯ МЛАДШАГО ИЛИ СТАРШАГО ВОЗРАСТА (по выбору гг. подписчиковъ), со всѣми объявленными къ данному изданію преміями и приложеніями, съ доставкою и пересылкою, на годъ . . . . . **6** рубл.

допускается разсрочка платежа по 2 р.: при подпискѣ, къ 1 февраля и къ 1 мая.

При подпискѣ, во избѣжаніе недоразумѣній, просятъ ТОЧНО обозначать для какого возраста слѣдуетъ высылать журналъ,

ПОДПИСКА ПРИНИМАЕТСЯ въ книжныхъ магазинахъ Товарищества М. О. Вольфъ: Петербургъ, Гостиный Дворъ, 18, и Москва, Кузнецкій Мостъ, 12, домъ Джамгаровыхъ, а также въ редакціи „Задушевнаго Слова": Петербургъ, Вас. Остр., 16 линія, 5—7, с. д.

Открыта подписка на празднующую въ 1904 г. свой десятилѣтній юбилей

ВСЕОБЩУЮ МАЛЕНЬКУЮ ГАЗЕТУ

за годъ 2 р. С.-ПЕТЕРБУРГЪ за 3 мѣс. 50 к.

Газета безцензурная.— Изданія годъ одиннадцатый.

Содержаніе газеты: придворныя, правительственныя, политическія и общественныя новости и руководящія къ нимъ статьи; хроника происшествій и уголовныхъ дѣлъ, новости научныя, историческія, медицинскія, о воспитаніи, о загадочныхъ явленіяхъ и пр.; романы, стихи, заметки о спортѣ, театрахъ новыхъ книгахъ и пр.

Въ теченіе 1904 г. будутъ помѣщены романъ изъ современ. русской жизни „Три товарища" соч. А Молчанова и переводъ лучшаго изъ новѣйшихъ германскихъ романовъ подъ заглавіемъ „Насущный хлѣбъ".

Въ теченіе года болѣе сотни портретовъ современныхъ дѣятелей и рисунковъ текущихъ событій.

Подписная цѣна съ Дост. и пересылкой } за годъ 2 р. за пол. года 1 р. за 3 мѣс. 50 к.

Марками на 20 к. дороже. Газета выходитъ три раза въ недѣлю.

Адресъ Типографіи, Редакціи и Конторы: С.-Петербургъ, Невскій, 139.

Редакторъ-Издатель А Молчановъ.

3—1

XIII-й ГОДЪ ИЗДАНІЯ XIII-й

ЖУРНАЛА

„МЕЛЬНИКЪ"

Открыта подписка на 1904 годъ

5 руб подписная цѣна съ пересылкой, за годъ 5 руб.

ПРОГРАММА ЖУРНАЛА:

1) Распоряженія Правительства по мукомольному, заводскому дѣлу и по хлѣбной торговлѣ. 2) Техническія описанія всякаго рода мельницъ, элеваторовъ, мельничныхъ машинъ, двигателей и аппаратовъ, съ чертежами и рисунками. 3) Статьи по вопросамъ мельничной техники и хлѣботорговаго дѣла. 4) Факты и слухи. Мелкія

замѣтки и всякаго рода сообщенія, относящіяся къ спецальности журнала. 5) Корреспонденціи изъ разныхъ мѣстъ Россіи и за границы, касающіяся мукомольнаго дѣла и хлѣбной торговли. 6) Справочныя цѣны хлѣбныхъ рынковъ въ Россіи и за границей. 7) Портреты Государственныхъ дѣятелей. 8) Портреты дѣятелей въ области мукомольнѣго дѣла и хлѣбной торговли. 9) Иллюстраціи (рисунки къ техническому описанію мелницъ. 10) Мелочи. Краткія замѣтки о новыхъ изобрѣтеніяхъ и усовершенствованіяхъ. 11) Торговыя и техническія публикаціи.

По постановленію VII всероссійск. съѣзда мукомоловъ, въ журналѣ печатаются всѣ постановленія, распоряженія и друг. литературный матеріалъ отъ Совѣта Съѣздовъ мукомоловъ.

Подписныя денгьи адресуются въ Москву, Долгоруковская № 22 въ редакцію журнала „Мельникъ" издателю-редактору Д А Мансфельду.

Можно выписывать журналъ наложеннымъ платежомъ.

Изъ редакцій можно выписывать

1) Сводъ узаконеній по водному праву.

Необход. справ. книга для владѣльцевъ водяныхъ мельницъ. Сост. прис. пов. А. Н. Воскресенскій Цѣна 2 рубля.

2) Курсъ Мельничнаго Счетаводства.

изданіе журнала „МЕЛНИКЪ".

Цѣна 2. р съ пересылкой Для подписчиковъ журнала „Мельникъ" 1 р. 50 к. Съ наложеннымъ платежомъ 1 р. 75 к.

3) Проектъ НЕСГОРАЕМОЙ мельницы съ чертежами.

Цѣна 1 рубль (съ пересылкой)

4) Обзоръ Мукомольной Промышленности въ Россій.

Цѣна 1 рубль (съ пересылкой).

5) Швеицарскія Шелковыя сита.

Очеркъ ихъ производства и неабходимыя указанія при ихъ употребленіи. Цѣна 35 к. (можно посылать почтов. марками).

3 — 1

открыта подписка на 1904

Съ 1 октября 1903 года начался 7-й годъ изданія

ЕЖЕМѢСЯЧНАГО ИЛЛЮСТРИРОВАННАГО ЖУРНАЛА

книжныхъ магазиновъ товарищества М. О. Вольфъ

ИЗВѢСТІЯ

по литературѣ, наукамъ и библіографіи.

Назначеніе журнала—дать читающей публикѣ возможность своевременно слѣдить за всѣмъ, что есть новаго въ области литературы, наукъ и библіографіи у насъ въ Россіи и за границею. Въ этихъ видахъ журналъ «КНИЖНЫХЪ МАГАЗИНОВЪ ТОВАРИЩЕСТВА М. О. ВОЛЬФЪ ИЗВѢСТІЯ ПО ЛИТЕРАТУРѢ, НАУКАМЪ И БИБЛІОГРАФІИ» помѣщаетъ иллюстрированныя статьи, и замѣтки по вопросамъ изъ указанной области критическіе отзывы о наиболѣе вѣдающихся новыхъ сочиненіяхъ, списки новыхъ книгъ и важнѣйшихъ журнальныхъ статей, русскихъ и иностранныхъ, свѣдѣнія о подготовляемыхъ къ печати новыхъ изданіяхъ и пр. Особый отдѣлъ журнала посвященъ справкамъ, совѣтамъ и отвѣтамъ на предлагаемые читателями журнала вопросы.

Годовая подписная цѣна журналу на полувеленевой бумагѣ, съ доставкою и пересылкою.. **1 р.**; изданіе на веленевой бумагѣ **2 р.**

Подписка и объявленія принимаются въ книжныхъ магазинахъ Товарищества М. О. Вольфъ.

С.-Петербургъ, Гостиный Двор, № 18 Москва, Кузнецкій Мостъ № 12.

Адресъ редакціи: С.-Петербургъ, Вас. Островъ, 16 лин, д 5—7.

ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԿ ԹԵՐԹ-ի

1903—1904

Կիսամսեայ նկարազարդ հանդէս

4—6 ՆԿԱՐԱԶԱՐԴ ԳՐՔՈՅԿՆԵՐՈՎ

Կուղարկուեն նոյնպէս «Կով. Բժշկ. Ընկ.» թերթիկները։ Տարեշրջանն է հոկտեմբերից հոկտեմբեր։ Տարեկան բաժանորդագինն է գրքոյկների հետ միասին.

Ռուսաստանի համար 2 ռ. 50 կ.

Արտասահմանի » 10 ֆր. ($3^1/_2$ ռ.)

(Յունուարից մինչև ապրիլի 1-ը) երեք ամսուայ համար վճարել 1 ռ.

Հեղինակի հասցէն Тифлисъ Д-ру В. М. Арцруни

„ԴԻՒԱՆ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ„

ՀԱՏՈՐՆԵՐ VI—XV

—

Ցանկալով օր առաջ հրատարակութեան տալ մեր ժողոված պատմական հարուստ նիւթերը և չունենալով միջոց մեր սեպհական ծախքով լոյս ընծայել նոցա, սորանով բաց ենք անում «ԴԻՒԱՆ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ» ժողովածուի առ այժմ հետևեալ 10 հատորի համար բաժանորդագրութիւն.

Դիրք Զ. ԴԱՒԻԹ ԿԱԹՈՂԻԿՈՍ մասն I (մամուլի տակ)
» Է. » » » II
» Ը. ՍԻՄԷՈՆ » » II (I տպուած է)
» Թ. ՂՈՒԿԱՍ » » II (» »)
» Ժ. » » » III
» ԺԱ. ԵՓՐԵՄ » » I
» ԺԲ. ՄԱՆՈՒԷԼ ԿԻՒՄԻՒՁԽԱՆԵՑԻ
» ԺԳ. ԺԱՄԱՆԱԿԱԳԻՐՔ ԺԶ—ԺԸ ԴԱՐՈՒՑ։
1. Յովհաննէս Արճիշեցի։ 2. Գրիգոր դպիր։ 3. Դաւիթ Բաղիշեցի։ 4. Բարսեղ Վարագեցի։ 5. Բարգուղիմէոս Ձուշանցի։ 6. Վարդան մեծ Բաղիշեցի։ 7. Յովհաննէս Սեբաստացի պատմիչ։ 8. Իսահակ Սահրատեան։ 9. Յարութիւն Խալֆայեան։ 10. Յովհաննէս Ձահխաթունեան։ 11. Ղևոնդ Տոստեցի։ 12. Անդք Վասպուրական աշխարհի։ 13. Յաջորդութիւնք Վանայ բդեշխից։ 14. Ժամանակագրութիւնք անյայտ պատմչաց։
» ԺԴ. ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆՔ ԺԵ—ԺԸ ԴԱՐՈՒՑ։
» ԺԵ. ՆՁԻՍԱՐՔ ՆԱԽՆԻՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ։

—

Այս 10 հատորներից իւրաքանչիւրը բաղկացած կը լինի 600—900 էջերից տպուած «Դիւանների» դիրքով։

Ամբողջ 10 հատորի տպագրութիւնը կվերջանայ 5 տարուայ ընթացքում։

Վեցերորդ հատորը տպւում է և շուտով լոյս կտեսնի։

Բոլոր հատորները միաժամանակ մամուլի կյանձնուին երբ բաժանորդների թիւը կհասնի ՀԱՐԻՒՐԻ։

10 ՀԱՏՈՐԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ Է 30 ՌՈՒԲԼԻ։ Տպագրութիւնից յետոյ ամեն մի հատորը կարժենայ 4—5 ռուբլի։

—

Մեր ժողովրդագրական հաւաքածոյի հրատարակութեան մասին կտանք առանձին ծանուցում։

Խմբագիր-Հրատարակիչ ԳԻՒՏ Ա. ՔԱՀ. ԱՂԱՆԵԱՆՑ

(ԹՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ)

ԼՈՒՄԱՅ

ԵՐԿԱՄՍԵԱՅ ԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԵՍԸ

Առաջիկայ 1904 թուին կհրատարակուի նոյն ծրագրով և հետևեալ աշխատակիցների մասնակցութեամբ. Պ. Պոշեան, Շիրվանզադէ, Մուրացան, Վ. Փափազեան, Իս. Յարութիւնեան, Գ. Ենգիբարեան, Ն. Քարամեան, Յարոյ, Քաջբերունի, Ե. Շահազիզ, Մ. Բերբերեան, Մուշէ Վ., Տ. Վ. եւ ուրիշներ։

Տարեկան բաժանորդագինն է Ռուսաստանում 6 ռուբլի ճանապարհածախքով եւ տուն հասցնելով, իսկ արտասահմանում 20 Ֆրանկ։

Բաժանորդագրութիւնն ընդունւում է Թիֆլիսում «Լումայ»ի խմբագրատանը, Պոլիցէյսկի փողոց, 13 և կենտրոնական գրավաճառանոցում։

Մեր զաւառական գործակալները

ԲԱԳՈՒ. Արժ. Եղիշէ ա. ք. Գեղամեանց
» Ներսէս Ք. Տէր Կարապետեան
պ. Արմենակ Յակոբեան
Գրավաճառանոց Պրոմէթէոս
ԵՐԵՒԱՆ պ. Յովհաննէս Շամխարեան
արժ. Վաչան ք. Մամիկոնեան
ՆՈՐ ՆԱԽԻՋ. արժ. Պողոս ք. Բեգելեան
ԳԱՆՁԱԿ. պ. Յովսէփ Խաչայեան
արժ. Յուսիկ ք. Վերդեան
ԿԱՐՍ. » Մինաս ա. ք. Տէր-Պետրոսեանց
ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼ. պ. Հայկ Սարոյեան
ՇԱՄԱԽԻ արժ. Տաճատ ք. Մարաղեան
ՄՈՍԿՈՒԱ. պ. Ղուկաս Քեմեչէճեան.

Յայտարարութիւնների տողը արժէ 10 կոպէկ։

Խմբագրութեան հասցէն. Тифлисъ, Редакція журнала „ЛУМА“, արտասահմանից՝ Tiflis, Rédaction du journal armenien „LOUMA“.

„ԼՈՒՄԱՅ“-ի այս համարի հետ ուղարկում ենք մեր բաժանորդներին Ռիգայի ռետինէ արտադրութեանց „ПРОВОДНИКЪ“ ընկերութեան յայտարարութիւնը։